ՁՈՒՏ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ

ՔԼԱՅՎ ՍՏԵՅՓԼՍ ԼՅՈՒԻՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ: *ՀԻՇՏՆ ՈՒ ՍԽԱԼԸ ՈՐՊԵՍ ՏԻԵԶԵՐՔԻ ԻՄԱՍՏԻ ԲԱՆԱԼԻՆ* *13*

1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
2. ՈՐՈՇ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. ՕՐԵՆՔԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
4. Ի՞ՆՉ Է ԹԱՔՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ ԵՏԵՒՈՒՄ
5. ՊԱՏՃԱՌ ԿԱ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԼԻՆԵԼՈՒ

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ: *ԻՆՉԻ՞Ն ԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ* *34*

1. ԱՍՏԾՈ ՏԱՐԲԵՐ ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
2. ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ
3. ԱՊԾԵՅՈՒՅԻՉ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ
4. ԿԱՏԱՐՅԱԼ ԱՊԱՇԽԱՐՈՂԸ
5. ՊՐԱԿՏԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՍ ԵՐՐՈՐԴ: *ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՔ* *56*

1. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՄԱՍԵՐԸ
2. ԿԱՐԴԻՆԱԼ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
3. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ
5. ՍԵՌԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ
7. ՆԵՐՈՒՄ
8. ՄԵԾ ՄԵՂՔԸ
9. ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ
10. ՀՈՒՅՍ
11. ՀԱՎԱՏ
12. ՀԱՎԱՏ

ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ: *ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ ԿԱՄ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔ* *111*

1. ՍՏԵՂԾԵԼ ԵՎ ԾՆԵԼ
2. ԵՌԱՆՁՆ ԱՍՏՎԱԾԸ
3. ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ
4. ԼԱՎ ՎԱՐԱԿԸ
5. ՀԱՄԱՌ ԽԱՂԱԼԻՔ ՁԻՆՎՈՐՆԵՐԸ
6. ԵՐԿՈՒ ՆԾՈՒՄ
7. ԵԿԵՔ ՁԵՎԱՑՆԵՆՔ
8. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԺՎԱ՞Ր Է, ԹԵ ՀԵԾՏ
9. ԳԻՆԸ ՀԱԾՎԵԼԸ
10. ԼԱՎ ՄԱՐԴԻԿ, ԹԵ՞ ՆՈՐ ՄԱՐԴԻԿ
11. ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

# ՆԱԽԱԲԱՆ

Այս գրքի բովանդակությունը նախ հեռարձակվել է ռադիոյով, և այնուհետև հրատարակվել է երեք առանձին մասերով՝ «Փաստարկությունը հանուն քրիստոնեության» (1943), «Քրիստոնեական վարք» (1943) և «Անձնավորությունից այն կողմ» (1945): Տպագիր տարբերակներում ես մի քանի լրացումներ էի արել՝ խոսափողով ասածիս համեմատ, բայց դրանից բացի, տեքստը թողել էի այնպես, ինչպես այն կար: Ռադիոյի «զեկույցը», ես կարծում եմ, պետք է հնարավորինս նման լինի իրական խոսքին և չպետք է հնչի որպես բարձրաձայն ընթերցվող էսսե: Հետևաբար, իմ զեկույցներում, ես օգտագործել էի բոլոր հապավումներն ու խոսակցական բառերը, որոնք ես սովորաբար օգտագործում եմ զեկույցի ժամանակ: Տպագիր տարբերակում ես վերարտադրեցի դրանք՝ գրելով don't և we've՝ do not-ի և we have-ի փոխարեն: Եւ որտեղ զեկույցներում ձայնիս շեշտադրումով հստակ ընդգծել էի ինչ-որ բառի կարևորությունը, տպագիր տարբերակում այն ընդգծել էի շեղատառերով: Ես հիմա հակված եմ կարծելու, որ սա սխալ էր՝ անցանկալի խառնուրդ խոսելու և գրելու արվեստի միջև: Խոսողը պետք է օգտագործի ձայնի տատանումները շեշտադրման համար, քանի որ նրա միջոցը, բնականաբար, հնարավորություն է ընձեռում նրան դա անել, բայց գրողը չպետք է օգտագործի շեղատառերը նույն նպատակով: Նա ունի իր սեփական, տարբեր միջոցները հիմնական բառերը ընդգծելու, և պետք է օգտագործի դրանք: Այս հրատարակության մեջ, ես բացել եմ հապավումները և փոխարինել շեղատառերի մեծ մասը՝ վերափոխելով այն նախադասությունները, որոնցում դրանք կային, բայց առանց փոխելու, հուսով եմ, այն «հանրամատչելի» կամ «մտերմիկ» տոնը, որը ես նախատեսել էի ի սկզբանե: Ես նաև ավելացումներ և կրճատումներ եմ արել այն մասերում, որտեղ ես կարծել եմ, որ այժմ ավելի լավ եմ հասկանում իմ թեմայի ինչ-որ հատված, քան տասը տարի առաջ, կամ որտեղ հասկացել եմ, որ սկզբնական տարբերակը սխալ է հասկացվել ուրիշների կողմից:

Ընթերցողը պետք է զգուշացվի, որ ես ոչ մի օգնություն չեմ ցուցաբերում որևէ մեկին, ով տատանվում է երկու քրիստոնեական «դավանանքների» միջև: Դուք ինձանից չեք իմանա, թե արդյոք պետք է դառնաք անգլիկան, կաթոլիկ, մեթոդիստ, թե պրեսբիտերական: Այս բացթողումը միտումնավոր է (նույնիսկ իմ ցանկում դրանք տրված են այբբենական կարգով): Որևէ գաղտնիք չկա իմ սեփական դիրքորոշման վերաբերյալ: Ես Անգլիայի եկեղեցու շատ սովորական աշխարհական եմ, ոչ հատկապես «բարձր», ոչ հատկապես «ցածր», ոչ էլ հատկապես որևէ այլ բան (*): Բայց այս գրքում ես չեմ փորձում որևէ մեկին բերել իմ սեփական դիրքորոշմանը:

(*) Անգլիկան եկեղեցու դավանանքի երկու մեծ ենթաճյուղերն են «բարձր անգլիկան» և «ցածր անգլիկան» - Ա.Հ

Այն պահից ի վեր, երբ ես դարձա քրիստոնյա, ես կարծում էի, որ լավագույն, և գուցե միակ ծառայությունը, որը ես կարող էի անել իմ անհավատ հարևանների համար՝ բացատրելն ու պաշտպանելն էր այն հավատը, որը ընդհանուր է եղել բոլոր ժամանակներում գրեթե բոլոր քրիստոնյաների համար: Ես մեկից ավել պատճառ ունեմ այսպես կարծելու համար: Առաջին հերթին, հարցերը, որոնք բաժանում են քրիստոնյաներին միմյանցից, հաճախ ներառում են բարձր աստվածաբանական խնդիրներ կամ նույնիսկ եկեղեցական պատմություն, որոնցով ոչ մեկը չպետք է զբաղվի, բացի իրական մասնագետներից: Ես կհայտնվեի շատ խոր ջրերում, որտեղ ավելի շատ ինքս օգնության կարիք կունենայի, քան ուրիշներին օգնելու կարողություն: Եվ երկրորդ՝ ես կարծում եմ, պետք է ընդունել, որ այս վիճելի կետերի քննարկումը որևիցե միտվածություն չունի դրսում գտնվող ինչ-որ մեկին ներս բերելու դեպի քրիստոնեական համայնք: Քանի դեռ մենք գրում և խոսում ենք դրանց մասին, շատ ավելի հավանական է, որ մենք նրան կխանգարենք որևէ քրիստոնեական հավատակցության մեջ մտնելու, քան կներքաշենք նրան մերի մեջ: Մեր բաժանումները երբեք չպետք է քննարկվեն, բացառությամբ նրանց ներկայությամբ, ովքեր արդեն հավատացած են, որ կա մեկ Աստված, և որ Հիսուս Քրիստոսը Նրա միակ Որդին է: Եւ, վերջապես, ես տպավորություն ունեի, որ ավելի շատ, և շատ ավելի տաղանդավոր հեղինակներ արդեն զբաղված էին նման վիճելի հարցերով, քան պաշտպանելով այն, ինչ Բաքսթերն անվանում է «զուտ» քրիստոնեություն(*): Ընդհանուր գործի այն հատվածը, որտեղ ես կարծում էի, որ կարող եմ լավագույնս ծառայել, նաև այն հատվածն էր, որը թվում էր ամենանոսրը: Եւ ես բնականաբար գնացի դրան:

Որքանով ես գիտեմ, սրանք էին իմ միակ շարժառիթները, և ես շատ ուրախ կլինեի, եթե մարդիկ իմ լռությունից վիճելի որոշ հարցերի շուրջ կեղծ հետևություններ չանեին:

Օրինակ՝ նման լռությունը չի նշանակում, որ ես ինքս ձեռնպահ դիրքորոշում ունեմ: Երբեմն այդպես է: Քրիստոնյաների միջև կան հարցեր, որոնց պատասխանը, ես կարծում եմ, որ չունեմ: Կան որոշ հարցեր, որոնց պատասխանը ես կարող է երբեք չիմանամ. եթե ես տայի այդ հարցերը նույնիսկ ավելի լավ աշխարհում, ես (թերևս, որքանով տեղյակ եմ) կարող էի ստանալ այն պատասխանը, որը տրվել էր մի շատ ավելի մեծ հարցնողի. «Դա քեզ ի՞նչ: Դու հետևիր ինձ»:

Բայց կան այլ հարցեր, որոնց վերաբերյալ ես հաստատ ձեռնպահ չեմ, բայց ոչինչ չեմ ասում: Որովհետև ես չէի գրել բացատրելու մի բան, որ ես կարող էի անվանել «իմ կրոնը», այլ բացատրելու «զուտ» քրիստոնեությունը, որն այն է, ինչ կա, և եղել է այդպիսին իմ ծնվելուց շատ առաջ, և անկախ նրանից, թե դա ինձ դուր է գալիս, թե ոչ:

(*) Ռ. Բաքսթեր – 17-րդ դարի անգլիացի աստվածաբան – Ա.Հ:

Ոմանք անհիմն եզրակացություններ են անում այն փաստից, որ ես երբեք Սուրբ Կույս Մարիամի մասին ավելին չեմ ասում, քան Քրիստոսի Կուսական Ծննդյան պնդումը: Բայց, անշուշտ, դա չանելու իմ պատճառը ակնհայտ է: Եթե ասեի ավելին, ապա այն ինձ միանգամից կտաներ խիստ վիճարկելի տարածքներ: Եւ քրիստոնյաների միջև չկա որևէ վիճարկություն, որին պետք է այնքան նրբորեն մոտենալ, որքան սրան: Կաթոլիկական համոզմունքներն այս թեմայի շուրջ պահպանվում են ոչ միայն սովորական եռանդով, որը կապված է բոլոր անկեղծ կրոնական համոզմունքների հետ, այլև (բնականաբար) այն յուրօրինակ և, ինչպես ասում են, ասպետական զգացմունքայնությամբ, որը զգում է տղամարդը, երբ վտանգված է իր մոր կամ սիրելիի պատիվը: Շատ դժվար է այնպես անհամաձայնել նրանց հետ, որպեսզի նրանց չթվաս գռեհիկ կամ հերետիկոս: Եւ հակառակ կողմից, այս թեմայի վերաբերյալ հակադիր բողոքական համոզմունքները առաջացնում են զգացմունքներ, որոնք իջնում են մինչև միաստվածության հենց արմատները: Արմատական բողոքականներին թվում է, թե Արարչի և արարածի (որքան էլ սուրբ նա լինի) տարբերությունը վտանգված է՝ որ բազմաստվածությունը վերստին արթնացել է: Ուստի դժվար է այնպես անհամաձայնել նրանց հետ, որպեսզի նրանց չթվաս հերետիկոսից ավելի վատ բան՝ կռապաշտ կամ հեթանոս: Եթե որևէ թեմայի վրա կարելի է հույս դնել՝ «զուտ» քրիստոնեության մասին ինչ-որ գիրքը ոչնչացնելու համար, եթե որևէ թեմա բացարձակապես անարդյունավետ ընթերցանություն է նրանց համար, ովքեր դեռ չեն հավատում, որ Կույսի որդին Աստված է, անշուշտ, դա այս մեկն է:

Տարօրինակորեն, վիճելի կետերի վերաբերյալ իմ լռությունից նույնիսկ չեք կարող եզրակացնել, որ ես դրանք համարում եմ կարևոր, կամ էլ որ ես դրանք համարում եմ անկարևոր: Քանի որ սա ինքնին վիճելի կետերից մեկն է: Քրիստոնյաների միջև տարաձայնություններից մեկը նրանց տարաձայնությունների կարևորությունն է: Երբ տարբեր հավատամքների երկու քրիստոնյա սկսում են վիճել, սովորաբար շատ ժամանակ չի անցնում, երբ նրանցից մեկը հարցնում է, թե արդյոք այսինչ կամ այնինչ մի բանը «իրոք նշանակություն ունի», իսկ մյուսը պատասխանում է. «Նշանակությո՞ւն: Այն բացարձակապես էական է»:

Այս ամենն ասվում է պարզապես պարզաբանելու համար, թե ինչ գիրք էի ես փորձում գրել՝ ամենևին չթաքցնելով կամ չխուսափելով իմ անձնական համոզմունքների համար պատասխանատվությունից: Դրանց վերաբերյալ, ինչպես առաջ ասացի, որևէ գաղտնիք չկա: Մեջբերելով Քեռի Թոբիին. «Դրանք գրված են Ընդհանուր Աղոթագրքում»(*): Վտանգն ակնհայտորեն այն էր, որ ես՝ որպես ընդհանուր քրիստոնեություն, առաջ կքաշեի այն, ինչը հատուկ է Անգլիայի Եկեղեցուն կամ (որը կլիներ ավելի վատ) ինձ:

(*) Ընդհանուր Աղոթագիրք (Book of Common Prayer)՝ Անգլիայի Եկեղեցու կարևորագույն գրություններից: Քեռի Թոբի՝ կերպար՝ «Տրիստամ Շանդի» գրքից (հեղ.՝ Լ. Ստեռն) – Ա. Հ

Ես փորձեցի պաշտպանվել սրանից՝ ուղարկելով ներկայիս Երկրորդ Մասի բնօրինակը չորս հոգևորականների (անգլիկան, մեթոդիստ, պրեսբիտերական, և կաթոլիկ) և հայցելով նրանց քննադատությունը: Մեթոդիստի կարծիքով, ես բավականաչափ չեմ խոսել Հավատքի մասին, իսկ կաթոլիկի կարծիքով, ես չափն անցել եմ Քավության բացատրության տեսությունների հարաբերական անկարևորության վերաբերյալ:

Դրանից բացի, հինգս էլ համաձայն էինք իրար հետ: Ես մնացած մասերը նման «ստուգման» չենթարկեցի, քանի որ դրանցում թեև քրիստոնյաների միջև կարող էին տարբերություններ առաջանալ, դրանք կլինեին տարբերություններ անհատների կամ մտքի փիլիսոփայությունների միջև, այլ ոչ թե դավանանքների միջև: Որքան կարող եմ դատել գրախոսական ակնարկներից և ինձ գրված բազմաթիվ նամակներից, գիրքը, որքան էլ որ այլ առումներով թերի լինի, գոնե հաջողել է ներկայացնել համաձայնեցված, կամ ընդհանուր, կամ կենտրոնական, կամ «զուտ» քրիստոնեություն: Այդ առումով, հնարավոր է, որ այն կարողանա նպաստել լռեցնելու այն տեսակետը, որ եթե մեջտեղից հանենք վիճելի կետերը, ապա կմնա միայն մի անորոշ և անարյուն ընդհանուր հայտարար: Ընդհանուր հայտարարը, պարզվում է, ոչ միայն դրական, այլև սուր բան է. բոլոր ոչ քրիստոնեական հավատամքներից բաժանված այնպիսի անդունդով, որի հետ քրիստոնեական աշխարհի ամենածայրահեղ բաժանումներն իրականում ամենևին համեմատելի չեն: Եթե ես ուղղակիորեն չեմ նպաստել վերամիավորման գործին, ես, թերևս, հստակեցրել եմ, թե ինչու պետք է մենք վերամիավորվենք: Հաստատապես ես շատ քիչ եմ հանդիպել այդ առասպելական «աստվածաբանական թշնամությանը» այն մարդկանց կողմից, որոնք համոզվածորեն հարում են իմից տարբերվող այլ հավատակցության: Թշնամությունն ավելի շատ եկել է սահմանամերձ մարդկանց կողմից՝ լինեին նրանք Անգլիայի Եկեղեցում, թե այլուր. այն մարդկանց կողմից, որոնք հստակորեն չեն պատկանում որևէ հավատակցության: Սա զարմանալիորեն մխիթարեցնող է ինձ համար: Հենց նրա կենտրոնում է, որտեղ ապրում են նրա ամենաիսկական զավակները, որ իրականում յուրաքանչյուր քրիստոնեական հավատակցություն, հոգով, եթե ոչ վարդապետությամբ, ամենամոտն է մնացած բոլորին: Եւ սա հուշում է, որ յուրաքանչյուրի կենտրոնում կա ինչ-որ բան, կամ Ինչ-Որ Մեկը, ով հավատքի բոլոր տարաձայնություններով, խառնվածքի բոլոր տարբերություններով, փոխադարձ հալածանքների բոլոր հիշողություններով հանդերձ, խոսում է նույն ձայնով:

Այսքանը վարդապետության վերաբերյալ իմ բաց թողածների մասին: Գրքի երրորդ մասում, որը վերաբերում է բարոյականությանը, ես նույնպես լուռ անցել եմ որոշ բաների վրայով, բայց այլ պատճառով: Առաջին համաշխարհային պատերազմում որպես հետևակային ծառայելուց ի վեր, ես մեծ հակակրանք եմ ունեցել այն մարդկանց հանդեպ, որոնք լինելով հարմարավետության և ապահովության մեջ, կոչեր են հղում առաջնագծում գտնվող մարդկանց: Որպես հետևանք, ես դժկամություն ունեմ շատ բան ասելու այն գայթակղությունների մասին, որոնց ես ինքս ենթարկված չեմ: Չկա մեկը, կարծում եմ, որին գայթակղում են բոլոր տեսակի մեղքերը: Այնպես է պատահել, որ այն մղումը, որը մարդկանց դարձնում է խաղամոլ, դուրս է

մնացել իմ կերտվածքից. և, անկասկած, ես վճարում եմ դրա համար՝ չունենալով ինչ-որ լավ մղում, որի ավելցուկը կամ այլասերվածությունն է դա: Հետևաբար, ես ինձ իրավասու չէի համարում խորհուրդներ տալու թույլատրելի և անթույլատրելի մոլախաղերի վերաբերյալ (եթե կան թույլատրելիներ. ես չեմ պնդում, որ գիտեմ նույնիսկ դա): Ես ոչինչ չեմ ասել նաև հակաբեղմնավորիչների մասին: Ես ոչ կին եմ, ոչ էլ նույնիսկ ամուսնացած տղամարդ, ոչ էլ քահանա: Ես չէի կարծում, որ իմ տեղն է որևէ վճռական դիրքորոշում ընդունել այնպիսի ցավերի, վտանգների և ծախսերի վերաբերյալ, որոնցից ես ապահովագրված եմ՝ չունենալով որևէ հովվական պաշտոն, որն ինձ կպարտավորեցներ դա անել:

Շատ ավելի խոր առարկություններ կարող էին լինել (և դրանք բարձրաձայնվել են) ընդդեմ իմ՝ քրիստոնյա բառի օգտագործման վերաբերյալ, որն ի նկատի ունի մեկին, ով ընդունում է քրիստոնեության ընդհանուր ուսմունքները: Մարդիկ հարցնում են. «Դուք ո՞վ եք, որպեսզի ասեք թե ո՞վ է քրիստոնյա, և ով ոչ», կամ «Մի՞թե շատ մարդիկ, որոնք չեն կարողանում հավատալ այս ուսմունքներին, չեն կարող շատ ավելի իսկական քրիստոնյա լինել, շատ ավելի մոտ Քրիստոսի հոգուն, քան ոմանք, ովքեր հավատում են»: Հիմա՝ այս առարկությունը մեկ առումով շատ ճիշտ է, շատ բարյացակամ, շատ հոգևոր, շատ նրբանկատ: Այն ունի բոլոր հաճելի որակները, բացի օգտակար լինելուց: Մենք պարզապես չենք կարող, առանց աղետի, օգտագործել լեզուն այնպես, ինչպես որ այս առարկողները ցանկանում են, որ մենք այն օգտագործենք: Սա կփորձեմ պարզ դարձնել մեկ այլ, և շատ ավելի քիչ կարևոր բառի պատմությամբ:

Ջենթլմեն բառն ի սկզբանե նշանակում էր ճանաչելի մի բան՝ մեկը, ով ուներ զինանշան և որոշ հողատարածք: Երբ ինչ-որ մեկին «ջենթլմեն» էիր անվանում, դու նրան հաճոյախոսություն չէիր անում, այլ պարզապես նշում էիր մի փաստ: Եթե ասում էիր, որ նա «ջենթլմեն» չէ, դու ոչ թե վիրավորում էիր նրան, այլ տեղեկություն էիր փոխանցում: Ոչ մի հակասություն չկար ասելիս, որ Ջոնը ստախոս էր և ջենթլմեն, ավելի քան այժմ կարելի է ասել, որ Ջեյմսը հիմար է և ունի մագիստրոսի կոչում: Բայց հետո առաջ եկան մարդիկ, որոնք ասացին՝ շատ ճշմարտացիորեն, շատ ողորմածորեն, շատ հոգևոր կերպով, շատ նրբանկատորեն, և շատ այլ կերպերով, բայց ոչ օգտավետորեն. «Այո, բայց անշուշտ, ջենթլմենին վերաբերող ամենակարևոր բանը ոչ թե զինանշանն է կամ հողատարածքը, այլ նրա պահվածքը: Անշուշտ, նա է՛ իսկական ջենթլմենը, ով իրեն պահում է ջենթլմենի պես: Անշուշտ, այդ առումով Էդվարդը շատ ավելի իսկական ջենթլմեն է, քան Ջոնը»: Նրանք լավն էին ցանկանում: Լինել պատվախնդիր, բարեկիրթ և խիզախ, իհարկե, շատ ավելի լավ բան է, քան զինանշան ունենալը: Բայց դա նույնը չէ: Ավելի վատ՝ դա այնպիսի բան չէ, որի վերաբերյալ բոլորը կհամաձայնեին: Մարդուն «ջենթլմեն» անվանելը այս նոր, նուրբ իմաստով, ըստ էության, դառնում է ոչ թե նրա մասին տեղեկություն փոխանցելու, այլ նրան գովաբանելու միջոց. հերքել, որ նա «ջենթլմեն» է, դառնում է պարզապես նրան վիրավորելու միջոց: Երբ բառը դադարում է լինել նկարագրության տերմին և դառնում է զուտ գովասանքի տերմին, այն այլևս ոչ թե փաստեր է նկարագրում տվյալ առարկայի վերաբերյալ, այլ խոսողի վերաբերմունքն է նկարագրում այդ առարկայի նկատմամբ: («Հաճելի» ճաշը

նշանակում է սոսկ այն ճաշը, որը դուր է գալիս խոսողին): Ջենթլմենը, երբ այն դարձվել է հոգևոր և զտվել է իր նախկին, կոպիտ, օբյեկտիվ իմաստից, գրեթե չի նշանակում ավելին, քան մի մարդ, որը դուր է գալիս խոսողին: Որպես հետևանք, ջենթլմենն այժմ անպետք բառ է: Մենք արդեն ունեինք հավանություն արտահայտելու շատ բառեր, հետևաբար այն այդպես օգտագործելու համար անհրաժեշտ չէր. մյուս կողմից, եթե որևէ մեկը (ասենք, պատմական աշխատության մեջ) ցանկանում է օգտագործել այդ բառը իր նախկին իմաստով, նա չի կարող դա անել առանց բացատրությունների: Այդ նպատակով այն այլևս անպետք է:

Հիմա, եթե մեկ թույլ տվեցինք, որ մարդիկ սկսեն հոգևոր դարձնել և կատարելագործել, կամ ինչպես իրենք կարող են ասել՝ «խորացնել» քրիստոնյա բառի իմաստը, այն նույնպես շատ շուտ կդառնա անպետք բառ: Առաջին հերթին, իրենք՝ քրիստոնյաները, երբեք չեն կարողանա այն կիրառել որևէ մեկի նկատմամբ: Մեր տեղը չէ ասելու, թե ով է, ամենախոր իմաստով, մոտ կամ ոչ մոտ Քրիստոսի հոգուն: Մենք չենք տեսնում մարդկանց սրտերը: Մենք չենք կարող դատել, իրոք՝ մեզ արգելված է դատել: Մեզ համար չարամիտ ամբարտավանություն կլիներ ասել, որ որևէ մարդ քրիստոնյա է կամ ոչ այս նուրբ իմաստով: Եւ ակնհայտորեն մի բառը, որը մենք երբեք չենք կարող կիրառել, այնքան էլ օգտակար բառ չի լինի: Ինչ վերաբերում է անհավատներին, ապա նրանք, անկասկած, ուրախությամբ կօգտագործեն այս բառը իր զտված իմաստով: Դա նրանց բերանում կդառնա պարզապես գովասանքի տերմին: Որևէ մեկին քրիստոնյա անվանելով՝ նրանք նկատի կունենան, որ նրան լավ մարդ են համարում: Բայց բառի օգտագործման այդ ձևը լեզվի հարստացում չի լինի, քանի որ մենք արդեն ունենք «լավ» բառը: Մինչդեռ քրիստոնյա բառը կփչացվի ցանկացած իսկապես օգտակար նպատակի համար, որին այն կարող էր ծառայել:

Հետևաբար, մենք պետք է պահենք սկզբնական, ակնհայտ իմաստը: Քրիստոնյաներ անվանումը առաջին անգամ տրվել է Անտիոքում՝ (Գործք Առաքելոց 11.26) «աշակերտներին», նրանց, ովքեր ընդունում էին առաքյալների ուսմունքը: Որևէ խոսք չկա այն սահմանափակելու նրանցով, ովքեր օգուտ էին քաղել այդ ուսմունքից այնքան, որքան պետք է քաղեին: Որևէ խոսք չկա, որ այն ընդգրկի նրանց, ովքեր ինչ-որ նուրբ, հոգևոր, ներքին ձևով «շատ ավելի մոտ էին Քրիստոսի հոգուն», քան աշակերտներից նվազ բավարարները: Խնդիրը աստվածաբանական կամ բարոյական չէ: Խոսքը միայն բառերի օգտագործման մասին է, որպեսզի բոլորս հասկանանք, թե ինչ է ասվում: Երբ քրիստոնեական վարդապետությունն ընդունող մարդն անարժանավայել է ապրում այդ վարդապետությունը, շատ ավելի պարզ է ասել, որ նա վատ քրիստոնյա է, քան ասել, որ նա քրիստոնյա չէ:

Հուսով եմ, որ ոչ մի ընթերցող չի ենթադրի, որ «զուտ» քրիստոնեությունն այստեղ առաջ է քաշվում որպես գոյություն ունեցող դավանանքների այլընտրանք, ասես թե մեկը կարող է այն նախընտրել ժողովական եկեղեցուց կամ հունական ուղղափառությունից կամ որևէ այլ բանից: Այն ավելի շատ նման է սրահի, որտեղից դռներ են բացվում դեպի մի շարք սենյակներ: Եթե ես կարողանամ որևէ մեկին բերել այդ սրահը, ես արած կլինեմ այն, ինչ փորձել եմ:

Բայց սենյակներում է, ոչ թե սրահում, որտեղ կան բուխարիներ, աթոռներ և ճաշեր: Սրահը սպասելու տեղ է՝ մի տեղ, որտեղից կարելի է փորձել տարբեր դռներ, ոչ թե ապրելու տեղ: Այդ նպատակով սենյակներից ամենավատը (որն էլ այն լինի), կարծում եմ, նախընտրելի է: Այնպես է, որ ոմանք կարող են պարզել, որ պետք է բավական երկար սպասեն սրահում, իսկ մյուսները գրեթե միանգամից համոզված են, թե որ դուռը պետք է թակեն: Ես չգիտեմ, թե ինչու գոյություն ունի այս տարբերությունը, բայց ես վստահ եմ, որ Աստված ոչ ոքի սպասել չի տալիս, եթե չի տեսնում, որ դա նրան օգուտ է:

Երբ վերջապես մտնեք ձեր սենյակը, կտեսնեք, որ երկար սպասելը ձեզ ինչ-որ լավ բան է տվել, որն այլապես չէիք ունենա: Բայց դուք պետք է դա համարեք սպասել, ոչ թե վրան խփել: Դուք պետք է շարունակեք աղոթել լույսի համար, և, իհարկե, նույնիսկ սրահում պետք է սկսեք հնազանդվել այն կանոններին, որոնք ընդհանուր են ամբողջ տան համար: Եւ ամենից առաջ, դուք պետք է հարցնեք, թե ո՞րն է ճիշտ դուռը. ոչ թե այն, որի ներկը և երեսպատումը ձեզ համար ամենահաճելին է: Պարզ լեզվով ասած, հարցը երբեք չպետք է լինի. «Ինձ դո՞ւր է գալիս այս տեսակի ծառայությունը», այլ «Արդյո՞ք այս վարդապետությունները ճշմարիտ են, արդյո՞ք այստեղ սրբություն կա, արդյո՞ք իմ խիղճն ինձ մղում է դեպի սա, արդյո՞ք իմ դժկամությունը թակելու այս դուռը իմ հպարտության պատճառով է, կամ զուտ իմ ճաշակի, կամ այս դռնապանի հանդեպ իմ անձնական հակակրանքի»: Երբ հասնեք ձեր սեփական սենյակին, բարի եղեք նրանց հանդեպ, ովքեր ընտրել են ուրիշ դռներ, և նրանց հանդեպ, ովքեր դեռ սրահում են: Եթե նրանք սխալվում են, նրանք է՛լ ավելի կարիքն ունեն ձեր աղոթքների. և եթե նրանք ձեր թշնամիներն են, ապա ձեզ հրամայված է աղոթել նրանց համար: Դա ամբողջ տան ընդհանուր կանոններից մեկն է:

Ք.Ս. ԼՅՈՒԻՍ

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Քլայվ Ստեյփլս Լյուիսը (1898-1963) նախորդ դարի ամենաընթերցված հեղինակներից է: Լյուիսը ծնվել է Բելֆաստում: Եղել է միջնադարյան գրականության պրոֆեսոր Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններում: Երիտասարդ տարիքում եղել է աթեիստ, սակայն ավելի ուշ դարձել է քրիստոնյա (ինչպես նա է ասում՝ «դժկամորեն»): «Զուտ քրիստոնեությունը» նրա ամենահայտնի գործերից է: Լյուիսի գրվածքների գլխավոր նպատակներից մեկն է եղել՝ ըմբռնելի և հասանելի դարձնել քրիստոնեությունը բոլոր մարդանց համար՝ առանց այն պարզունակ դարձնելու: Կարդալով նրա գրքերը, մենք հասկանում ենք, որ քրիստոնեական դավանանքի կորիզը, այն ինչ Լյուիսն անվանում է «Զուտ քրիստոնեություն», իրականում այնքան էլ բարդ չէ, որքան շատ մարդիկ և շատ հեղինակներ (ինչ-ինչ պատճառներով) այն դարձրել են:

Լյուիսի լեզուն ունի երկու աչքի ընկնող առանձնահատկություն, որ միանգամից գրավում է ենթերցողին՝ պարզություն և հստակություն: Ընտրված բառեր խիստ ճշգրիտ են: Թարգմանելիս ինձ շատ օգտակար է եղել Լյուիսի խորհուրդները գրելու վերաբերյալ: Հետևյալ քաղվածքը Լյուիսի խորհուրդներից ծառայել է որպես ուղենիշ նրա մտածողությունը հասկանալու համար: «Հստակ իմացիր, թե ի՛նչ ես ուզում ասել, և ասա հենց դա: Մեծ ջանքեր գործադրիր հստակ լինելու համար: Միշտ փորձիր օգտագործել լեզուն այնպես, որպեսզի միանգամայն հասկանալի լինի, թե ինչ ի նկատի ունես և համոզվիր, որ քո նախադասությունը որևէ այլ բան չի կարող նշանակել: Միշտ նախընտրիր պարզ և կոնկրետ բառը՝ երկար և անորոշ բառից: Երբեք մի՛ օգտագործիր վերացական գոյականներ, եթե կոնկրետ գոյականները բավարար են: Եթե նկատի ունես. «Ավելի շատ մարդիկ մահացան», մի՛ ասա. «Մահացությունը աճեց»: Թեմային չհամապատասխանող մեծ բառեր մի՛ օգտագործիր՝ մի՛ ասա «անսահման», երբ նկատի ունես «մեծ»»: Թարգմանելիս փորձել եմ մտքումս միշտ պահել վերոնշյալը, միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ Լյուիսը եղել է հայտնի գիտնական՝ գրականագետ և գրաքննադատ:

Այս ճշգրտությամբ հանդերձ, Լյուսի գործերը աներևակայելիորեն լի են վառ պատկերներով: Նույնիսկ այս գրքում, որը կարծես թե աստվածաբանական գրականության նմուշ է, գրեթե անհնար է թերթել մի քանի էջ՝ առանց դրանց հանդիպելու: Ահա մի քանի օրինակ՝ «Թշնամու կողմից գրավված տարածք՝ ահա՛ թե ինչ է այս աշխարհը: Քրիստոնեությունը այն պատմությունն է, թե ինչպես է օրինավոր թագավորը ժամանել, կարելի է ասել՝ ժամանել ծպտված, և մեզ բոլորիս կոչ է անում մասնակցելու դիվերսիայի մեծ արշավի», «Հավիտենական Էակը, ով գիտի ամեն ինչ և ով ստեղծեց ողջ տիեզերքը, դարձավ ոչ միայն մարդ, այլև (մինչ այդ) երեխա, իսկ մինչ այդ՝ պտուղ՝ Կնոջ մարմնում: Եթե ցանկանում եք մոտավորապես հասկանալ, թե ինչ է սա նշանակում, պատկերացրեք, թե որքան կուզենայիք դառնալ լորտնուկ կամ խեցգետին»: Սրանցից բացի, շատ են առկա խոսակցական անգլերենի դարձվածքները: Սրանցից շատերը, ցավոք, չունեն իրենց բառացի հայերեն

համարժեքը, և ստիպված եմ եղել օգտագործել հայերենում առկա իմաստով նման դարձվածքներ։

Արարատ Հարությունյան, 2023թ.

S. D. G.

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

## ՃԻՇՏՆ ՈՒ ՍԽԱԼԸ ՈՐՊԵՍ ՏԻԵԶԵՐՔԻ ԻՄԱՍՏԻ ԲԱՆԱԼԻՆ

## 1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Բոլորն էլ լսել են մարդկանց վիճելիս: Երբեմն այն զվարճալի է թվում, երբեմն էլ՝ ուղղակի տհաճ: Բայց ինչպիսին էլ որ այն լինի, ես կարծում եմ, որ մենք կարող ենք նկատել շատ կարևոր բաներ նրանց ասածների մեջ: Նրանք այսպիսի բաներ են ասում են. «Արդյո՞ք քեզ դուր կգար, եթե մեկ ուրիշը նույնը քեզ աներ», «Դա իմ տեղն է, առաջինը ե՛ս էի այդտեղ», «Հանգիստ թո՛ղ նրան, նա քեզ վնաս չի տալիս», «Ինչո՞ւ պետք է դու առաջինը ներս խցկվես», «Տու՛ր ինձ մի քիչ քո նարնջից, ես իմ նարնջից քեզ տվել էի» , «Լա՜վ էլի, դու խոստացել էիր»: Մարդիկ ասում են այսպիսի բաներ ամեն օր՝ թե՛ կրթվածները, թե՛ անկիրթները, թե՛ երեխաները, եւ թե՛ մեծահասակները:

Այն, ինչ ինձ հետաքրքրում է այստեղ բոլոր այս դիտարկումների վերաբերյալ, այն է, որ այն մարդը, որը անում է դրանք, չի ասում, որ մյուս մարդու պահվածքը իրեն պարզապես դուր չի գալիս: Նա վկայակոչում է վարքի ինչ-որ մի չափանիշ, որի մասին նա ակնկալում է, որ մյուս մարդը տեղյակ է: Եւ մյուս մարդը շատ հազվադեպ է պատասխանում, թե՝ «Կորչի՛ր գրողի ծոցը քո չափանիշով»: Գրեթե միշտ նա փորձում է ցույց տալ, որ այն, ինչ ինքն անում էր իրականում չի խախտում այդ չափանիշը, կամ, եթե այն իրոք խախտում է դա, ապա կա ինչ-որ հատուկ պատճառ: Նա պնդում է, որ կա ինչ-որ հատուկ պատճառ այս մասնավոր դեպքում, թե ինչու այն անձը, որն առաջինն էր հայտնվել այդ տեղում պետք է գիջի այն, կամ որ իրավիճակը լրիվ այլ էր, երբ նրան տրվել էր այդ նարնջի մի մասը, կամ ինչ-որ մի բան փոխվել է, որը նրան թույլ է տալիս դրժել իր խոստումը: Եւ թվում է, իրականում, որ երկու կողմն էլ իրենց մտքում ունեին խաղի կանոնների, կամ բարեկրթության, կամ բարոյականության, կամ ինչ որ ուզում եք այն կոչել, մի Օրենք կամ Կանոն, որի վերաբերյալ նրանք համաձայնել էին: Եւ իրոք դա այդպես է: Եթե այդպես չլիներ, նրանք միգուցե կարող էին գազանների նման կռվել, բայց չէին կարող վիճել՝ այդ բառի մարդկային առումով: Վիճելը նշանակում է ցույց տալ, որ մյուս մարդը սխալվում է: Եւ անիմաստ կլիներ փորձել դա անել, եթե դու եւ նա չունենայիք Ճիշտ ու Սխալի վերաբերյալ որոշակի համաձայնություն, ինչպես որ անիմաստ կլիներ ասել, որ ֆուտբոլիստը խախտում է թույլ տվել, եթե ֆուտբոլի կանոնների վերաբերյալ չլիներ որոշակի համաձայնություն:

Այս Ճիշտ ու Սխալի Օրենքը կամ Կանոնը առաջ կոչվում էր Բնության Օրենք: Մեր օրերում, երբ խոսում ենք «բնության օրենքների» մասին, սովորաբար ի նկատի ունենք այնպիսի բաները, ինչպիսիք են ձգողականությունը, կամ ժառանգականությունը, կամ քիմիայի օրենքները: Բայց երբ հին մտածողները Ճիշտ ու Սխալի Օրենքը անվանում էին «Բնության Օրենք», նրանք իրականում ի նկատի ունեին Մարդկային Բնության Օրենքը: Սրա գաղափարը այն էր, որ ինչպես բոլոր մարմինները ղեկավարվում են ձգողականության օրենքով եւ օրգանիզմները՝ կենսաբանական օրենքներով, այնպես էլ մարդ կոչվող արարածը ուներ իր օրենքը – այս կարեւոր բացառությամբ՝ որ մարմինները չէին կարող ընտրել, թե կենթարկվեին արդյո՞ք նրանք ձգողականության օրենքին, թե ոչ, բայց մարդը կարող էր ընտրել, թե ենթարկվո՞ւմ է նա Մարդկային Բնության Օրենքին, թե՞ ոչ:

Մենք կարող ենք սա մեկ այլ կերպ ասել: Ցանկացած մարդ ամեն պահի ենթարկվում է մի քանի տարբեր օրենքների բազմությունների, բայց սրանց մեջ կա միայն մեկը, որին նա ազատ է չհնազանդվելու: Որպես մարմին՝ նա ենթակա է ձգողականությանը եւ չի կարող չհնազանդվել նրան – եթե նրան թողնենք օդի մեջ առանց հենարանի, նա չունի ավելի մեծ ընտրություն ընկնելու կամ չընկնելու, քան քարը: Որպես օրգանիզմ՝ նա ենթակա է տարբեր կենսաբանական օրենքների, որոնց նա չի կարող չհնազանդվել ավելին, քան որեւէ այլ կենդանի: Այսինքն՝ նա չի կարող չհնազանդվել այն օրենքներին, որ նա ունի ընդհանուր ուրիշ բաների հետ. բայց այն օրենքը, որը հատուկ է իր մարդկային բնությանը, այն օրենքը, որն ընդհանուր չէ ուրիշ կենդանիների կամ բույսերի կամ անօրգանական բաների հետ, այն օրենքն է, որին նա կարող է չհնազանդվել, եթե ցանկանում է:

Այս օրենքը կոչվում էր Բնության Օրենքը, որովհետեւ մարդիկ կարծում էին, որ բոլորն այն գիտեին իրենց բնությամբ եւ կարիք չունեին այն սովորելու: Նրանք, իհարկե, նկատի չունեին, որ հնարավոր չէր գտնել հատուկենտ մարդիկ, որոնք այն չգիտեին, ինչպես որ հնարավոր է գտնել հատուկենտ մարդիկ, որոնք գունակույր են կամ երաժշտական լսողություն բացարձակ չունեն: Նրանք կարծում էին, սակայն, որ եթե վերցնեինք ամողջական մարդկությունը, ապա պարկեշտ վարքի մարդկային գաղափարը բոլորի համար ակնհայտ էր: Եւ ես կարծում եմ, որ նրանք ճիշտ էին: Եթե ոչ, ապա ամեն ինչ, որ մենք ասել էինք պատերազմի մասին անհեթեթություն էր: Ի՞նչ իմաստ կար ասելու, որ թշնամին սխալ էր, բացառապես եթե Ճիշտը իրականություն է, որի մասին նացիստները իրենց սրտի խորքում գիտեին նույնքան, որքան մենք, եւ պետք է այն կիրառեին: Եթե նրանք պատկերացում չունենային նրա մասին, ինչը որ մենք համարում ենք ճիշտ, ապա չնայած նրան, որ մենք հավանաբար այնուամենայնիվ ստիպված էինք լինելու նրանց հետ կռվել, մենք չէինք կարող նրանց մեղադրել դրա համար ավելին, քան նրանց մազերի գույնի համար:

Ես գիտեմ, որ որոշ մարդիկ ասում են, որ Բնության Օրենքի կամ պարկեշտ վարքի գաղափարը անհիմն է, քանի որ տարբեր քաղաքակրթություններ տարբեր ժամանակներում տարբեր բարոյագիտություններ են ունեցել:

Բայց դա ճիշտ չէ: Եղել են տարբերություններ նրանց բարոյագիտությունների միջև, բայց դրանք երբեք ամբողջական տարբերության չեն հասել: Եթե որեւէ մեկը նեղություն կրի եւ համեմատի, ասենք, հին եգիպտացիների, բաբելոնացիների, հնդիկների, չինացիների, հույների եւ հռոմեացիների բարոյագիտությունները, ապա նա կզարմաա, թե որքանով դրանք նման իրար եւ մեր սեփականին: Սրա որոշ փաստարկությունը ես բերում եմ մեկ այլ գրքի՝ «Մարդու ոչնչացումի» հավելվածում: Սակայն մեր ներկա նպատակի համար ես պարզապես կխնդրեի ընթերցողին պատկերացնել, թե ամբողջովին տարբեր բարոյագիտությունը ի՞նչ կնշանակեր: Պատկերացրեք մի երկիր, որտեղ մարդիկ հիացմունքի էին արժանանում ճակատամարտից փախչելու համար, կամ որտեղ մարդը հպարտանում էր իր նկատմամբ ամենաբարի գտնված մարդկանց խաբելուց: Ավելի հեշտ է պատկերացնել մի երկիր, որտեղ երկու գումարած երկուսը հավասար է հինգի: Մարդիկ տարբեր կարծիքներ են

ունեցել, թե ում նկատմամբ է պետք անձնվեր լինել՝ սոսկ քո ընտանիքի, թե քո հայրենակիցների, թե բոլորի: Բայց նրանք միշտ համաձայնել են, որ դու չպետք է քո սեփական անձը առաջնային դասես: Եսասիրությունը երբեք հարգանքի չի արժանացել: Մարդիկ տարբերություններ են ունեցել, թե արդյո՞ք պետք է ունենալ մեկ, թե չորս կին: Սակայն նրանք միշտ համաձայն են եղել, որ չես կարող պարզապես ունենալ բոլոր այն կանանց, որոնց ուզում ես:

Բայց ամենազարմանալին սա է: Ամեն անգամ, երբ հանդիպում ես մի մարդու, որը ասում է, որ ինքը չի հավատում Ճիշտ ու Սխալի իրական գոյությանը, այդ նույն մարդը հաջորդ պահին ետ է կանգնում իր ասածից: Նա կարող է դրժել քեզ իր տված խոստումը, բայց եթե դու դրժես նրան տվածդ խոստումը, նա կդժգոհի՝ ասելով. «Արդար չէ՛» ավելի արագ, քան դու կարող ես ասել «Ժամը քանի՞սն է»: Ինչ-որ պետություն կարող է ասել, որ պայմանագրերը կարեւոր չեն, բայց անմիջապես հետո այն ինքն իրեն դնում է հակասության մեջ՝ պատճառաբանելով, որ կոնկրետ այն պայմանագիրը, որ այն ուզում է չեղարկել, անարդար էր: Բայց եթե պայմանագրերը կարեւոր չեն եւ Ճիշտն ու Սխալը գոյություն չունեն – այլ կերպ ասած Բնության Օրենքը գոյություն չունի - , ապա ո՞րն է տարբերությունը արդար եւ անարդար պայմանագրերի միջեւ: Մի՞թե սրանով այդ պետությունը չի խոստովանում, որ ինչ էլ որ այն ասի, այն այնուամենայնիվ նույնքան լավ գիտի Բնության Օրենքը, ինչպես բոլորը:

Ուրեմն կարծես մենք ստիպված ենք հավատալու իրական Ճիշտ ու Սխալին: Մարդիկ կարող են երբեմն սխալվել դրանց վերաբերյալ, ինչպես որ երբեմն մարդիկ սխալվում են գումարումներ անելիս, սակայն դրանք՝ բազմապատկման աղյուսակի նման, պարզապես ճաշակի կամ կարծիքի խնդիր չեն: Այսպիսով՝ եթե բոլորս համաձայն ենք սրա վերաբերյալ, ես կանցնեմ իմ հաջորդ մտքին, որը հետեւյալն է: Մեզանից ոչ մեկը իրապես Բնության Օրենքը չի պահպանում: Եթե ձեր միջև բացառություններ կան, ապա ես նրանցից ներողություն եմ խնդրում: Ավելի լավ կլինի, որ նրանք մեկ ուրիշ գիրք կարդան, քանի որ իմ ասելիքից ոչինչ նրանց չի վերաբերելու: Հիմա գալով մնացած սովորական մարդկանց:

Ես հույս ունեմ, որ դուք սխալ չեք հասկանա այն, ինչ ես ուզում եմ ասել: Ես չեմ քարոզում, եւ Երկինքը վկա, որ չեմ ձեւացնում, թե ավելի լավն եմ, քան ուրիշ մեկը: Ես ցանկանում եմ ուղղակի ձեր ուշադրությանը հրավիրել մեկ փաստ՝ այն փաստը, որ այս տարի, այս ամիս կամ ավելի հավանաբար հենց այսօր, մենք թերացել ենք ինքներս կիրառել այն տեսակի վարքը, որ մենք ակնկալում ենք ուրիշ մարդկանցից: Կարող են լինել բազմաթիվ պատճառաբանություններ մեզ համար: Այն անգամ, որ դու այդքան անարդար էիր երեխաների հանդեպ, նրանից էր, որ դու սաստիկ հոգնած էիր: Այն ստվերային պայմանավորվածությունը փողի հետ կապված (այն, որ համարյա մոռացել էիր) քեզ պատահեց այն ժամանակ, երբ վիճակդ շատ վատ էր: Եւ այն, ինչ որ խոստացել էիր անել քո հին ծանոթի համար եւ չես արել – դե եթե իմանայիր, թե որքան սարսափելի զբաղված ես լինելու, երբեք չէիր խոստանա: Ինչ վերաբերում է քո վերաբերմունքին կնոջդ (կամ ամուսնուդ) կամ քրոջդ (կամ եղբորդ) հանդեպ, ապա եթե ես իմանայի, թե նրանք որքան զայրացնող կարող են լինել, ապա ես ընդհանրապես չէի զարմանա. եւ, ի վերջո, ես ի՞նչ գործ ունեմ:

Ես էլ նույնն եմ: Ես նկատի ունեմ, որ ես ինքս էլ չեմ կարողանում լավ պահել Բնության Օրենքը, եւ երբ ինչ-որ մեկը ինձ դրա մասին հիշեցնում է, մտքումս առաջանում է ձեռքիս երկարության պատճառաբանությունների մի շարան: Այս պահին էական չէ, թե արդյո՞ք դրանք լավ պատճառաբանություններ են: Բանն այն է, որ սա եւս մեկ ապացույց է այն բանի, թե որքան խորությամբ ենք մենք, ուզենք, թե չուզենք, հավատում Բնության Օրենքին: Եթե մենք չենք հավատում պարկեշտ վարքին, ինչո՞ւ պետք է այդքան մտահոգվենք պատրվակներ փնտրելու մեր ոչ պատշաճ վարքը արդարացնելու համար: Ճշմարտությունն այն է, որ մենք այնքան ենք հավատում պարկեշտությանը, - այնքան ենք զգում Օրենքի ճնշումը մեզ վրա, - որ մեզ համար անտանելի է առերեսվել այն փաստի հետ, որ մենք խախտում ենք այն, և, հետևաբար, փորձում ենք մեզնից թոթափել պատասխանատվությունը: Իրոք՝ դուք նկատում եք, որ միայն մեր վատ վարքի համար է, որ մենք գտնում ենք այս բոլոր բացատրությունները: Միայն մեր վատ բնավորությունն է, որ մենք վերագրում ենք հոգնած, անհանգստանած կամ սոված լինելուն: Մեր լավ բնավորությունը մենք վերագրում ենք ինքներս մեզ:

Սրանք, ուրեմն, այն երկու բաներն են, որոնք ես ուզում էի նշել: Նախ՝ որ մարդկային էակները, ամբողջ երկրագնդի վրա, ունեն այս հետաքրքիր գաղափարը, որ իրենք պետք է որոշակի կերպ վարվեն և իրականում չեն կարող ազատվել դրանից: Երկրորդ՝ որ նրանք իրականում այդպես չեն վարվում: Նրանք գիտեն Բնության Օրենքը. նրանք խախտում են այն: Այս երկու փաստերը մեր և մեր տիեզերքի մասին ամբողջ հստակ մտածողության հիմքն են:

## 2. ՈՐՈՇ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եթե դրանք հիմքն են, ավելի լավ է կանգ առնեմ, որպեսզի այդ հիմքն ամուր դարձնեմ նախքան շարունակելը: Իմ ստացած նամակներից մի քանիսը ցույց են տալիս, որ շատերը դժվարանում են հասկանալ, թե որն է Մարդկային Բնության այս օրենքը կամ Բարոյական Օրենքը կամ Պարկեշտ Վարքի կանոնը:

Օրինակ՝ որոշ մարդիկ ինձ գրել էին՝ ասելով. «Այն, ինչ դուք անվանում եք Բարոյական Օրենք, մի՞թե պարզապես մեր հոտային բնազդը չէ՞ և մի՞թե այն չի զարգացել ճիշտ այնպես, ինչպես մեր բոլոր մյուս բնազդները»: Ես չեմ ժխտում, որ մենք կարող ենք հոտային բնազդ ունենալ, բայց Բարոյական Օրենք ասելով ես դա նկատի չունեմ: Բոլորս էլ գիտենք, թե ինչ է բնազդի մղումը՝ լինի դա մայրական սերը, կամ սեռական բնազդը կամ ուտելու բնազդը: Դա այն է, որ դուք ուժեղ կարիք կամ ցանկություն եք զգում գործել որոշակի ձևով: Եվ, իհարկե, մենք երբեմն զգում ենք մեկ այլ անձի օգնելու հենց այդպիսի ցանկություն. եվ անկասկած այդ ցանկությունը պայմանավորված է հոտային բնազդով: Բայց օգնելու ցանկություն զգալը բավականին տարբերվում է այն զգացողությունից, որ դու ուզես, թե չուզես, պարտավոր ես օգնելու: Ենթադրենք, որ դուք լսում եք վտանգի մեջ հայտնված մի մարդու օգնության աղաղակը: Դուք հավանաբար կզգաք երկու ցանկություն. մեկը՝ օգնելու ցանկություն (ձեր հոտային բնազդից դրդված), մյուսը՝ վտանգից զերծ մնալու ցանկություն (ինքնապահպանման բնազդից դրդված): Բայց ձեր ներսում, բացի այս երկու ցանկություններից, դուք կգտնեք նաև մի երրորդ բան, որն ասում է ձեզ, որ պետք է հետևել օգնության մղումին և ճնշել փախչելու մղումը: Հիմա՝ այս բանը, որը դատում է երկու բնազդների միջև, որը որոշում է, թե որը պետք է խրախուսվի, ինքնին չի կարող լինել դրանցից մեկը: Նույն հեշտությամբ կարելի կլիներ ասել, որ երաժշտական պարտիտուրը, որը ձեզ հուշում է, որ տվյալ պահին տվյալ նոտան նվագեք դաշնամուրի վրա, և ոչ թե մեկ ուրիշը, ինքնին ստեղնաշարի նոտաներից մեկն է: Բարոյական Օրենքը մեզ հուշում է այն մեղեդին, որը մենք պետք է նվագենք. մեր բնազդները պարզապես ստեղներն են:

Մեկ ուրիշ ձև տեսնելու, որ Բարոյական Օրենքը պարզապես մեր բնազդներից մեկը չէ, հետևյալն է: Եթե երկու բնազդներ հակասության մեջ են, և տվյալ արարածի մտքում ոչինչ չկա, բացի այդ երկու բնազդներից, ակնհայտորեն երկուսից ուժեղը պետք է հաղթի: Բայց այն պահերին, երբ մենք առավելագույնս գիտակցում ենք Բարոյական Օրենքը, սովորաբար թվում է, որ այն մեզ դրդում է անսալ թույլ բնազդին: Դուք հավանաբար ցանկանում եք ապահով լինել շատ ավելի, քան ուզում եք օգնել խեղդվող մարդուն, բայց Բարոյական Օրենքը հուշում է, այնուամենայնիվ, օգնել նրան: Եվ իրոք՝ մի՞թե այն չի դրդում մեզ ուժեղացնելու ճիշտ բնազդը ավելին, քան այն բնականորեն կա: Ես նկատի ունեմ, որ մենք հաճախ մեր պարտքն ենք համարում խթանել հոտային բնազդը՝ արթնացնելով մեր երևակայությունը և արթնացնելով մեր խղճահարությունը և այլն, որպեսզի բավականաչափ ուժ հավաքենք ճիշտ բանը անելու համար: Բայց ակնհայտ է, որ մենք չենք գործում բնազդից

դրդված, երբ փորձում ենք ինչ-որ բնազդ ավելի ուժեղ դարձնել, քան այն կա: Այն բանը, որ հուշում է ձեզ. «Քո հոտային բնազդը քնած է: Արթնացրու՛ այն», ինքնին չի կարող *լինել* հոտային բնազդը: Այն, ինչը ձեզ ասում է, թե դաշնամուրի ո՛ր նոտան է պետք ավելի բարձր հնչեցվի, ինքնին չի կարող լինել այդ նոտան:

Ահա մի երրորդ ձև սա տեսնելու համար: Եթե Բարոյական Օրենքը մեր բնազդներից մեկը լիներ, ապա մենք պետք է կարողանայինք մատնանշել մեր ներսում եղած ինչ-որ բնազդ, որը միշտ այն էր, ինչը մենք անվանում ենք «լավ», միշտ համահունչ լինելով պարկեշտ վարքի կանոնին: Բայց մենք չենք կարող: Չկա մեր որևէ բնազդ, որը Բարոյական Օրենքը չկարողանա երբեմն մեզ հուշել, որ այն ճնշենք, կամ որեւէ բնազդ, որը այն չկարողանա երբեմն հուշել, որ խրախուսենք: Սխալ է մտածել, որ մեր որոշ բնազդները, լինի դա մայրական սերը կամ հայրենասիրությունը, լավն են, իսկ մյուսները, ինչպիսին սեքսը կամ մարտական բնազդը, վատն են: Միակ բանը, որ կարող ենք ասել այն է, որ դեպքերը, որտեղ անհրաժեշտ է լինում զսպել մարտական բնազդը կամ սեռական ցանկությունը, ավելի հաճախ են պատահում, քան նրանք, որտեղ պետք է զսպել մայրական սերը կամ հայրենասիրությունը: Բայց կան իրավիճակներ, երբ ամուսնացած տղամարդու պարտքն է խրախուսել իր սեռական մղումը, իսկ զինծառայողին՝ խրախուսել իր մարտական բնազդը: Կան նաև առիթներ, երբ մայրը պետք է ճնշի սեփական սիրո բնազդը իր երեխաների նկատմամբ, կամ տղամարդը՝ իր հայրենասիրության բնազդը սեփական երկրի նկատմամբ, այլապես դրանք անարդարության կհանգեցնեն այլ մարդկանց երեխաների կամ երկրների հանդեպ: Եթե լինենք ճշգրիտ՝ լավ և վատ մղումներ չկան: Եւս մեկ անգամ մտածեք դաշնամուրի մասին: Այն չունի երկու տեսակի նոտաներ՝ «ճիշտ» և «սխալ»: Յուրաքանչյուր նոտա մի պահի ճիշտ է, իսկ մի ուրիշ պահի՝ սխալ: Բարոյական Օրենքը որևէ մեկ բնազդ կամ բնազդների ամբողջություն չէ. այն մի բան է, որը մի տեսակ մեղեդի է ստեղծում՝ (այն մեղեդին, որը մենք անվանում ենք բարություն կամ ճիշտ վարք) ուղղորդելով բնազդները:

Ի դեպ, այս փաստը ունի մեծ գործնական հետևանք: Ամենավտանգավոր բանը, որ կարող ես անել, դա վերցնել քո սեփական բնույթի որևէ մղում և դարձնել այն այն բանը, որին պետք է ամեն գնով հետևես: Չկա դրանցից մեկը, որը մեզ դև չի դարձնի, եթե այն դարձնենք որպես բացարձակ ուղեցույց: Միգուցե դուք կարող եք կարծել, որ առհասարակ սերը մարդկության հանդեպ անվտանգ է, բայց դա այդպես չէ: Եթե արդարությունը միջից դուրս հանեք, կտեսնեք, որ «հանուն մարդկության» մարդը ի վիճակի է համաձայնություններ խախտել եւ դատավարություններում կեղծ ապացույցներ ներկայացնել, վերջում դառնալով դաժան և խաբեբա մարդ:

Ուրիշները ինձ գրել էին, հարցնելով. «Մի՞թե այն, ինչ Դուք անվանում եք Բարոյական Օրենք պարզապես կենցաղային սովորույթ չէ, մի բան, որը մենք ձեռք ենք բերել կրթությամբ»: Իմ կարծիքով այստեղ թերըմբռնում կա: Այն մարդիկ, որոնք տալիս են այդ հարցը սովորաբար ենթադրում են, որ եթե մենք սովորել ենք մի բան մեր ծնողներից կամ ուսուցիչներից, ապա այդ բանը պետք է լինի սոսկ մարդկային հայտնագործություն: Բայց, իհարկե, դա այդպես չէ:

Մենք բոլորս էլ սովորել ենք բազմապատկման աղյուսակը դպրոցում: Երեխան, որը մեծացել է միայնակ, անմարդաբնակ մի կղզում, այն չէր իմանա: Բայց հաստատապես սրանից չի հետևում, որ բազմապատկման աղյուսակը սոսկ մարդկային հնարվածք է, մի բան, որ մարդ արարածը կարող էր իր համար ստեղծել կամ կարող էր ստեղծել այլ կերպ, եթե ցանկանար: Ես ամբողջովին համաձայն եմ, որ մենք սովորում ենք Պարկեշտ Վարքի Օրենքը ծնողներից եւ ուսուցիչներից, ընկերներից և գրքերից, ինչպես որ մենք սովորում ենք ցանկացած այլ բան: Բայց որոշ բաներ, որ մենք սովորում ենք սոսկ սովորույթներ են, որոնք կարող էին այլ լինել – մենք սովորել ենք ավտոմեքենան փողոցի ձախ կողմով վարել, բայց նույն հեշտությամբ օրենքը կարող էր պարտադրել այն վարել աջ կողմով – եւ ուրիշները, ինչպիսին է մաթեմատիկան, իրական ճշմարտություններ են: Խնդիրն այն է, թե Մարդկային Բնության Օրենքը ո՛ր դասին է պատկանում:

Կա երկու պատճառ, որոնք մեզ հուշում են, որ այն պատկանում է նույն դասին, ինչ մաթեմատիկան: Առաջինը, ինչպես ասացի առաջին գլխում, այն է, որ չնայած նրան, որ կան տարբերություններ բարոյական գաղափարների միջև մի ժամանակի եւ մեկ այլի, կամ մի երկրի եւ մյուս ուրիշի, այդ տարբերություններն իրականում այնքան էլ մեծ չեն - ոչ այնքան մեծ, որքան մարդկանց մեծամասնությունը պատկերացնում է - և դուք կարող եք նկատել նույն օրենքը, որը գործում է բոլորի միջեւ. մինչդեռ սովորական պայմանականությունները, ինչպես ճանապարհի երթեւեկության կանոնը կամ մարդկանց հագուստի տեսակը, կարող են ցանկացած չափով տարբերվել: Մյուս պատճառը սա է: Երբ մտածում եք մի ժողովրդի և մյուսի բարոյականությունների միջև եղած այս տարբերությունների մասին, կարծո՞ւմ եք, որ մի ժողովրդի բարոյականությունը երբևէ ավելի լավը կամ ավելի վատն է, քան մյուսինը: Արդյո՞ք փոփոխություններից որևէ մեկը բարելավում է եղել: Եթե ոչ, ապա, իհարկե, երբեք բարոյական առաջընթաց չէր կարող լինել: Առաջընթաց նշանակում է ոչ միայն փոխվել, այլ փոխվել դեպի լավը: Եթե բարոյական գաղափարների ոչ մի բազմություն չլիներ ավելի ճշմարիտ կամ ավելի լավ, քան որևէ այլը, ապա իմաստ չէր լինի գերադասել քաղաքակիրթ բարոյականությունը՝ վայրենիների բարոյականությունից, կամ քրիստոնեական բարոյականությունը՝ նացիստական բարոյականությունից: Իրականում, իհարկե, մենք բոլորս հավատում ենք, որ որոշ բարոյականություններ ավելի լավն են, քան մյուսները: Մենք իսկապես հավատում ենք, որ ոմանք այն մարդկանցից, ովքեր փորձում էին փոխել իրենց ժամանակի բարոյական գաղափարները, այն էին, ինչ մենք կանվանեինք Բարեփոխիչներ կամ Առաջամարտիկներ՝ մարդիկ, որոնք բարոյականությունը ավելի լավ էին հասկանում, քան իրենց մերձավորները: Շատ լավ: Այն պահին, երբ ասում եք, որ բարոյական գաղափարների մի բազմություն կարող է ավելի լավը լինել, քան մյուսը, դուք, ըստ էության, դրանք երկուսն էլ չափում եք ինչ-որ չափանիշով՝ ասելով, որ դրանցից մեկն ավելի մոտ է այդ չափանիշին, քան մյուսը: Բայց չափանիշը, որը չափում է երկու բան, մի բան է, որը այդ երկուսից էլ տարբեր է: Դուք, ըստ էության, այդ երկուսը համեմատում եք ինչ-որ Իրական Բարոյականության հետ՝ ընդունելով, որ գոյություն ունի Իրական Ճիշտ՝ անկախ այն բանից, թե ինչ են մտածում մարդիկ, և որ որոշ մարդկանց պատկերացումներն ավելի մոտ են այդ իրական Ճշտին, քան մյուսները: Կամ

այսպես ասենք. եթե Ձեր բարոյական գաղափարները կարող են լինել ավելի ճշմարիտ, իսկ նացիստների գաղափարները՝ նվազ ճշմարիտ, ապա պետք է ինչ -որ բան, ինչ -որ իրական բարոյականություն, որի նկատմամբ դրանք այդպիսին են: Պատճառը, թե ինչու Նյու Յորքի մասին Ձեր պատկերացումը կարող է լինել ավելի ճիշտ կամ նվազ ճիշտ, քան իմը, այն է, որ Նյու Յորքն իրական վայր է, որը գոյություն ունի անկախ այն բանից, թե մեզնից յուրաքանչյուրը ինչ է մտածում նրա մասին: Եթե երբ մեզանից յուրաքանչյուրը ասելով «Նյու Յորք» ի նկատի ունի միայն «Այն քաղաքը, որը ես պատկերացնում եմ իմ մտքում», ապա ինչպե՞ս կարող էր մեզանից մեկը ունենալ ավելի ճիշտ գաղափար Նյու Յորքի մասին, քան մյուսը: Ճշմարտության կամ կեղծիքի հարց ընդհանրապես չէր լինի: Նույն կերպ, եթե Պարկեշտ Վարքի Կանոնը նշանակեր պարզապես «այն, ինչ յուրաքանչյուր ազգ հավանություն է տալիս», անիմաստ կլիներ ասել, որ որևէ ազգ երբևէ ավելի ճիշտ է եղել իր հավանության մեջ, քան մյուսները. անիմաստ է ասել, որ աշխարհը երբևէ կարող է բարոյապես զարգանալ կամ բարոյապես վատթարանալ:

Ես եզրակացնում եմ, հետեւաբար, որ չնայած մարդկանց Արժանապատիվ Վարքի գաղափարների միջև եղած տարբերությունները հաճախ ձեզ ստիպում են կասկածել, որ ընդհանրապես իրականում գոյություն ունի բնական Վարքի Օրենք, սակայն այն, ինչ մենք ստիպված ենք մտածել այդ տարբերությունների մասին, իրոք, հակառակն է ապացուցում: Բայց վերջին մի խոսք ավարտելուց առաջ: Ես հանդիպել եմ մարդկանց, որոնք չափազանցնում են տարբերությունները, քանի որ նրանք չեն տարբերակել բարոյականության և փաստերի վերաբերյալ համոզմունքների տարբերությունները: Օրինակ՝ մի մարդ ինձ ասել էր. «Անգլիայում երեք հարյուր տարի առաջ մարդիկ վհուկներին մահապատժի էին ենթարկում: Դա՞ եք կոչում Մարդու Բնության կամ Ճիշտ Վարքի կանոն»: Բայց, անշուշտ, վհուկներին մահապատժի չենթարկելու պատճառն այն է, որ մենք չենք հավատում, որ նման բաներ կան: Եթե մենք հավատայինք դրան, եթե մենք իսկապես մտածեինք, որ կան մարդիկ, որոնք վաճառվել են սատանային և դրա դիմաց ստացել են գերբնական ուժեր և այդ ուժերն օգտագործել էին իրենց հարևաններին սպանելու կամ նրանց խելագարելու կամ վատ եղանակ ստեղծելու համար, անշուշտ, բոլորը համաձայն կլինեին, որ եթե որևէ մեկն արժանի է մահապատժի, ապա դա այդ կեղտոտ դավաճաններն են: Այստեղ բարոյական սկզբունքի տարբերություն չկա. տարբերությունը պարզապես փաստերի մեջ է: Վհուկներին չհավատալը կարող է իմացության մեջ մեծ առաջընթաց լինել. նրանց մահապատժի չենթարկելը բարոյական առաջընթաց չէ, երբ չես կարծում, որ նրանք գոյություն ունեն: Մենք գթասիրտ չէինք անվանի մեկին մկան թակարդներ դնելը դադարեցնելու համար, եթե նա դա աներ, քանի որ կարծում էր, որ տանը մկներ չկան:

## 3. ՕՐԵՆՔԻ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ ես նորից անդրադառնում եմ այն ամենին, ինչ ասել էի առաջին գլխի վերջում, որ երկու տարօրինակ բան կա մարդկային ցեղին առնչվող: Նախ, որ նրանք իրենց հետապնդված են զգում վարքի ինչ-որ գաղափարով, որը նրանք պետք է կիրառեին՝ այն, ինչ կարելի է անվանել խաղի արդար կանոններ, կամ պարկեշտություն, կամ բարոյականություն, կամ Բնության Օրենք: Երկրորդ, որ նրանք իրականում չեն կիրառում այն: Հիմա ձեզանից ոմանք կարող են զարմանալ, թե ինչու ես սա անվանեցի տարօրինակ: Այն ձեզ կարող է թվալ ամենաբնական բանը աշխարհում: Մասնավորապես՝ դուք երևի մտածեցիք, որ ես բավականին կոշտ էի մարդկային ցեղի նկատմամբ: Վերջ ի վերջո, միգուցե դուք կարող եք նշել, որ այն, ինչ ես անվանում եմ Ճշտի և Սխալի կամ Բնության Օրենքի խախտում, նշանակում է միայն այն, որ մարդիկ կատարյալ չեն: Եվ ինչու՞ պետք է ես ակնկալեի, որ նրանք կատարյալ լինեին: Դա կլիներ լավ պատասխան, եթե այն, ինչ ես փորձում էի անել, դա ամրագրելն էր մեղադրանքի ճշգրիտ չափաբաժինը, որը մեզ հասցեագրված է, երբ մենք չենք վարվում այնպես, ինչպես ակնկալում ենք, որ ուրիշները վարվեն: Բայց դա ամենևին էլ իմ ցանկությունը չէ: Ներկա պահին մեղադրանքը ինձ չի հետաքրքրում. ես փորձում եմ պարզել ճշմարտությունը: Եվ այդ տեսանկյունից ինչ-որ բանի անկատար լինելու գաղափարը՝ որ նա այն չէ, ինչ պետք է լիներ, ունի որոշակի հետևանքներ:

Եթե դիտարկենք քարի կամ ծառի նման մի բան, այն այնպիսին է, ինչպիսին որ կա, և իմաստ չունի ասել, որ այն այլ կերպ պետք է լիներ: Իհարկե, դուք կարող եք ասել, որ քարը «սխալ ձև» ունի, եթե ցանկանում եք այն օգտագործել քարապատման համար, կամ որ ծառը «վատ» ծառ է, քանի որ նրա ստվերը այնքան մեծ չէ, որքան դուք սպասում էիք: Բայց դրանով դուք պարզապես ի նկատի ունեք, որ քարը կամ ծառը նպատակահարմար չէ ձեր անձնական նպատակների համար: Դուք չեք մեղադրում նրանց դրա համար, բացառապես եթե կատակում եք: Դուք իսկապես գիտեք, որ հաշվի առնելով տվյալ եղանակը և հողը, ծառը չէր կարող այլ կերպ լինել: Այն, ինչ մենք, մեր տեսանկյունից անվանում ենք «վատ» ծառ, ենթարկվում է իր բնույթի օրենքներին նույնքան, որքան «լավ» ծառը:

Հիմա տեսնո՞ւմ եք, թե ինչ է սրանից հետևում: Սրանից հետևում է, որ այն, ինչ մենք սովորաբար անվանում ենք բնության օրենքներ՝ օրինակ՝ եղանակի ազդեցությունը ծառի վրա, կարող են իրական իմաստով օրենքներ էլ չլինել, այլ միայն այդ բառի գործածման որոշակի խոսակցական ձև: Երբ ասում ենք, որ վայր ընկնող քարերը միշտ հնազանդվում են ձգողության օրենքին, միթե՞ դա գրեթե նույնը չէ, ինչ ասել, որ օրենքը նշանակում է միայն «այն, ինչ քարերը միշտ անում են»: Մենք իսկապես չենք կարծում, որ երբ քարը բաց է թողնվում, նա հանկարծ հիշում է, որ իրեն հրաման է տրվում ընկնել գետնին: Մենք միայն այն ի նկատի ունենք, որ իրոք, այն ընկնում է: Այլ կերպ ասած, դուք չեք կարող վստահ լինել, որ կա ինչ-որ բան ինքնին փաստերից վեր, ինչ-որ օրենք այն մասին, թե ինչ պետք է տեղի ունենա, ի տարբերություն նրա, թե ինչ տեղի է ունենում: Բնության օրենքները, ինչպես որ նրանք կիրառվում են քարերի կամ

ծառերի վրա, կարող են նշանակել միայն «այն, ինչ իրականում անում է Բնությունը»: Բայց եթե դուք անդրադառնաք Մարդկային Բնության Օրենքին, Արժանապատիվ Վարքի Օրենքին, դա այլ հարց է: Այդ օրենքը անշուշտ չի նշանակում «այն, ինչ իրականում անում են մարդիկ», քանի որ ինչպես արդեն ասացի, նրանցից շատերը ընդհանրապես չեն ենթարկվում այդ օրենքին, և նրանցից ոչ մեկը չի ենթարկվում դրան ամբողջությամբ: Ձգողության օրենքը հուշում է, թե ինչ են անում քարերը, եթե նրանք բաց են թողնվում օդում. բայց Մարդկային Բնության Օրենքը ձեզ ասում է, թե ինչ պետք է անեին մարդիկ և չեն անում: Այլ կերպ ասած, երբ դուք գործ ունեք մարդկանց հետ, ինչ-որ այլ բան կա իրական փաստերից վեր և դրանցից դուրս: Դուք ունեք փաստեր (ինչպես են մարդիկ վարվում) և ունեք նաև այլ բան (ինչպես պետք է նրանք վարվեին): Մնացած տիեզերքում գուցե ոչ մի ուրիշ բան էլ չկա փաստերից բացի: Էլեկտրոնները և մոլեկուլները իրենց դրսեւորում են որոշակի կերպ, որից և հետևում են որոշակի արդյունքներ, և դա կարող է լինել ամբողջ պատմությունը: (*) Բայց մարդիկ իրենց դրսեւորում են որոշակի ձևով, և դա ամբողջ պատմությունը չէ, քանի որ դուք ամբողջ ժամանակ գիտեք, որ նրանք պարտավոր էին այլ կերպ իրենց դրսեւորել:

Հիմա՝ սա իսկապես այնքան յուրահատուկ է, որ գայթակղություն կա այն ուղղակի հերքել: Օրինակ՝ դուք կարող եք փորձել պնդել, որ երբ ասում եք, որ մարդը չպետք է վարվի այնպես, ինչպես նա վարվում է, ի նկատի ունեք ճիշտ նույնը, երբ ասում եք, որ քարը սխալ ձև ունի. մասնավորապես՝ որ այն, ինչ նա անում է, անհարմար է ձեզ համար: Բայց դա պարզապես իրականությանը չի համապատասխանում: Գնացքում այն մարդը, որը զբաղեցնում է անկյունային տեղը, քանի որ նա առաջինն էր այնտեղ հասել, և այն մարդը, որը թաքուն այնտեղ նստեց, մինչ ես մեջքս շրջված հանում էի պայուսակս, հավասարապես անհարմար են: Բայց ես մեղադրում եմ երկրորդ մարդուն և չեմ մեղադրում առաջինին: Ես չեմ զայրանում, - գուցե մի պահ, մինչև խելքի գալը - մի մարդու վրա, որը ինձ պատահաբար վայր է գցում. ես զայրանում եմ մի մարդու վրա, որը փորձում է ինձ վայր գցել, նույնիսկ եթե դա նրան չի հաջողվում: Այնինչ առաջինը վնասեց ինձ, իսկ երկրորդը՝ ոչ: Երբեմն այն վարքագիծը, որը ես անվանում եմ վատ, ինձ համար ամենևին էլ անհարմար չէ, այլ ընդհակառակը: Պատերազմում յուրաքանչյուր կողմ կարող է մյուս կողմի դավաճանին շատ օգտակար համարել: Բայց չնայած նրանք օգտագործում են նրան և վճարում, նրանք նրան համարում են մարդկային վիժվածք: Այսպիսով, դուք չեք կարող ասել, որ այն, ինչ մենք անվանում ենք արժանապատիվ պահվածք ուրիշների մոտ, դա պարզապես այն վարքագիծն է, որը այդ պահին օգտակար է մեզ համար: Իսկ ինչ վերաբերում է մեր սեփական արժանապատիվ վարքագծին, ապա ես ենթադրում եմ, որ բավականին ակնհայտ է, որ դա այն վարքագիծը չէ, որը միշտ շահեկան է մեզ համար:

[*] Ես չեմ կարծում, որ սա ամբողջ պատմությունն է, ինչպես կտեսնեք ավելի ուշ: Ես ի նկատի ունեմ, որ ըստ ներկայիս փաստարկության դա կարող է լինել այդպես:

Դա նշանակում է լինել բավարարված երեսուն շիլլինգով, երբ գուցե երեք ֆունտ կարող էիք ստանալ, ազնվորեն կատարելով դպրոցական տնային աշխատանքը, երբ հեշտ կլիներ այն արտագրել, հանգիստ թողնել աղջկան, երբ կուզեիք նրա հետ սիրով զբաղվել, մնալ վտանգավոր վայրում, երբ կարող էիք ավելի ապահով տեղ գնալ, կատարել խոստումները, որոնք նախընտրում եք չկատարել, և ասել ճշմարտությունը նույնիսկ այն ժամանակ, երբ դա ձեզ հիմարի տեսք է տալու:Ոմանք ասում են, որ չնայած պարկեշտ վարքագիծը այն չէ, ինչ շահեկան է յուրաքանչյուր անձի համար տվյալ պահին, այնուամենայնիվ, դա այն է, ինչ շահեկան է մարդկությանը որպես ամբողջություն. և, հետևաբար, դրա մեջ որեւէ առեղծված չկա: Մարդիկ, ի վերջո, որոշակի ողջախոհություն ունեն. նրանք տեսնում են, որ հնարավոր չէ ունենալ իրական անվտանգություն կամ երջանկություն, բացառությամբ այն հասարակություններում, որտեղ բոլորը հետեւում են արդար խաղի կանոններին և հե՛նց դա տեսնելու պատճառով է, որ նրանք փորձում են պարկեշտ վարվել: Իհարկե, միանգամայն ճշմարիտ է, որ անվտանգությունն ու երջանկությունը կարող են առաջանալ միայն անհատների, դասերի և ազգերի ` միմյանց նկատմամբ ազնիվ, արդար և բարի լինելուց: Դա աշխարհի ամենակարևոր ճշմարտություններից մեկն է: Բայց որպես բացատրություն, թե ինչու՞ ենք մենք զգում այնպես, ինչպես զգում ենք Ճշտի և Սխալի վերաբերյալ, այն պարզապես ոչինչ չի ասում: Եթե հարցնենք. «Ինչո՞ւ պետք է ես անձնվեր լինեմ» և դուք պատասխանեք «Որովհետև դա լավ է հասարակության համար», ապա մենք կարող ենք հարցնել. «Իսկ ինչու՞ պետք է ես մտածեմ հասարակության մասին», և այդ ժամանակ դուք ստիպված կլինեք ասել. «Որովհետեւ դուք պետք է անձնվեր լինեք», եւ մենք վերադառնում ենք այնտեղ, որտեղ սկսել էինք: Եթե մեկը հարցնի, թե որն է ֆուտբոլ խաղալու իմաստը, անիմաստ է պատասխանել՝ «գոլեր խփելը», քանի որ գոլեր խփելը ինքնին խաղն է, այլ ոչ թե խաղի իմաստը, և դուք իրականում միայն ասած կլինեիք, որ ֆուտբոլը ֆուտբոլ է, ինչը ճիշտ է, բայց անիմաստ է ասել: Նույն կերպ, եթե մեկը հարցնի, թե որն է պարկեշտ վարքի իմաստը, ապա անիմաստ է պատասխանել՝ «հասարակությանը օգուտ տալը», քանի որ հասարակությանը օգուտ տալը, այլ կերպ ասած ` անձնվեր լինելը (քանի որ, ի վերջո, «հասարակությունը» միայն նշանակում է «մյուս մարդիկ»), պարկեշտ վարքի դրսեւորումներից մեկն է. այն, ինչ դուք իսկապես ասում եք, այն է, որ պարկեշտ վարքը պարկեշտ վարք է: Դուք նույն բանը ասած կլինեիք, եթե պարզապես բավարարվեիք ասելով. «Մարդիկ պետք է լինեն անձնվեր»:

Եվ այստեղ ես կանգ եմ առնում: Մարդիկ պետք է լինեն անձնվեր, պետք է լինեն արդար: Ոչ թե այն, որ մարդիկ անձնվեր են, ոչ էլ որ նրանք սիրում են անձնվեր լինել, այլ այն, որ նրանք պետք է լինեն: Բարոյական Օրենքը կամ Մարդկային Բնության Օրենքը դա պարզապես փաստ չէ մարդու վարքագծի վերաբերյալ, ինչպես Ձգողության օրենքը փաստ է, կամ կարող է փաստ լինել այն մասին, թե ինչպես են ծանր առարկաները իրենց դրսեւորում: Մյուս կողմից, այն պարզապես երևակայության արդյունք չէ, քանի որ մենք չենք կարողանում ազատվել այդ գաղափարից, և այն, ինչ մենք ասում և մտածում ենք մարդկանց մասին, անհեթեթության կվերածվեր, եթե դա անեինք: Եւ այն սոսկ հայտարարություն չէ այն մասին, թե ինչպես մենք կցանկանայինք, որ մարդիկ վարվեին մեր իսկ հարմարավետության համար. որովհետև այն վարքը, որը

մենք անվանում ենք վատ կամ անարդար, նույնը չէ, ինչ վարքը, որը մեզ անհարմար է, եւ այն կարող է նույնիսկ հակառակը լինել: Հետևաբար, այս Ճիշտ ու Սխալի Օրենքը, կամ Մարդկային Բնության Օրենքը, կամ ինչպես էլ որ այն անվանեք, պետք է լինի իրական մի բան՝ մի բան, որ իրականում գոյություն ունի, եւ հնարված չէ մեր կողմից: Այնինչ այն փաստ չէ սովորական իմաստով, այնպես, ինչպես մեր իրական վարքագիծն է փաստ:
Այսպիսով՝ սկսում է կարծես թվալ, որ ստիպված ենք ընդունել, որ գոյություն ունի մեկից ավելի տեսակի իրականություն. որ, տվյալ դեպքում, մարդկային վարքագծի սովորական փաստերից վեր և անդին ինչ -որ բան կա, և միևնույն ժամանակ, միանշանակ իրական՝ իրական մի օրենք, որը մեզնից ոչ մեկ չի ստեղծել, բայց որը, սակայն, մենք զգում ենք, որ սեղմում է մեզ:

## 4. Ի՞ՆՉ Է ԹԱՔՆՎԱԾ ՕՐԵՆՔԻ ԵՏԵԻՈԻՄ

Եկեք ամփոփենք այն, ինչին հասել ենք մինչ այժմ: Քարերի, ծառերի և նմանատիպ իրերի դեպքում այն, ինչ մենք անվանում ենք Բնության Օրենքներ, կարող է լինել ոչ այլ ինչ, քան խոսելաձեւ: Երբ ասում եք, որ բնությունը կառավարվում է որոշակի օրենքներով, դա կարող է նշանակել պարզապես, որ բնությունն, ըստ էության, իրեն որոշակի կերպ է դրսեւորում: Այսպես կոչված օրենքները կարող են իրական չլինել՝ այսինքն՝ վեր եւ դուրս այն փաստերից, որոնք մենք նկատում ենք: Բայց Մարդու դեպքում մենք տեսանք, որ դա այդպես չէ: Մարդկային Բնության կամ Ճշտի և Սխալի օրենքը պետք է լինի մի բան, որը վեր է և դուրս է մարդկային վարքի փաստերից: Այս դեպքում, իրական փաստերից բացի, մենք ունենք այլ բան. իրական օրենք, որը մենք չենք հորինել և որին մենք գիտենք, որ պետք է ենթարկվենք:

Այժմ ես ուզում եմ քննարկել, թե ի՞նչ է սա մեզ ասում այն տիեզերքի մասին, որտեղ մենք ապրում ենք: Մարդիկ դեռևս այն ժամանակից ի վեր, երբ կարող էին մտածել, հետաքրքրվում էին, թե իրականում ի՞նչ է այս տիեզերքը և ինչպես է այն հայտնվել այստեղ: Եվ, հիմնականում, երկու տեսակետ է առաջ բերվել: Նախ, կա այն, ինչը կոչվում է մատերիալիստական տեսակետ: Մարդիկ, որոնք ունեն այդ տեսակետը, կարծում են, որ մատերիան և տարածությունը պարզապես գոյություն ունեն և միշտ եղել են, ոչ ոք չգիտի ինչու. և որ մատերիան, որոշակի ձևով փոփոխվելով, պարզապես պատահաբար ստեղծել է մեզ նման արարածներ, որոնք ունակ են մտածելու: Մեկ հազարերորդ հավանականությամբ ինչ-որ բան հարվածել է մեր արևին և ստեղծվել են մոլորակները. ևս մեկ հազարերորդ պատահականությամբ կյանքի համար անհրաժեշտ քիմիական նյութերը և ճիշտ ջերմաստիճանը հայտնվեցին այս մոլորակներից մեկում, և այսպես, այս երկրագնդի որոշ նյութեր կենդանացան: Իսկ հետո, շատ երկար ձգվող պահատահականությունների հաջորդականության շնորհիվ, այդ կենդանի արարածները վերածվել են մեզ նման բաների: Մյուս տեսակետը կրոնական տեսակետն է (*):

Ըստ դրա՝ այն, ինչ գտնվում է տիեզերքի հետևում, ավելի շատ նման է մտքի, քան որեւէ ուրիշ բանի, որ մենք գիտենք: Այսինքն՝ այն գիտակից է, ունի նպատակներ և գերադասում է մի բանը մեկ ուրիշից: Եվ այս տեսակետի հիման վրա այն ստեղծեց տիեզերքը, մասամբ մեզ անհայտ նպատակների համար, բայց մասամբ, ամեն դեպքում, որպեսզի ստեղծի իր նման արարածներ. նկատի ունեմ, որ նման են իրեն այնքանով, որքանով նրանք ունեն միտք: Խնդրում եմ չկարծեք, որ այս տեսակետներից մեկը վաղուց եղել է, և որ մյուսը աստիճանաբար զբաղեցրել է նրա տեղը: Որտեղ որ եղել են մտածող մարդիկ, այս երկու տեսակետներն էլ հայտնվել են: Եվ սա նույնպես նկատի ունեցեք: Դուք չեք կարող պարզել, թե ո՞ր տեսակետն է ճիշտ տեսակետը գիտության միջոցով՝ ինչպես որ այն սովորաբար կիրառվում է: Գիտությունը իրականացվում է փորձերի միջոցով: Այն զննում է իրերի պահվածքը:

-[*] Տե՛ս ծանոթագրությունը այս գլխի վերջում:

Ի վերջո, յուրաքանչյուր գիտական փաստարկություն, որքան էլ բարդ տեսք այն ունենա, իրականում նշանակում է նման մի բան. « Ես աստղադիտակը ուղղեցի երկնքի այսինչ հատվածին հունվարի 15-ին ՝ ժամը 2:20-ին, և տեսա այսինչ կամ այնինչ բանը», կամ «Ես այս նյութերից մի քանիսը դնում եմ սրվակի մեջ և տաքացնում եմ այսինչ ջերմաստիճանի, և դա անում է այսինչ կամ այնինչ բանը»: Մի կարծեք, որ ես գիտության դեմ որևէ բան եմ ասում. ես միայն ասում եմ, թե որն է նրա գործը: Եվ որքան ավելի գիտական է մարդը, այնքան ավելի (ես կարծում եմ) նա կհամաձայնի ինձ հետ, որ սա է գիտության գործը, և իրոք որ այն շատ օգտակար և անհրաժեշտ գործ է: Բայց ինչո՞ւ ընդհանրապես գոյություն ունի որեւիցե բան, և արդյո՞ք կա ինչ -որ բան թաքնված այն ամենի հետևում, ինչ գիտությունը զննում է - այլ տեսակի բան, սա գիտական հարց չէ: Եթե կա «Ինչ -որ մի բան» այդ ամենի հետեւում, ապա այն կամ պետք է բոլորովին անհայտ մնա մարդկանց համար, կամ պետք է ինքն իրեն հայտնի դարձնի այլ կերպ: Հայտարարությունները, որ կա նման բան, կամ որ չկա նման բան՝ դրանք երկուսն էլ այն հայտարարությունները չեն, որ գիտությունը կարող է անել: Եւ իրական գիտնականները դրանք սովորաբար չեն անում: Սովորաբար լրագրողներն ու հանրածանոթ վիպասաններն են, որոնք դասագրքերից վերցրել են կիսատ-պռատ գիտության փաստեր, որ դրանք անում են նրանց փոխարեն: Ի վերջո, սա իսկապես տրամաբանական է: Ենթադրենք, գիտությունը երբևէ դառնար ամբողջական, այնքան որ այն իմանար ամեն բան ամբողջ տիեզերքի մեջ: Մի՞թե պարզ չէ, որ հարցերը, թե «Ինչո՞ւ գոյություն ունի տիեզերքը», «Ինչո՞ւ է այն շարունակվում այնպես, ինչպես որ այն շարունակվում է», «Ունի՞ այն որևէ իմաստ» կմնան այնպես, ինչպես նրանք կային:

Հիմա՝ մեր դրությունը բավականին անհույս կլիներ, բացառապես սրա շնորհիվ: Ամբողջ տիեզերքում կա մի բան, և միայն մեկը, որի մասին մենք գիտենք ավելին, քան կարող ենք բացահայտել արտաքին ուսումնասիրության շնորհիվ: Այդ մի բանը Մարդն է: Մենք չենք սոսկ ուսումնասիրում մարդկանց - մենք մարդիկ ենք: Այս դեպքում մենք ունենք, այսպես ասած, ներքին տեղեկություն. մենք տեղեկացված ենք: Եւ դրա պատճառով է, որ մենք գիտենք, որ մարդիկ գտնվում են բարոյական օրենքի ներքո, որը նրանք չեն ստեղծել և որը նրանք չեն կարող մոռանալ նույնիսկ երբ նրանք փորձում են, և որին նրանք գիտեն, որ պետք է ենթարկվեն: Ուշադրություն դարձրեք հետևյալ բանին: Յուրաքանչյուր էակ, որը դրսից ուսումնասիրում է Մարդուն, ինչպես որ մենք ուսումնասիրում ենք էլեկտրաէներգիան կամ կաղամբը, չիմանալով մեր լեզուն և, հետևաբար, մեզանից ոչ մի ներքին գիտելիք ստանալ չկարողանալով, այլ պարզապես դիտելով այն, ինչ մենք անում ենք, երբեք չի ստանա նվազագույն ապացույցն անգամ, որ մենք ունենք այս բարոյական օրենքը: Ինչպե՞ս նա կարող է այն ստանալ. նրա ուսումնասիրությունները ցույց կտային միայն այն, ինչ մենք անում ենք, մինչդեռ բարոյական օրենքը վերաբերում է նրան, ինչ մենք պետք է անենք: Նույն կերպ, եթե քարերի կամ եղանակի դեպքում դիտարկվող փաստերից վեր կամ հետևում լիներ ինչ-որ մի բան, մենք՝ դրանք դրսից ուսումնասիրելով, երբեք չէինք կարող հույս ունենալ, որ կբացահայտեինք այն:

Հետևաբար, հարցի դիրքորոշումն այսպիսին է. մենք ուզում ենք իմանալ՝ արդյո՞ք տիեզերքը պարզապես գոյություն ունի այնպես, ինչպես որ այն կա առանց պատճառի, թե՞ նրա հետևում կա մի ուժ, որն այն դարձնում է այն, ինչ այն կա: Քանի որ այդ ուժը, եթե այն գոյություն ունի, կլիներ ոչ թե դիտարկված փաստերից մեկը, այլ դրանք իրականություն դարձնողը, ոչ մի փաստերի սոսկ ուսումնասիրություն չի կարող այն բացահայտել: Կա միայն մեկ դեպք, որի դեպքում մենք կարող ենք իմանալ՝ կա՞ արդյոք ինչ-որ մի բան ավելի, այն է՝ մեր սեփական դեպքը: Եվ այդ մեկ դեպքում մենք հայտնաբերում ենք, որ կա: Կամ ասենք այլ կերպ: Եթե տիեզերքից դուրս գոյություն ունենար վերահսկող մի ուժ, ապա այն մեզ չէր կարող երևալ որպես տիեզերքի ներսում եղած փաստերից մեկը, ինչպես որ տան ճարտարապետը չի կարող լինել այդ տան պատը կամ աստիճանները կամ բուխարին: Միակ ձեւը, որով մենք կարող էինք ակնկալել, որ այն կարող է իրեն ցույց տալ, կլիներ մեր ներսում՝ որպես ազդեցություն կամ հրաման, որը կփորձեր մեզ ստիպել վարվել որոշակի կերպ: Եվ դա հենց այն է, ինչ մենք հայտնաբերում ենք մեր ներսում: Անշուշտ, սա պետք է կասկածներ հարուցի: Միակ դեպքում, երբ մենք կարող ենք ակնկալել պատասխան ստանալ, պատասխանը «Այո» է, իսկ մնացած դեպքերում, երբ պատասխան չենք ստանում, մենք տեսնում ենք, թե ինչու չենք ստանում: Պատկերացրեք՝ եթե ինչ-որ մեկն ինձ հարցնի. երբ ես տեսնում եմ կապույտ համազգեստով մի մարդ, որը փողոցով շրջում է եւ յուրաքանչյուր տանը թողնում է թղթե փոքրիկ փաթեթներ, ինչու՞ եմ ես ենթադրում, որ դրանք նամակներ են պարունակում: Ես պիտի պատասխանեմ. «Որովհետև երբ նա նման մի փոքր փաթեթ է թողնում Ինձ համար, ես տեսնում եմ, որ այն նամակ է պարունակում»: Եվ եթե նա դրանից հետո առարկեր. «Բայց դուք երբեք չեք տեսել այն բոլոր նամակները, որոնք ձեր կարծիքով ստանում են մյուս մարդիկ», ես կպատասխանեի. «Իհարկե ոչ, և ես չպետք է դա ակնկալեի, քանի որ դրանք ինձ չեն ուղղված. ես բացատրում եմ այն փաթեթները, որոնք ինձ արգելված է բացել, այն փաթեթներով, որոնք ինձ թույլատրված է բացել»: Այս հարցի դեպքում էլ նույնն է: Միակ փաթեթը, որն ինձ թույլատրվում է բացել, դա Մարդն է: Երբ ես դա անում եմ, մասնավորապես՝ երբ ես բացում եմ հենց Ինքս Ինձ կոչվող մարդուն, ես բացահայտում եմ, որ ես ինքնուրույն գոյություն չունեմ, որ ես գտնվում եմ ինչ-որ օրենքի տակ՝ որ ինչ-որ մեկը կամ ինչ -որ մի բան ցանկանում է, որ ես ինձ որոշակի կերպ պահեմ: Ես, իհարկե, չեմ կարծում, որ եթե կարողանայի ներս մտնել քարի կամ ծառի մեջ ես կբացահայտեի ճիշտ նույն բանը, ինչպես չեմ կարծում, որ փողոցում մնացած բոլոր մարդիկ ստանում են նույն նամակները, ինչ ես: Ես երեւի կակնկալեի, որ քարը պետք է պարտադիր ենթարկվեր ձգողության օրենքին. այսինքն՝ մինչդեռ իմ դեպքում նամակներ ուղարկողն ինձ սոսկ ասում է, որ ենթարկվեմ իմ մարդկային բնության օրենքին, Նա ստիպում է քարին ենթարկվել նրա քարային բնության օրենքներին: Բայց ես պետք է ակնկալեմ, որ երկու դեպքում էլ գոյություն ունի այսպես ասած նամակ ուղարկող, փաստերի հետևում կանգնած մի Ուժ, մի Ուղորդող, մի Ուղեցույց:

Մի՛ կարծեք, որ ես ավելի արագ եմ առաջ գնում, քան իրականում: Ես դեռ հարյուր մղոնից ավել հեռու եմ քրիստոնեական աստվածաբանության Աստծուց: Այս պահին ես միայն գիտեմ, որ կա մի բան, որն ուղղորդում է տիեզերքը, և որը հայտնվում է իմ մեջ որպես օրենք, որը հորդորում է ինձ անել

ճիշտը, և ստիպում է ինձ զգալ պատասխանատվություն և անհարմարություն, երբ սխալ եմ գործում: Ես կարծում եմ, որ մենք պետք է ենթադրենք, որ այն ավելի շատ նման է մտքի, քան որևէ այլ բանի, որ մենք գիտենք, քանի որ, ի վերջո, միակ բանը մտքից բացի, որ մենք գիտենք, մատերիան է, և դուք դժվար թե պատկերացնեք, որ ինչ-որ մատերիա կարող է տալ հրահանգներ: Բայց, իհարկե, պարտադիր չէ, որ այն շատ նման լինի մտքի, առավել եւս՝ անձնավորության: Հաջորդ գլխում մենք կտեսնենք, թե հնարավոր է արդյո՞ք ավելին իմանալ դրա մասին: Բայց մեկ նախազգուշացում. չափից դուրս շատ է փափուկ բարձ դրվել մեր գլխի տակ, երբ խոսվել է Աստծո մասին վերջին հարյուր տարվա ընթացքում: Դա այն չէ, ինչ ես առաջարկում եմ: Դուք կարող եք դուրս նետել այդ ամենը:

Նշում. - Այս հատվածը բավականաչափ համառոտ պահելու համար, երբ այն սփռվում էր եթերով, ես նշեցի միայն մատերիալիստական եւ կրոնական աշխարհահայացքները: Բայց ամբողջական լինելու համար ես պետք է նշեմ նաեւ միջանկյալ տեսակետ ունեցող այսպես կոչված Կենսարար Ուժի փիլիսոփայությունը, որը հայտնի է նաեւ Ստեղծող Էվոյյուցիա կամ Ծնող Էվոյյուցիա անվանումներով: Դրա ամենասրամիտ նկարագրությունները հանդիպում են Բեռնարդ Շոուի ստեղծագործություններում, բայց ամենախորը՝ Բերգսոնի աշխատություններում: Մարդիկ, որոնք այս տեսակետն ունեն, ասում են, որ այն փոքր փոփոխությունները, որոնցով կյանքն այս մոլորակում «զարգացել» է ամենացածր ձևերից դեպի Մարդ, պայմանավորված չեն պատահականությամբ, այլ ինչ-որ Կենսարար Ուժի «ձգտմամբ» կամ «նպատակասլացությամբ»: Երբ մարդիկ ասում են սա, մենք պետք է նրանց հարցնենք՝ Կենսարար Ուժ ասելով նրանք միտք ունեցող ինչ-որ բա՞ն ի նկատի ունեն, թե՞ ոչ: Եթե նրանք դա ի նկատի ունեն, ապա «միտքը, որը կյանք է ստեղծում և այն առաջնորդում է դեպի կատարելություն» իրականում Աստված է, և նրանց տեսակետը, հետևաբար, նույնական է Կրոնական տեսակետի հետ: Եթե նրանք դա ի նկատի չունեն, ապա ի՞նչ է նշանակում ասել, որ միտք չունեցող ինչ-որ բան «ձգտում է» կամ «նպատակներ» ունի: Սա ինձ համար թվում է մահացու չափ խոցելի նրանց տեսակետի համար: Պատճառներից մեկը, որ շատերի համար Ստեղծող Էվոյյուցիան այդքան գրավիչ է, այն է, որ այն տալիս է Աստծուն հավատալու զգացական հանգստությունը եւ նվազ հաճելի հետևանքներից ոչ մեկը: Երբ զգում ես, որ լավ ես, և արևը շողում է, և չես ուզում հավատալ, որ ամբողջ տիեզերքը սոսկ ատոմների մեխանիկական պար է, հաճելի է մտածել դարերի ընթացքով սահող և քեզ իր ալիքների վրա տանող այս մեծ խորհրդավոր ուժի մասին: Եթե, ընդհակառակը, ցանկանում եք անել ինչ-որ անմաքուր բան, Կենսարար Ուժը, լինելով միայն կույր ուժ, առանց բարոյականության և մտքի, երբեք չի միջամտի ձեզ, ինչպես այն խանգարող Աստվածը, որի մասին մեզ սովորեցրել էին, երբ երեխա էինք: Կենսարար Ուժը մի տեսակ ընտելացած Աստված է: Դուք կարող եք միացնել այն, երբ ցանկանում եք, բայց այն ձեզ չի անհանգստացնի: Կրոնի բոլոր հրճվանքները և ո՛չ մի գին: Կենսարար Ուժը բոլոր պատրանքներից ամենամե՞ծն է, որը աշխարհը տեսել է մինչեւ հիմա:

## 5. ՊԱՏՃԱՌ ԿԱ ԱՆՀԱՆԳԻՍՏ ԼԻՆԵԼՈՒ

Իմ վերջին գլուխն ավարտեցի այն մտքով, որ Բարոյական Օրենքով ինչ-որ մեկը կամ ինչ-որ մի բան ֆիզիկական տիեզերքից այն կողմ իրականում վրա է հասնում մեզ: Եվ ես կարծում եմ, որ երբ ես հասա այդտեղ, ձեզանից ոմանք որոշակի տհաճություն զգացին: Դուք նույնիսկ կարող էիք մտածել, որ ես ձեզ հետ ինչ -որ խաղ եմ խաղացել՝ զգուշորեն փաթեթավորելով և փիլիսոփայության տեսք տալով մի բանի, ինչը պարզվում է, որ ընդամենը ևս մեկ «կրոնական շաղակրատանք» է: Դուք, հավանաբար, զգում էիք, որ պատրաստ էիք ինձ լսել, քանի դեռ կարծում էիք, որ ես նոր բան ունեմ ասելու. բայց եթե պարզվեց, որ դա միայն կրոն է, ապա աշխարհը դա փորձել է արդեն, և անհնար է ժամացույցի սլաքները հետ պտտել: Եթե ինչ -որ մեկն այդպես է զգում, ես կցանկանայի նրան երեք բան ասել:

Նախ՝ ժամացույցի սլաքները հետ պտտելու մասին: Կկարծեի՞ք, որ ես կատակում էի, եթե ասեի, որ կարելի է ժամացույցի սլաքները հետ պտտել, և եթե ժամացույցը սխալ ժամ է ցույց տալիս, հաճախ դա շատ խելամիտ բան է: Բայց ես նախընտրում եմ ընդհանրապես մոռանալ ժամացույցների մասին: Մենք բոլորս առաջընթաց ենք ցանկանում: Բայց առաջընթաց նշանակում է մոտենալ այն տեղին, որտեղ ցանկանում ես լինել: Եվ եթե դուք սխալ դարձ եք կատարել, ապա առաջ գնալը ձեզ այնտեղ չի մոտեցնում: Եթե դուք սխալ ճանապարհին եք, ապա առաջընթաց նշանակում է շրջադարձ կատարել և վերադառնալ ճիշտ ճանապարհին: Եւ այդ դեպքում այն մարդը, որը շուտ է հետ շրջվում ամենաառաջադեմ մարդն է: Մենք բոլորս դա տեսել ենք թվաբանություն անելիս: Երբ ես գումարումը սխալ եմ սկսել, ապա որքան շուտ դա ընդունեմ և նորից վերսկսեմ, այնքան ավելի արագ առաջ կընկնեմ: Ոչ մի առաջընթաց չկա մեծամիտ և համառ լինելու մեջ, և սխալը ընդունելը հրաժարվելուց: Եւ ես կարծում եմ, որ եթե նայեք աշխարհի ներկա վիճակին, ապա պարզ է, որ մարդկությունը ինչ-որ մեծ սխալ է թույլ տվել: Մենք սխալ ճանապարհին ենք: Եվ եթե դա այդպես է, մենք պետք է հետ գնանք: Հետ վերադառնալն ամենաարագ ճանապարհն է:

Եւ երկրորդ՝ սա դեռ իրականում չի վերածվել «կրոնական շաղակրատանքի»: Մենք դեռ չենք հանգել որևէ կրոնի Աստծուն, առավել ևս՝ քրիստոնեություն կոչվող կրոնի Աստծուն: Մենք այս պահին հանգել ենք միայն նրան, որ կա Ինչ -որ Մեկը կամ Ինչ-որ մի բան Բարոյական Օրենքի հետևում: Մենք ոչինչ չենք վերցնում Աստվածաշնչից կամ Եկեղեցիներից. մենք փորձում ենք տեսնել, թե ինչ կարող ենք բացահայտել այս Ինչ-որ Մեկի մասին ինքներս մեզ: Եվ ես ուզում եմ միանգամայն հստակեցնել, որ այն, ինչ մենք բացահայտում ենք ինքնուրույն, իսկապես մեզ ցնցում է: Մենք այդ Ինչ-որ Մեկի մասին ունենք երկու փաստ: Առաջինը Նրա ստեղծած տիեզերքն է: Եթե մենք դա օգտագործեինք որպես մեր միակ բանալին, ապա ես կարծում եմ, որ պետք է

եզրակացնեինք, որ Նա մեծ արվեստագետ է (քանի որ տիեզերքը շատ գեղեցիկ է), բայց նաև, որ Նա բավականին անողոք է և մարդու բարեկամը չէ (քանի որ տիեզերքը շատ վտանգավոր և սարսափեցնող է): Մյուս փաստը դա այն Բարոյական Օրենքն է, որը Նա դրել է մեր մտքերում: Եվ սա ավելի լավ փաստ է, քան մյուսը, քանի որ այն ներքին տեղեկություն է: Մենք Աստծո մասին ավելի շատ բան ենք իմանում Բարոյական Օրենքից, քան առհասարակ տիեզերքից, ինչպես որ ավելի շատ բան ենք իմանում մարդու մասին լսելով նրա խոսակցությունը, քան զննելով նրա կառուցած տունը: Հիմա, այս երկրորդ փաստից մենք եզրակացնում ենք, որ տիեզերքի հետևում գտնվող Էությունը խորապես շահագրգռված է ճիշտ վարքով՝ արդար խաղի կանոններով, անշահախնդրությամբ, քաջությամբ, բարեխղճությամբ, ազնվությամբ և ճշմարտախոսությամբ: Այդ առումով մենք պետք է համաձայնենք քրիստոնեության և որոշ այլ կրոնների կողմից առաջադրված այն մտքի հետ, որ Աստված «բարի է»: Բայց եկեք չափից դուրս արագ առաջ չգնանք: Բարոյական Օրենքը մեզ մտածելու ոչ մի հիմք չի տալիս, որ Աստված «բարի» է՝ հանդուրժող, փափկասիրտ կամ կարեկցող լինելու առումով: Բարոյական Օրենքի մեջ հանդուրժող ոչինչ չկա: Այն մեխի պես կոշտ է: Այն թելադրում է ձեզ անել ճիշտը, և կարծես թե նրան չի հետաքրքրում, թե որքան ցավոտ, վտանգավոր կամ դժվար է դա անել: Եթե Աստված նման է Բարոյական Օրենքին, ապա Նա փափկասիրտ չէ: Այս փուլում անիմաստ է ասել, որ այն, ինչ նկատի ունեք «բարի» Աստված ասելով, դա Աստված է, ով կարող է ներել: Չափից դուրս արագ եք առաջ գնում: Միայն Անձը կարող է ներել: Եվ մենք դեռ չենք հասել այդտեղ, որ գոյություն ունի անձնավորված Աստված. մենք միայն գիտենք, որ կա մի ուժ Բարոյական Օրենքի հետևում, որը ավելի շատ նման է մտքի, քան որևէ այլ բանի: Բայց այն կարող է շատ նման չլինել Անձի: Եթե այն զուտ անանձնական միտք է, ապա լրիվ անիմաստ է խնդրել նրան, որ այն ներողամիտ լինի կամ ձեզ ազատի պատասխանատվությունից, ինչպես որ անիմաստ է բազմապատկման աղյուսակին խնդրել, որ ձեր նկատմամբ ներողամիտ գտնվի, երբ սխալվում եք գումարումներ անելիս: Դուք հաստատապես սխալ պատասխանն եք ստանալու: Եվ անիմաստ է նաև ասել, որ եթե կա այդպիսի Աստված՝ անանձնական և բացարձակ բարություն, ապա Նա ձեր դուրը չի գալիս և դուք մտադիր չեք Նրան ուշադրություն դարձնել: Որովհետև խնդիրն այն է, որ ձեր մի մասը Նրա կողմից է և իրոք համաձայն է մարդկային ագահության, խաբեության և շահագործման Նրա անհավանությանը: Դուք կարող եք ցանկանալ, որ Նա բացառություն անի ձեր դեպքում, և ձեզ այս անգամ ազատ արձակի. բայց դուք ձեր սրտի խորքում գիտեք, որ եթե աշխարհի հետևում կանգնած ուժը իրոք և անփոփոխ կերպով չի ատում նման վարքագիծը, ապա Նա չի կարող բարի լինել: Մյուս կողմից, մենք գիտենք, որ եթե կա բացարձակ բարություն, ապա այն պետք է ատի մեր արածների մեծ մասը: Սա է այն սարսափելի դրությունը, որում մենք գտնվում ենք: Եթե տիեզերքը չի կառավարվում բացարձակ բարությամբ, ապա մեր բոլոր ջանքերը երկարաժամկետ հեռանկարում անհույս են: Բայց եթե այդպես է, ուրեմն մենք մեզ թշնամացնում ենք այդ բարությանը ամեն օր, և շատ անհավանական է, որ վաղն ավելի լավն ենք լինելու, և կրկին մեր դրությունը անհույս է: Մենք անկարող ենք առանց Նրա, և միևնույն ժամանակ Նրա հետ չենք: Աստված մեր միակ մխիթարիչն է և Նա նաև մեր ամենամեծ ահն է. այն, ինչի կարիքը ամենաշատը ունենք և այն, ինչից ամենաշատն ենք ցանկանում թաքնվել: Նա

մեր միակ հնարավոր դաշնակիցն է, և մենք մեզ դարձրել ենք Նրա թշնամիները: Ոմանք խոսում են այնպես, կարծես բացարձակ բարության հայացքին հանդիպելը հաճելի կլիներ: Նրանք պետք է նորից մտածեն: Նրանք պարզապես կրոնի հետ խաղ են անում: Բարությունը կա՛մ մեծ ապահովություն է, կա՛մ մեծ վտանգ ՝ կախված այն բանից, թե ինչպես ես նրա հետ հարաբերվում: Եվ մենք սխալ ենք հարաբերվել:

Հիմա իմ երրորդ կետը: Երբ ես որոշեցի մոտենալ իմ իսկական թեմային այս երկար-բարակ եղանակով, ես չէի փորձում որևէ խաղ խաղալ ձեզ հետ: Ես այլ պատճառ ունեի: Իմ պատճառն այն էր, որ քրիստոնեությունը պարզապես իմաստ չունի, քանի դեռ դուք չեք առերեսվել այն փաստերին, որոնք ես նկարագրել եմ: Քրիստոնեությունը մարդկանց ասում է, որ նրանք ապաշխարեն, և նրանց խոստանում է ներում: Հետևաբար, այն (որքանով ես տեղյակ եմ) ոչինչ չունի ասելու այն մարդկանց, որոնք չգիտեն, որ նրանք ինչ-որ բան են արել ապաշխարելու համար, և որոնք չեն կարծում, որ իրենք ներման կարիք ունեն: Այն բանից հետո, երբ դուք հասկացել եք, որ կա իրական Բարոյական Օրենք և այդ օրենքի հետևում մի Ուժ, և որ դուք խախտել եք այդ օրենքը և ինքներդ ձեզ դրել հակադրության այդ Ուժի հետ, միայն այդ ժամանակ է և ոչ մի ակնթարթ ավելի շուտ, որ քրիստոնեությունը սկսում է խոսել: Երբ իմանաք, որ հիվանդ եք՝ կլսեք բժշկին: Երբ հասկանաք, որ մեր դրությունը գրեթե հուսահատական է, դուք կսկսեք հասկանալ, թե ինչի մասին են խոսում քրիստոնյաները: Նրանք բացատրություն են տալիս, թե ինչպես ենք մենք հայտնվել այս վիճակում, որ և՛ ատում ենք բարությունը, և՛ սիրում ենք այն: Նրանք բացատրություն են տալիս, թե ինչպես կարող է Աստված լինել այս անանձնական միտքը Բարոյական Օրենքի հետևում և, միևնույն ժամանակ՝ Անձ: Նրանք բացատրում են, թե ինչպես են այս օրենքի պահանջները, որոնց դուք և ես չենք կարող բավարարել, մեր անունից կատարվել, և թե ինչպես է Աստված Ինքը դառնում մարդ՝ փրկելու մարդուն Աստծո բարկությունից: Դա հին պատմություն է, և եթե ցանկանում եք դրան անդրադառնալ, անկասկած կարող եք խորհրդակցել մարդկանց հետ, որոնք ավելի շատ իրավասություն ունեն դրա մասին խոսելու, քան ես: Իմ արածը միայն մարդկանց խնդրելն է առերեսվել փաստերին, հասկանալու այն հարցերը, որոնց քրիստոնեությունը պնդում է, որ պատասխանում է: Եւ դրանք շատ սարսափելի փաստեր են: Երանի հնարավոր լիներ ավելի հաճելի բան ասել: Բայց ես պետք է ասեմ այն, ինչ համարում եմ ճշմարտությունը: Իհարկե, ես լիովին համաձայն եմ, որ քրիստոնեական կրոնը երկարաժամկետ հեռանկարում անասելի հանգստություն է: Բայց այն հանգստությամբ չի սկսվում. այն սկսվում է իմ նկարագրած հուսահատությամբ. և ընդհանրապես անօգուտ է փորձել հասնելու հանգստությանը, առանց նախապես այդ հուսահատության միջով անցնելու: Կրոնում, ինչպես պատերազմում և մնացած ամեն ինչում, հանգստությունն այն մի բանն է, որին չես կարող հասնել նրան փնտրելով: Եթե ճշմարտությունը փնտրեք, միգուգե գտնեք հանգստություն, բայց եթե փնտրեք հանգստություն, ապա ո՛չ հանգստություն կգտնեք, ո՛չ էլ ճշմարտություն. միայն փափուկ բարձ և պատրանքներ՝ սկզբում, և դրանց հաջորդող հուսահատություն՝ վերջում: Մեզանից շատերը հաղթահարել են նախապատերազմյան շրջանի միջազգային քաղաքականության վերաբերյալ

ունեցած մեր խաբկանքները: Ժամանակն է, որ մենք նույնը անենք կրոնի հարցում:

## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ԻՆՉԻ՞Ն ԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ

## 1. ԱՍՏԾՈ ՏԱՐԲԵՐ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինձ խնդրել են ձեզ պատմել, թե ինչին են հավատում քրիստոնյաները, և ես պատրաստվում եմ սկսել ձեզ ասելով մի բան, որին քրիստոնյաները կարիք չունեն հավատալու: Եթե դուք քրիստոնյա եք, ապա դուք կարիք չունեք հավատալու, որ բոլոր այլ կրոնները ամբողջովին սխալ են: Եթե դուք աթեիստ եք, ապա իսկապես պարտավոր եք հավատալու, որ աշխարհի բոլոր կրոնների հիմնական ասելիքը պարզապես մեկ հսկայական սխալ է եղել: Եթե դուք քրիստոնյա եք, դուք ազատ եք կարծելու, որ բոլոր այս կրոնները՝ նույնիսկ ամենատարօրինակները, պարունակում են ճշմարտության գոնե ինչ -որ հատիկ: Երբ ես աթեիստ էի, ես ստիպված էի փորձել ինքս ինձ համոզել, որ մարդկային ցեղի մեծ մասը մշտապես սխալ է եղել  իրեն համար ամենակարևոր հարցի վերաբերյալ. երբ ես քրիստոնյա դարձա, ես կարողացա ավելի ճկուն տեսակետ ունենալ: Բայց, իհարկե, քրիստոնյա լինելը իսկապես նշանակում է մտածել, որ այնտեղ, որտեղ քրիստոնեությունը տարբերվում է այլ կրոններից, քրիստոնեությունը ճիշտ է, իսկ մյուսները՝ սխալ: Ինչպես թվաբանության մեջ՝ գումարի համար կա միայն մեկ ճիշտ պատասխան, և մնացած բոլոր պատասխանները սխալ են, բայց որոշ սխալ պատասխաններ շատ ավելի մոտ են ճիշտ պատասխանին, քան մյուսները:

Մարդկության առաջին մեծ բաժանումը մեծամասնության մեջ է, որը հավատում է ինչ-որ Աստծո կամ աստվածների, և փոքրամասնության, որը չի հավատում: Այս առումով քրիստոնեությունը համընկնում է մեծամասնության հետ՝ համընկնում է հին հույների և հռոմեացիների, ժամանակակից վայրենիների, ստոիկների, պլատոնիստների, հինդուիստների, մահմեդականների և այլոց հետ՝ ընդդեմ ժամանակակից արևմտաեվրոպական մատերիալիստի:

Հիմա անցնում եմ հաջորդ մեծ բաժանմանը: Մարդկանց, որոնք հավատում են Աստծուն, կարելի է բաժանել ըստ Աստծո այն պատկերացման, որին նրանք հավատում են: Այստեղ գոյություն ունեն երկու շատ տարբեր գաղափարներ: Նրանցից մեկը այն գաղափարն է, որ Աստված բարու և չարի սահմաններից դուրս է: Մենք՝ մարդիկ, մի բան լավն ենք անվանում, իսկ մյուսը՝ վատ: Բայց ոմանց կարծիքով դա զուտ մեր մարդկային տեսակետն է: Այս մարդիկ ասում են, որ ինչքան մարդն ավելի իմաստուն լիներ, այնքան նա կխորշեր որևէ բան անվանել լավ կամ վատ, և ավելի պարզ կտեսներ, որ ամեն ինչ ինչ-որ տեսանկյունից լավ է և մեկ այլ տեսանկյունից՝ վատ, և որ ոչինչ չէր կարող այլ կերպ լինել: Հետևաբար, այս մարդիկ կարծում են, որ աստվածային տեսանկյունին հասնելուց դեռ շատ առաջ այս տարբերությունն ընդհանրապես կվերանա: Մենք ասում ենք, որ քաղցկեղը վատ է, քանի որ այն սպանում է մարդուն. բայց կարելի է նույն հեշտությամբ հաջողակ վիրաբույժին անվանել վատ, քանի որ նա վերացնում է քաղցկեղը: Ամեն ինչ կախված է տեսակետից: Մյուս և հակառակ գաղափարն այն է, որ Աստված միանշանակ «բարի» կամ

«արդար» է՝ Նա կողմնապահություն է անում, սիրում է սերը և ատում ատելությունը, ցանկանում է, որ մենք մի կերպ վարվենք, այլ ոչ թե այլ կերպ: Այս առաջին տեսակետը, որը Աստծուն համարում է բարուց և չարից անդին, կոչվում է պանթեիզմ: Նրան էր հարում պրուսացի մեծ փիլիսոփա Հեգելը և, որքանով ես հասկանում եմ նրանց՝ հնդիկները: Մյուս տեսակետն այն է, որն ընդունված է հրեաների, մահմեդականների և քրիստոնյաների կողմից:

Եւ պանթեիզմի և Աստծո մասին քրիստոնեական գաղափարի միջև այս մեծ տարբերության հետ սովորաբար առաջ է գալիս մեկ ուրիշը: Սովորաբար պանթեիստները հավատում են, որ Աստված, այսպես ասած, կենդանացնում է տիեզերքը, այնպես, ինչպես, մենք կենդանացնում ենք մեր մարմինը. որ տիեզերքը գրեթե Աստված ինքն է, այն առումով, եթե այն չլիներ, նա նույնպես գոյություն չէր ունենա, և այն ամենը, ինչ դուք կգտնեք տիեզերքում, Աստծո մասն է: Քրիստոնեական գաղափարը բոլորովին այլ է: Քրիստոնյաները կարծում են, որ Աստված հնարել և ստեղծել է տիեզերքը, ինչպես մարդը, որը նկար կամ կամ մեղեդի է ստեղծում:

Նկարիչը նկար չէ, և նա չի մահանա, եթե նրա նկարը ոչնչացվի: Դուք կարող եք ասել. «Նա շատ բան է դրել իրենից իր նկարի մեջ», բայց այդ ասելով միայն նկատի ունեք, որ նկարի ամբողջ գեղեցկությունն ու հետաքրքրությունը առաջացել են նրա մտքում: Նրա հմտությունը նկարի մեջ այնպիսին չէ, ինչպես այն նրա մտքում կամ նույնիսկ ձեռքերում է: Ես կարծում եմ, որ դուք այժմ տեսնում եք, թե ինչպես է այս տարբերությունը պանթեիստների և քրիստոնյաների միջև կապված մյուսի հետ: Եթե դուք լավի և վատի տարբերությունը լուրջ չեք ընդունում, ապա հեշտ է ասել, որ այն, ինչ գտնվում է այս աշխարհում Աստծո մասն է: Բայց, իհարկե, եթե դուք որոշ բաներ իսկապես վատն եք համարում, իսկ Աստծուն՝ իսկապես լավը, ապա դուք չեք կարող այդպես խոսել: Դուք պարտավոր եք հավատալ, որ Աստված աշխարհից առանձնացված է, և որոշ բաներ, որ մենք տեսնում ենք աշխարհում, հակասում են Նրա կամքին: Առերեսվելով քաղցկեղի կամ չքավորության հետ պանթեիստը կարող է ասել. «Եթե դուք միայն տեսնեիք այս ամենը Աստվածային տեսանկյունից, դուք կհասկանայիք, որ սա նույնպես Աստված է »: Քրիստոնյան պատասխանում է. «Մի՛ ասեք անիծյալ անհեթեթություն» (*): Քանզի քրիստոնեությունը մարտական կրոն է: Այն կարծում է, որ Աստված ստեղծեց աշխարհը. տարածությունն ու ժամանակը, ջերմությունն ու ցուրտը, բոլոր գույներն ու համերը, և բոլոր կենդանիներն ու բույսերն այն բաներն են, որոնք Աստված «ստեղծել է» այսպես ասած Իր մտքից, այնպես, ինչպես մարդը պատմվածք է հորինում:

---- [*] Մի ունկնդիր դժգոհել էր «անիծյալ» բառից՝ որպես անմիտ հայհոյանք: Բայց ես նկատի ունեմ հենց այն, ինչ ասում եմ. անհեթեթությունը, որն անիծված է, գտնվում է Աստծո անեծքի ներքո, և բոլոր նրանց, ովքեր հավատում են դրան, կտանի (եթե Աստծո շնորհը չլինի) հավիտենական մահվան:

Բայց այն նաև կարծում է, որ շատ բան սխալ է ընթացել այն աշխարհի հետ, որն Աստված ստեղծել է, և որ Աստված մեզ կոչ է անում, և կոչ է անում շատ բարձրաձայն, որ մենք դրանք ուղղենք:

Եւ, իհարկե, սա շատ մեծ հարց է առաջացնում: Եթե աշխարհը ստեղծվել է բարի Աստծո կողմից, ապա ինչո՞ւ է այն այսպիսի վատ վիճակում: Եւ երկար տարիներ ես պարզապես հրաժարվում էի լսել այս հարցի քրիստոնեական պատասխանները, որովհետև շարունակում էի միշտ մտածել. «Ինչ էլ որ ասես, և որքան էլ խելացի լինեն քո փաստարկությունները, մի՞թե շատ ավելի պարզ և հեշտ չէ ասել, որ աշխարհը չի ստեղծվել որևէ բանական ուժի կողմից: Արդյո՞ք քո բոլոր փաստարկները պարզապես ակնհայտից խուսափելու բարդ փորձ չեն »: Բայց այդ դեպքում դա ինձ նետում էր մեկ այլ դժվարության մեջ:

Աստծո դեմ իմ փաստարկությունն այն էր, որ տիեզերքն այսքան դաժան և անարդար էր թվում: Բայց որտեղի՞ց եմ ես ձեռք բերել արդարի և անարդարի այս գաղափարը: Մարդը գիծը ծուռ չի անվանում, քանի դեռ ուղիղ գծի մասին պատկերացում չունի: Ինչի՞ հետ էի ես համեմատում այս տիեզերքը, երբ այն անվանում էի անարդար: Եթե ամբողջ ներկայացումն, այսպես ասած, ծայրից ծայր վատն ու անիմաստ էր, ապա ինչո՞ւ ես, ով կարծես թե այդ ներկայացման մասն էր կազմում, այդքան բուռն արձագանք ունեի դրա դեմ: Մարդը ջրի մեջ ընկնելիս իրեն թաց է զգում, քանի որ մարդը ջրային կենդանի չէ. ձուկը թաց չէր զգա: Իհարկե, ես կարող էի հրաժարվել արդարության մասին իմ պատկերացումից՝ ասելով, որ դա ոչ այլ ինչ է, քան իմ սեփական կարծիքը: Բայց եթե ես այդպես անեի, ապա իմ դժգոհությունը Աստծո դեմ նույնպես ի չիք էր դառնում, որովհետև փաստարկությունը կախված էր այն բանից, որ աշխարհն իսկապես անարդար էր, այլ ոչ թե պարզապես որ այն չէր համապատասխանում իմ անձնական քմահաճույքին: Այսպիսով՝ հենց այն փաստարկության մեջ, որը փորձում էր ապացուցել, որ Աստված գոյություն չունի, այլ կերպ ասած, որ ամբողջ իրականությունն անիմաստ է, ես հայտնաբերեցի, որ ես ստիպված էի ենթադրել, որ իրականության մի մասը, մասնավորապես՝ իմ արդարության գաղափարը, միանգամայն իմաստալից էր: Հետևաբար, աթեիզմը չափից դուրս պարզունակ է: Եթե ամբողջ տիեզերքը ոչ մի իմաստ չունենար, ապա մենք չպիտի երբևիցե չբացահայտեինք, որ այն իմաստ չուներ. ինչպես որ, եթե տիեզերքում լույս չլիներ, և, հետևաբար, գոյություն չունենային աչքեր ունեցող արարածներ, մենք չպիտի երբևիցե իմանայինք, որ այն մութ է: Մութը կլիներ անիմաստ հասկացություն:

## 2. ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

Շատ լավ: Այսպիսով՝ աթեիզմը չափից դուրս պարզ է: Եւ ես ձեզ կասեմ մեկ այլ տեսակետ, որը նույնպես չափից դուրս պարզ է: Դա այն տեսակետն է, որը ես անվանում եմ «ջրախառն քրիստոնեություն», որն ուղղակի ասում է, որ երկնքում կա բարի Աստված և ամեն ինչ կարգին է՝ մեղքի, դժոխքի և սատանայի, ինչպես նաև փրկության մասին բոլոր դժվարին և սարսափելի ուսմունքները անտեսելով: Սրանք երկուսն էլ երեխայական փիլիսոփայություններ են:

Պարզունակ կրոն պահանջելն անիմաստ է: Ի վերջո, իրական բաները պարզ չեն: Նրանք թվում են պարզ, բայց նրանք այդպիսին չեն: Սեղանը, որի մոտ ես նստած եմ, պարզ է թվում: Բայց խնդրեք մի գիտնականի ձեզ պատմել, թե իրականում ինչի՞ց է այն բաղկացած – ամենը ատոմների վերաբերյալ, և թե ինչպես են լույսի ալիքները բեկվում նրանից և ներթափանցում իմ աչքը, և ինչ ազդեցություն են դրանք թողնում իմ տեսողական նյարդի վրա, և դա ինքնին ինչպես է ազդում իմ ուղեղի վրա-, և, իհարկե, դուք կհայտնաբերեք, որ այն, ինչ մենք անվանում ենք «սեղան տեսնել» մեզ ընկղմում է այնպիսի առեղծվածների և բարդությունների մեջ, որոնց վերջը չի երևում: Իր աղոթքը ասող երեխան շատ պարզ երևույթ է թվում: Եվ եթե բավարարված եք այստեղ կանգ առնել՝ շատ բարի: Բայց եթե բավարարված չենք (և ժամանակակից աշխարհը սովորաբար բավարարված չէ), եթե ուզում ենք առաջ գնալ և իմանալ, թե ի՞նչ է իրականում տեղի ունենում, ապա պետք է պատրաստ լինենք դժվարություններին: Եթե մենք ցանկանում ենք ավելին, քան պարզությունն է, անհեթեթություն է բողոքել, որ այն, ինչ ստանում ենք պարզ չէ:

Շատ հաճախ, սակայն, այս անհեթեթ մոտեցումը որդեգրվում է մարդկանց կողմից, որոնք հիմար չեն, բայց որոնք գիտակցաբար կամ անգիտակցաբար ցանկանում են ոչնչացնել քրիստոնեությունը: Այդպիսի մարդիկ որդեգրում են քրիստոնեության մի տարբերակ, որը համապատասխանում է վեց տարեկան երեխայի պատկերացումներին և այն դարձնում են իրենց հարձակման առարկան: Երբ փորձում ես բացատրել քրիստոնեական վարդապետությունը, ինչպես որ այն իրոք ընկալվում է այն ուսումնասիրած մեծահասակի կողմից, նրանք բողոքում են, որ դու նրանց խառնաշփոթի մեջ ես գցում, և որ ամեն ինչ չափազանց բարդ է, և որ եթե իսկապես Աստված լիներ, նրանք վստահ են, որ նա «կրոնը» կդարձներ ավելի պարզ, քանի որ պարզությունն այնքան գեղեցիկ է և այլն: Դուք պետք է զգույշ լինեք այս մարդկանցից, քանի որ նրանք ամեն րոպե փոխելու են իրենց դիրքորոշումը և միայն վատնելու են ձեր ժամանակը: Ուշադրություն դարձրեք նաև նրանց այն գաղափարին, որ Աստված «կրոնը կպարզեցներ». ասես «կրոնը» մի բան է, որն Աստված հորինել է, և ոչ թե Նրա հայտարարությունն ուղղված մեզ՝ Իր էության որոշակի բավականին անփոփոխ փաստերի վերաբերյալ:

Բացի բարդ լինելուց, իրականությունը, իմ փորձից ելնելով, սովորաբար տարօրինակ է: Այն կոկիկ չէ, ակնհայտ չէ՝ այն չէ, ինչ սպասում ենք: Օրինակ՝ երբ

իմանում ենք, որ երկիրը և մյուս մոլորակները բոլորը պտտվում են արևի շուրջը, մենք բնականաբար կակնկալեինք, որ բոլոր մոլորակները իրար հետ ինչ-որ զուգորդության մեջ են՝բոլորը իրարից նույն հեռավորության վրա են, կամ ասենք, պարբերաբար աճող հեռավորության վրա, կամ բոլորը նույն չափի են, կամ նրանք գնալով փոքրանում կամ մեծանում են, երբ հեռանում ենք արեգակից: Իրականում, դուք չեք գտնում ոչ մի տեսանելի ներդաշնակություն կամ պատճառ չափերի կամ հեռավորությունների վերաբերյալ. նրանցից մի քանիսն ունեն մեկ լուսին, մեկը՝ չորս, մեկը՝ երկու, մի քանիսը՝ ոչ մի, և մեկն ունի օղակ:

Իրականությունը, իրականում, սովորաբար այն է, ինչ դուք չէիք կարող կռահել: Սա այն պատճառներից մեկն է, որ ես հավատում եմ քրիստոնեությանը: Այն կրոն է, որը դուք չէիք կարող կռահել: Եթե այն մեզ առաջարկեր հենց այն տիեզերքը, որը մենք ակնկալում էինք, մեզ կթվար, որ մենք այն հորինում ենք: Բայց իրականում, այն այնպիսի բան չէ, որ որևէ մեկը կհորիներ: Այն ունի հենց այն տարօրինակ ոլորը, որն ունեն իրական բաները: Այսպիսով՝ եկեք թողնենք բոլոր այս երեխայական փիլիսոփայությունները, այս չափազանց պարզ պատասխանները: Խնդիրը պարզ չէ, և պատասխանը նույնպես պարզ չի լինելու:

Ո՞րն է խնդիրը: Տիեզերք, որն իր մեջ ակնհայտորեն ընդգրկում է շատ բաներ, որոնք վատն են և, ըստ երևույթին, անիմաստ, բայցև ընդգրկում է մեզ նման արարածներ, որոնք գիտեն, որ դրանք վատն են և անիմաստ: Կան միայն երկու տեսակետներ, որոնք առերեսվում են բոլոր փաստերին: Մեկը քրիստոնեական տեսակետն է՝ որ սա լավ աշխարհ է, որը սխալ ընթացք է ունեցել, բայց դեռ պահպանում է իր հիշողությունն առ այն, թե ինչ պետք է այն լիներ: Մյուսը Դուալիզմ կոչվող տեսակետն է: Դուալիզմը դա այն ուսմունքն է, որ ամեն ինչի հետևում կան երկու հավասար և անկախ ուժեր, մեկը՝ բարի, իսկ մյուսը՝ չար, և որ այս տիեզերքն այն ռազմի դաշտն է, որտեղ նրանք մշտենջանական պատերազմ են մղում իրար դեմ: Ես անձամբ կարծում եմ, որ քրիստոնեությունից բացի, դուալիզմը ասպարեզում եղած ամենաառնական և խելամիտ դավանանքն է: Բայց նրա մեջ մի նրբություն կա:

Երկու ուժերը, կամ ոգիները, կամ աստվածները՝ բարին և չարը, ենթադրվում է, որ իրարից անկախ են: Նրանք երկուսն էլ գոյություն ունեին հավիտյանս հավիտենից: Նրանցից ոչ մեկը մյուսին չի ստեղծել, և ոչ մեկը մյուսից ավելի իրավունք չունի իրեն Աստված անվանելու: Յուրաքանչյուրը ենթադրաբար կարծում է, որ ինքը բարի է, իսկ մյուսը՝ չար: Նրանցից մեկը սիրում է ատելությունն ու դաժանությունը, իսկ մյուսը սիրում է սերն ու ողորմածությունը, յուրաքանչյուրը պաշտպանելով իր տեսակետը: Հիմա ի՞նչ նկատի ունենք, երբ դրանցից մեկին անվանում ենք Բարի Ուժ, իսկ մյուսին՝ Չար Ուժ: Կամ մենք պարզապես ասում ենք, որ պատահականորեն նախընտրում ենք մեկը մյուսից, ինչպես գարեջուրը՝ խնձորօղուց, կամ էլ ասում ենք, որ ինչ էլ որ մտածեն երկու ուժերը, և ինչ էլ որ այս պահին մեզ՝ մարդկանց դուր գա, դրանցից մեկն իրականում սխալ է, և իրականում սխալվում է ինքն իրեն համարելով որպես լավը: Հիմա՝ եթե մենք նկատի ունենք միայն այն, որ պատահաբար նախընտրում ենք առաջինը, ապա մենք պետք է ընդհանրապես

հրաժարվենք բարու և չարի մասին խոսելուց: Բարին նշանակում է, թե ի՞նչ պետք է նախընտրես անկախ այն բանից, թե ի՞նչ է քեզ դուր գալիս տվյալ պահին: Եթե «բարի լինելը» նշանակեր պարզապես միանալ այն կողմին, որը ձեզ դուր է գալիս, առանց որեւէ իրական պատճառի, ապա բարին արժանի չէր լինի բարի կոչվելու: Այսպիսով՝ մենք պետք է նկատի ունենանք, որ երկու ուժերից մեկն իրականում սխալ է, իսկ մյուսը՝ իրականում ճիշտ:

Բայց այն պահին, երբ դուք ասում եք դա, դուք տիեզերքում դնում եք մի երրորդ բան, բացի երկու ուժերից. ինչ-որ օրենք կամ չափանիշ կամ բարու կանոն, որին ուժերից մեկը համահունչ է, իսկ մյուսը՝ ոչ: Բայց քանի որ երկու ուժերը դատվում են այս չափանիշով, ապա այս չափանիշը, կամ Էակը, ով ստեղծել է այս չափանիշը, ավելի հեռու է և ավելի բարձր, քան նրանցից որևէ մեկը, և Նա կլինի իրական Աստվածը: Իրականում, այն, ինչ մենք նկատի ունեինք նրանց լավ և վատ անվանելով, պարզվում է, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ, որ նրանցից մեկը ճիշտ հարաբերության մեջ է իրական եւ բացարձակ Աստծո հետ, իսկ մյուսը սխալ հարաբերության մեջ է Նրա հետ:

Նույն բանը կարելի է այլ կերպ ասել: Եթե Դուալիզմը ճշմարիտ է, ապա վատ Ուժը պետք է լինի մի էակ, որը վատությունը սիրում է սոսկ ա՛յդ պատճառով: Բայց իրականության մեջ մենք փորձ չունենք, որ որևէ մեկին վատությունը դուր գա միայն այն պատճառով, որ այն վատն է: Ամենամոտը, որին կարող ենք հասնել՝ դաժանությունն է: Բայց իրական կյանքում մարդիկ, որոնք դաժան են ինչ-որ մեկի նկատմամբ ունեն երկու պատճառ՝ կա՛մ սադիստ են, այսինքն՝ նրանք ունեն սեռական այլասերվածություն, որը դաժանությունը դարձնում է զգայական հաճույքի աղբյուր նրանց համար, կամ էլ հանուն ինչ-որ բանի, որից նրանք պատրաստվում են ինչ-որ բան ստանալ՝ փող կամ իշխանություն կամ անվտանգություն: Բայց հաճույքը, փողը, իշխանությունը և անվտանգությունը, որպես այդպիսին, լավ բաներ են: Վատությունը բաղկացած է նրանց սխալ մեթոդով կամ սխալ ճանապարհով կամ չափազանց շատ հետապնդելուց: Ես, իհարկե, նկատի չունեմ, որ այն մարդիկ, որոնք սա անում են, ծայր աստիճան չար չեն: Ես իսկապես նկատի ունեմ, որ չարությունը, երբ այն քննում ես, պարզվում է, որ ինչ -որ բարիքի հետապնդումն է վատ ճանապարհով: Դուք կարող եք բարի լինել միայն հանուն բարության. դուք չեք կարող չար լինել միայն հանուն չարիքի: Դուք կարող եք բարի արարք կատարել, երբ ձեզ բարի չեք զգում և երբ դա ձեզ հաճույք չի պատճառում, պարզապես այն պատճառով, որ բարությունը ճիշտ է. բայց ոչ ոք երբեք դաժանություն չի գործում սոսկ այն պատճառով, որ դաժանությունը սխալ է, այլ միայն այն պատճառով, որ դաժանությունը հաճելի կամ օգտակար է իրեն: Այլ կերպ ասած, վատությունը չի կարող հաջողության հասնել նույնիսկ վատը լինելու մեջ նույն կերպով, որով լավը լավ է: Բարությունը, այսպես ասած, ինքնին այդպիսին է. չարությունը միայն փչացած բարություն է: Եվ նախ պետք է ինչ -որ բան լավ լինի, նախքան այն փչացնելը: Մենք սադիզմը անվանեցինք սեռական այլասերվածություն. բայց նախ պետք է ունենալ նորմալ սեռականության գաղափար, նախքան դրա այլասերվածության մասին խոսելը: Եւ դուք կարող եք տեսնել, թե ո՛րն է այլասերվածությունը, որովհետև դուք կարող եք այլասերվածության բացատրությունը ստանալ նորմալից և չեք կարող նորմալի բացատրությունը ստանալ այլասերվածությունից: Սրանից հետևում է, որ այս

Վատ Ուժը, որը պետք է հավասարը-հավասարի հարաբերություն ունենա Բարի Ուժի հետ, և սիրում է չարությունն այնպես, ինչպես Բարի Ուժը սիրում է բարին, սոսկ դեւ է: Որպեսզի նա լինի վատը, նա պետք է լավ բաներ ցանկանա, իսկ հետո հետամուտ լինի դրանց սխալ ճանապարհով. նա պետք է ունենա մղումներ, որոնք ի սկզբանե լավն էին, որպեսզի կարողանա դրանց այլասերել: Բայց եթե նա վատն է, նա չի կարող ինքն իրեն մատակարարել ո՛չ ցանկալի լավ բաներով, ո՛չ էլ այլասերելու լավ մղումներով: Նա պետք է երկուսն էլ ստանա Բարի Ուժից: Իսկ եթե դա այդպես է, ուրեմն նա անկախ չէ: Նա Բարի Ուժի աշխարհի մի մասն է. նա ստեղծվել է կա՛մ Բարի Ուժի կողմից, կա՛մ երկուսից էլ վեր գտնվող ինչ-որ ուժի կողմից:

Է՛լ ավելի պարզ ասենք: Որպեսզի նա վատը լինի, նա պետք է գոյություն ունենա, և ունենա բանականություն ու կամք: Բայց գոյությունը, բանականությունը և կամքը ինքնին լավ բաներ են: Հետևաբար, նա պետք է դրանք վերցնի Բարի Ուժից. նույնիսկ վատ լինելու համար նա պետք է փոխ առնի կամ գողանա իր հակառակորդից: Եվ հիմա դուք սկսում եք տեսնել, թե ինչո՞ւ է քրիստոնեությունը միշտ պնդել, որ սատանան ընկած հրեշտակ է: Դա զուտ երեխայական պատմություն չէ: Դա իրական փաստումն է այն բանի, որ չարը մակաբույծ է, ոչ թե ինքնօրինակ բան: Այն կարողությունները, որոնք հնարավորություն են տալիս չարին առաջանալու՝ բարության կողմից նրան տրված կարողություններն են: Բոլոր այն բաները, որոնք թույլ են տալիս վատ մարդուն արդյունավետորեն վատ լինել, ինքնին լավ բաներ են՝ վճռականություն, խելացիություն, գեղեցկություն, և հենց ինքը՝ գոյությունը: Ահա թե ինչու Դուալիզմը, խիստ իմաստով, հնարավոր չէ:

Բայց ես առանց առարկելու ընդունում եմ, որ իրական քրիստոնեությունը (ի տարբերություն «ջրախառն քրիստոնեությունից») շատ ավելի մոտ է Դուալիզմին, քան մարդիկ կարծում են: Բաներից մեկը, որ զարմացրեց ինձ, երբ ես առաջին անգամ լրջորեն կարդացի Նոր Կտակարանը, այն էր, թե որքան շատ էր այն խոսում տիեզերքի Մութ Ուժի՝ հզոր չար ոգու մասին, որը համարվում էր մահվան, հիվանդության և մեղքի հետևում գտնվող Զորությունը: Տարբերությունն այն է, որ քրիստոնեությունը կարծում է, որ այս Մութ Ուժը ստեղծվել է Աստծո կողմից, եղել է լավը, երբ ստեղծվել է, և մոլորվել է: Քրիստոնեությունը համաձայն է Դուալիզմի հետ, որ այս տիեզերքը պատերազմի մեջ է: Բայց այն չի կարծում, որ դա պատերազմ է անկախ ուժերի միջև: Այն կարծում է, որ դա քաղաքացիական պատերազմ է՝ ապստամբություն, և որ մենք ապրում ենք տիեզերքի այն մասում, որը զավթված է ապստամբի կողմից:

Թշնամու կողմից գրավված տարածք՝ ահա՛ թե ինչ է այս աշխարհը: Քրիստոնեությունը այն պատմությունն է, թե ինչպես է օրինավոր թագավորը ժամանել, կարելի է ասել՝ ժամանել ծպտված, և մեզ բոլորիս կոչ է անում մասնակցել դիվերսիայի մեծ արշավի: Երբ գնում եք եկեղեցի, դուք իրականում ունկնդրում եք մեր ընկերների գաղտնի հեռահար կապին. այդ իսկ պատճառով է թշնամին այդքան ցանկանում մեզ թույլ չտալ: Նա անում է դա խաղալով մեր մեծամտության, ծուլության և ինտելեկտուալ հպարտության հետ: Ես գիտեմ, որ ինչ-որ մեկը ինձ կհարցնի. «Իսկապե՞ս ցանկանում ես այս օրով և այս

դարում մեզ ներկայացնել մեր հին ծանոթ սատանային՝ իր սմբակներով, եղջյուրներով և ամեն ինչով»: Թե ի՞նչ կապ ունի օրը կամ դարը, ես չգիտեմ: Եւ ես առանձնահատուկ չեմ պնդում սմբակների և եղջյուրների գոյության մասին: Բայց այլ առումներով իմ պատասխանն է. «Այո»: Ես չեմ պնդում, որ գիտեմ որեւէ բան նրա արտաքինի վերաբերյալ: Եթե որևէ մեկը իրոք ուզում է ավելի լավ ճանաչել նրան, ես կասեի այդ մարդուն. «Մի՛ անհանգստացիր: Եթե իսկապես ուզում ես՝ կճանաչես: Հաճելի՞ կլինի դա քեզ, թե ոչ, այլ հարց է»:

## 3. ԱՊԾԵՑՈՒՑԻՉ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ

Քրիստոնյաներն, այսպիսով, հավատում են, որ չար ուժն առժամանակ ինքն իրեն դարձրել է այս Աշխարհի Իշխանը: Եվ դա, իհարկե, հարցեր է առաջ բերում: Արդյո՞ք այս իրադրությունը Աստծո կամքին համապատասխան է, թե՞ ոչ: Եթե այո, Նա տարօրինակ Աստված է, կասեիք դուք, իսկ եթե այդպես չէ, ինչպե՞ս կարող է որևէ բան տեղի ունենալ բացարձակ զորություն ունեցող էակի կամքին հակառակ:

Բայց ամեն ոք, ով ունեցել է իշխանություն, գիտի, թե ինչպես կարող է մի բան լինել քո կամքին համապատասխան մի կերպ, և ոչ՝ մեկ այլ կերպ: Միանգամայն խելամիտ կարող է լինել մոր համար իր երեխաներին ասել. «Ես չեմ պատրաստվում ամեն երեկո ձեզ ստիպել կարգի բերել դասասենյակը, դուք պետք է ինքներդ սովորեք այն կոկիկ պահել»: Այնուհետև մի երեկո նա գնում է և տեսնում, որ արջուկը, թանաքը և «Ֆրանսերեն Քերականությունը» թափված են հատակին: Դա նրա կամքին հակառակ է: Նա կնախընտրեր, որ երեխաները կոկիկ լինեին: Սակայն հենց նրա կամքն է, որ երեխաներին ազատ է թողել անփույթ լինելու: Նույն բանը տեղի է ունենում ցանկացած զինվորական գնդում, արհմիությունում կամ դպրոցում: Ինչ-որ բան կամավոր ես դարձնում, և մարդկանց կեսն այն չի անում: Դա այն չէ, ինչ կամեցել էիր, բայց քո կամքն այն հնարավոր էր դարձրել:

Նույնն է, հավանաբար, տիեզերքում: Աստված ստեղծեց բաներ, որոնք ունեին ազատ կամք: Դա նշանակում է արարածներ, որոնք կարող են կամ սխալվել կամ ճշտորոշվել: Որոշ մարդիկ կարծում են, որ կարող են պատկերացնել արարած, որն ազատ է, բայց սխալվելու հնարավորություն չունի. ես չեմ կարող: Եթե մի բան ազատ է լավը լինելու, ապա այն ազատ է նաև վատը լինելու: Եւ ազատ կամքն է, որ չարիքը հնարավոր է դարձրել: Այդ դեպքում ինչո՞ւ է Աստված նրանց ազատ կամք տվել: Որովհետև ազատ կամքը թեև հնարավոր է դարձնում չարը, բայց նաև միակ բանն է, որը հնարավոր է դարձնում որևիցե սեր կամ բարություն կամ ուրախություն, որն արժե ունենալ: Ավտոմատների աշխարհը, որտեղ արարածների կենսակերպը նման է մեքենաների, դժվար թե արժեր ստեղծել: Երջանկությունը, որն Աստված նախատեսում է Իր բարձրագույն արարածների համար, երջանկությունն է ազատորեն Իրեն և միմյանց հետ կամավոր միացած լինելու սիրո և բերկրանքի այնպիսի ցնծության մեջ, որի համեմատ այս երկրի վրա ամենահիասքանչ սերը ցանկացած տղամարդու և կնոջ միջև պարզապես ջուր է: Իսկ դրա համար նրանք պետք է ազատ լինեն:

Իհարկե, Աստված գիտեր, թե ի՞նչ կլիներ, եթե նրանք սխալ կերպով օգտագործեին իրենց ազատությունը. ըստ երևույթին, Նա կարծել է, որ արժեր այդ ռիսկին դիմել: Միգուցե մենք հակված ենք չհամաձայնելու Նրա հետ: Սակայն Աստծո հետ չհամաձայնվելը դժվարություն է առաջացնում: Նա է՛ այն աղբյուրը, որտեղից սկիզբ է առնում քո ողջ բանականության ուժը. դու չես կարող լինել ճիշտ, և Նա՝ սխալ, այնպես, ինչպես առուն չի կարող բարձրանալ

իր ակունքից ավելի վեր: Երբ դուք վիճում եք Նրա հետ, դուք վիճում եք հենց այն ուժի հետ, որը ձեզ հնարավորություն է ընձեռել ընդհանրապես վիճել. այսինքն՝ դա նման է կտրել այն ճյուղը, որի վրա նստած եք: Եթե Աստված կարծում է, որ տիեզերքում այս պատերազմական դրությունը այն գինն է, որն արժե վճարել ազատ կամք ունենալու համար, այսինքն՝ ստեղծելու կենդանի աշխարհ, որտեղ արարածները կարող են իրական լավություն կամ վատություն անել, և իրական կարևոր բաներ կարող են տեղի ունենալ՝ խաղալիք աշխարհի փոխարեն, որը շարժվում է սոսկ միայն երբ Նա քաշում է թելերը, ապա մենք կարող ենք ընդունել, որ այն արժե վճարել:

Երբ մենք իսկապես հասկանանք, թե ի՞նչ է ազատ կամքը, կտեսնենք, թե որքան անիմաստ է հարցնել, ինչպես մեկը մի անգամ ինձ հարցրեց. «Ինչո՞ւ Աստված ստեղծեց արարած այնպիսի ապականված նյութերից, որ այն շեղվեց»: Որքան լավն է արարածը, որքան ավելի խելացի, ուժեղ և ազատ է նա, այնքան նա լավը կլինի, եթե ճիշտ ուղիով է ընթանում, բայց նաև ավելի վատը կլինի, եթե շեղվի: Կովը չի կարող լինել շատ լավ կամ շատ վատ. շունը կարող է լինել և՛ լավը, և՛ վատը. երեխան ավելի լավը և ավելի վատը. սովորական մարդը՝ առավել եւս. հանճարեղ մարդը՝ դեռ ավելին. գերմարդկային ոգին՝ բոլորից ամենալավը կամ վատթարագույնը:

Ինչպե՞ս մոլորվեց Չար Ուժը: Այստեղ, անկասկած, մենք տալիս ենք մի հարց, որին մարդ արարածը չի կարող որևէ հստակ պատասխան տալ: Այնուամենայնիվ, կարելի է առաջարկել ողջամիտ (և ավանդական) կռահում, որը հիմնված է շեղվելու մեր սեփական փորձի վրա: Այն պահին, երբ դու ընդհանրապես անձ ունես, հնարավորություն է ստեղծվում ինքդ քեզ առաջինը դասելու՝ ցանկանալով լինել կենտրոնը, ցանկանալով իրականում լինել Աստված: Դա սատանայի մեղքն էր, և դա այն մեղքն էր, որը նա սովորեցրեց մարդկությանը: Որոշ մարդիկ կարծում են, որ մարդու անկումը կապ ուներ սեքսի հետ, բայց դա սխալ է: (Ծննդոց Գրքի պատմությունն ավելի շուտ հուշում է, որ մեր սեռական բնույթի որոշ ապականումը հետևեց անկմանը, և դրա արդյունքն էր, ոչ թե դրա պատճառը): Այն, ինչ սատանան դրեց մեր հեռավոր նախնիների մտքերում, այն գաղափարն էր, որ նրանք կարող էին լինել «աստվածների նման», կարող էին իրենց կենսակերպը հիմնել այնպես ասես թե իրենք էին իրենց ստեղծել, կարող էին լինել իրենք իրենց ինքնուրույն տերը, իրենք իրենց համար ինչ-որ երջանկություն հորինել Աստծուց դուրս և Աստծուց զատ: Եվ այդ անհույս փորձից առաջացավ գրեթե այն ամենը, ինչ մենք անվանում ենք մարդկության պատմություն՝ փող, աղքատություն, հավակնություն, պատերազմ, մարմնավաճառություն, դասակարգեր, կայսրություններ, ստրկություն՝ մարդու երկար և սարսափելի այն պատմությունը, որտեղ նա փորձում է գտնել Աստծուց բացի այլ բան, որն իրեն երջանիկ կդարձնի:

Պատճառը, թե ինչու այն երբեք չի կարող հաջողության հասնել, սա է՝ մեզ ստեղծել է Աստված. մեզ հնարել է այնպես, ինչպես մարդը հնարում է շարժիչ: Մեքենան ստեղծված է բենզինով աշխատելու համար, և ուրիշ ոչ մի բանով այն նորմալ չի աշխատի: Հիմա՝ Աստված նախագծել է մարդկային մեքենան, որպեսզի այն աշխատի հենց Իրենով: Նա Ինքն է այն վառելանյութը, որով

նախատեսված է, որ մեր հոգիները այրվեն, կամ այն կերակուրը, որով նախատեսված է, որ մեր հոգիները սնվեն: Ուրիշը չկա: Ահա թե ինչու հնարավոր չէ պարզապես Աստծուն խնդրել, որ Նա մեզ երջանկացնի մեր ուրույն ձևով, առանց կրոնի մասին անհանգստանալու: Աստված չի կարող մեզ երջանկություն և խաղաղություն տալ Իրենից զատ, քանի որ այն չկա: Նման բան գոյություն չունի:

Դա է պատմության բանալին: Սարսափելի էներգիա է ծախսվում, քաղաքակրթություններ են կառուցվում, հիանալի հաստատություններ են ստեղծվում. բայց ամեն անգամ ինչ-որ մի բան սխալ է ընթանում: Ինչ-որ ճակատագրական թերություն միշտ վեր է բարձրացնում եսասեր և դաժան մարդկանց, և այդ ամենը նորից ետ է սահում դեպի թշվառություն և կործանում: Իրականում մեքենան ուղղակի կազմաքանդվում է: Թվում է, թե այն բարեհաջող է ընթանում, և այն անցնում է մի քանի մետր, իսկ հետո այն փչանում է: Այն փորձում են աշխատեցնել սխալ հեղուկով: Ահա թե ինչ է արել սատանան մեզ՝ մարդկանց:

Իսկ ի՞նչ է արել Աստված: Առաջին հերթին, Նա տվել է մեզ խիղճ՝ ճիշտ ու սխալի զգացում. և պատմության ընթացքում եղել են մարդիկ, որոնք փորձել են (նրանցից ոմանք՝ բավականաչափ շատ) հնազանդվել նրան: Նրանցից ոչ մեկը երբեք կատարելապես չի հաջողել: Երկրորդ՝ Նա ուղարկել է մարդկային ցեղին այն, ինչ ես անվանում եմ բարի երազներ. ես նկատի ունեմ այն տարօրինակ պատմությունները, որոնք սփռված են հեթանոսական կրոններում մի աստծո մասին, որը մահանում է և նորից կենդանանում, և իր մահով ինչ-որ կերպ նոր կյանք է տալիս մարդկանց: Երրորդ՝ Նա ընտրեց մեկ հատուկ ժողովուրդ և մի քանի դար մեխեց նրանց գլխում, թե ինչպիսի Աստված է Նա՝ որ Նա միակն է, և որ Նա շահագրգռված է պարկեշտ վարքով: Այդ ժողովուրդ հրեաներն էին, և Հին Կտակարանը մեխելու գործընթացի պատմությունն է:

Եւ հանկարծ տեղի է ունենում ապշելու մի բան: Այս հրեաների մեջ հայտնվում է մի մարդ, որը սկսում է խոսել այնպես, ասես թե Նա Աստված է: Նա պնդում է, որ թողնում է մեղքերը: Նա ասում է, որ Ինքը միշտ գոյություն է ունեցել: Նա ասում է, որ գալու է դատելու աշխարհը ժամանակների վերջում: Հիմա եկեք մի բան հստակեցնենք: Պանթեիստների մեջ, ինչպիսիք են հնդիկները, որևէ մեկը կարող է ասել, որ ինքը Աստծո մի մասն է, կամ մեկ է Աստծո հետ. այդտեղ ոչ մի տարօրինակ բան չէր լինի: Բայց այս մարդը, քանի որ նա հրեա էր, չէր կարող նկատի ունենալ այդպիսի Աստծուն: Աստված իրենց լեզվում նշանակում էր այն Էակը, որը աշխարհից դուրս էր և որը ստեղծել էր այն, և անսահմանորեն տարբերվում էր որևէ այլ բանից: Եւ երբ դուք ըմբռնեք դա, կտեսնեք, որ այս մարդու ասածը ուղղակի ամենաապշեցուցիչ բանն է, որ երբևիցե արտաբերվել է մարդկային շուրթերով:

Ասվածի մի մասը հաճախ աննկատ է մնում, քանի որ մենք այնքան ենք լսել այն, որ այլևս չենք նկատում, թե դա ինչ է նշանակում: Ես նկատի ունեմ մեղքերը ներելու պնդումը. ցանկացած մեղք: Հիմա, եթե խոսողը Աստված չէ, սա իսկապես այնքան անհեթեթ է, որ ծիծաղաշարժ է: Մենք բոլորս կարող ենք հասկանալ, թե ինչպես է մարդը ներում իրեն պատճառած հանցանքները: Դու

տրորում ես ոտքս, և ես ներում եմ քեզ. դու գողանում ես իմ փողը, և ես ներում եմ քեզ: Բայց ի՞նչ պետք է մտածել մի մարդու մասին, որը չլինելով կողոպտված կամ տրորված, հայտարարում է, թե ներել է քեզ, որ տրորել ես ուրիշների ոտքերը կամ գողացել ես նրանց փողերը: Տխմար բթամտությունն ամենաբարի նկարագրությունն է, որը մենք պետք է տանք նման պահվածքին: Սակայն սա հենց այն է, ինչ Հիսուսն անում էր. Նա ասում էր մարդկանց, որ նրանց մեղքերը ներված են, առանց սպասելով խորհրդակցելու բոլոր մյուս մարդկանց հետ, ում նրանց մեղքերն անկասկած վնասել էին: Նա առանց վարանելու իրեն պահում էր այնպես, կարծես ինքն էր գլխավորապես շահագրգիռ կողմը՝ հիմնական վիրավորված անձը բոլոր հանցանքներում: Սա իմաստ ունի միայն այն դեպքում, եթե Նա իսկապես այն Աստվածն էր, ում օրենքները խախտվում են, և ում սերը վիրավորվում է յուրաքանչյուր մեղքով: Ցանկացած խոսողի բերանում, ով Աստված չէ, այս խոսքերը ես կհամարեի այնպիսի հիմարություն կամ խարդախություն, որն անհամեմատելի է պատմության որևէ այլ կերպարի հետ:

Այնուամենայնիվ (և սա է տարօրինակ և կարևոր բանը), նույնիսկ Նրա թշնամիները, երբ նրանք կարդում են Ավետարանը, սովորաբար հիմարության և խարդախության տպավորություն չեն ստանում: Անկանխակալ ընթերցողներն՝ առավել ևս: Քրիստոսն ասում է, որ Նա «խոնարհ և հեզ» է, և մենք հավատում ենք Նրան, չնկատելով, որ եթե Նա պարզապես մարդ լիներ, խոնարհությունն ու հեզությունն ամենավերջին հատկանիշներն են, որոնք մենք կարող ենք վերագրել Նրա որոշ խոսքերին:

Ես այստեղ փորձում եմ կանխել որևէ մեկին ասելու այն իսկապես անհեթեթ բանը, որը մարդիկ հաճախ ասում են Նրա մասին. «Ես պատրաստ եմ ընդունել Հիսուսին՝ որպես բարոյականության մեծ ուսուցչի, բայց չեմ ընդունում Իր՝ Աստված լինելու պնդումը»: Դա մի բան է, որ մենք չպետք է ասենք: Մարդը, որը պարզապես մարդ էր և ասում էր Հիսուսի ասած բաները, բարոյականության մեծ ուսուցիչ չէր լինի: Նա կա՛մ կլիներ խելագար՝ նման մի մարդու, որը ասում է, որ ինքը խաշած ձու է, կա՛մ կլիներ դժոխքի սատանան: Դուք պետք է կատարեք ձեր ընտրությունը: Կա՛մ այս մարդը եղել է և է Աստծո Որդին, կա՛մ խելագար է, կա՛մ ավելի վատ բան: Դուք կարող եք փակել Նրան գժանոցում, կարող եք թքել Նրա վրա և սպանել Նրան ինչպես մի դևի, կամ կարող եք ընկնել Նրա ոտքերը և կոչել Նրան Տեր և Աստված: Բայց եկեք դուրս չտանք որևէ վերամբարձ անհեթեթություն Նրա՝ մարդկային մեծ ուսուցիչ լինելու վերաբերյալ: Նա այդ դուռը բաց չի թողել մեզ համար, քանի որ նման մտադրություն չի ունեցել:

## 4. ԿԱՏԱՐՅԱԼ ԱՊԱՇԽԱՐՈՂԸ

Մենք կանգնած ենք, այսպիսով, սարսափելի այլընտրանքի առջև: Այս մարդը, որի մասին մենք խոսում ենք, կա՛մ եղել է (և է՛) այն, ինչ ասել է, կա՛մ խելագար է, կա՛մ էլ ավելի վատ բան: Հիմա՝ ինձ ակնհայտ է թվում, որ Նա ո՛չ խելագար էր, ո՛չ էլ դև, և հետևաբար, որքան էլ տարօրինակ կամ սարսափելի կամ անհավանական թվա, ես պետք է ընդունեմ այն տեսակետը, որ Նա եղել և է Աստված: Աստված ժամանել է թշնամու կողմից գրավված այս աշխարհը մարդկային կերպարանքով:

Այժմ ո՞րն էր այդ ամենի նպատակը: Ի՞նչի համար է եկել Նա: Դե, սովորեցնելու, իհարկե. բայց հենց բացում եք Նոր Կտակարանը կամ որևէ այլ քրիստոնեական գրություն, տեսնում եք, որ անընդհատ խոսվում է այլ բանի մասին՝ Նրա մահվան և Նրա վերակենդանանալու մասին: Ակնհայտ է, որ քրիստոնյաները կարծում են, որ պատմության գլխավոր բանը հենց սա է: Նրանք կարծում են, որ գլխավոր բանը, որ Նա երկիր եկավ անելու՝ տանջվելն ու սպանվելն էր:

Հիմա, նախքան քրիստոնյա դառնալը, ես այնպիսի տպավորություն ունեի, որ առաջին բանը, ինչին քրիստոնյաները պետք է հավատային, դա հատուկ մի տեսություն էր մահանալու իմաստի վերաբերյալ: Ըստ այդ տեսության, Աստված ցանկանում էր պատժել մարդկանց՝ լքելու և Մեծ Ապստամբին միանալու համար, բայց Քրիստոսը կամավորագրվեց մեր փոխարեն պատժվելու, և այդ պատճառով Աստված մեզ ազատեց: Հիմա, ես խոստովանում եմ, որ նույնիսկ այս տեսությունն ինձ այդքան անբարոյական և այդքան հիմար չի թվում, ինչպես նախկինում. բայց դա այն չէ, ինչի մասին ես ուզում եմ խոսել: Այն, ինչ ես հասկացա ավելի ուշ, այն էր, որ ո՛չ այս տեսությունը, ո՛չ էլ որևէ այլ տեսություն քրիստոնեությունը չէ: Քրիստոնեական հիմնական համոզմունքն այն է, որ Քրիստոսի մահը մեզ ինչ-որ կերպ հաշտեցրեց Աստծո հետ և մեզ նոր սկիզբ տվեց: Տեսությունները, թե ինչպես այն արեց դա, այլ հարց է: Բազմաթիվ տարբեր տեսություններ են ընդունվել որպես բացատրություն, թե ինչպես է դա իրականացվում. այն, ինչի շուրջ բոլոր քրիստոնյաները համաձայն են, այն է, որ դա իրականացվում է: Ասեմ ձեզ, թե ինչի է դա նման: Բոլոր խելամիտ մարդիկ գիտեն, որ եթե դուք հոգնած եք և քաղցած, ճաշ ուտելը ձեզ շատ օգտակար կլինի: Սակայն սնվելու ժամանակակից տեսությունը՝ այն ամենը վիտամինների և սպիտակուցների մասին, լրիվ այլ բան է: Մարդիկ ուտում էին իրենց ընթրիքները և իրենց ավելի լավ էին զգում վիտամինների տեսությունը իմանալուց դեռևս շատ առաջ. և եթե վիտամինների տեսությունը մի օր հերքվի, նրանք կշարունակեն ընթրել այնպես, ինչպես առաջ: Քրիստոսի մահվան մասին տեսությունները քրիստոնեությունը չեն՝ դրանք բացատրություններ են, թե ինչպես է քրիստոնեությունը իրագործվում: Ոչ բոլոր քրիստոնյաներն են համաձայն, թե որքան են կարևոր այս տեսությունները: Իմ սեփական եկեղեցին՝ Անգլիայի Եկեղեցին, նրանցից ոչ մեկը հատուկ առաջ չի քաշում: Հռոմի եկեղեցին մի փոքր ավելի է առաջ գնում: Բայց ես կարծում եմ, որ նրանք բոլորը

կհամաձայնեն, որ բանն ինքնին անսահմանորեն ավելի կարևոր է, քան աստվածաբանների կողմից տրված որևէ բացատրություն: Կարծում եմ, որ նրանք բոլորը հավանաբար կխոստովանեն, որ ոչ մի բացատրություն երբեք էլ բավականաչափ բավարար չի լինի իրականության համեմատ: Բայց ինչպես ես ասացի այս գրքի նախաբանում, ես սովորական հավատացյալ եմ, և այս պահին մենք մտնում ենք խոր ջրերի մեջ: Ես միայն կարող եմ ասել, եթե ձեզ հետաքրքիր է, թե անձամբ ես ինչպես եմ նայում այս հարցին:

Իմ կարծիքով, տեսություններն, որպես այդպիսին, այն չէ, որն ակնկվալվում է, որ դուք ընդունեք: Ձեզանից շատերը, անկասկած, կարդացել են Ջինս կամ Էդինգթոն: Այն, ինչ նրանք անում են, երբ ցանկանում են ձեզ բացատրել ատոմը կամ նման մի բան, ձեզ նկարագրություն տալն է, որից դուք կարող եք մտավոր պատկեր կազմել: Բայց հետո նրանք զգուշացնում են, որ այս պատկերն այն չէ, ինչին իրականում հավատում են գիտնականները: Այն, ինչին հավատում են գիտնականները, մաթեմատիկական բանաձևն է: Պատկերները տրված են լոկ բանաձևը հասկանալու համար: Նրանք ճշմարիտ չեն նույն կերպ, ինչպես ճշմարիտ է բանաձևը. նրանք ձեզ չեն ներկայացնում իրականը, այլ միայն այն, ինչը քիչ թե շատ նման է դրան: Նրանք նախատեսված են միայն օգնելու համար, և եթե նրանք չեն օգնում, կարող եք մի կողմ դնել նրանց: Բանն ինքնին հնարավոր չէ պատկերել, այն կարելի է միայն մաթեմատիկորեն արտահայտել: Մենք այստեղ նույն իրադրության մեջ ենք: Մենք հավատում ենք, որ Քրիստոսի մահը պատմության հենց այն պահն է, երբ դրսից բացարձակապես աներևակայելի մի բան երևակվում է մեր սեփական աշխարհում: Եվ եթե մենք չենք կարող պատկերացնել անգամ այն ատոմները, որոնցից կառուցված է մեր սեփական աշխարհը, իհարկե, մենք չենք կարող պատկերացնել սա ևս: Իսկապես, եթե մենք հայտնաբերեինք, որ մենք կարող ենք լիովին հասկանալ այն, հենց այդ փաստը ցույց կտար, որ դա այն չէ, ինչն այն իրեն ներկայացնում է՝ աներևակայելին, անստեղծը, բնությունից անդին եկող բանը, որը կայծակի պես հարվածում է բնությանը: Դուք կարող եք հարցնել, թե ինչպե՞ս կարող է այն մեզ օգուտ տալ, եթե մենք այն չենք հասկանում: Բայց դրան կարելի է հեշտությամբ պատասխանել: Մարդը կարող է ուտել իր ընթրիքը՝ չհասկանալով, թե ինչպես է այն իրեն սնուցում: Մարդը կարող է ընդունել այն, ինչ արել է Քրիստոսը, առանց իմանալու, թե ինչպես է այն իրագործվում. իրոք, նա, անշուշտ, չի իմանա, թե ինչպես է այն իրագործվում, քանի դեռ չի ընդունել այն:

Մեզ ասվում է, որ Քրիստոսը սպանվել է մեզ համար, որ Նրա մահը մաքրել է մեր մեղքերը, և որ մահանալով Նա անզոր է դարձրել հենց մահին: Դա է բանաձևը: Դա է քրիստոնեությունը: Դա է այն, որին պետք է հավատալ: Ցանկացած տեսություն, որը մենք կառուցում ենք առ այն, թե ինչպես է Քրիստոսի մահը իրականացրել այս ամենը, իմ կարծիքով, միանգամայն երկրորդական է՝ զուտ գծագրեր կամ գծապատկերներ, որոնք պետք է մի կողմ դնել, եթե դրանք մեզ չեն օգնում, և, նույնիսկ եթե օգնում են, չպետք է շփոթել իրական բանի հետ: Այդուհանդերձ, այս տեսություններից մի քանիսն արժե դիտարկել:

Դրանցից մեկը, որ մարդկանց մեծամասնությունը լսել է, այն է, որը ես նախկինում նշեցի՝ մենք ազատություն ենք ձեռք բերել, քանի որ Քրիստոսը

կամավոր պատիժ էր կրել մեր փոխարեն: Հիմա, առաջին հայացքից, սա շատ հիմար տեսություն է: Եթե Աստված պատրաստ էր մեզ ազատել, ինչո՞ւ Նա ուղղակի դա չարեց: Եւ ի՞նչ հնարավոր իմաստ կարող էր լինել դրա փոխարեն անմեղ մարդուն պատժելը: Ոչ մի իմաստ, իմ ըմբռնմամբ, եթե դուք պատժի մասին խորհում եք ոստիկանական-արդարադատական առումով: Սակայն, եթե դուք խորհում եք պարտքի առումով, ապա, իհարկե, իմաստալից է, որ մարդը, որը ունի որոշակի գումար, վճարում է այն ինչ-որ մեկի համար, ով չունի: Կամ եթե դուք ընդունում եք «տուգանքը վճարելը» ոչ թե պատժվելու, այլ ավելի ընդհանուր՝ «մեղքն իր վրա վերցնելու» կամ «հաշիվը փակելու» իմաստով, ապա, իհարկե, մենք մեր փորձով գիտենք, որ երբ ինչ-որ մեկը ինքն իրեն փոսի մեջ է գցում, նրան դուրս հանելու դժվարությունը սովորաբար ընկնում է մի բարի ընկերոջ ուսերին:

Հիմա՝ ի՞նչ «փոսի» մեջ էր հայտնվել մարդը: Նա փորձել էր ինքն իրեն ինքնուրույն դարձնել, իրեն պահել այնպես, կարծես նա ինքն իրեն է պատկանում: Այլ կերպ ասած, ընկած մարդը սոսկ անկատար արարած չէ, որը բարեփոխման կարիք ունի. նա ապստամբ է, ով պետք է վայր դնի զենքերը: Զենքերը վայր դնելը, հանձնվելը, ասելով, որ ներողություն ես խնդրում, գիտակցելով, որ սխալ ուղու վրա ես եղել և պատրաստվում ես կյանքը նորից սկսել առաջին քայլից՝ դա է «փոսից» միակ ելքը: Հանձնվելու այս պրոցեսը՝ այս կտրուկ շրջադարձը այն է, ինչ քրիստոնյաներն անվանում են ապաշխարություն: Հիմա՝ ապաշխարությունն ամենևին էլ հաճելի բան չէ: Այն շատ ավելի դժվար է, քան պարզապես խոնարհանալը: Այն նշանակում է մտահանել ինքնահավանությունն ու կամքը, որին մենք մեզ սովորեցրել ենք հազարավոր տարիներ: Այն նշանակում է սպանել քո մի մասը՝ ենթարկելով այն մի տեսակ մահվան: Իրականում՝ լավ մարդ պիտի լինես, որպեսզի կարողանաս ապաշխարել: Բայց ահա պարադոքսը: Միայն վատ մարդը կարիք ունի ապաշխարելու. միայն լավ մարդը կարող է կատարելապես ապաշխարել: Որքան վատն ես, այնքան ավելի շատ դրա կարիքն ունես, և այնքան քիչ ունակ ես դա անելու: Միակ մարդը, որը կարող էր դա անել կատարելապես, կլիներ կատարյալ մարդը, իսկ նա դրա կարիքը չէր ունենա:

Հիշեք, որ այս ապաշխարությունը, այս ամբողջ  պատրաստակամ ենթարկումը խոնարհեցման և մի տեսակ մահվան, սոսկ մի բան չէ, որ Աստված պահանջում է ձեզանից նախքան ձեզ հետ ընդունելը, և որը Նա կարող էր չեղարկել, եթե կամենար. այն զուտ բնութագրումն է, թե ինչ է նշանակում Նրա մոտ վերադառնալը: Եթե Աստծուն խնդրում եք, որ ձեզ հետ ընդունի առանց դրա, դուք իրականում խնդրում եք Նրան, որ Նա թույլ տա ձեզ վերադառնալ Իր մոտ առանց վերադառնալու: Դա պարզապես հնարավոր չէ: Շատ լավ՝ ուրեմն, մենք պետք է անցնենք դրա միջով: Բայց նույն վատությունը, որը մեզ ստիպում է դրա կարիքն ունենալ, անհնար է դարձնում դա անելը: Կարո՞ղ ենք մենք դա անել, եթե Աստված օգնի մեզ: Այո, բայց ի՞նչ նկատի ունենք, երբ ասում ենք, որ Աստված օգնի մեզ: Մենք նկատի ունենք, որ Աստված, այսպես ասած, մի քիչ Իրենից դնում է մեր մեջ: Նա մեզ տալիս է մի փոքր Իր մտածելու կարողություններից, և մենք մտածում ենք նույն կերպ. երբ երեխային գրել ես սովորեցնում, բռնում ես նրա ձեռքը, մինչ նա տառերն է գրում, այսինքն՝ նա տառերն է գրում, որովհետև դու ես դրանք գրում: Մենք սիրում և

տրամաբանում ենք, քանի որ Աստված սիրում և տրամաբանում է բռնելով մեր ձեռքը: Հիմա, եթե մենք չընկնեինք, այս ամենը խաղ ու պար կլիներ: Բայց, ցավոք, մենք այժմ Աստծո օգնության կարիքն ունենք անելու մի բան, որն Աստված, Իր էությամբ, երբեք չի անում՝ հնազանդվում, տառապում, ենթարկվում, մեռնում: Աստծո էության մեջ ոչինչ չկա, որը որևէ կերպ համապատասխանում է այս ամենին: Այսպիսով՝ այն ճանապարհը, որի համար մենք ամենից շատ Աստծո առաջնորդության կարիքն ունենք, մի ճանապարհ է, որն Աստված, իր էությամբ, երբեք չի անցել: Աստված կարող է մեզ հետ կիսել միայն այն, ինչ Նա ունի. այս բանը, իր էությամբ, Նա չունի:

Բայց եթե Աստված մարդ դառնար, եթե մեր մարդկային էությունը, որը կարող է տառապել և մահանալ, միաձուլվեր Աստծո էության հետ մեկ անձի մեջ, ապա այդ մարդը կկարողանար օգնել մեզ: Նա կկարողանար ուրանալ Իր կամքը, տառապել ու մեռնել, քանի որ Նա մարդ էր. և Նա կկարողանար դա անել կատարելապես, քանի որ Նա Աստված էր: Ես և դուք կարող ենք անցնել այս պրոցեսի միջով միայն այն դեպքում, եթե Աստված դա անի մեր մեջ. բայց Աստված կարող է դա անել միայն այն դեպքում, եթե Նա մարդ դառնա: Մեռնելու մեր այս փորձերը հաջողության կհասնեն միայն այն դեպքում, եթե մենք՝ մարդիկս, մասնակցենք Աստծո մահին, ինչպես որ մեր մտածողությունը կարող է հաջողության հասնել միայն այն պատճառով, որ այն մի կաթիլ է Նրա բանականության օվկիանոսից. բայց մենք չենք կարող մասնակցել Աստծո մահվանը, քանի դեռ Աստված չի մահացել. և Նա չի կարող մահանալ, բացառապես մարդ դառնալով: Հե՛նց այս իմաստով է, որ Նա վճարում է մեր պարտքը և տառապում է մեզ համար՝ անելով մի բան, որի կարիքն Ինքն ամենևին էլ չունի:

Ես լսել եմ, որ ոմանք բողոքում են, որ եթե Հիսուսը Աստված էր, ինչպես նաև մարդ, ապա Նրա տառապանքներն ու մահը կորցնում են իրենց արժեքը նրանց աչքերում, «որովհետև դա պետք է այնքա՜ն հեշտ լիներ նրա համար»: Ուրիշները կարող են (միանգամայն իրավացիորեն) հանդիմանել այս առարկության երախտամոռությունն ու անշնորհակալությունը: Ինձ ապշեցնում է թյուրըմբռնումը, որն այն բացահայտում է: Ինչ-որ առումով, իհարկե, նրանք, ովքեր անում են այս պնդումը, ճիշտ են: Նրանք նույնիսկ թերագնահատում են իրենց մեղադրանքը: Կատարյալ ենթարկվելը, կատարյալ տառապանքը, կատարյալ մահը ոչ միայն ավելի հեշտ էին Հիսուսի համար, քանի որ Նա Աստված էր, այլ հնարավոր էին միայն այն պատճառով, որ Նա Աստված էր: Բայց, անշուշտ, սա շատ տարօրինակ պատճառ է նրանց չընդունելու համար: Ուսուցիչը կարողանում է երեխայի համար տառերը գրել, քանի որ ուսուցիչը մեծ է, և գրել գիտի: Գրել իմանալը, իհարկե, հեշտացնում է ուսուցչի գործը, և միայն այդ պատճառով է, որ նրա համար ավելի հեշտ է, որ նա կարող է օգնել երեխային: Եթե նա մերժեր նրան, քանի որ «մեծահասակների համար հեշտ է», և սպասեր, որպեսզի գրել սովորի մեկ այլ երեխայից, որը գրել չգիտեր (և հետևաբար չուներ «անարդար» առավելություն), ապա ամեն ինչ շատ դանդաղ առաջ կգնար: Եթե ես խեղդվում եմ մի վարար գետում, մեկը, ում մի ոտքը դեռ ափին է, կարող է ինձ օգնության ձեռք մեկնել, որը կփրկի իմ կյանքը: Պե՞տք է արդյոք ես գոչեմ (շնչերիս արանքում). «Ո՛չ, դա արդար չէ: Դուք առավելություն ունեք: Ձեր մի ոտքը ափին է»: Այդ առավելությունը, եթե ցանկանում եք՝

անվանեք այն «անարդար», միակ պատճառն է, թե ինչու նա կարող է ինձ օգտակար լինել: Էլ ուրիշ ինչի՞ց փնտրել օգնություն, եթե ոչ նրանից, որն ավելի ուժեղ է, քան մենք ինքներս:

Այսպիսին է իմ սեփական մոտեցումը նրան, ինչին քրիստոնյաներն անվանում են Քավություն: Բայց հիշե՛ք, որ սա ևս լոկ մի պատկեր է: Մի՛ շփոթեք այն իրական բանի հետ, և եթե այն ձեզ օգտակար չէ, մի կողմ դրեք:

## 5. ՊՐԱԿՏԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոսը կրեց կատարյալ հնազանդություն ու խոնարհեցում. կատարյալ, որովհետև Նա Աստված էր, հնազանդություն և խոնարհեցում, որովհետև Նա մարդ էր: Հիմա՝ քրիստոնեական համոզմունքն այն է, որ եթե մենք ինչ-որ կերպ մասնակցենք Քրիստոսի խոնարհեցմանն ու տառապանքին, մենք նույնպես կմասնակցենք մահվան հանդեպ Նրա հաղթանակին և կգտնենք նոր կյանք մեր մահից հետո, և դրանում կդառնանք կատարյալ, և կլինենք կատարյալ երջանիկ արարածներ: Սա նշանակում է շատ ավելին, քան մեր փորձը Նրա ուսմունքին հետևելը: Մարդիկ հաճախ հարցնում են, թե ե՞րբ է լինելու էվոլյուցիայի հաջորդ քայլը՝ քայլը դեպի ինչ-որ բան, որը գտնվում է մարդուց անդին: Սակայն քրիստոնեական տեսանկյունից դա արդեն եղել է: Քրիստոսով հայտնվեց նոր տեսակի մարդը, և կյանքի նոր տեսակը, որ սկիզբ առավ Նրանով, պետք է դրվի մեր մեջ:

Ինչպե՞ս պետք է դա արվի: Հիմա, խնդրում եմ, հիշեք, թե ինչպես ենք մենք ձեռք բերել մեր հին, սովորական կյանքը: Մենք այն ստացել ենք ուրիշներից՝ մեր հորից և մորից և մեր բոլոր նախնիներից՝ առանց մեր համաձայնության, և շատ հետաքրքիր պրոցեսով, որը ներառում է հաճույք, ցավ և վտանգ: Պրոցես, որը դուք երբեք չէիք կռահի: Մեզանից շատերը, մանկության ժամանակ տարիներ են անցկացնում փորձելով գուշակել դա. և որոշ երեխաներ, երբ նրանց առաջին անգամ ասվում է, չեն հավատում, և ես վստահ չեմ, որ մեղադրում եմ նրանց, քանի որ այն շատ տարօրինակ է: Այժմ Աստված, ով համակարգել է այդ պրոցեսը, նույն Աստվածն է, ով համակարգել է, թե ինչպես պետք է կյանքի նոր տեսակը՝ քրիստոսյան կյանքը տարածվի: Մենք պետք է պատրաստ լինենք, որ այն նույնպես լինի տարօրինակ: Նա չէր խորհրդակցել մեզ հետ, երբ հորինել էր սեքսը: Նա նույնպես չի խորհրդակցել մեզ հետ, երբ հորինել է սա:

Կա երեք բան, որով մեզ տարածվում է քրիստոսյան կյանքը՝ մկրտություն, հավատք և այդ խորհրդավոր գործողությունը, որը տարբեր քրիստոնյաներ կոչում են տարբեր անուններով՝ Սուրբ Հաղորդություն, Պատարագ, Տիրոջ Ընթրիք: Համենայն դեպս, դրանք են երեք սովորական եղանակները: Ես չեմ ասում, որ չեն կարող են լինել հատուկ դեպքեր, երբ այն տարածվում է առանց դրանցից մեկի կամ մի քանիսի: Ես ժամանակ չունեմ հատուկ դեպքերի մեջ մտնելու և բավականաչափ տեղեկացված չեմ: Եթե մի քանի րոպեում փորձում ես մեկին բացատրել, թե ինչպես հասնել Էդինբուրգ, դու նրան խորհուրդ կտաս գնացքները. ճիշտ է, նա կարող է այնտեղ հասնել նավով կամ ինքնաթիռով, բայց դու հազիվ թե դա նշես: Եվ ես ոչինչ չեմ ասում այն մասին, թե այս երեք բաներից ո՞րն է ամենակարևորը: Իմ մեթոդիստ ընկերը կցանկանար, որ ես ավելի շատ խոսեմ հավատքի մասին և ավելի քիչ (համեմատաբար) մյուս երկուսի մասին: Բայց ես այդտեղ չեմ մտնում: Յուրաքանչյուր ոք, ով խոստանում է, որ ձեզ ուսուցանում է քրիստոնեական վարդապետությունը, իրականում ձեզ կասի, որ օգտագործեք բոլոր երեքը, և դա բավական է մեր ներկայի նպատակի համար:

Ես ինքս չեմ կարող հասկանալ, թե ինչու այս բաները պետք է լինեն նոր կյանքի հաղորդիչները: Բայց միևնույն ժամանակ, եթե ես չիմանայի, ես երբեք որևէ կապ չէի տեսնի որոշակի ֆիզիկական հաճույքի և աշխարհում նոր մարդու հայտնվելու միջև: Մենք պետք է իրականությունն ընդունենք այնպես, ինչպես այն կա. անիմաստ է բողոքել, թե ինչպիսին պետք է այն լիներ կամ ինչպիսին պետք է այն ակնկալեինք: Բայց թեև ես չեմ կարող հասկանալ, թե ինչու պետք է այն այդպես լինի, ես կարող եմ ձեզ ասել, թե ինչու եմ հավատում, որ այն այդպես է: Ես բացատրել եմ, թե ինչու պետք է հավատամ, որ Հիսուսը եղել է (և է) Աստված: Եվ որպես սոսկ պատմական փաստ, ակնհայտ է թվում, որ Նա ուսուցանել է Իր հետևորդներին, որ նոր կյանքը փոխանցվում է այս կերպ: Այլ կերպ ասած, ես հավատում եմ դրան Նրա հեղինակությամբ: Մի՛ վախեցեք հեղինակություն բառից. հեղինակությամբ բաներին հավատալը նշանակում է միայն հավատալ դրանց, քանի որ դրանք ձեզ ասել է մեկը, ում դուք վստահելի եք համարում: Իննսունինը տոկոսը բաների, որոնց դուք հավատում եք, հավատում եք հեղինակությամբ: Ես հավատում եմ, որ կա այնպիսի վայր, որ կոչվում է Նյու Յորք: Ես ինքս այն չեմ տեսել: Ես չէի կարող վերացական պատճառաբանություններով ապացուցել, որ այդպիսի վայր պետք է լինի: Ես հավատում եմ, քանի որ վստահելի մարդիկ ինձ այդպես են ասել: Սովորական մարդը հավատում է Արեգակնային համակարգին, ատոմներին, էվոլյուցիային և արյան շրջանառությանը, որովհետև գիտնականներն այդպես են ասում: Աշխարհում յուրաքանչյուր պատմական փաստի հավատում են հեղինակությամբ: Մեզանից ոչ ոք չի տեսել Նորմանական նվաճումը կամ Արմադայի պարտությունը: Մեզանից ոչ ոք չի կարող ապացուցել դրանք զուտ տրամաբանությամբ, ինչպես ինչ-որ բան ապացուցում ենք մաթեմատիկայում: Մենք հավատում ենք դրանց պարզապես այն պատճառով, որ մարդիկ, որոնք տեսել են դրանք, թողել են գրություններ, որոնք պատմում են մեզ դրանց մասին. իրականում՝ հեղինակությամբ: Մարդ, որ քամահրանքով մոտենա հեղինակությանը այլ բաների վերաբերյալ, այնպես, ինչպես դա անում են որոշ մարդիկ կրոնում, պիտի ստիպված լինի բավարարվել ոչինչ չիմանալով իր ողջ կյանքում:

Մի՛ կարծեք, որ ես առաջադրում եմ  մկրտությունը, հավատքը և Սուրբ Հաղորդությունը որպես բաներ, որոնք կարող են փոխարինել Քրիստոսին ընդօրինակելու ձեր սեփական փորձերին: Ձեր բնական կյանքը առաջանում է ձեր ծնողներից. դա չի նշանակում, որ այն շարունակական կլինի, եթե դուք ոչինչ չանեք: Դուք կարող եք կորցնել այն անտեսելով, կամ կարող եք ոչնչացնել այն՝ ինքնասպանություն գործելով: Դուք պետք է կերակրեք այն և հոգ տանեք նրա համար, բայց միշտ հիշեք, որ դուք չեք ստեղծում այն, դուք միայն պահպանում եք այն կյանքը, որը ստացել եք ուրիշից: Նույն կերպ քրիստոնյան կարող է կորցնել քրիստոսյան կյանքը, որը դրվել է իր մեջ, և նա պետք է ջանքեր գործադրի այն պահպանելու համար: Բայց նույնիսկ լավագույն քրիստոնյան, որ երբև ապրել է, չի ընթանում իր սեփական ուժով. նա միայն սնուցում կամ պաշտպանում է կյանքը, որը երբեք չէր կարող ձեռք բերել իր ջանքերով: Եւ դա գործնական հետևանքներ ունի: Քանի դեռ բնական կյանքը ձեր մարմնում է, այն շատ բան է անում այդ մարմինը վերականգնելու համար: Կտրեք այն, և մինչև ինչ-որ մի կետ այն ինքն իրեն կբուժի, ինչպես որ մահացած մարմինը չէր բուժվի: Կենդանի մարմինը այն մարմինը չէ, որը երբեք չի վնասվում, այլ այն

մարմինն է, որը կարող է որոշ չափով վերականգնել ինքն իրեն: Նույն կերպ՝ քրիստոնյան այն մարդը չէ, որը երբեք չի սխալվում, այլ այն մարդն է, որը հնարավորություն ունի ապաշխարելու և վեր կենալու և նորից սկսելու ամեն սայթաքումից հետո, քանի որ քրիստոսյան կյանքը նրա ներսում է և անընդհատ նորոգում է նրան՝ հնարավորություն տալով նրան կրկնելու (որոշ չափով) այն կամավոր մահը, որը Քրիստոսն Ինքը իրականացրել է:

Ահա թե ինչու քրիստոնյան տարբերվում է այլ մարդկանցից, որոնք փորձում են բարի լինել: Նրանք հույս ունեն, որ բարի լինելով, կհաճոյանան Աստծուն, եթե Նա գոյություն ունի. կամ, եթե նրանք կարծում են, որ Նա չկա, գոնե հույս ունեն, որ կարժանանան լավ մարդկանց հավանությանը: Բայց քրիստոնյան կարծում է, որ ցանկացած բարիք, որ ինքը գործում է, գալիս է իր ներսում գտնվող քրիստոսյան կյանքից: Նա չի կարծում, որ Աստված կսիրի մեզ, որովհետև մենք բարի ենք, այլ որ Աստված մեզ բարի կդարձնի, որովհետև Նա սիրում է մեզ. ճիշտ այնպես, ինչպես ջերմոցի տանիքը չի կլանում արևը, քանի որ այն պայծառ է, այլ դառնում է պայծառ, քանի որ արևը շողում է նրա վրա:

Եվ թույլ տվեք հստակեցնել, որ երբ քրիստոնյաներն ասում են, որ քրիստոսյան կյանքը իրենց մեջ է, նրանք նկատի չունեն սոսկ մտավոր կամ բարոյական ինչ-որ բան: Երբ նրանք խոսում են «Քրիստոսի մեջ» լինելու կամ Քրիստոսի՝ «իրենց մեջ» լինելու մասին, սա պարզապես ինչ-որ ձև չէ ասելու, որ նրանք մտածում են Քրիստոսի մասին կամ կրկնօրինակում են Նրան: Նրանք նկատի ունեն, որ Քրիստոսը իրականում գործում է իրենց միջոցով. որ քրիստոնյաների ողջ բազմությունը ֆիզիկական այն օրգանիզմն է, որի միջոցով Քրիստոսը գործում է. որ մենք Նրա մատներն ու մկաններն ենք, Նրա մարմնի բջիջները: Եվ միգուցե դա բացատրում է որոշ բաներ. այն բացատրում է, թե ինչո՞ւ է այս նոր կյանքը տարածվում ոչ միայն զուտ մտավոր գործողություններով, ինչպիսին է հավատքը, այլև մարմնական գործողություններով, ինչպիսիք են մկրտությունը և Սուրբ Հաղորդությունը: Այն սոսկ գաղափարի տարածում չէ. այն նման է ավելի շատ էվոյյուցիայի՝ իբրև կենսաբանական կամ գերկենսաբանական փաստ: Պետք չէ Աստծուց ավելի հոգևոր լինել: Աստված երբեք չի ենթադրել, որ մարդը զուտ հոգևոր արարած է: Ահա թե ինչու Նա օգտագործում է նյութական բաներ, ինչպիսիք են հացն ու գինին, որպեսզի նոր կյանքը մտցնի մեր մեջ: Մենք կարող ենք սա բավականին կոպիտ և ոչ հոգևոր համարել: Աստված այդպես չի կարծում: Նա է հորինել ուտելը: Նա սիրում է նյութը: Նա է այն հորինել:

Ահա ևս մեկ բան, որը ժամանակին ինձ տարակուսեցնում էր: Մի՞թե սարսափելի անարդարացի չէ, որ այս նոր կյանքը պետք է սահմանափակվի այն մարդկանցով, որոնք լսել են Քրիստոսի մասին և կարողացել են հավատալ Նրան: Բայց ճշմարտությունն այն է, որ Աստված մեզ չի ասել, թե որո՞նք են Իր ծրագրերը մյուս մարդկանց վերաբերյալ: Մենք գիտենք, որ առանց Քրիստոսի ոչ ոք չի կարող փրկվել. մենք չգիտենք, որ Նրա միջոցով կարող են փրկվել միայն նրանք, ովքեր ճանաչում են Նրան: Բայց մինչ այդ, եթե դու անհանգստանում ես դրսում գտնվող մարդկանց մասին, ապա ամենաանհիմն բանը, որ կարող ես անել, ինքդ դուրս մնալն է: Քրիստոնյաները Քրիստոսի մարմինն են, այն օրգանիզմը, որի միջոցով Նա գործում է: Յուրաքանչյուր ավելացում այդ մարմնին հնարավորություն է տալիս Նրան անել ավելին: Եթե դուք ցանկանում

եք օգնել նրանց, որոնք դրսում են, դուք պետք է ավելացնեք ձեր սեփական փոքրիկ բջիջը Քրիստոսի մարմնին, քանի որ բացառապես Նա է, Ով կարող է օգնել նրանց: Մեկի մատները կտրելը շատ տարօրինակ ձև է նրան ավելի շատ գործելու հնարավորություն տալու համար:

Մեկ այլ հնարավոր առարկություն սա է: Ինչո՞ւ է Աստված ծպտված ժամանել թշնամու կողմից գրավված այս աշխարհը և ստեղծել մի տեսակ գաղտնի հասարակություն՝ սատանային տապալելու համար: Ինչո՞ւ Նա ուժով չի ներխուժում: Արդյո՞ք այն պատճառով, որ Նա բավականաչափ ուժեղ չէ: Իհարկե, քրիստոնյաները կարծում են, որ Նա պատրաստվում է ուժով ներխուժել. մենք չգիտենք, թե երբ: Բայց մենք կարող ենք կռահել, թե ինչու՞ է Նա ուշացնում: Նա ցանկանում է մեզ հնարավորություն տալ՝ մեր ցանկությամբ միանալու Իր կողմին: Չեմ կարծում, որ ես և դուք շատ բարձր կարծիք ունենայինք մի ֆրանսիացու մասին, որը սպասեր մինչև Դաշնակիցների արշավանքը դեպի Գերմանիա, և հետո նոր հայտարարեր, որ մեր կողմից է: Աստված կներխուժի. բայց ես վստահ չեմ, թե մարդիկ, որոնք խնդրում են Աստծուն բացահայտ և անմիջական միջամտություն ունենալ մեր աշխարհում, միանգամայն գիտակցում են, թե ինչ կլինի, երբ Նա դա անի: Երբ դա տեղի ունենա, դա աշխարհի վերջն է: Երբ հեղինակը բարձրանում է բեմ, պիեսն ավարտվում է: Աստված կներխուժի, շատ լավ, բայց ի՞նչ իմաստ կլինի ասելու, որ դու նրա կողմից ես, երբ տեսնես, թե ինչպես է ամբողջ բնական աշխարհը հալվում երազի պես, և ինչ-որ այլ բան, որը երբեք մտքովդ չի անցել, փոթորկալից փոխարինում նրան՝ ինչ-որ բան այնքան գեղեցիկ մեզանից ոմանց համար, և այնքան սարսափելի՝ մյուսների համար, որ մեզանից ոչ մեկի համար ընտրություն չի մնա: Քանի որ այս անգամ դա կլինի Աստված առանց ծպտման. մի բան այնքան գերիշխող, որ այն կհամակի կա՛մ անդիմադրելի սեր, կա՛մ անդիմադրելի սարսափ յուրաքանչյուր արարածի մեջ: Այդ ժամանակ արդեն ուշ կլինի ձեր կողմն ընտրելու համար: Անիմաստ կլինի ասել, որ դուք գերադասում եք պառկել, երբ  կանգնելն անհնար է դարձել: Դա չի լինելու ընտրելու ժամանակը. դա լինելու է այն ժամանակը, երբ մենք կբացահայտենք, թե իրականում ո՛ր կողմն ենք մենք ընտրել՝ անկախ նրանից, թե նախկինում դա գիտակցում էինք, թե ոչ: Հիմա, այսօր, այս պահը, մեր հնարավորությունն է ընտրելու ճիշտ կողմը: Աստված դանդաղում է՝ մեզ այդ հնարավորությունը տալու համար: Այն հավերժ չի տևի: Պետք է ընտրենք այն կամ թողնենք:

# ՄԱՍ ԵՐԲՈՐԴ

# ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐՔ

## 1. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ՄԱՍԵՐԸ

Մի պատմություն կա դպրոցականի մասին, ում հարցնում են, թե ինչպիսին է Աստված, ըստ նրա: Նա պատասխանում է, որ որքան հասկանում է, Աստված «այն տեսակի անձնավորություն է, որը միշտ ման է գալիս տեսնելու, թե ո՞վ է լավ ժամանակ անցկացնում, որպեսզի դադարեցնի այն»: Եվ ես վախենում եմ, որ սա մոտավորապես այն գաղափարն է, որ Բարոյականություն բառը առաջացնում է շատերի մտքում՝ մի բան, որը խանգարում է, մի բան, որը թույլ չի տալիս լավ ժամանակ անցկացնել: Իրականում բարոյական կանոնները մարդկային մեքենայի գործարկման հրահանգներն են: Յուրաքանչյուր բարոյական կանոն գոյություն ունի այդ մեքենայի աշխատանքի խափանումը, լարվածությունը կամ խոչընդոտությունները կանխելու համար: Ահա թե ինչու, սկզբում թվում է, թե այս կանոնները անընդհատ խանգարում են մեր բնական հակումներին: Երբ ձեզ սովորեցնում են, թե ինչպես օգտագործել ցանկացած մեքենա, հրահանգիչը շարունակ ասում է. «Ոչ, մի՛ արեք դա այդպես», քանի որ, իհարկե, կան զանազան բաներ, որոնք անվնաս և բնական են թվում ձեզ մեքենայի օգտագործման ընթացքում, սակայն իրականում անօգտակար են:

Որոշ մարդիկ նախընտրում են խոսել բարոյական «իդեալների» մասին, քան բարոյական կանոնների, և բարոյական «իդեալիզմի» մասին, քան բարոյական հնազանդության: Իհարկե, միանգամայն ճիշտ է, որ բարոյական կատարելությունը «իդեալ» է այն առումով, որ մենք չենք կարող դրան հասնել: Այդ առումով յուրաքանչյուր տեսակի կատարելություն մեզ՝ մարդկանց համար, իդեալ է. մենք չենք կարող հաջողել կատարյալ վարորդներ կամ կատարյալ թենիսիստներ լինելու կամ կատարյալ ուղիղ գծեր գծելու մեջ:
Բայց կա ևս մեկ առում, որում շատ շփոթեցնող է բարոյական կատարելությունը իդեալ անվանելը: Երբ տղամարդն ասում է, որ որոշակի կին, տուն, նավ կամ այգի «իր իդեալն է», նա նկատի չունի (եթե նա հիմար չէ), որ բոլորը պետք է ունենան նույն իդեալը: Նման հարցերում մենք իրավունք ունենք ունենալ տարբեր ճաշակներ և, հետևաբար, տարբեր իդեալներ: Բայց վտանգավոր է բնութագրել մի մարդու, որը ջանում է պահպանել բարոյական օրենքը, որպես «բարձր իդեալների տեր մարդ», քանի որ դա կարող է ձեզ մտածել տալ, որ բարոյական կատարելությունը նրա անձնական ճաշակն է, և որ մենք՝ մնացածներս, կոչված չենք նույնն ունենալու: Սա կլիներ աղետալի: Կատարյալ վարքագիծը կարող է նույնքան անհասանելի լինել, որքան ավտոմեքենայի փոխանցատուփից օգտվելիս արագությունը կատարյալ կերպով փոփոխելը, սակայն դա անհրաժեշտ իդեալ է, որը նախատեսված է բոլոր մարդկանց համար, պայմանավորված հենց մարդկային մեքենայի բնույթով, ճիշտ այնպես, ինչպես արագությունը կատարյալ փոփոխելը իդեալ է, որը նախատեսված է բոլոր վարորդների համար, պայմանավորված հենց ավտոմեքենաների բնույթով: Եւ է՛լ ավելի վտանգավոր կլիներ, որ մեկն ինքն

իրեն համարեր «բարձր իդեալների» տեր մարդ, քանի որ ինքը փորձում է ընդհանրապես չստել (քիչ ստելու փոխարեն), կամ երբեք ամուսնական անհավատարմություն չգործել (քիչ գործելու փոխարեն), կամ չլինել կռվարար (քիչ կռվարար լինելու փոխարեն): Դա կարող է հանգեցնել նրան, որ նա դառնա գոռոզ և մտածի, որ ինքը բավականին առանձնահատուկ մարդ է, ով արժանի է շնորհավորանքի իր «իդեալիզմի» համար: Իրականում միանգամայն նույն կերպով կարելի կլիներ ակնկալել, որ քեզ շնորհավորեն, երբ գումար հաշվելիս՝ փորձես այն ճիշտ ստանալ: Անշուշտ, կատարյալ թվաբանությունը «իդեալ է». և իհարկե, որոշ թվաբանություններում որոշ սխալներ կլինեն: Բայց ոչ մի հիանալի բան չկա փորձելու կատարելապես ճշգրիտ լինել յուրաքանչյուր գումարի յուրաքանչյուր քայլում: Հիմարություն կլիներ չփորձել, քանի որ յուրաքանչյուր սխալ հետագայում ձեզ խնդիրներ է առաջացնելու: Նույն կերպ, յուրաքանչյուր բարոյական ձախողում խնդիրներ է առաջացնելու, հավանաբար՝ ուրիշներին և, առանց կասկածի՝ ինքներդ ձեզ: Խոսելով կանոնների և հնազանդության մասին, «իդեալների» և «իդեալիզմի» փոխարեն, մենք ինքներս մեզ հիշեցնում ենք այս փաստերը:

Հիմա եկեք մի քայլ առաջ գնանք: Մարդկային մեքենան խաթարվում է երկու ձևով: Մեկն այն է, երբ մարդկային անհատները հեռանում են միմյանցից, կամ հակառակը՝ բախվում են միմյանց և մեկը մյուսին վնաս տալիս՝ խաբելով կամ կռիվ անելով: Մյուսն այն է, երբ անհատի ներսում որոշ բաներ խախտվում են՝ երբ նրա տարբեր մասերը (նրա տարբեր ունակությունները, ցանկությունները և այլն) կա՛մ անջատվում են միմյանցից, կա՛մ խանգարում են միմյանց: Դուք կարող եք պարզ պատկերացել, եթե մենք մեզ պատկերացնենք որպես շարասյունով նավարկող նավերի նավատորմ: Ճանապարհորդությունը հաջողություն կունենա միայն այն դեպքում, եթե, առաջին հերթին, նավերը չբախվեն և չխանգարեն միմյանց, և երկրորդ՝ եթե յուրաքանչյուր նավ պիտանի է ծովային նավարկության և իր շարժիչները լավ վիճակում են: Իրականում, դուք չեք կարող ունենալ այս երկու բաներից որևէ մեկը առանց մյուսի: Եթե նավերը անընդհատ բախվեն իրար, նրանք երկար չեն մնա պիտանի ծովային նավարկության համար: Եւ հակառակը՝ եթե նրանց կառավարման ղեկերը անսարք են, նրանք չեն կարողանա խուսափել բախումներից: Կամ, եթե ցանկանում եք, դիտարկեք մարդկությունը որպես մեղեդի նվագող նվագախումբ: Լավ արդյունք ստանալու համար անհրաժեշտ է երկու բան՝ յուրաքանչյուր նվագողի անձնական գործիքը պետք է կարգին լինի, ինչպես նաև յուրաքանչյուր նվագող պետք է «մտնի» երաժշտության մեջ ճիշտ պահին, որպեսզի ճիշտ ներդաշնակվի բոլոր մյուսների հետ:

Բայց կա մի բան, որը մենք դեռ հաշվի չենք առել: Մենք մեզ հարց չենք տվել, թե ո՞ւր է փորձում հասնել նավատորմը, կամ ի՞նչ երաժշտություն է փորձում նվագել նվագախումբը: Երաժշտական գործիքները կարող են բոլորը կարգին լինել և բոլոր երաժիշտները կարող են «մտնել» մեղեդու մեջ ճիշտ պահին, սակայն նույնիսկ այդ դեպքում կատարումը հաջողություն չէր համարվի, եթե որոշված լիներ, որ նրանք պետք է նվագեին պարային երաժշտություն, սակայն իրականում նվագել էին թաղման երթեր: Եվ որքան էլ նավատորմը լավ նավարկեր, նրա նավարկությունը ձախողված կլիներ, եթե այն նախատեսված լիներ հասնելու Նյու Յորք և իրականում այն հասներ Կալկաթա:

Այսպիսով՝ բարոյականությունը կարծես թե շահագրգռված է երեք բանով: Առաջին հերթին՝ արդար խաղի կանոններով և ներդաշնակությամբ անհատների միջև: Երկրորդ՝ նրանով, ինչը կարելի է անվանել յուրաքանչյուր անհատի ներսում իրերի կարգի բերումը կամ ներդաշնակումը: Երրորդ՝ ընդհանուր առմամբ մարդկային կյանքի ընդհանուր նպատակով. ի՞նչի համար է ստեղծված մարդը. ի՞նչ ուղիով պետք է ընթանա ամբողջ նավատորմը. ի՞նչ մեղեդի է նվագախմբի դիրիժորը ցանկանում, որ նվագախումբը նվագի:

Դուք, հավանաբար, նկատել եք, որ ժամանակակից մարդիկ գրեթե միշտ մտածում են առաջին բանի մասին և մոռանում մյուս երկուսին: Երբ մարդիկ թերթերում ասում են, որ մենք ձգտում ենք քրիստոնեական բարոյական չափանիշներին, նրանք սովորաբար նկատի ունեն, որ մենք ձգտում ենք բարության և արդար խաղի կանոններին՝ ազգերի, դասակարգերի և անհատների միջև. այսինքն՝ մտածում են միայն առաջին բանի մասին: Երբ մեկը, ցանկանալով անել մի բան, ասում է. «Դա չի կարող սխալ լինել, քանի որ դա ոչ մեկին վնաս չի տալիս», նա մտածում է միայն առաջին բանի մասին: Նա կարծում է, որ կարևոր չէ, թե ինչպիսի՞ն է իր նավի ներսը, պայմանով, որ այն չբախվի կողքի նավին: Եվ միանգամայն բնական է, երբ սկսում ենք մտածել բարոյականության մասին, սկսել առաջինից՝ սոցիալական հարաբերություններից: Առաջին հերթին, վատ բարոյականության արդյունքներն այդ ոլորտում այնքան ակնհայտ են, և ամեն օր նեղում են մեզ՝ պատերազմ և աղքատություն, կաշառակերություն, սուտ, անփույթ աշխատանք: Եվ նաև, քանի դեռ խոսում ենք առաջին բանի մասին, բարոյականության հարցում շատ քիչ տարաձայնություններ կան: Գրեթե բոլոր մարդիկ բոլոր ժամանակներում համաձայնել են (տեսականորեն), որ մարդիկ պետք է ազնիվ և բարի լինեն և օգնեն միմյանց: Բայց թեև բնական է սկսել այդ ամենից, բայց եթե բարոյականության մասին մեր մտածելակերպը կանգ առնի այդտեղ, մենք կարող էինք մինչև անգամ ընդհանրապես չմտածել: Եթե չանցնենք երկրորդ բանին՝ յուրաքանչյուր մարդու ներսը կարգի բերելուն, մենք միայն խաբում ենք ինքներս մեզ:

Ի՞նչ օգուտ ունի նավերին հրահանգել, թե ինչպե՞ս պետք է իրենք իրենց վարեն, որպեսզի խուսափեն բախումներից, եթե իրականում դրանք այնպիսի հին տաշտակներ են, որոնց ընդհանրապես անհնար է ղեկավարել: Ի՞նչ օգուտ ունի թղթի վրա սոցիալական վարքագծի կանոններ գրել, եթե գիտենք, որ իրականում մեր ագահությունը, վախկոտությունը, նյարդայնությունը ու ինքնահավանությունը խանգարելու են մեզ դրանք պահել: Ես բացարձակապես նկատի չունեմ, որ մենք չպետք է մտածենք, և լավ մտածենք, մեր սոցիալական և տնտեսական համակարգի բարելավումների մասին: Ես ի նկատի ունեմ այն, որ այդ ամբողջ մտածողությունը պարզապես խաբկանք կլինի, քանի դեռ չենք գիտակցել, որ ոչ մի այլ բան, բացի անհատների քաջությունից և անձնվերությունից, երբեք չի ստիպելու որևէ համակարգի ճիշտ գործել: Բավականին հեշտ է հեռացնել կաշառակերության կամ բռնության որոշակի տեսակներ, որոնք գործում են ներկա համակարգի պայմաններում: Սակայն քանի դեռ մարդիկ խարդախներ կամ զոռբաներ են, նրանք նոր համակարգում հին խաղն իրականացնելու նոր ձև կգտնեն:

Օրենքով չեք կարող մարդկանց լավը դարձնել, իսկ առանց լավ մարդկանց չեք կարող լավ հասարակություն ունենալ: Այդ իսկ պատճառով մենք պետք է անցենք առաջ և մտածենք երկրորդ բանի մասին՝ անհատի ներսի բարոյականության մասին:

Բայց ես չեմ կարծում, որ մենք կարող ենք այդտե՛ղ էլ կանգ առնել: Այժմ մենք մոտենում ենք այն կետին, երբ տիեզերքի մասին տարբեր համոզմունքները հանգեցնում են տարբեր վարքուբարքի: Եւ առաջին հայացքից շատ խելամիտ է թվում կանգ առնել նախքան այնտեղ հասնելը և պարզապես սահմանափակվել բարոյականության այն մասերով, որոնց շուրջ բոլոր խելամիտ մարդիկ համաձայն են: Բայց կարո՞ղ ենք արդյոք: Հիշեք, որ կրոնը ներառում է իր մեջ փաստերի վերաբերյալ մի շարք հայտարարություններ, որոնք կա՛մ ճիշտ են, կա՛մ սխալ: Եթե դրանք ճիշտ են, ապա մարդկային նավատորմի ճիշտ նավարկության վերաբերյալ մի շարք եզրակացություններ կհետևեն. եթե դրանք սխալ են, ապա բոլորովին այլ շարք: Օրինակ՝ եկեք վերադառնանք այն մարդուն, որը ասում է, որ ոչինչ չի կարող սխալ լինել, եթե այն չի վնասում մեկ այլ մարդու: Նա լավ հասկանում է, որ չպետք է վնասի շարասյան մյուս նավերին, բայց նա անկեղծորեն կարծում է, որ այն, ինչ նա անում է սեփական նավի հետ իր անձնական գործն է: Բայց մի՞թե անչափ կարևոր չէ, թե նրա նավն իր սեփականությունն է, թե ոչ: Արդյո՞ք անչափ կարևոր չէ, թե ես, այսպես ասած, սեփական բանականությանս ու մարմնիս տե՞րն եմ, թե՞ սոսկ վարձակալ՝ պատասխանատու իրական տանտիրոջ առաջ: Եթե ինչ-որ մեկն է ինձ ստեղծել, իր նպատակների համար, ապա ես կունենայի շատ պարտականություններ, որոնք ես պիտի չունենայի, եթե ուղղակի պատկանեի ինքս ինձ:

Կրկին՝ քրիստոնեությունը պնդում է, որ յուրաքանչյուր անհատ մարդ ապրելու է հավիտյան, և դա պետք է լինի կա՛մ ճշմարիտ, կա՛մ կեղծ: Հիմա՝ կան շատ բաներ, որոնց մասին չարժե անհանգստանալ, եթե ես ապրելու եմ ընդամենը յոթանասուն տարի, բայց լավ կլինի, որ ես լրջորեն անհանգստանամ, եթե պատրաստվում եմ ապրել հավիտյան: Միգուցե իմ դյուրագրգռությունը կամ իմ նախանձը աստիճանաբար վատանում են՝ այնքան աստիճանաբար, որ յոթանասուն տարվա ընթացքում այդ աճն այնքան էլ նկատելի չի լինի: Բայց այն կարող է դառնալ բացարձակ դժոխային մեկ միլիոն տարի հետո. իրականում, եթե քրիստոնեությունը ճշմարիտ է, ապա դժոխայինը ճիշտ այն տեխնիկական տերմինն է, թե այն ինչ կդառնա: Եվ անմահությունը առաջ է բերում այս մյուս տարբերությունը, որը, ի դեպ, կապ ունի տոտալիտարիզմի և ժողովրդավարության տարբերության հետ: Եթե անհատներն ապրում են ընդամենը յոթանասուն տարի, ապա պետությունը, կամ ազգը, կամ քաղաքակրթությունը, որը կարող է գոյատևել հազար տարի, ավելի կարևոր է, քան անհատը: Բայց եթե քրիստոնեությունը ճշմարիտ է, ապա անհատը ոչ միայն ավելի կարևոր է, այլև անհամեմատ ավելի կարևոր է, քանզի նա հավերժական է, և պետության կամ քաղաքակրթության կյանքը՝ նրանի համեմատ, ընդամենը մի ակնթարթ է:

Այսպիսով՝ թվում է, որ եթե մենք պետք է մտածենք բարոյականության մասին, մենք պետք է մտածենք բոլոր երեք ճյուղերի մասին՝ մարդ-մարդ

հարաբերությունների. յուրաքանչյուր մարդու ներսում բաների. և հարաբերությունների մարդու և այն ուժի միջև, որը նրան ստեղծել է: Առաջինում բոլորս կարող ենք համագործակցել: Տարաձայնությունները սկսվում են երկրորդից և դառնում են լուրջ՝ երրորդից: Հենց երրորդի հետ առնչվելիս են ի հայտ գալիս քրիստոնեական և ոչ քրիստոնեական բարոյականության հիմնական տարբերությունները: Այս գրքի մնացած մասում, ես ենթադրելու եմ քրիստոնեական տեսակետը և նայելու եմ ամբողջ պատկերին, այնպես, ինչպես  այն կլինի, եթե քրիստոնեությունը ճշմարիտ է:

## 2. ԿԱՐԴԻՆԱԼ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախորդ մասը ի սկզբանե կազմված էր եթերում կարճ ելույթ տալու համար: Եթե ձեզ թույլ է տրված խոսել ընդամենը տասը րոպե, ապա մնացած գրեթե ամեն ինչ պետք է զոհաբերել հակիրճությանը: Բարոյականությունը երեք մասի բաժանելու իմ գլխավոր պատճառներից մեկն այն էր, որ այն ամբողջ թեման ծածկելու ամենակարճ ձևն էր: Այստեղ ես ուզում եմ որոշակի պատկերացում տալ հին գրողների կողմից թեման բաժանելու մեկ այլ ձևի մասին, որը չափից դուրս երկար էր իմ ելույթում օգտագործելու համար, բայց որը շատ լավն է:

Այս ավելի երկար սխեմայի համաձայն կան յոթ «առաքինություններ»: Դրանցից չորսը կոչվում են «Կարդինալ» (կամ Գլխավոր) առաքինություններ, իսկ մնացած երեքը՝ «Աստվածաբանական» առաքինություններ: «Կարդինալ» առաքինությունները նրանք են, որոնց հետ ծանոթ են բոլոր քաղաքակիրթ մարդիկ. «աստվածաբանականները» նրանք են, որոնց մասին, որպես կանոն, գիտեն միայն քրիստոնյաները: Հետագայում ես կանդրադառնամ աստվածաբանականներին. ներկայումս ես խոսում եմ չորս կարդինալ առաքինությունների մասին: («Կարդինալ» բառը հռոմեական կաթոլիկ եկեղեցու «Կարդինալների» հետ ոչ մի կապ չունի: Այն առաջացել է լատիներեն բառից, որը նշանակում է «դռան ծղխնի»: Դրանք կոչվում էին «կարդինալ» առաքինություններ, քանի որ դրանք, այսպես ասած, առանցքային են:) Դրանք են Խոհեմությունը, Ժուժկալությունը, Արդարությունը և Հաստատունությունը:

Խոհեմություն ասելով նկատի է առնվում կիրառական ողջախոհությունը՝ մտածելը, թե ի՞նչ եք անում և ի՞նչ կարող են լինել դրա հետևանքները: Մեր օրերում մարդկանց մեծամասնությունը հազիվ թե Խոհեմությունը համարի «առաքինություններից» մեկը: Իրականում, քանի որ Քրիստոսն ասել է, որ մենք կարող ենք մտնել Իր աշխարհ միայն երեխաների նման լինելով, շատ քրիստոնյաներ ունեն այն գաղափարը, որ եթե դու «լավն» ես, ապա նշանակություն չունի հիմար լինելը: Բայց դա թյուրիմացություն է: Առաջին հերթին, երեխաների մեծ մասը բավականին «խոհեմություն» է ցուցաբերում այն բաներում, որոնցով նրանք իսկապես հետաքրքրված են, և բավականին խելամիտ են դրանք կշռադատում: Եւ երկրորդ՝ ինչպես նշում է Սուրբ Պողոսը, Քրիստոսը երբեք նկատի չի ունեցել, որ մենք պետք է խելքով երեխաներ մնանք. ընդհակառակը՝ Նա մեզ ասել է, որ լինենք ոչ միայն «միամիտ ինչպես աղավնիները», այլև «իմաստուն ինչպես օձերը»: Նա երեխայի սիրտ է ուզում, բայց մեծահասակի գլուխ: Նա ցանկանում է, որ մենք լինենք պարզ, աներկբա, սիրալիր և աշակերտելի, ինչպիսին են լավ երեխաները. բայց Նա միևնույն ժամանակ ցանկանում է մեր խելացիության մինչև ամենավերջին մասնիկը՝ զգոն իր գործում, և առաջին կարգի մարտական պատրաստվածությամբ: Այն, որ դուք գումար եք տալիս բարեգործական կազմակերպությանը, չի նշանակում, որ դուք չպետք է փորձեք պարզել, թե արդյո՞ք այդ

կազմակերպությունը խարդախ է, թե ոչ: Այն, որ այն, ինչի մասին դուք մտածում եք, ինքը Աստված է (օրինակ՝ երբ աղոթում եք), չի նշանակում, որ դուք կարող եք բավարարվել նույն մանկական գաղափարներով, որոնք ունեցել եք հինգ տարեկանում: Իհարկե, միանգամայն ճիշտ է, որ Աստված ձեզ չի սիրի ավելի քիչ, կամ ավելի քիչ ձեր կարիքը կունենա, եթե դուք ծնվել եք երկրորդ կարգի ուղեղով: Նա տեղ ունի շատ քիչ խելք ունեցող մարդկանց համար, բայց Նա ցանկանում է, որ բոլորը լիովին օգտագործեն իրենց ունեցած խելքը: Ճիշտ կարգախոսն է ոչ թե «Ե՛ղիր լավը, անուշ օրիորդ, և թող ով կարող է լինի խելացի», այլ «Եղի՛ր լավը, անուշ օրիորդ, և մի՛ մոռացիր, որ դա ներառում է լինել այնքան խելացի, որքան կարող ես»(*): Աստված չի սիրում ինտելեկտուալ անբաններին ավելի, քան որևէ այլ անբանի: Եթե դուք մտածում եք դառնալ քրիստոնյա, ապա ես զգուշացնում եմ ձեզ, որ դուք սկսում եք մի բան, որը կխլի ձեր ամբողջը՝ ուղեղը և ամեն ինչը: Սակայն, բարեբախտաբար, դրա հակառակը նույնպես ճիշտ է: Յուրաքանչյուր ոք, ով ազնվորեն փորձում է լինել քրիստոնյա, շուտով կնկատի, որ իր միտքը սրվում է. պատճառներից մեկը, թե ինչու քրիստոնյա լինելու համար հատուկ կրթություն չի պահանջվում, այն է, որ քրիստոնեությունն ինքնին կրթություն է: Ահա թե ինչու Բունյանի նման անուս հավատացյալը կարողացավ գրել մի գիրք, որը ապշեցրեց ողջ աշխարհը:

Ժուժկալությունը, ցավոք, այն բառերից է, որը փոխել է իր իմաստը: Այժմ այն սովորաբար նշանակում է գինեժուժկալ՝ չխմող: Բայց այն ժամանակ, երբ երկրորդ կարդինալ առաքինությունը սահմանվեց որպես «Ժուժկալություն», այն անենևին դա չէր նշանակում: Ժուժկալությունը վերաբերում էր ոչ թե հատուկ խմելուն, այլ բոլոր հաճույքներին. և այն նշանակում էր ոչ թե հրաժարվել, այլ չանցնել սահմանները: Սխալ է կարծել, թե բոլոր քրիստոնյաները պետք է գինեժուժկալ լինեն. մահմեդականությունն է, ոչ թե քրիստոնեությունը, գինեժուժկալ կրոնը: Իհարկե, որոշակի քրիստոնյայի կամ ցանկացած քրիստոնյայի պարտականությունը կարող է լինել որոշակի ժամանակ զերծ մնալ թունդ խմիչքից՝ կա՛մ այն պատճառով, որ նա այն տեսակի մարդ է, ով երբեք չի կարող խմել առանց չափն անցնելու, կա՛մ այն պատճառով, որ նա ցանկանում է այդ փողը տալ աղքատներին, կա՛մ այն պատճառով, որ նա հարբեցողության հակված մարդկանց հետ է և չպետք է խրախուսի նրանց՝ իր խմելով: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ նա հարգելի պատճառով հրաժարվում է մի բանից, որը նա չի դատապարտում, և որը նա սիրում է տեսնել, թե ինչպես են ուրիշները վայելում: Որոշակի տեսակի վատ մարդու առանձնահատկություններից մեկն այն է, որ նա չի կարող հրաժարվել որևէ բանից առանց ցանկանալու, որ բոլորը հրաժարվեն դրանից: Դա քրիստոնեական ճանապարհը չէ: Անհատ քրիստոնյան կարող է նպատակահարմար համարել, ինչ-ինչ պատճառներով, հրաժարվել ամեն տեսակ բաներից՝ ամուսնությունից, մսից, գարեջրից կամ կինոթատրոնից:

[*] Հատված հայտնի անգլիական բանաստեղծություններիից մեկից՝ խոնարհության մասին:

Բայց այն պահին, երբ նա սկսում է ասել, որ այդ բաներն ինքնին վատն են, կամ վերևից է նայում այն մարդկանց, որոնք վայելում են դրանք, նա շփոթության մեջ է:

Մեծ մի վնաս է առաջացել Ժուժկալություն բառը սոսկ խմիչքով սահմանափակելու հարցում: Այն դյուրին է դարձնում մարդկանց մոռանալ, որ դուք կարող եք նույնքան անժուժկալ լինել շատ այլ բաներում: Տղամարդը, որը իր կյանքի կենտրոնական բանն է դարձնում գոլֆը կամ իր մոտոցիկլետը, կամ կինը, որն իր ուշքն ու միտքը նվիրում է հագուստին, բրիջին կամ իր շանը, նույնքան «անժուժկալ» է, որքան այն մարդը, որը ամեն երեկո հարբում է: Իհարկե, դրսից դա այդքան հեշտ չի նկատվում. բրիջի կամ գոլֆի մոլուցքի պատճառով վայր չես ընկնի փողոցի մեջտեղում: Բայց Աստծուն հնարավոր չէ խաբել արտաքին բաներով:

Արդարությունը նշանակում է շատ ավելին, քան այն, ինչ տեղի է ունենում դատարաններում: Դա հին անվանումն է այն ամենի, որը մենք այժմ կոչում ենք «ազնվություն». այն ներառում է անկեղծությունը, տալն ու վերցնելը, ճշմարտացիությունը, խոստումները պահելը և կյանքի այդպիսի նմանատիպ բաները: Իսկ Հաստատունությունը ներառում է քաջության երկու տեսակը՝ այն տեսակը, որը աննկուն է վտանգի առջև, ինչպես նաև այն տեսակը, որը պատրաստ է ինքն իրեն դնել հարվածի տակ: «Փորոտիք ունենալ»-ը թերեւս դրան ամենամոտ արտահայտությունն է ժամանակակից անգլերենում: Դուք, իհարկե, կնկատեք, որ դուք չեք կարող շատ երկար կիրառել մյուս առաքինություններից որևէ մեկը առանց այս մեկի օգնության:

Առաքինությունների մասին ևս մեկ կետ կա, որին պետք է ուշադրություն դարձնել: Տարբերություն կա ինչ-որ կոնկրետ արդար կամ ժուժկալ արարք կատարելու և արդար կամ ժուժկալ մարդ լինելու միջև: Ինչ-որ մեկը, ով լավ թենիսիստ չէ, երբեմն կարող է լավ հարված կատարել: Լավ խաղացող ասելով դուք ի նկատի ունեք այն մարդուն, ում աչքերը, մկաններն ու նյարդերը այնքան են մարզվել՝ անթիվ լավ հարվածներ կատարելով, որ այժմ կարելի է դրանց վրա հույս դնել: Նրանք ունեն որոշակի երանգ կամ որակ, որն առկա է նույնիսկ այն ժամանակ, երբ նա չի խաղում, ինչպես որ մաթեմատիկոսի միտքն ունի որոշակի հատկություն և մտահորիզոն, որոնք առկա են նույնիսկ այն ժամանակ, երբ նա չի զբաղվում մաթեմատիկայով: Նույն կերպ՝ մարդը, որը հաստատակամորեն կատարում է արդար արարքներ, ի վերջո ձեռք է բերում անձնավորության որոշակի որակ: «Առաքինության» մասին խոսելիս մենք նկատի ունենք ավելի շատ ա՛յդ որակը, քան կոնկրետ արարքները:

Այս զանազանումը կարևոր է հետևյալ պատճառով: Եթե մենք մտածեինք միայն կոնկրետ արարքների մասին, մենք կարող էինք ներշնչել երեք սխալ գաղափար:

(1) Մենք կարող ենք մտածել, որ եթե դու արել ես այն, ինչ ճիշտն է, ապա կարևոր չէ, թե ինչպես և ինչու ես դա արել՝ անկախ նրանից՝ դա արել ես կամա, թե ակամա, տրտում, թե ուրախ, հասարակական կարծիքից վախենալով, թե սոսկ այն անելու համար: Բայց ճշմարտությունն այն է, որ սխալ պատճառով արված

ճիշտ արարքները չեն նպաստում կառուցել ներքին որակը կամ բնույթը, որը կոչվում է «առաքինություն», և հենց այս որակը կամ բնույթն է, որն իսկապես կարևոր է: (Եթե վատ թենիսիստը շատ ուժեղ հարվածում է, ոչ թե այն պատճառով, որ նա տեսնում է, որ շատ ուժեղ հարված է պահանջվում, այլ այն պատճառով, որ նա կորցրել է իր ինքնատիրապետումը, նրա հարվածը, հնարավոր է, բախտի բերմամբ, օգնի նրան հաղթելու կոնկրետ այդ խաղը, բայց դա չի օգնի նրան դառնալ հուսալի խաղացող:)

(2) Մենք կարող ենք մտածել, որ Աստված ցանկանում է զուտ հնազանդություն մի շարք կանոնների, մինչդեռ Նա իրականում ցանկանում է որոշակի տեսակի մարդիկ:

(3) Մենք կարող ենք մտածել, որ «առաքինությունները» անհրաժեշտ են միայն այս կյանքի համար՝ որ մյուս աշխարհում մենք կարող ենք դադարել լինել արդար, որովհետև վիճելու բան չկա, և դադարել լինել խիզախ, քանի որ վտանգ չկա: Հիմա՝ միանգամայն ճիշտ է, որ մյուս աշխարհում հավանաբար արդար կամ համարձակ արարքների առիթ չի լինի, բայց ամեն առիթ կլինի լինելու այնպիսի մարդիկ, ինչպիսին մենք կարող ենք դառնալ միայն այստեղ նման արարքներ անելու հետևանքով: Խնդիրն այն չէ, որ Աստված կհրաժարվի ձեզ ընդունել Իր հավերժական աշխարհը, եթե դուք անձնավորության որոշակի որակներ չունեք: Խնդիրն այն է, որ եթե մարդիկ այդ որակների գոնե սկզբնական մասը չունենան իրենց ներսում, ապա ոչ մի հնարավոր արտաքին իրավիճակ չի կարող «Դրախտ» ստեղծել նրանց համար, այսինքն՝ կարողանա նրանց երջանկացնել այն խոր, ուժեղ, անսասան երջանկությամբ, որն Աստված նախատեսել է մեզ համար:

## 3. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջին բանը, որ պետք է հստակեցնել մարդու և մարդու միջև քրիստոնեական բարոյագիտության մասին, այն է, որ այս ոլորտում Քրիստոսը չէր եկել որևէ նոր բարոյականություն քարոզելու: Նոր Կտակարանի Ոսկե Կանոնը (Արա այն, ինչ ուզում ես, որ քեզ անեն) ամփոփումն է այն ամենի, որը բոլորը, ի վերջո, միշտ իմացել են, որ ճիշտ է: Բարոյականության իսկական մեծ ուսուցիչները երբեք առաջ չեն բերում նոր բարոյագիտություն. դա անում են խարդախներն ու խենթերը: Ինչպես ասել է դոկտոր Ջոնսոնը. «Մարդիկ ավելի հաճախ կարիք ունեն հիշեցման, քան ուսուցման»: Յուրաքանչյուր բարոյագիտության ուսուցչի իրական գործը մեզ շարունակաբար, ժամանակ առ ժամանակ, հետ բերելն է այն հին, պարզ սկզբունքներին, որոնք մենք բոլորս այդքա՜ն չենք ուզում տեսնել. ինչպես ձիուն են հետ բերում այն արգելքի առաջ, որի վրայով այն հրաժարվել է ցատկել, կամ երեխային են պարբերաբար հետ բերում իր դասի այն հատվածին, որից նա ուզում է խուսափել:

Երկրորդ բանը, որ պետք է հստակեցնել, այն է, որ քրիստոնեությունը չունի և չի էլ պնդում, որ ունի մանրակրկիտ քաղաքական ծրագիր՝ տվյալ հասարակության մեջ և տվյալ պահին «Արա այն, ինչ ուզում ես, որ քեզ անեն»-ը կիրառելու համար: Եւ չէր կարող ունենալ: Այն նախատեսված է բոլոր մարդկանց համար բոլոր ժամանակներում, և տվյալ ծրագիրը, որը համապատասխանում է մի վայրի կամ մի ժամանակի, չի համապատասխանի՝ մեկ այլի: Եւ, ամեն դեպքում, քրիստոնեությունն այդպես չի գործում: Երբ այն ձեզ ասում է կերակրել քաղցածին, այն ձեզ խոհարարության դասեր չի տալիս: Երբ այն ձեզ ասում է կարդալ Սուրբ Գիրքը, այն ձեզ եբրայերենի և հունարենի դասեր չի տալիս (կամ նույնիսկ անգլերենի քերականության): Այն երբեք նպատակ չի ունեցել սովորական մարդկային արվեստների ու գիտությունների տեղը գրավել կամ նրանց փոխարինել. այն ավելի շուտ ղեկավար է, որը նրանց բոլորին կդնի իրենց ճիշտ գործին, և էներգիայի աղբյուր, որը նրանց բոլորին նոր կյանք կտա, եթե նրանք իրենց դնեն նրա տրամադրության տակ:

Հաճախ մարդիկ ասում են. «Եկեղեցին պետք է մեզ առաջնորդի»: Սա ճիշտ է, եթե նրանք դա նկատի ունեն ճիշտ առումով, բայց սխալ է, եթե նրանք դա նկատի ունեն սխալ առումով: Եկեղեցի ասելով նրանք պետք է ի նկատի ունենան դավանող քրիստոնյաների ամբողջ մարմինը: Եւ երբ նրանք ասում են, որ Եկեղեցին պետք է մեզ առաջնորդի, նրանք պետք է նկատի ունենան, որ որոշ քրիստոնյաներ՝ նրանք, ովքեր ունեն համապատասխան տաղանդները, պետք է լինեն տնտեսագետներ և պետական այրեր, և որ բոլոր տնտեսագետներն ու պետական այրերը պետք է լինեն քրիստոնյաներ, և որ նրանց ամբողջ ջանքերը քաղաքականության և տնտեսագիտության մեջ պետք է ուղղված լինեն «Արեք

այն, ինչ կուզեիք ձեզ անեն»-ը իրականացնելու: Եթե դա տեղի ունենա, և եթե մենք՝ մյուսներս, իսկապես պատրաստ լինեինք դա ընդունելու, ապա մենք շատ արագ կգտնեինք քրիստոնեական լուծումը մեր սոցիալական խնդիրներին: Բայց, իհարկե, երբ մարդիկ առաջնորդություն են խնդրում Եկեղեցուց, շատերը նկատի ունեն, որ ցանկանում են, որ հոգևորականները քաղաքական ծրագիր առաջադրեն: Սա անհեթեթություն է: Հոգևորականներն այն հատուկ մարդիկ են ամբողջ Եկեղեցու ներսում, որոնք հատուկ պատրաստված են և ստանձնված են մեզ հոգալու համար՝ որպես հավիտյան ապրող արարածների. մենք նրանց խնդրում ենք կատարել մի աշխատանք, որի համար նրանք պատրաստվածություն չունեն: Գործն իսկապես մեր՝ աշխարհականներինն է: Քրիստոնեական սկզբունքների կիրառումը, ասենք, արհմիութենականությանը կամ կրթությանը, պետք է առաջանա քրիստոնյա արհմիութենականներից և քրիստոնյա ուսումնական վարիչներից. ճիշտ այնպես, ինչպես քրիստոնեական գրականությունը ծնվում է քրիստոնյա վիպասաններից և դրամատուրգներից, և ոչ թե ինչ-որ եպիսկոպոսների ժողովից, որոնք հավաքվում են և փորձում են պիեսներ և վեպեր գրել իրենց ազատ ժամանակ:

Այդուհանդերձ, Նոր Կտակարանը, առանց մանրամասների մեջ մտնելու, բավականին հստակ հուշում է մեզ, թե ինչպիսին կլիներ ամբողջապես քրիստոնեական հասարակությունը: Միգուցե այն ասում է ավելին, քան մենք կարող ենք տանել: Այն մեզ ասում է, որ այնտեղ չպետք է լինեն զուտ «անցնողներ» կամ մակաբույծներ. եթե մեկը չի աշխատում, ապա նա չպետք է ուտի: Ամեն մեկը պետք է աշխատի իր սեփական ձեռքերով, և ավելին՝ յուրաքանչյուրի գործը ինչ-որ լավ բան ստեղծելն է. չի լինի անհեթեթ շքեղությունների արտադրանք, և առավել անհեթեթ գովազդներ, որոնք համոզելու են մեզ գնել դրանք: Եւ չի լինի պարծենկոտություն կամ ցուցամոլություն, կամ գլուխ գովել: Այդ առումով քրիստոնյա հասարակությունը կլիներ այն, ինչ մենք հիմա անվանում ենք ձախակողմյան: Սակայն, միևնույն ժամանակ, այն պահանջում է հնազանդություն. հնազանդություն՝ (և հարգանքով արտահայտած արտաքին նշաններ) բոլորիս կողմից համապատասխան նշանակված պաշտոնյաներին, երեխաներից՝ ծնողներին, և (ես վախենում եմ, որ սա շատ տհաճ կլինի) կանանցից՝ ամուսիններին: Երրորդ՝ այն լինելու է ուրախ հասարակություն՝ լի երգեցողությամբ ու ուրախությամբ, անհանգստությունը կամ մտահոգությունը համարելով սխալ: Բարեկրթությունը քրիստոնեական առաքինություններից մեկն է, և Նոր Կտակարանը ատում է նրանց, ում այն անվանում է «բամբասողներ»:

Եթե գոյություն ունենար այդպիսի հասարակություն, և դուք կամ ես այցելեինք այն, ես կարծում եմ, որ մենք կունենայինք շատ հետաքրքիր տպավորություն: Մենք տպավորություն կունենայինք, որ նրա տնտեսական կյանքը շատ սոցիալիստական է և, այդ առումով, «զարգացած», բայց որ նրա ընտանեկան կյանքը և վարքուբարքը բավականին հնաոճ են, գուցե նույնիսկ արարողական և արիստոկրատական: Մեզանից յուրաքանչյուրը կցանկանար դրա մի մասը, բայց ես կարծում եմ, որ մեզանից շատ քչերին դուր կգար ամբողջը: Դա հենց այն է, ինչը կարելի էր ակնկալել, եթե քրիստոնեությունը մարդկային մեքենայի ամբողջական նախագիծն է: Մենք բոլորս տարբեր կերպ հեռացել ենք այդ

ընդհանուր նախագծից, և մեզանից յուրաքանչյուրը ցանկանում է ձևացնել, որ սկզբնական նախագծի իր սեփական փոփոխությունը հենց այդ նախագիծն է: Դուք կրկին և կրկին կտեսնեք սա ցանկացած բանի վերաբերյալ, ինչն իսկապես քրիստոնեական է. ամեն մեկին գրավում է դրա որոշ մասերը և նա ցանկանում է ընտրել այդ մասերը և թողնել մնացածը: Ահա թե ինչու մենք տեղ չենք հասնում, և այդ պատճառով մարդիկ, որոնք պայքարում են բոլորովին հակառակ բաների համար, կարող են երկուսն էլ ասել, որ պայքարում են քրիստոնեության համար:

Հիմա մեկ այլ բան. կա մի խորհուրդ՝ մեզ տրված հին հեթանոս հույներից, հրեաներից՝ Հին Կտակարանում, և մեծ քրիստոնյա ուսուցիչներից՝ միջնադարում, որին ժամանակակից տնտեսական համակարգը բացարձակապես չի հնազանդվել: Բոլոր այս մարդիկ մեզ ասում էին, որ տոկոսով փող չտանք, և տոկոսով փող տալը, այն, ինչ մենք անվանում ենք ներդրում, մեր ամբողջ համակարգի հիմքն է: Հիմա՝ կարող է ամենևին էլ այնպես չէ, որ մենք սխալ ենք: Ոմանք ասում են, որ երբ Մովսեսը և Արիստոտելը և քրիստոնյաները միաձայն արգելել էին շահույթը (կամ «վաշխառությունը», ինչպես իրենք էին այն անվանում), նրանք չէին կարող կանխատեսել բաժնետիրական շուկան և միայն քննադատում էին մասնավոր վաշխառուին, և, հետևաբար, մենք չպետք է անհանգստանանք նրանց ասածներից: Սա մի հարց է, որը ես չեմ կարող որոշել: Ես տնտեսագետ չեմ և պարզապես չգիտեմ, թե ներդրումային համակարգը պատասխանատո՞ւ է այն վիճակի համար, որում մենք ապրում ենք, թե ոչ: Ահա այստեղ մենք կարիք ունենք քրիստոնյա տնտեսագետին: Բայց ազնիվ չէր լինի, եթե ես ձեզ չասեի, որ երեք մեծ քաղաքակրթություն միաձայն (համենայն դեպս այդպես է թվում առաջին հայացքից) դատապարտում են հենց այն բանը, ինչի վրա մենք հիմնել ենք մեր ողջ կյանքը:

Եւս մեկ բան, և ես ավարտում եմ: Այն մասում, որտեղ Նոր Կտակարանը նշում է, որ յուրաքանչյուր ոք պետք է աշխատի, այն տալիս է որպես պատճառ՝ «որպեսզի նա ունենա ինչ-որ բան տալու կարիքավորներին»: Ողորմությունը՝ աղքատներին նվիրելը, քրիստոնեական բարոյականության էական մասերից է. ոչխարների և այծերի մասին սարսափելի առակում, դա կարծես թե այն բանն է, որով ամեն ինչ որոշվում է: Մեր օրերում ոմանք ասում են, որ ողորմությունը պետք է ավելորդ լինի, և որ աղքատներին նվիրելու փոխարեն մենք պետք է ստեղծենք մի հասարակություն, որում աղքատներ չլինեն: Նրանք կարող են միանգամայն ճիշտ լինել՝ ասելով, որ մենք պետք է ստեղծենք նման հասարակություն: Բայց եթե որևէ մեկը կարծում է, որ դրանից հետևում է, որ դուք կարող եք այդ ընթացքում դադարել տալուց, ապա նա հեռացել է քրիստոնեական ողջ բարոյականությունից: Ես չեմ կարծում, որ հնարավոր է որոշել, թե որքան պետք է տանք: Վախենում եմ, որ միակ անվտանգ կանոնը ավելին տալն է, քան կարող ենք: Այլ կերպ ասած, եթե հարմարավետության, շքեղության, զվարճանքի և այլնի վրա մեր ծախսերը համապատասխանում են մոտավորապես նույն եկամուտ ունեցող միջին մարդու ծախսերին, մենք, հավանաբար, շատ քիչ ենք տալիս: Եթե մեր բարեգործությունները ամենևին չեն նեղում կամ խանգարում մեզ, ես կասեի, որ դրանք չափազանց քիչ են: Պետք է լինեն բաներ, որոնք մենք կցանկանայինք անել և չենք կարողանում անել, քանի որ մեր բարեգործական ծախսերը անհնար են դարձնում դրանք: Ես

հիմա խոսում եմ սովորական «ողորմածությունների» մասին: Ձեր հարազատների, ընկերների, հարևանների կամ աշխատակիցների մտահոգությունների տարբեր դեպքերը, որոնք Աստված, այսպես ասած, պարտադրում է ձեզ, կարող են շատ ավելին պահանջել ձեզնից՝ ընդհուպ մինչև ձեր սեփական դիրքի սասանումն ու վտանգումը: Մեզանից շատերի համար ողորմության մեծ խոչընդոտը ոչ թե մեր շքեղ ապրելակերպն է կամ ավելի շատ փող ունենալու ցանկությունը, այլ մեր վախը՝ անապահովության վախը: Սա հաճախ պետք է գիտակցվի որպես գայթակղություն: Երբեմն մեր հպարտությունը նույնպես խանգարում է մեր ողորմածությանը. մենք գայթակղվում ենք ավելի շատ ծախսել, քան պետք է, ողորմածության ցուցադրական ձևերի համար (թեյավճար, հյուրասիրություն) և ավելի քիչ, քան պետք է նրանց համար, ովքեր իսկապես մեր օգնության կարիքն ունեն:

Եվ հիմա, նախքան իմ ավարտելը, ես փորձելու եմ կռահել, թե ինչ ազդեցություն է ունեցել այս գլուխը այն ընթերցողների վրա: Իմ ենթադրությունն այն է, որ նրանց մեջ կան որոշ ձախակողմյաններ, որոնք շատ զայրացած են, որ այն ավելի հեռուն չի գնացել այդ ուղղությամբ, և հակառակ կարծիքին հարող որոշ մարդիկ, որոնք զայրացած են, քանի որ կարծում են, որ այն չափից շատ է գնացել այդ ուղղությամբ: Եթե այդպես է, ապա դա մեզ հուշում է քրիստոնեական հասարակության գծագրերի այս ամբողջ մշակման իրական խոչընդոտը: Մեզանից շատերը իրականում չեն ուսումնասիրում թեման, որպեսզի պարզեն, թե ինչ է ասում քրիստոնեությունը. մենք ուսումնասիրում ենք այն՝ քրիստոնեությունից աջակցություն գտնելու հույսով՝ մեր խմբավորումի տեսակետներին: Մենք դաշնակից ենք փնտրում այնտեղ, որտեղ մեզ առաջարկվում է Տեր - կամ Դատավոր: Ես նույնն եմ: Այս գլխում կան հատվածներ, որոնք ես ուզում էի բաց թողնել: Եվ դա է պատճառը, որ նման խոսակցություններից ոչինչ չի ստացվի, քանի դեռ շատ ավելի երկար ճանապարհ չենք անցել: Քրիստոնյա հասարակությունը չի ստեղծվի այնքան ժամանակ, քանի դեռ մեզանից շատերը իսկապես չցանկանան դա. և մենք չենք ցանկանա դա, քանի դեռ լիովին քրիստոնյա չենք դարձել: Ես կարող եմ կրկնել «Արա այն, ինչ ուզում ես, որ քեզ անեն» մինչև դեմքս կապտի, բայց իրականում չեմ կարող կատարել այն, քանի դեռ չեմ սիրում իմ մերձավորին, ինչպես ինքս ինձ. և չեմ կարող սովորել սիրել իմ մերձավորին, եթե չեմ սիրում Աստծուն, և չեմ կարող սովորել սիրել Աստծուն, եթե ոչ Նրան հնազանդվել սովորելուց: Եւ այսպես, ինչպես ես ձեզ նախազգուշացրել էի, մենք մղվում ենք դեպի ավելի ներքին ինչ-որ բանի՝ մղվում ենք սոցիալական հարցերից դեպի կրոնական հարցերի: Քանի որ ամենաերկար պտույտը ամենակարճ ճանապարհն է դեպի տուն:

## 4. ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ես ասացի, որ մենք երբեք չենք ունենա քրիստոնեական հասարակություն, քանի դեռ մեզանից շատերը անհատապես չեն դարձել քրիստոնյա: Դա, իհարկե, չի նշանակում, որ մենք կարող ենք հետաձգել հասարակության հետ կապված որևէ բան անելը մինչև հեռավոր ապագայում ինչ-որ երևակայական ամսաթիվ: Դա նշանակում է, որ մենք պետք է սկսենք այս երկու գործերը միաժամանակ. (1) քննարկել, թե ինչպես կարելի է «Արա այն, ինչ կուզես, որ քեզ անեն»-ը մանրամասնորեն կիրառել ժամանակակից հասարակության մեջ, և (2) դառնալ այնպիսի մարդիկ, որոնք իսկապես դա կկիրառեին, եթե իմանային, թե ինչպես: Այժմ ես ուզում եմ սկսել քննարկել, թե ո՞րն է լավ մարդու քրիստոնեական գաղափարը՝ մարդկային մեքենայի քրիստոնեական հատկորոշումը:

Նախքան մանրամասների անցնելը, ես կցանկանայի նշել և՛ս երկու ընդհանուր բան: Նախ, քանի որ քրիստոնեական բարոյականությունը հավակնում է լինել մարդկային մեքենան կարգի բերելու տեխնիկա, ես կարծում եմ, որ դուք կցանկանայիք իմանալ, թե ինչպես է այն կապված մեկ այլ տեխնիկայի հետ, որը թվում է, թե նման պնդում է անում, մասնավորապես՝ հոգեվերլուծությունը:

Հիմա՝ մենք կարիք ունենք շատ հստակ տարբերակելու երկու բանի միջև՝ հոգեվերլուծաբանների զուտ բժշկական տեսությունների ու տեխնիկայի և աշխարհի մասին ընդհանուր փիլիսոփայական տեսակետի միջև, որը Ֆրոյդը և ուրիշները հետագայում ավելացրին դրան: Երկրորդ բանը՝ Ֆրոյդի փիլիսոփայությունը, ուղղակիորեն հակասում է քրիստոնեությանը, ինչպես նաև ուղղակիորեն հակասում է մյուս մեծ հոգեբանին՝ Յունգին: Եւ ավելին, երբ Ֆրոյդը խոսում է այն մասին, թե ինչպես բուժել նևրոտիկներին, նա խոսում է որպես իր սեփական բնագավառի մասնագետ, բայց երբ նա դրանից հետո խոսում է ընդհանուր փիլիսոփայության մասին, նա խոսում է սիրողական մակարդակից: Հետևաբար, միանգամայն խելամիտ է հարգանքով վերաբերվել նրան մի դեպքում, և ոչ մյուս դեպքում, և սա այն է, ինչ ես անում եմ: Ես հավակնում եմ դա անել, որովհետև ես հայտնաբերել եմ, որ երբ նա խոսում է իր թեմայից դուրս և մի թեմայի շուրջ, որի մասին ես գիտեմ ինչ-որ բան (մասնավորապես՝ լեզուները), նա շատ անտեղյակ է: Բայց հոգեվերլուծությունն ինքնին, բացի նրա փիլիսոփայական հավելումներից, որ Ֆրոյդը և մյուսները ավելացրել են, ամենևին էլ հակասական չէ քրիստոնեությանը: Նրա տեխնիկան որոշ կետերում համընկնում է քրիստոնեական բարոյագիտության հետ, և վատ չէր լինի, եթե ամեն մարդ ինչ-որ բան իմանար դրա մասին. սակայն, այն մինչև վերջ նույն ճամփով չի գնում, քանի որ երկու տեխնիկաները բավականին տարբեր բաներ են անում:

Երբ մարդը բարոյական ընտրություն է կատարում, երկու բան են ներառված: Մեկը ընտրության գործողությունն է: Մյուսը տարբեր զգացումներն են, մղումները և այլն, որ նրա հոգեբանական հանդերձանքը տրամադրում է նրան, և որոնք իր կատարած ընտրության հումքն են: Հիմա՝ այս հումքը կարող է լինել երկու տեսակի: Այն կամ կարող է լինել այն, ինչ մենք կանվանեինք նորմալ. այն կարող է բաղկացած լինել այնպիսի զգացումներից, որոնք բնորոշ են բոլոր մարդկանց: Կամ այն կարող է բաղկացած լինել բավականին անբնական զգացումներից՝ պայմանավորված նրա ենթագիտակցության մեջ խեղված բաներով: Դիցուք՝ իրապես վտանգավոր բաներից վախը կլինի առաջին տեսակի օրինակ. իռացիոնալ վախը կատուներից կամ սարդերից կլինի երկրորդ տեսակի օրինակ: Տղամարդու ցանկությունը կնոջ նկատմամբ կլինի առաջին տեսակի օրինակ, իսկ տղամարդու այլասերված ցանկությունը տղամարդու նկատմամբ՝ երկրորդի օրինակ: Եւ այսպես՝ հոգեվերլուծությունը պարտավորվում է հանել աննորմալ զգացումները, այսինքն՝ մարդուն ավելի լավ հոգեբանական հումք տալ իր գործողությունների ընտրության համար. բարոյականությունը վերաբերում է ինքնին ընտրության գործողությանը:

Այսպես պատկերացրեք: Պատկերացրեք երեք տղամարդ, որոնք գնում են պատերազմ: Առաջինն ունի վտանգի հանդեպ սովորական բնական վախը, որն ունի ցանկացած տղամարդ, և նա իր բարոյական ջանքերով հաղթում է դրան և դառնում է քաջ մարդ: Ենթադրենք, որ մյուս երկուսը իրենց ենթագիտակցության մեջ եղած բաների հետևանքով ունեն չափազանցված, իռացիոնալ վախեր, որոնց ոչ մի բարոյական ջանք չի կարող հաղթահարել: Հիմա ենթադրենք, որ հոգեվերլուծաբանը գալիս է և բուժում է այս երկուսին, այսինքն՝ նա երկուսին էլ նորից դնում է առաջին մարդու դիրքում: Հենց այդ պահին հոգեվերլուծական խնդիրն ավարտվում է և սկսվում է բարոյական խնդիրը: Որովհետև այժմ, երբ նրանք բուժվել են, այս երկու տղամարդիկ կարող են բոլորովին այլ կերպ վարվել: Առաջինը կարող է ասել. «Փառք Աստծո, ես ազատվել եմ այդ բոլոր անհասկանալի բաներից: Հիմա վերջապես ես կարող եմ անել այն, ինչ միշտ ցանկացել եմ անել՝ իմ պարտականությունը ազատության պայքարին»: Բայց մյուսը կարող է ասել. «Դե, ես շատ ուրախ եմ, որ այժմ ինձ բավականաչափ անվտանգ եմ զգում կրակի տակ, բայց, դա, իհարկե, չի փոխում այն փաստը, որ ես դեռևս վճռական եմ հոգալ Ամենակարևոր Մարդու համար և թողնել, երբ հնարավոր է, որ վտանգավոր գործը անի կողքիս մարդը: Իրոք՝ ավելի քիչ վախ զգալու օգուտներից մեկն այն է, որ ես այժմ կարող եմ շատ ավելի արդյունավետ կերպով հոգ տանել ինձ համար և կարող եմ շատ ավելի խելացիորեն թաքցնել այս փաստը մյուսներից»: Հիմա՝ այս տարբերությունը զուտ բարոյական է, և հոգեվերլուծությունը այստեղ ոչինչ անել չի կարող: Ինչքան էլ բարելավես մարդու հումքը, այնուամենայնիվ, դեռ կա մի բան՝ մարդու իրական, ազատ ընտրությունը՝ իր հոգեբանական հումքի հիման վրա՝ կա՛մ իր շահը դասելով որպես առաջնային, կա՛մ վերջնային: Եւ այս ազատ ընտրությունը միակ բանն է, որով բարոյականությունը շահագրգռված է:

Վատ հոգեբանական հումքը մեղք չէ, այլ հիվանդություն: Այն կարիք չունի ապաշխարության, այլ բուժման: Եւ, ի դեպ, սա շատ կարևոր է: Մարդիկ միմյանց դատում են իրենց արտաքին գործողություններով: Աստված դատում է

նրանց ըստ իրենց կատարած բարոյական ընտրությունների: Երբ նևրոտիկը, որը ունի կատուների պաթոլոգիական վախ, ինչ-ինչ պատճառով ստիպում է ինքն իրեն գրկել մի կատվի, միանգամայն հնարավոր է, որ Աստծո աչքերում նա ավելի շատ քաջություն է դրսևորում, քան այն մարդը, ում շնորհվել է «Վիկտորյայի Խաչը» (*): Երբ մի մարդ, որը պատանեկությունից այլասերված է եղել, և ում սովորեցրել են, որ դաժանությունը լավ բան է, մի չնչին բարություն է անում կամ հրաժարվում է կատարել մի դաժանություն՝ և այդպիսով ինքն իրեն վտանգում է, քանի որ կարող է արժանանալ իր ընկերների հնարավոր քամահրանքին, Աստծո աչքերում նա միգուցե անում է ավելին, քան ես և դուք կանեինք, եթե անգամ մեր կյանքը տայինք մեր ընկերոջ համար:

Կարող ենք տեսնել նաև սրա հակառակը: Մեզանից ոմանք, ովքեր բավականին լավ մարդիկ են թվում, իրականում կարող է այնքան քիչ են օգտվել լավ ժառանգականությունից և լավ դաստիարակությունից, որ մենք իրապես ավելի վատն ենք, քան նրանք, ում մենք համարում ենք չար: Կարո՞ղ ենք մենք միանգամայն վստահ լինել, թե մենք ինչպես կվարվեինք, եթե բեռնված լինեինք այն հոգեբանական կառուցվածքով, ապա այն վատ դաստիարակությամբ, իսկ հետո, ասենք, այն իշխանությամբ, որ տրված էր Հիմլերին: Ահա թե ինչու քրիստոնյաներին պատվիրված է չդատել: Մենք տեսնում ենք միայն արդյունքները, որոնք առաջանում են երբ մարդը ընտրություն է կատարում իր հոգեբանական հումքի հիման վրա: Սակայն Աստված նրան ամենևին էլ չի դատում նրա հումքի հիման վրա, այլ թե ինչ է նա արել դրա հետ: Մարդու հոգեբանական կազմվածքի մեծ մասը, հավանաբար, նրա մարմնի հետևանք է. երբ մարմինը մահանա, այդ ամենը կանէանա, և իրական բուն մարդը՝ այն բանը, որը ընտրել է, որն իրեն տրված նյութով արել է լավագույն կամ վատագույն հնարավորը, կմնա մերկ: Բոլոր տեսակի հաճելի բաները, որոնք մենք կարծում էինք, որ մերն են, բայց որոնք իրականում մեր լավ մարսողության արդյունք էին, մեզանից շատերի վրայից կանհետանան. բոլոր տեսակի տհաճ բաները, որոնք բարդույթների կամ վատ առողջության պատճառով էին, կանհետանան ուրիշների վրայից: Դրանից հետո մենք առաջին անգամ կտեսնենք յուրաքանչյուրին այնպիսին, ինչպիսին նա իրականում եղել է: Կլինեն անակնկալներ:

Եւ դա ինձ բերում է իմ երկրորդ կետին: Մարդիկ հաճախ քրիստոնեական բարոյականությունը պատկերացնում են որպես մի տեսակ գործարք, որտեղ Աստված ասում է. «Եթե մի շարք կանոններ պահես, ես քեզ կպարգևատրեմ, իսկ եթե ոչ՝ կանեմ ուրիշ բան»: Ես չեմ կարծում, որ սա այն պատկերացնելու լավագույն ձևն է: Ես ավելի շուտ կասեի, որ ամեն անգամ, երբ դուք ընտրություն եք կատարում, դուք վերածում եք ձեր կորիզային մասը՝ այն մասը, որը կատարում է ընտրությունը, մի բանի, որը մի փոքր տարբերվում է իր նախկին բնույթից:

-[*] Արիության համար բարձրագույն պարգևատրումը Մեծ Բրիտանիայում:

Եւ հաշվի առնելով ձեր կյանքը որպես ամբողջություն, ձեր բոլոր անթիվ ընտրություններով, ձեր ամբողջ կյանքում դուք կամաց-կամաց վերածում եք այս կորիզային բանը կամ դրախտային արարածի, կամ դժոխային արարածի. կամ՝ արարածի, որը ներդաշնակության մեջ է Աստծո, ուրիշ արարածներնի և ինքն իր հետ, կամ էլ՝ արարածի, որը պատերազմի և ատելության մեջ է Աստծո, ուրիշ արարածների և ինքն իր հետ: Առաջին տեսակ արարած լինելը երանություն է, այսինքն՝ ուրախություն և խաղաղություն, իմացություն և զորություն: Մյուսը՝ խելագարություն, սարսափ, հիմարություն, կատաղություն, անզորություն և հավերժական միայնություն: Մեզանից ամեն մեկը ամեն պահի առաջանում է դեպի այս կամ այն վիճակը:

Դա բացատրում է մի բան, որը միշտ ինձ շփոթության մեջ էր գցում քրիստոնյա գրողների մասին. թվում է, թե մի պահ նրանք շատ խիստ են, իսկ մյուս պահին՝ շատ անբռնադատ և մեղմ: Նրանք խոսում են սոսկ մտքի մեղքերի մասին, ասես դրանք չափազանց կարևոր են, իսկ հետո խոսում են ամենասարսափելի սպանությունների և դավաճանությունների մասին, կարծես թե պետք է միայն ապաշխարել, և ամեն ինչ կներվի: Բայց ես հետո եկա այն գիտակցությանը, որ նրանք իրավացի են: Այն, ինչի մասին նրանք միշտ մտածում են, այն հետքն է, որը տվյալ գործողությունը թողնում է այդ փոքրիկ կորիզային ես-ի վրա, որը ոչ ոք չի տեսնում այս կյանքում, բայց որը մեզանից յուրաքանչյուրը ստիպված կլինի կրել կամ վայելել հավիտյան: Մեկը կարող է այնպիսի իրադրության մեջ լինել, որ իր զայրույթը կարող է թափել հազարավորների արյունը, իսկ մեկ ուրիշը կարող է լինել այնպիսի իրադրության մեջ, որ որքան էլ զայրանա, նրա վրա միայն կծիծաղեն: Բայց հոգու փոքր հետքը երկուսի մեջ էլ կարող է միանգամայն նույնը լինել: Նրանցից յուրաքանչյուրը ինքն իրեն ինչ-որ բան է արել, որը, բացառապես եթե նա ապաշխարի, հաջորդ անգամ գայթակղվելիս ավելի դժվար կդարձնի նրա համար զերծ մնալ զայրույթից, և որը կուժեղացնի նրա զայրույթը, երբ նա գայթակղվի: Նրանցից յուրաքանչյուրը, եթե նա լրջորեն դիմի Աստծուն, կարող է նորից ուղղել այդ խեղումը իր կորիզային մարդու ներսում: Արտաքինից երևացող բանի մեծությունը կամ փոքրությունը չէ՛, ինչն իրականում կարևոր է:

Մեկ վերջին նշում: Հիշե՛ք, որ, ինչպես վերևում ասացի, ճիշտ ճանապարհը տանում է ոչ միայն խաղաղության, այլև՝ իմացության: Երբ մարդը ավելի լավն է դառնում, նա ավելի ու ավելի հստակ է գիտակցում այն չարը, որը դեռ մնացել է իր մեջ: Երբ մարդը ավելի վատն է դառնում, նա ավելի ու ավելի քիչ է հասկանում սեփական վատությունը: Կիսով չափ վատ մարդը գիտի, որ ինքն այնքան էլ լավը չէ. բոլորովին վատ մարդը կարծում է, որ իր հետ ամեն ինչ կարգին է: Սա իսկապես տրամաբանական է: Դուք հասկանում եք քունը, երբ արթուն եք, ոչ թե քնած ժամանակ: Դուք կարող եք թվաբանության մեջ տեսնել սխալները, երբ ձեր միտքը հստակ է. երբ դուք անում եք այդ սխալները, դուք չեք տեսնում դրանք: Դուք կարող եք հասկանալ հարբեցողության էությունը, երբ դուք սթափ եք, ոչ թե, երբ հարբած եք: Լավ մարդիկ գիտեն և՛ բարու, և՛ չարի մասին. վատ մարդիկ չգիտեն ո՛չ մեկի, և ո՛չ մյուսի մասին:

## 5. ՍԵՌԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այժմ մենք պետք է դիտարկենք քրիստոնեական բարոյականությունը սեքսի վերաբերյալ, այն, ինչ քրիստոնյաներն անվանում են մաքրաբարոյության առաքինություն: Չի կարելի մաքրաբարոյության քրիստոնեական կանոնը շփոթել «համեստության» հասարակական կանոնի հետ (այդ բառի հատուկ իմաստով). այսինքն՝ պատշաճության կամ պարկեշտության հետ: Պատշաճության հասարակական կանոնը սահմանում է, թե մարդու մարմնի ինչքա՞ն մասն է թույլատրելի ցուցադրել և ինչ թեմաների մասին կարելի է խոսել և ինչպիսի բառերով՝ ըստ տվյալ հասարակական վայրի սովորույթների: Այսպիսով, մինչ մաքրաբարոյության կանոնը բոլոր քրիստոնյաների համար բոլոր ժամանակներում նույնն է, պատշաճության կանոնը փոփոխական է: Խաղաղ օվկիանոսյան կղզիների գրեթե մերկ աղջիկը և ամբողջովին հագուստով ծածկված վիկտորիանական կինը կարող են լինել հավասարապես «համեստ», պատշաճ կամ պարկեշտ՝ ըստ իրենց հասարակության չափանիշների. և երկուսն էլ, համենայն դեպս դատելով նրանց հագուստից, կարող են լինել նույնքան մաքրաբարո (կամ նույնքան անմաքրաբարո): Խոսակցական բառերի մի մասը, որ օգտագործում էին պարկեշտ կանայք Շեքսպիրի ժամանակներում, 19-րդ դարում կօգտագործեր միայն փողոցային կինը: Երբ մարդիկ խախտում են իրենց ժամանակի և վայրում գործող պատշաճության կանոնը, և եթե դա անում են իրենց կամ ուրիշների մեջ տոփանք գրգռելու համար, ապա նրանք դեմ են գնում մաքրաբարոյությանը: Բայց եթե դա խախտում են անտեղյակության կամ անզգուշության պատճառով, մեղավոր են միայն վատ վարքագծի համար: Երբ, ինչպես հաճախ է պատահում, նրանք խախտում են այն, որպեսզի ցնցեն կամ խայտառակեն ուրիշներին, ապա պարտադիր չէ, որ նրանք անմաքրաբարո են, սակայն նրանք անբարյացակամ են, քանի որ անբարյացակամ է հաճույք ստանալ այլ մարդկանց անհարմարություն պատճառելուց: Ես չեմ կարծում, որ պատշաճության շատ խիստ կամ բծախնդիր չափանիշը մաքրաբարոյության որևէ ապացույց է, կամ որևէ կերպ օգնում է դրան, և հետևաբար, ես այդ կանոնի բավականին թուլացումը և պարզեցումը, որ տեղի է ունեցել իմ կյանքի ընթացքում, համարում եմ լավ բան: Իր ներկա փուլում, սակայն, այն ունի այս անհարմարությունը՝ տարբեր տարիքի և տարբեր տեսակի մարդկանցից ոչ բոլորն են ընդունում նույն չափանիշը, և մենք ապակողմնորոշված ենք: Քանի դեռ այս խառնաշփոթը գոյություն ունի, ես կարծում եմ, որ հին կամ հնաոճ մարդիկ պետք է շատ զգույշ լինեն, որպեսզի չենթադրեն, որ երիտասարդ կամ «ազատագրված» մարդիկ ապականված են, երբ նրանք (հին չափանիշներով) պատշաճ չեն. և, ի պատասխան՝ երիտասարդները չպետք է իրենց մեծերին անվանեն կեղծ բարեպաշտ կամ խստաբարո, քանի որ նրանք հեշտությամբ չեն ընդունում նոր չափանիշը: Ուրիշների մասին լավը հավատալու իրական ցանկությունը, և անելը ինչ հնարավոր է, որպեսզի նրանց համար լինի հնարավորինս հարմար, կլուծի խնդիրների մեծ մասը:

Մաքրաբարոյությունը քրիստոնեական առաքինություններից ամենաքիչ համակրանք վայելողն է: Խուսափում չկա. հին քրիստոնեական կանոնն է՝ «Կամ ամուսնություն՝ լիակատար հավատարմությամբ զուգընկերոջդ, կամ էլ՝ լիակատար ժուժկալություն»: Հիմա՝ սա այնքան դժվար է և այնքան հակառակ մեր բնազդներին, որ ակնհայտորեն կա՛մ քրիստոնեությունն է սխալ, կա՛մ մեր սեռական բնազդն է խեղվել: Մեկը կամ մյուսը: Իհարկե, լինելով քրիստոնյա, ես կարծում եմ, որ բնազդն է խեղվել:

Բայց ես այլ պատճառներ ունեմ այդպես մտածելու համար: Սեքսի կենսաբանական նպատակը երեխաներն են, ինչպես որ ուտելու կենսաբանական նպատակը մարմինը վերականգնելն է: Հիմա, եթե մենք ուտենք, երբ հակված ենք զգում և այնքան, որքան ցանկանում ենք, ապա միանգամայն ճիշտ է, որ մեզանից շատերը չափից շատ են ուտելու, բայց ոչ սարսափելի շատ: Մեկ մարդը կարող է ուտել երկու մարդու չափ, բայց նա չի ուտի տասը մարդու չափ: Ախորժակը մի փոքր այն կողմ է անցնում իր կենսաբանական նպատակից, բայց ոչ ահռելի չափով: Բայց եթե առողջ երիտասարդը բավարարի իր սեռական ախորժակը, երբ նա հակված է զգում, և եթե յուրաքանչյուր գործողություն երեխա ծնի, ապա տասը տարի հետո նա կարող է հեշտությամբ բնակեցնել մի փոքրիկ գյուղ: Այս ախորժակը իր ֆունկցիային գերազանցում է սարսափելի և աներևակայելի չափով:

Կամ այլ կերպ դիտարկենք: Դուք կարող եք հավաքել մեծ հանդիսատես ստրիպտիզի համար, այսինքն՝ բեմում մերկացող աղջկա դիտելու համար: Հիմա ենթադրենք, որ դուք եկել եք մի երկիր, որտեղ հնարավոր է լցնել մի ամբողջ թատրոն սոսկ մի ծածկված ափսե բերելով բեմ, և այնուհետև դանդաղ բարձրացնելով ծածկը, որպեսզի լույսերը մարելուց անմիջապես հետո բոլորին տեսանելի լինի, որ այն պարունակում է ոչխարի միս կամ մի քիչ խոզապուխտ: Չէի՞ք մտածի, որ այդ երկրում ուտելու ախորժակի ինչ-որ խեղում կա: Եւ մի՞թե որևէ մեկը, որ մեծացել է այլ աշխարհում չէր մտածի, որ նույնքան տարօրինակ բան կա մեր սեռական բնազդի վիճակի հետ կապված:

Մի քննադատ ասել էր, որ եթե գտնի մի երկիր, որտեղ ուտելիքի հետ կապված նման ստրիպտիզները հանրայնություն վայելեին, նա կգար այն եզրակացության, որ այդ երկրի բնակիչները սովամահ են լինում: Նա, իհարկե, ցանկանում էր ակնարկել, որ այնպիսի բաները, որոնցից է ստրիպտիզը, ոչ թե սեռական ապականության, այլ սեռական սովի հետևանք են: Ես համաձայն եմ նրա հետ, որ եթե ինչ-որ տարօրինակ երկրում մենք հայտնաբերեինք, որ ոչխարի մսի կոտլետների հետ կապված նմանատիպ գործողությունները տարածված են, ապա հնարավոր բացատրություններից մեկը, որ կարող էր առաջանալ, կլիներ սովը: Բայց հաջորդ քայլը կլիներ այդ վարկածի ստուգումը՝ պարզելով, թե իրականում այդ երկրում շատ, թե՞ քիչ ուտելիք է սպառվում: Եթե փաստերը ցույց տային, որ բավականին շատ ուտելիք է սպառվում, ապա, իհարկե, անհրաժեշտ կլիներ հրաժարվել սովի վարկածից և փորձել մտածել մեկ այլ վարկածի մասին: Նույն կերպ, նախքան սեռական սովը որպես ստրիպտիզի պատճառ ընդունելը, մենք պետք է ապացույցներ փնտրենք, որ իրականում ավելի շատ սեռական ժուժկալություն կա մեր ժամանակներում, քան այն ժամանակներում, երբ ստրիպտիզի նման բաներն անհայտ էին: Բայց, անշուշտ,

նման ապացույց չկա: Հակաբեղմնավորիչները սեռական ցանկասիրությունը դարձրել են շատ ավելի սակավագին ամուսնության ներսում, և շատ ավելի անվտանգ՝ նրանից դուրս, քան երբևէ, և հասարակական կարծիքը ավելի քիչ թշնամական է ապօրինի միությունների և նույնիսկ այլասերվածության նկատմամբ, քան այն երբևիցե եղել է հեթանոսական ժամանակներից ի վեր: Ոչ էլ «սովի» վարկածը միակն է, որ մենք կարող ենք պատկերացնել: Բոլորը գիտեն, որ սեռական ախորժակը, ինչպես և մեր մյուս ախորժակները, մեծանում է ամենաթողության միջոցով: Սոված մարդիկ կարող են շատ մտածել ուտելիքի մասին, սակայն որկրամոլները՝ նույնպես. ագահները, ինչպես նաև քաղցածները, սիրում են ախորժանքը:

Հիմա երրորդ բանը: Շատ քիչ մարդ կգտնեք, որոնք ցանկանում են ուտել այնպիսի բաներ, որ ուտելիք չեն, կամ ուտելու փոխարեն այլ բաներ անեն ուտելիքի հետ: Այլ կերպ ասած, ուտելու ախորժակի այլասերումները հազվադեպ են պատահում: Սակայն սեռական բնազդի այլասերումները բազմաթիվ են, դժվար բուժելի և սարսափելի: Ցավում եմ, որ ստիպված եմ այս բոլոր մանրամասների մեջ մտնել, բայց պարտավոր եմ: Պատճառն այն է, որ ինձ և ձեզ, վերջին քսան տարիների ընթացքում, ամբողջ օրը կերակրել են սեքսի վերաբերյալ կատարյալ ստերով: Մեզ ասվել է, մինչև սրտխառնոց առաջացնելը, որ մեր սեռական ցանկությունը նույն վիճակում է, ինչ մեր բնական ցանկացած ցանկություն, և որ եթե միայն մենք հրաժարվենք այն կոծկելու հին և անհեթեթ վիկտորիանական գաղափարից, ապա պարտեզում ամեն ինչ կդառնա դրախտային: Դա ճիշտ չէ: Այն պահին, երբ նայում ենք փաստերին և հեռու ենք մնում քարոզչությունից, տեսնում ենք, որ դա այդպես չէ:

Մեզ ասում են, որ սեքսը անախորժություն է դարձել, քանի որ այն կոծկվել է: Բայց վերջին քսան տարիների ընթացքում այն չի կոծկվել՝ նրա մասին խոսվում է օրնիբուն: Այնուամենայնիվ, այն դեռ անախորժության վիճակում է: Եթե կոծկելը լիներ անախորժության պատճառը, ապա օդափոխությունը կկարգավորեր այն: Բայց դա տեղի չի ունեցել: Ես կարծում եմ, որ հակառակն է: Կարծում եմ, որ մարդկային ցեղը ի սկզբանե կոծկել է այն, քանի որ այն դարձել էր այդքան անախորժ: Ժամանակակից մարդիկ միշտ ասում են՝ «Սեքսը ամաչելու բան չէ»: Նրանք կարող են նկատի ունենալ երկու բան: Նրանք կարող են նկատի ունենալ «Ամաչելու ոչինչ չկա, որ մարդկային ցեղը վերարտադրվում է որոշակի ձևով, և ոչ էլ, որ այն հաճույք է պատճառում»: Եթե նրանք դա նկատի ունեն, ապա ճիշտ են: Քրիստոնեությունն էլ է նույնը ասում: Խնդիրը ո՛չ ինքին բանն է, ո՛չ էլ հաճույքը: Հին քրիստոնյա ուսուցիչներն ասում էին, որ եթե մարդը երբեք չընկներ, սեռական հաճույքը, ավելի քիչ լինելու փոխարեն, քան հիմա է, իրականում ավելի շատ կլիներ: Ես գիտեմ, որ որոշ շփոթված քրիստոնյաներ խոսել են այնպես, կարծես քրիստոնեությունը կարծում է, որ սեքսը, մարմինը և հաճույքն ինքնին վատն են: Բայց նրանք սխալվում էին: Քրիստոնեությունը գրեթե միակն է մեծ կրոններից, որը հիմնովին հավանություն է տալիս մարմնին, որը կարծում է, որ նյութը բարի է, որ Աստված Ինքը մի անգամ մարդկային մարմին է կրել, որ ինչ-որ մարմին կտրվի մեզ նույնիսկ Երկնքում, և որը մեր երջանկության, գեղեցկության և էներգիայի էական մասն է լինելու: Քրիստոնեությունը փառաբանել է ամուսնությունը ավելի շատ, քան ցանկացած այլ կրոն. և աշխարհի գրեթե ամբողջ մեծագույն սիրո պոեզիան

ստեղծվել է քրիստոնյաների կողմից: Եթե որևէ մեկն ասում է, որ սեքսն ինքնին վատն է, քրիստոնեությունը միանգամից հակասում է նրան: Բայց, իհարկե, երբ մարդիկ ասում են. «Սեքսը ամաչելու բան չէ», նրանք կարող են նկատի ունենալ, որ «այն վիճակը, որի մեջ այժմ հայտնվել է սեռական բնազդը, ամաչելու բան չէ»:

Եթե նրանք դա նկատի ունեն, ես կարծում եմ, որ նրանք սխալվում են: Ես կարծում եմ, որ այն շատ ամաչելու է: Ուտելիս հաճույք ստանալու համար ամաչելու ոչինչ չկա. ամաչելու շատ բան կլիներ, եթե աշխարհի կեսը ուտելիքը դարձներ իր կյանքի գլխավոր հետաքրքրությունը և իր ժամանակը անցկացներ նայելով ուտելիքի նկարներին և իր շրթունքները լպստեր: Ես չեմ ասում, որ դուք և ես անհատապես պատասխանատու ենք ստեղծված իրավիճակի համար: Մեր նախնիները մեզ փոխանցել են այս առումով խեղված օրգանիզմներ, և մենք մեծանում ենք անմաքրաբարոյության օգտին արվող քարոզչությամբ շրջապատված: Կան մարդիկ, որոնք ցանկանում են գրգռված պահել մեր սեռական բնազդը, որպեսզի մեզնից փող պոկեն: Քանի որ, իհարկե, մոլություն ունեցող մարդը այն մարդն է, որը շատ քիչ դիմադրողականություն ունի գնումների նկատմամբ: Աստված գիտի մեր վիճակը. Նա մեզ չի դատի, ասես թե մենք դժվարություններ չունենք հաղթահարելու: Կարևորը դրանք հաղթահարելու մեր կամքի անկեղծությունն ու հաստատակամությունն է:

Մինչև բուժվել կարողանալը, մենք պետք է ցանկանանք բուժվել: Նրանք, ովքեր իսկապես ցանկանում են օգնություն, կստանան այն. բայց ժամանակակից շատ մարդկանց համար նույնիսկ ցանկանալը դժվար է: Հեշտ է մտածել, որ մենք ինչ-որ բան ենք ուզում, երբ իրականում այն չենք ուզում: Մի հայտնի քրիստոնյա վաղուց մեզ ասել է, որ երբ ինքը երիտասարդ էր, նա անընդհատ աղոթում էր մաքրաբարոյության համար. բայց տարիներ անց նա հասկացավ, որ մինչ իր շուրթերն ասում էին. «Տե՛ր, ինձ մաքուր դարձրու», նրա սիրտը թաքուն ավելացնում էր. «Բայց խնդրում եմ, դեռ ոչ»: Աղոթքներում սա կարող է տեղի ունենալ նաև այլ առաքինությունների դեպքում. բայց կա երեք պատճառ, թե ինչու մեզ համար այժմ հատկապես դժվար է ցանկանալ, էլ չասած՝ հասնել, կատարյալ մաքրաբարոյության:

Առաջին հերթին, մեր աղավաղված էությունը, մեզ գայթակղող դևերը և տոփանքի ժամանակակից ամբողջ քարոզչությունը միավորված են, որպեսզի մեզ զգալ տան, թե ցանկությունները, որոնց մենք դիմադրում ենք, այնքան «բնական», այնքան «առողջ» և այնքան ողջամիտ են, որ գրեթե այլասերված և աննորմալ է դրանց դիմադրելը: Պաստառը պաստառի հետեւից, ֆիլմը ֆիլմի հետեւից, վեպը վեպի հետեւից, սեռական ցանկասիրության գաղափարը կապում են առողջության, նորմալության, երիտասարդության, անկեղծության և լավ տրամադրության գաղափարների հետ: Հիմա՝ այս կապը սուտ է: Ինչպես բոլոր հզոր ստերը, այն հիմնված է ճշմարտության վրա՝ վերոնշյալ ճշմարտության վրա, որ սեքսն ինքնին (բացի ավելորդություններից և մոլություններից, որոնք կարող են գոյանալ նրա շուրջը) «նորմալ» և «առողջ» երևույթ է և այլն: Սուտը այն է, որ ցանկացած սեռական արարք, որը ձեզ գայթակղեցնում է այս պահին, նույնպես առողջ և նորմալ է: Հիմա՝ սա ցանկացած պատկերացումներով, և քրիստոնեությունից բոլորովին զատ, անհեթեթություն է: Մեր բոլոր ցանկություններին հանձնվելն ակնհայտորեն

հանգեցնում է անզորության, հիվանդության, նախանձի, ստի, քողարկման և այն ամենի, ինչը հակառակն է առողջությանը, լավ տրամադրությանը և անկեղծությանը: Ցանկացած երջանկության համար, նույնիսկ այս աշխարհում, բավական մեծ զսպվածություն է անհրաժեշտ՝ այնպես որ, պնդումը, որ եթե ինչ-որ ցանկություն ուժեղ է, ապա այն առողջ և ողջամիտ է, լրիվ անիմաստ է: Յուրաքանչյուր բանական և քաղաքակիրթ մարդ պետք է ունենա որոշ սկզբունքներ, որոնցով նա որոշում է մերժել իր որոշ ցանկությունները և թույլատրել մյուսները: Մեկը դա անում է քրիստոնեական սկզբունքներով, մյուսը՝ հիգիենիկ սկզբունքներով, մյուսը՝ սոցիոլոգիական սկզբունքներով: Իրական հակադրությունը քրիստոնեության և «բնության» միջև չէ, այլ քրիստոնեական սկզբունքների և «բնությունը» վերահսկող այլ սկզբունքների միջև: Քանի որ «բնությունը» (բնական ցանկության առումով) ցանկացած դեպքում պետք է վերահսկվի, եթե չես պատրաստվում ավիրել քո ամբողջ կյանքը: Քրիստոնեական սկզբունքները միանշանակ ավելի խիստ են, քան մյուսները. բայց միևնույն ժամանակ մենք կարծում ենք, որ դուք օգնություն կստանաք նրանց հնազանդվելու համար, ինչը չեք ստանա մյուսներին հնազանդվելու համար:

Երկրորդ հերթին, շատ մարդիկ վարանում են լրջորեն փորձել քրիստոնեական մաքրաբարոյությունը, քանի որ կարծում են (փորձելուց առաջ), որ այն անհնար է: Բայց երբ ինչ-որ բան պարտադիր է փորձել, երբեք չպետք է մտածել հնարինության կամ անհնարինության մասին: Երբ ստուգողական թերթիկի ընտրովի հարց ես տեսնում՝ մտածում ես՝ կարո՞ղ ես դա անել, թե՞ ոչ. պարտադիր հարցի դեպքում պետք է անել լավագույնը, որ կարող ես: Միգուցե մասնակի միավորներ ստանաս բավականին թերի պատասխանի համար. անշուշտ, ոչ մի միավոր չես ստանա հարցը չփորձելու դեպքում: Ոչ միայն քննությունների ժամանակ, այլև պատերազմում, լեռնագնացության ժամանակ, սահել, լողալ կամ հեծանիվ վարել սովորելիս, կամ նույնիսկ սառը մատներով կոշտ օձիքն ամրացնելիս մարդիկ հաճախ անում են այն, ինչն անհնարին էր թվում մինչ այն անելը: Հրաշալի է, թե ինչ կարող ես անել, երբ պարտավոր ես:

Մենք, իրոք, կարող ենք վստահ լինել, որ կատարյալ մաքրաբարոյությունը, ինչպես կատարյալ ողորմածությունը, չի ստացվի զուտ մարդկային ջանքերով: Դուք պետք է Աստծուց օգնություն խնդրեք: Նույնիսկ երբ դուք դա արել եք, երկար ժամանակ ձեզ կարող է թվալ, որ ոչ մի օգնություն չի տրվում (կամ տրվում է ավելի քիչ, քան պետք է): Ուշադրություն մի՛ դարձրեք: Յուրաքանչյուր անհաջողությունից հետո ներողություն խնդրեք, նորից ոտքի կանգնեք և նորից փորձեք: Շատ հաճախ այն, ինչի համար Աստված մեզ օգնություն է տալիս, ոչ թե ինքը առաքինությունն է, այլ հենց միշտ նորից փորձելու ուժը: Որովհետև որքան էլ կարևոր լինի մաքրաբարոյությունը (կամ քաջությունը, ճշմարտությունը կամ որևէ այլ առաքինություն), այս պրոցեսը մարզում է մեր հոգու սովորությունները, որոնք է՛լ ավելի կարևոր են: Այն բուժում է մեր պատրանքները մեր մասին և սովորեցնում է մեզ հենվել Աստծո վրա: Մենք նախ սովորում ենք, որ չենք կարող վստահել ինքներս մեզ նույնիսկ մեր լավագույն պահերին, և, ի հակառակ դրան, որ պետք չէ հուսահատվել նույնիսկ ամենավատ պահերին, քանի որ մեր թերացումները ներված են: Միակ

ճակատագրական սխալը կատարելությունից պակաս որևէ բանով բավարարված լինելն է:

Երրորդ՝ մարդիկ հաճախ սխալ են հասկանում, թե հոգեբանությունը ինչ է սովորեցնում «ճնշված» ցանկությունների մասին: Այն մեզ սովորեցնում է, որ «ճնշված» սեքսը վտանգավոր է: Բայց «ճնշվածը» այստեղ տեխնիկական տերմին է. այն չի նշանակում «սանձած»՝ «հրաժարված» կամ «դիմադրված» իմաստով: Ճնշված ցանկությունը կամ միտքը այն միտքն է, որը մտել է ենթագիտակցության մեջ (սովորաբար շատ վաղ տարիքում) և այժմ կարող է մտքում դրսևորվել միայն քողարկված և անճանաչելի ձևով: Ճնշված սեռականությունը հիվանդին ընդհանրապես սեռականություն չի թվում: Երբ դեռահասը կամ չափահասը ձեռնամուխ է եղել ինչ-որ գիտակցված ցանկությանը դիմագրավելուն, նա գործ չունի ճնշված բանի հետ և ոչ էլ նման բան ստեղծելու նվազագույն վտանգի առջև է: Ընդհակառակը՝ նրանք, ովքեր լրջորեն փորձում են պահպանել մաքրաբարոյությունը, ավելի գիտակից են և շուտով շատ ավելին են իմանում սեփական սեռականության մասին, քան որևէ մեկը: Նրանք ճանաչում են իրենց ցանկությունները, ինչպես Վելինգթոնը ճանաչում էր Նապոլեոնին, կամ ինչպես Շերլոկ Հոլմսը ճանաչում էր Մորիարտիին. ինչպես առնետ բռնողը գիտի առնետների մասին կամ ջրմուղագործը՝ ծակ խողովակների մասին: Առաքինությունը, նույնիսկ փորձ արված առաքինությունը, լույս է բերում. ցանկասիրությունը մշուշ է առաջացնում:

Եւ վերջապես, թեև ես ստիպված էի երկար խոսել սեքսի մասին, ես ուզում եմ հնարավորինս հստակեցնել, որ քրիստոնեական բարոյականության կենտրոնն այստեղ չէ: Եթե որևէ մեկը կարծում է, որ քրիստոնյաները անմաքրաբարոյությունը համարում են մեծագույն արատը, նա միանգամայն սխալվում է: Մարմնի մեղքերը վատն են, բայց բոլոր մեղքերից ամենափոքրն են: Բոլոր վատթարագույն հաճույքները զուտ հոգևոր են՝ ուրիշներին սխալ հանելը, ուրիշներին հրահանգելը ու վերևից նայելը, ընդհանուր մթնոլորտը փչացնելը և ուրիշների հետևից խոսելը. իշխանության և ատելության հաճույքները: Որովհետև իմ ներսում կա երկու բան, որ մրցակցում են այն մարդկային անձնավորության դեմ, որը ես պետք է փորձեմ դառնալ: Նրանք են՝ Կենդանական ես-ը և Դիվային ես-ը: Դիվային ես-ը առավել վատն է: Ահա թե ինչու չոր, ինքնահավան գոռոզը, որը պարբերաբար գնում է եկեղեցի, կարող է շատ ավելի մոտ լինել դժոխքին, քան մարմնավաճառը: Բայց, իհարկե, ավելի լավ է չլինել դրանցից ոչ մեկը:

## 6. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին գլուխը հիմնականում բացասական էր: Ես քննարկեցի, թե ինչն է խեղված մարդու սեռական բնազդում, բայց շատ քիչ բան ասացի նրա ճիշտ վիճակի վերաբերյալ, այլ կերպ ասած՝ քրիստոնեական ամուսնության մասին: Երկու պատճառ կա, թե ինչու ես առանձնապես չեմ ուզում քննարկել ամուսնությունը: Առաջինն այն է, որ այս թեմայի վերաբերյալ քրիստոնեական վարդապետությունները չափացանց տհաճորեն են ընդունվում հանրության կողմից: Երկրորդն այն է, որ ես ինքս երբեք ամուսնացած չեմ եղել, և հետևաբար կարող եմ խոսել միայն դրսից: Բայց չնայած դրան, ես զգում եմ, որ դժվար թե իրավունք ունեմ այս թեմային չանդրադառնել, երբ քննարկում ենք քրիստոնեական բարոյագիտությունը:

Ամուսնության քրիստոնեական գաղափարը հիմնված է Քրիստոսի այն խոսքերի վրա, որ տղամարդն ու կինը պետք է դիտարկվեն որպես մեկ օրգանիզմ, քանի որ ժամանակակից անգլերենում հենց դա է նշանակում «մեկ մարմին» բառերը: Եւ քրիստոնյաները հավատում են, որ երբ Նա ասել էր դա, Նա ոչ թե ինչ-որ կարծիք էր հայտնում, այլ փաստում էր մի փաստ, ինչպես որ մեկը փաստում է, երբ ասում է, որ կողպեքն ու նրա բանալին մեկ մեխանիզմ են, կամ ջութակն ու աղեղը մեկ երաժշտական գործիք են: Մարդկային մեքենայի հնարողը մեզ ասում էր, որ դրա երկու կեսերը՝ արուն և էգը, ստեղծվել են զույգերով միավորվելու համար, ոչ միայն պարզապես սեռական առումով, այլ ամբողջովին: Ամուսնությունից դուրս սեռական հարաբերության հրեշավորությունն այն է, որ նրանք, ովքեր տրվում են դրան, փորձում են մեկուսացնել միության մի տեսակը (սեռականը) միության բոլոր մյուս տեսակներից, որոնք նախատեսված էին դրա հետ միատեղվելու և կազմելու ընդհանուր միություն: Քրիստոնեական վերաբերմունքը չի նշանակում, որ ինչ-որ վատ բան կա սեռական հաճույքի մեջ, ինչպես որ, որևէ վատ բան չկա ուտելու հաճույքի մեջ: Այն նշանակում է, որ դուք չպետք է մեկուսացնեք այդ հաճույքը և փորձեք այն ինքնուրույն ստանալ, ինչպես որ չպետք է փորձեք ստանալ համի հաճույքները առանց ուտելիքը կուլ տալու և մարսելու՝ այն ծամելով և դուրս թքելով:

Հետևաբար, քրիստոնեությունը սովորեցնում է, որ ամուսնությունը մինչև կյանքի վերջն է: Այստեղ, իհարկե, տարբերություններ կան տարբեր Եկեղեցիների միջև. որոշ Եկեղեցիներ ընդհանրապես չեն ընդունում ամուսնալուծությունը. ուրիշները դժկամորեն թույլատրում են այն շատ հատուկ դեպքերում: Շատ ցավալի է, որ քրիստոնյաները պետք է չհամաձայնվեն նման հարցի շուրջ. բայց սովորական աշխարհականի համար ուշադրության արժանին այն է, որ եկեղեցիները բոլորն էլ համաձայն են միմյանց հետ ամուսնության հարցում շատ ավելին, քան նրանցից որևէ մեկը համաձայն է արտաքին աշխարհի հետ: Ես նկատի ունեմ, որ նրանք բոլորն էլ ամուսնալուծությունը համարում են կենդանի մարմինը կտրելու պես մի բան՝ որպես վիրահատական գործողություն: Նրանց մի մասը կարծում է, որ այդ գործողությունն այնքան սարսափելի է, որ այն ընդհանրապես չի կարելի անել.

մյուսները այն ընդունում են որպես ծայրահեղ միջոց ծայրահեղ դեպքերում: Նրանք բոլորն էլ համաձայն են, որ այն ավելի շատ նման է երկու ոտքդ կտրելուն, քան բիզնեսային գործընկերությունը լուծարելուն կամ նույնիսկ վաշտը լքելուն: Այն, ինչի հետ նրանք բոլորը համաձայն չեն, ժամանակակից տեսակետն է, որ դա սոսկ զուգընկերների փոփոխություն է, որը արվում է, երբ մարդիկ զգում են, որ այլևս սիրահարված չեն միմյանց, կամ երբ նրանցից որևէ մեկը սիրահարվում է մեկ ուրիշին:

Մինչ այս ժամանակակից տեսակետի կապը մաքրաբարոյության հետ քննարկելը, մենք չպետք է մոռանանք քննարկել նրա կապը մեկ այլ առաքինության՝ արդարության հետ: Արդարությունը, ինչպես նշել եմ առաջ, ներառում է խոստումների կատարումը: Հիմա՝ յուրաքանչյուր մարդ, որը ամուսնացել է եկեղեցում, հրապարակային և հանդիսավոր խոստում է տվել մինչև մահ մնալ իր զուգընկերոջ հետ: Այդ խոստումը պահելու պարտականությունը հատուկ կապ չունի սեռական բարոյականության հետ. այն նույն դիրքում է, ինչ ցանկացած այլ խոստում: Եթե, ինչպես մեզ միշտ ասում են ժամանակակից մարդիկ, սեռական բնազդը բնավ չի տարբերվում մեր բոլոր բնազդներից, ապա նրան պետք է վերաբերվել այնպես, ինչպես մեր մյուս բնազդներին. և քանի որ նրանց ցանկասիրությունը վերահսկվում է մեր խոստումներով, այդպես էլ պետք է լինի սեռական բնազդի դեպքում: Եթե այն, ինչպես ես եմ կարծում, նման չէ մեր մյուս բնազնդերին, այլ հիվանդորեն բորբոքված է, ապա պետք է հատկապես զգույշ լինել, որ այն մեզ անազնվության չտանի:

Սրան ինչ-որ մեկը կարող է պատասխանել, որ ինքը եկեղեցում տրված խոստումը համարել է զուտ արարողական կարգ և երբեք մտադիր չի եղել պահել այն: Ուրեմն ո՞ւմ էր նա փորձում խաբել, երբ նա կատարում էր այդ խոստումը: Աստծո՞ւն: Դա շատ անխոհեմ էր: Ինքն իրե՞ն: Դա առավել խոհեմ չէ: Հարսի՞ն կամ փեսայի՞ն կամ խնամիների՞ն: Այդ դեպքում դա խաբեություն էր: Ամենից հաճախ, կարծում եմ, զույգը (կամ նրանցից մեկը) հույս ուներ խաբել հանրությանը: Նրանք ուզում էին հարգանքը, որը կապված է ամուսնության հետ՝ առանց դրա գինը վճարելու մտադրության. այսինքն՝ խարդախներ էին և խարդախություն արեցին: Եթե նրանք դեռ ինքնագոհ խարդախներ են, ապա ես ոչինչ չունեմ ասելու նրանց. ո՞վ կհորդորի մաքրաբարոյության բարձր և ծանր պարտականությունը այն մարդկանց, որոնք դեռ չեն ցանկանում նույնիսկ ազնիվ լինել: Եթե նրանք հիմա ուշքի են եկել և ուզում են այսուհետև ազնիվ լինել, իրար արդեն իսկ տրված խոստումը կաշկանդում է նրանց: Եւ սա, ինչպես տեսնում եք, արդեն հայտնվում է ոչ թե մաքրաբարոյության, այլ արդարության վերնագրի ներքո: Եթե մարդիկ չեն հավատում մշտական ամուսնությանը, թերևս ավելի լավ է, որ նրանք միասին ապրեն չամուսնացած, քան երդումներ տան, որոնք չեն պատրաստվում պահել: Ճիշտ է, առանց ամուսնության միասին ապրելով նրանք մեղանչած կլինեն (քրիստոնեական տեսանկյունից) պոռնկության մեղքով: Բայց մի թերությունը չի շտկվում մեկ ուրիշը ավելացնելով. անմաքրաբարոյությունը ավելի լավը չի դառնում, երբ նրան ավելացնում են սուտ խոստումը:

Գաղափարը, որ «սիրահարված լինելը» ամուսնացած մնալու միակ պատճառն է, պայմանագրի և խոստումի համար ամուսնության մեջ որևէ տեղ չի թողնում: Եթե սերն ամբողջն է, ապա խոստումը ոչինչ չի կարող ավելացնել. իսկ եթե այն ոչինչ չի ավելացնում, ապա այն չպետք է արվի: Հետաքրքրականն այն է, որ սիրահարներն իրենք, երբ նրանք իսկապես սիրահարված են իրար, դա ավելի լավ գիտեն, քան նրանք, ովքեր խոսում են սիրո մասին: Ինչպես նշել է Չեստերթոնը, նրանք, ովքեր սիրահարված են, բնական հակում ունեն իրենք իրենց խոստումներով կապելու: Ամբողջ աշխարհում սիրո երգերը լի են հավերժական նվիրվածության երդումներով: Քրիստոնեական օրենքը սիրո կրքին չի պարտադրում ինչ-որ բան, որը օտար է նրա բնությանը. այն պահանջում է, որ սիրահարները լրջորեն վերաբերվեն մի բանի, որն իրենց կիրքը դրդում է նրանց անել:

Եւ, իհարկե, այն խոստումը, որը տրվել է, երբ ես սիրահարված եմ, և քանի որ ես սիրահարված եմ՝ հավատարիմ լինել սիրելիին, քանի դեռ ապրում եմ, պարտավորեցնում է լինել հավատարիմ, նույնիսկ եթե ես դադարում եմ սիրահարված լինելուց: Խոստումը պետք է լինի այն բաների վերաբերյալ, որոնք ես կարող եմ անել՝ արարքների վերաբերյալ. ոչ ոք չի կարող խոստանալ շարունակական զգալ որոշակի կերպ: Միևնույն հեշտությամբ նա կարող է խոստանալ, որ երբեք գլխացավ չի ունենա կամ միշտ սոված կզգա: Սակայն, միգուցե հարց առաջանա՝ ո՞րն է իմաստը միասին պահելու երկու մարդու, եթե նրանք այլևս սիրահարված չեն: Կան մի քանի հիմնավոր, սոցիալական պատճառներ. ապահովել նրանց երեխաների համար օջախ, պաշտպանել կնոջը (ով հավանաբար զոհաբերել կամ վնասել է իր կարիերան՝ ամուսնանալով) լքվելուց, երբ տղամարդը հոգնում է նրանից: Բայց կա և-ս մեկ պատճառ, որի վերաբերյալ ես կասկած չունեմ, թեև մի փոքր դժվարանում եմ այն բացատրել:

Դժվարանում եմ, քանի որ շատ մարդկանց հնարավոր չէ բերել այն գիտակցությանը, որ երբ Բ-ն ավելի լավն է, քան Գ-ն, Ա-ն կարող է նույնիսկ ավելի լավը լինել, քան Բ-ն: Նրանք սիրում են մտածել լավի և վատի մասին, ոչ թե լավի, ավելի լավի և լավագույնի, կամ վատի, ավելի վատի և վատթարագույնի: Նրանք ուզում են իմանալ՝ հայրենասիրությունը լա՞վ բան եք համարում. եթե պատասխանեք, որ դա, իհարկե, շատ ավելի լավ է, քան անհատական եսասիրությունը, բայց որ այն զիջում է համամարդկային բարեսիրությանը և միշտ պետք է իր տեղը զիջի համամարդկային բարեսիրությանը, երբ երկուսը հակասում են, նրանք կարծում են, որ դուք հարցից խուսափում եք: Նրանք հարցնում են, թե ինչ եք մտածում մենամարտի մասին: Եթե դուք պատասխանում եք, որ ավելի լավ է ներել մարդուն, քան մենամարտել նրա հետ, բայց նույնիսկ մենամարտը կարող է ավելի լավ լինել, քան ցմահ թշնամությունը, որը դրսևորվում է մյուս մարդու «տակը փորելու» գաղտնի ջանքերով, նրանք հեռանում են՝ բողոքելով, որ դուք նրանց ուղիղ պատասխան չեք տալիս: Հուսով եմ, որ ոչ ոք այս սխալը թույլ չի տա այն բանի վերաբերյալ, որը հիմա ես ասելու եմ:

Այն, ինչ մենք անվանում ենք «սիրահարված լինել», փառահեղ վիճակ է և, մի քանի առումներով, լավ է մեզ համար: Այն օգնում է մեզ դառնալ առատաձեռն և խիզախ, այն բացում է մեր աչքերը ոչ միայն սիրելիի գեղեցկությանը, այլև

ամբողջ գեղեցկությանը, և այն հպատակեցնում է (հատկապես սկզբում) մեր զուտ կենդանական սեռականությունը. այդ առումով սերը տոփանքի մեծագույն նվաճողն է: Ոչ մի բանական մարդ չէր հերքի, որ սիրահարված լինելը շատ ավելի լավ է, քան սովորական զգայականությունը կամ սառը եսակենտրոնությունը: Բայց, ինչպես ես առաջ ասացի, «ամենավտանգավոր բանը, որ կարող ես անել, դա վերցնել քո սեփական բնույթի որևէ իմպուլս և դարձնել այն այն բանը, որին պետք է ամեն գնով հետևես»: Սիրահարված լինելը լավ բան է, բայց այն լավագույնը չէ: Նրանից վար շատ բաներ կան, բայց նրանից վեր էլ կան: Դուք չեք կարող այն դարձնել ամբողջ կյանքի հիմքը: Այն վեհ զգացմունք է, բայց միայն զգացմունք է: Հիմա՝ ոչ մի զգացմունքից չի կարելի ակնկալել, որ այն կտևի իր ողջ ուժգնությամբ, կամ նույնիսկ, որ այն կարող է հարատևել: Գիտելիքը կարող է հարատևել, սկզբունքները կարող են հարատևել, սովորությունները կարող են հարատևել. բայց զգացմունքները գալիս են ու գնում են: Եւ իրականում ինչ էլ ասեն մարդիկ, «սիրահարված» կոչվող վիճակը սովորաբար հավերժ չի տևում: Եթե հին հեքիաթային վերջաբանը՝ «նրանք ապրեցին երջանիկ մինչև կյանքի վերջը», նշանակեր «նրանք զգացել են հաջորդ հիսուն տարին ճիշտ այնպես, ինչպես զգում էին ամուսնանալուց մեկ օր առաջ», ապա այն կասեր մի բան, ինչը հավանաբար երբեք չի եղել և չի կարող լինել ճիշտ, և շատ անցանկալի կլիներ, եթե այն լիներ: Ո՞վ կարող էր նույնիսկ հինգ տարի ապրել այդ ոգևորության մեջ: Ի՞նչ կլիներ ձեր աշխատանքը, ձեր ախորժակը, ձեր քունը, ձեր ընկերությունները: Բայց, իհարկե, «սիրահարված» լինելուց դադարելը պարտադիր չէ, որ նշանակում է սիրելուց դադարել: Սերը այս երկրորդ իմաստով՝ ի տարբերության «սիրահարված լինելուն», սոսկ զգացմունք չէ: Դա խոր միասնություն է, որը պահպանվում է կամքով և միտումնավոր ամրացվում է սովորությամբ՝ ամրապնդված (քրիստոնեական ամուսնություններում) այն շնորհով, որը երկու զուգընկերները խնդրում և ստանում են Աստծուց: Նրանք կարող են այս սերն ունենալ միմյանց հանդեպ նույնիսկ այն պահերին, երբ նրանք իրար դուր չեն գալիս. ինչպես դու սիրում ես ինքդ քեզ, նույնիսկ երբ ինքդ քեզ դուր չես գալիս: Նրանք կարող են պահպանել այս սերը նույնիսկ այն ժամանակ, երբ յուրաքանչյուրը հեշտությամբ, եթե իրեն թույլ տար, «սիրահարված» կլիներ մեկ ուրիշին: «Սիրահարված լինելը» նախ մղեց նրանց խոստանալ հավատարմություն. այս ավելի հանգիստ սերը նրանց հնարավորություն է տալիս կատարել այդ խոստումը: Հենց այս սիրով է աշխատում ամուսնության շարժիչը. սիրահարված լինելն այն պայթյունն էր, որը բռնկեց այն:

Եթե դուք ինձ հետ համաձայն չեք, իհարկե, կասեք՝ նա ոչինչ չգիտի, նա ամուսնացած չէ: Հնարավոր է, որ դուք ճիշտ եք: Բայց նախքան դա ասելը, միանգամայն համոզվեք, որ դուք ինձ դատում եք ըստ նրա, ինչը որ իրականում գիտեք ձեր սեփական փորձից և ձեր ընկերների կյանքից, և ոչ թե վեպերից և ֆիլմերից ստացված գաղափարներից: Դա անելն այնքան էլ հեշտ չէ, որքան մարդիկ կարծում են: Մեր կյանքի փորձը ամբողջովին գունավորված է գրքերով, պիեսներով և կինոներով, և մեզանից համբերություն և հմտություն է պահանջվում առանձնացնելու այն բաները, որոնք մենք իսկապես սովորել ենք կյանքից:

Մարդիկ գրքերից ստանում են այն միտքը, որ եթե դուք ամուսնացել եք ճիշտ մարդու հետ, կարող եք ակնկալել, որ հավերժ «սիրահարված եք» լինելու: Որպես հետևանք, երբ նրանք տեսնում են, որ այդպես չի լինում, նրանք կարծում են, որ սա ապացուցում է, որ իրենք սխալվել են և իրավունք ունեն փոփոխության՝ չգիտակցելով, որ այդ փոփոխությունից հետո ևս թրթռանքը կհեռանա նոր սիրուց, ինչպես որ այն հեռացել էր նախորդից: Կյանքի այս ոլորտում, ինչպես ամենուրեք, թրթռանքները գալիս են սկզբում և չեն հարատևում: Այն թրթռանքը, որը տղան ունենում է, երբ նա առաջին անգամ երազում է ինքնաթիռ վարել, չի շարունակվի, երբ նա մտնի ծառայության Ռազմաօդային Ուժերում և իսկապես սովորի վարել: Այն թրթռանքը, որը դուք զգում եք առաջին անգամ տեսնելով ինչ-որ սքանչելի վայր, անհետանում է, երբ արդեն գնում եք այնտեղ ապրելու: Արդյո՞ք սա նշանակում է, որ ավելի լավ կլինի չսովորել ինքնաթիռ վարել և չապրել գեղեցիկ վայրում: Ամենևին: Երկու դեպքում էլ, եթե դուք գնաք այդ ճանապարհով, ապա այդ առաջին թրթռանքի մարումը կփոխարինվի ավելի հանգիստ և տեւական հետաքրքրության տեսակով: Ավելին՝ (և ես դժվարանում եմ բառեր գտնել ձեզ ասելու, թե որքան կարևոր եմ սա համարում) հենց այն մարդիկ են, որոնք պատրաստ են ընդունել թրթիռի մարումը և հանդարտորեն ընդունել այդ ավելի հանգիստ հետաքրքրությունը, որոնք, ամենայն հավանականությամբ, հետո հանդիպելու են նոր թրթիռների միանգամայն այլ տեղերում: Մարդը, որը սովորել է ինքնաթիռ վարել և դառնալ լավ օդաչու, հանկարծ կբացահայտի երաժշտությունը. այն մարդը, որը բնակություն է հաստատել գեղեցիկ վայրում, կբացահայտի այգեգործությունը:

Սա, կարծում եմ, մի փոքր մասն է այն բանի, որ նկատի ուներ Քրիստոսը, երբ ասել էր, որ մի բան մինչև չմեռնի, չի կարող իսկապես ապրել: Անիմաստ է փորձել որևէ թրթիռ հավերժորեն պահպանել. դա ամենավատ բանն է, որ կարող եք անել: Բաց թողեք թրթիռը, թողեք այն մարի, և այն կփոխակերպվի ավելի հանգիստ հետաքրքրության և երջանկության, և դուք կտեսնեք, որ դուք անընդհատ ապրում եք նոր թրթիռների աշխարհում: Բայց եթե որոշեք թրթիռները դարձնել ձեր սովորական կերակուրը և փորձեք դրանք արհեստականորեն երկարացնել, դրանք բոլորն էլ ավելի ու ավելի կթուլանան, և ավելի ու ավելի քիչ կլինեն, և դուք ամբողջ կյանքում կլինեք ձանձրացած և հիասթափված ծեր մարդ: Քանի որ այդքան քչերն են սա հասկանում, հենց այս պատճառով է, որ հանդիպում ենք շատ միջին տարիքի տղամարդկանց և կանանց, որոնք փնթփնթում են իրենց կորցրած երիտասարդություն մասին հենց այն տարիքում, երբ պիտի նոր հորիզոններ հայտնվեին և նոր դռներ բացվեին նրանց շուրջը: Շատ ավելի հաճելի է լողալ սովորելը, քան անվերջ (և անհույս) փորձել վերադարձնել այն զգացողությունը, որ ունեիր, երբ առաջին անգամ ջրի մեջ չափչփում էիր փոքրիկ տղայի պես:

Մեկ այլ հասկացություն, որը մենք ստանում ենք վեպերից և պիեսներից, այն է, որ «սիրահարվելը» բավականին անդիմադրելի մի բան է. մի բան, որը պարզապես պատահում է մեկի հետ, ինչպես կարմրուկը: Եւ քանի որ նրանք հավատում են դրան, որոշ ամուսնացածներ ձեռքը թափ են տալիս և տեղի են տալիս, երբ գայթակղվում են ինչ-որ նոր ծանոթությամբ: Բայց ես հակված եմ կարծելու, որ այսպիսի անդիմադրելի կրքերը իրական կյանքում շատ ավելի

հազվադեպ են պատահում, քան գրքերում. համենայն դեպս, երբ մարդը մեծ տարիքի է: Երբ մենք հանդիպում ենք գեղեցիկ, խելացի և համակրելի մեկին, իհարկե, մենք պետք է, ինչ-որ իմաստով, հիանանք և սիրենք այս լավ հատկությունները: Բայց արդյո՞ք մեր ընտրությունը չէ, թե այս սերը կվերածվի նրան, ինչ մենք անվանում ենք «սիրահարվածություն»: Անկասկած, եթե մեր միտքը լեցուն է վեպերով, պիեսներով և սենտիմենտալ երգերով, և մեր մարմինը՝ ալկոհոլով, մենք մեր զգացած ցանկացած սեր կվերածենք այդ տեսակի սիրո. այնպես, ինչպես  եթե անվակոս լինի ձեր ճանապարհին, ապա ամբողջ անձրևաջուրը կլցվի այդ փոսի մեջ, կամ եթե կապույտ ակնոցներ կրենք, այն ամենը, ինչ տեսնում ենք կդառնա կապույտ: Բայց դա լինելու է մեր սեփական մեղքը:

Նախքան ամուսնալուծության հարցը մի կողմ դնելը, ես կցանկանայի առանձնացնել երկու բան, որոնց շատ հաճախ են իրար հետ շփոթում: Դրանցից մեկը ամուսնության քրիստոնեական գաղափարն է. մյուսը բոլորովին այլ հարց է՝ մինչև ո՞ւր պետք է քրիստոնյաները, եթե նրանք ընտրողներ կամ պատգամավորներ են, փորձեն ամուսնության վերաբերյալ իրենց տեսակետները պարտադրել համայնքի մնացած անդամներին՝ մարմնավորելով դրանք ամուսնալուծության օրենքների մեջ: Ծատերը կարծես թե կարծում են, որ եթե դուք ինքներդ քրիստոնյա եք, ապա պետք է փորձեք դժվարացնել ամուսնալուծությունը բոլորի համար: Ես այդպես չեմ մտածում: Համենայն դեպս ես գիտեմ, որ ես շատ կզայրանայի, եթե մահմեդականները փորձեին մնացածներիս արգելել գինի խմել: Իմ սեփական տեսակետն այն է, որ եկեղեցիները պետք է անկեղծորեն ընդունեն, որ բրիտանացիների մեծամասնությունը քրիստոնյա չէ, և հետևաբար, չի կարելի ակնկալել, որ նրանք ապրեն քրիստոնեական կյանքով: Պետք է լինի երկու տարբեր տեսակի ամուսնություն. մեկը պետության կողմից կառավարվող՝ բոլոր քաղաքացիների վրա կիրառվող կանոններով, մյուսը Եկեղեցու կողմից կառավարվող՝ իր անդամների վրա կիրառվող հատուկ կանոններով: Տարբերությունը պետք է լինի բավականին հստակ, որպեսզի ցանկացած մարդ իմանա, թե որ զույգերն են ամուսնացած քրիստոնեական իմաստով, և որոնք ոչ:

Այսքանը հարատև ամուսնության մասին՝ ըստ քրիստոնեական վարդապետության: Եւս  մեկ բան, նույնիսկ ավելի քիչ հանրայնություն վայելող, դեռ մնում է քննարկել: Քրիստոնյա կանայք խոստանում են հնազանդվել իրենց ամուսիններին: Քրիստոնեական ամուսնության մեջ տղամարդը համարվում է «գլուխը»: Այստեղ ակնհայտորեն ծագում է երկու հարց. (1) Ինչո՞ւ պետք է ընդհանրապես լինի գլուխ, ինչո՞ւ ոչ հավասարություն: (2) Ինչո՞ւ պետք է դա լինի տղամարդը:

(1) Գլխի կարիքը բխում է այն գաղափարից, որ ամուսնությունը հարատև է: Իհարկե, քանի դեռ ամուսինն ու կինը համաձայն են ամեն ինչի շուրջ, գլխի կարիք չկա. և մենք կարող ենք հուսալ, որ դա կլինի սովորական իրադրությունը քրիստոնեական ամուսնության մեջ: Բայց երբ կա իրական տարաձայնություն, ի՞նչ պետք է լինի: Խոսել դրա մասին, իհարկե. բայց ես ենթադրում եմ, որ նրանք դա արել են և այդպես էլ համաձայնության չեն եկել: Ի՞նչ են անելու հետո: Նրանք չեն կարող ձայների մեծամասնությամբ որոշել, քանի որ երկու հոգանոց

խորհրդում մեծամասնություն չկա: Անշուշտ, կա ընդամենը երկու տարբերակ. կա՛մ նրանք պետք է բաժանվեն և գնան իրենց առանձին ճանապարհով, կա՛մ նրանցից մեկը պետք է ունենա որոշիչ ձայն: Եթե ամուսնությունը հարատև է, ապա անդամներից մեկը՝ որպես վերջին միջոց, պետք է ունենա ընտանեկան քաղաքականությունը որոշելու իրավասություն: Չի կարելի ունենալ մշտական միավորում առանց սահմանադրության:

(2) Եթե պետք է գլուխ լինի, ինչո՞ւ պետք է դա լինի տղամարդը: Նախևառաջ, կա՞ շատ լուրջ ցանկություն, որ դա լինի կինը: Ինչպես ես ասացի, ես ինքս ամուսնացած չեմ, բայց որքան տեսնում եմ, նույնիսկ այն կինը, որը ցանկանում է լինել իր տան գլուխը, սովորաբար հավանություն չի տալիս նույնանման իրադրությանը հարևանի մոտ: Նա շատ հավանական է, որ ասի «Խե՜ղճ պարոն X: Ինչու՞ է նա թույլ տալիս այդ ահավոր կնոջը այդպես ղեկավարել իրեն, ուղղակի չեմ կարող պատկերացնել»: Չեմ կարծում, որ նա նույնիսկ շոյված է զգում իրեն, եթե որևէ մեկը հիշատակում է իր իսկ «գլխության» փաստը: Ինչ-որ անբնական բան պետք է լինի ամուսինների նկատմամբ կանանց իշխանության մեջ, քանի որ կանայք իրենք կիսով չափ ամաչում են դրանից և արհամարհում են այն ամուսիններին, ում ղեկավարում են: Բայց կա նաև մեկ այլ պատճառ. և այստեղ ես բավականին անկեղծ եմ խոսում որպես ամուրի, որովհետև դա պատճառ է, որ կարելի է դրսից ավելի լավ տեսնել, քան ներսից: Ընտանիքի հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, ինչը կարելի է անվանել նրա արտաքին քաղաքականությունը, պետք է, որպես վերջին միջոց, կախված լինի տղամարդուց, քանի որ նա միշտ պետք է լինի, և սովորաբար շատ ավելի արդարացի է կողմնակի մարդկանց հանդեպ: Կինը առաջին հերթին պայքարում է սեփական երեխաների և ամուսնու համար՝ ընդդեմ մնացած աշխարհի: Բնականաբար, և ինչ-որ առումով, գրեթե արդարացիորեն, նրա համար նրանց շահերը գերակայություն ունեն մնացած բոլոր շահերի հանդեպ: Նա նրանց շահերի հատուկ հավատարմատարն է: Ամուսնու գործառույթն այն է, որպեսզի վերահսկի, որ նրա այս բնական նախապատվությունը իր գլուխը չբարձրացնի: Վերջին խոսքը նրանն է, որպեսզի նա կարողանա ուրիշ մարդկանց պաշտպանել իր կնոջ ընտանեկան սաստիկ հայրենասիրությունից: Եթե որևէ մեկը կասկածում է դա, թույլ տվեք մի պարզ հարց տալ: Եթե ձեր շունը կծել է հարևանի երեխային, կամ եթե ձեր երեխան վնասել է հարևանի շանը, դուք ավելի շուտ ո՞ւմ հետ կգերադասեիք գործ ունենալ՝ այդ տան տանտիրո՞ջ, թե՞ տանտիրուհու: Կամ եթե դուք ամուսնացած կին եք, թույլ տվեք ձեզ այս հարցը տալ: Ինչքան էլ դուք հիանաք ձեր ամուսնով, չէ՞իք ասի, որ նրա գլխավոր թերությունն այն է, որ նա հակված չէ պաշտպանել իր և ձեր իրավունքները ընդդեմ հարևանների այնքան եռանդորեն, որքան դուք կուզեիք: Չափազանց Զիջող չէ՞:

# 7. ՆԵՐՈՒՄ

Նախորդ գլխում ես ասացի, որ մաքրաբարոյությունը քրիստոնեական առաքինություններից ամենաքիչ հանրայնություն վայելողն է: Բայց ես վստահ չեմ, որ ես ճիշտ էի: Կարծում եմ, որ այն մեկը, որի մասին այսօր խոսելու եմ, նույնիսկ նվազ հանրայնություն է վայելում: Խոսքս քրիստոնեական կանոնի մասին է՝ «Սիրի՛ր մերձավորիդ քո անձի պես»: Քանի որ քրիստոնեական բարոյականության մեջ «քո մերձավորը» ներառում է «քո թշնամուն», մենք հայտնվում ենք մեր թշնամիներին ներելու այս սարսափելի պարտականության առջև:

Բոլորն ասում են, որ ներելը գեղեցիկ գաղափար է, քանի դեռ նրանք որևէ բան չունեն ներելու, ինչպես մենք ունեինք պատերազմի ժամանակ: Իսկ հետո, նույնիսկ այդ թեմայի հիշատակումը առաջացնում է զայրույթի պոռթկումներ: Խնդիրն այն չէ, որ մարդիկ կարծում են, որ այն չափազանց վեհ և դժվար առաքինություն է, այլ այն, որ նրանք համարում են այն ատելի և արհամարհելի: «Նման խոսակցությունները նրանց մոտ սրտխառնոց են առաջացնում»,- ասում են նրանք: Եւ ձեզանից շատերն արդեն ուզում են հարցնել ինձ. «Ինձ հետաքրքիր է, ինչպե՞ս Ձեզ կզգայիք Գեստապոյին ներելու հարցում, եթե լեհ կամ հրեա լինեիք»:

Ինձ ևս: Շատ: Ճիշտ այնպես, ինչպես երբ քրիստոնեությունն ասում է ինձ, որ ես չպետք է ուրանամ իմ կրոնը նույնիսկ խոշտանգահար մահից փրկվելու համար, ինձ հետաքրքիր է, թե ինչ կանեի, երբ բանը հասներ դրան: Ես չեմ փորձում այս գրքում ձեզ ասել, թե ինչ կարող էի անել. ես շատ քիչ բան կարող էի անել, ես ասում եմ ձեզ, թե ինչ է քրիստոնեությունը: Ես չեմ հորինել այն: Եւ այնտեղ, հենց մեջտեղում, ես տեսնում եմ. «Նե՛ր իր մեզ մեր մեղքերը, ինչպես մենք ենք ներում նրանց, ովքեր մեղանչում են մեր դեմ»: Չկա նվազագույն ակնարկ, որ մեզ ներում է առաջարկվում որևէ այլ պայմաններով: Շատ հստակ արտահայտված է, որ եթե մենք չներենք, չենք ներվի: Երկրորդ տարբերակ չկա: Ի՞նչ պետք է անենք:

Քանի որ, ամեն դեպքում դա բավականին դժվար է լինելու, ես կարծում եմ, որ երկու բան կա, որ մենք կարող ենք անել, որպեսզի հեշտացնենք այն: Երբ սկսում եք սովորել մաթեմատիկան, չեք սկսում դիֆերենցիալ հաշվից. սկսում եք պարզ թվաբանությունից: Նույն կերպ, եթե մենք իսկապես ուզում ենք (բայց ամեն ինչ կախված է իսկապես ուզելուց) սովորել, թե ինչպես ներել, գուցե ավելի լավ է սկսենք ավելի հեշտ բանից, քան Գեստապոյից: Կարելի է սկսել ներել ամուսնուն կամ կնոջը, ծնողներին կամ երեխաներին կամ ձեզ ծանոթ ենթասպային այն բանի համար, որ նրանք արել կամ ասել են վերջին շաբաթվա ընթացքում: Դա հավանաբար դեռ մեզ զբաղված կպահի: Եւ երկրորդը՝ մենք կարող ենք փորձել հասկանալ, թե ինչ է նշանակում սիրել ձեր մերձավորին ինչպես ինքներդ ձեզ: Ես պետք է սիրեմ նրան այնպես, ինչպես սիրում եմ ինքս ինձ: Լավ՝ իսկ ինչպե՞ս եմ սիրում ես ինքս ինձ:

Այժմ երբ ես սկսում եմ մտածել դրա մասին, ես ինքս ինձ այդքան էլ դուր չեմ գալիս կամ ինքս իմ հանդեպ համակրանքի մեծ զգացում չունեմ, և նույնիսկ միշտ չէ, որ ես վայելում եմ իմ սեփական ներկայությունը: Այսպիսով, ըստ երևույթին, «սիրեք ձեր մերձավորին» չի նշանակում նրան «համակրել» կամ «գորովանք ունենալ» նրա հանդեպ: Ես պետք է դա առաջ գիտակցած լինեի, քանի որ, իհարկե, չես կարող համակրել մեկին ուղղակի փորձելով: Արդյո՞ք ես իմ մասին լավ կարծիք ունեմ, կարծո՞ւմ եմ, որ ես հիանալի անձնավորություն եմ: Ցավոք, երբեմն այո՛, դա այդպես է (և դրանք, անկասկած, իմ ամենավատ պահերն են), բայց դրա համար չէ, որ ես սիրում եմ ինքս ինձ: Իրականում ճիշտ հակառակն է. ինքս ինձ սիրելն է ինձ ստիպում ինքս ինձ լավը համարել, բայց ինքս ինձ լավը համարելը չէ պատճառը, որ ես սիրում եմ ինքս ինձ: Այնպես որ, սիրել իմ թշնամիներին, ըստ երևույթին, չի նշանակում նրանց լավը համարել: Սա մեծ թեթևացում է: Որովհետև շատերը պատկերացնում են, որ ներել ձեր թշնամիներին նշանակում է ձևացնել, որ նրանք իրականում այդքան էլ վատ մարդիկ չեն, երբ շատ պարզ է, որ նրանք հենց այդպիսին են: Եւս մի քայլ առաջ գնանք: Իմ ամենապարզատես պահերին ես ոչ միայն ինձ լավ մարդ չեմ համարում, այլ նաև գիտեմ, որ շատ զզվելի մեկն եմ: Ես կարող եմ սարսափով և նողկանքով նայել որոշ բաներին, որոնք արել եմ: Այսպիսով, ըստ երևույթին, ինձ թույլ է տրվում հակակրել կամ ատել որոշ բաներ, որ անում են իմ թշնամիները: Այժմ, երբ մտածում եմ դրա մասին, հիշում եմ, որ քրիստոնյա ուսուցիչները վաղուց ինձ ասում էին, որ ես պետք է ատեմ վատ մարդու արարքները, բայց չպետք է ատեմ վատ մարդուն. կամ, ինչպես նրանք էին ասում՝ ատել մեղքը, բայց ոչ մեղավորին:

Երկար ժամանակ ես կարծում էի, որ սա անհեթեթ տարբերակում է՝ մազաչափության հասնող. ինչպե՞ս կարող ես ատել մարդու արածը և չատել նրան: Բայց տարիներ անց ես եկա այն գիտակցության, որ կա մի մարդ, ում հետ ես վարվում էի այդպես իմ ամբողջ կյանքում, մասնավորպես՝ ես ինքս: Ինչքան էլ չսիրեի իմ վախկոտությունը, մեծամտությունը կամ ագահությունը, ես շարունակում էի սիրել ինքս ինձ: Եւ առանց չնչին իսկ դժվարության: Իրականում ես ատում էի այդ բոլորը, քանի որ ես սիրում էի մարդուն: Միայն այն պատճառով, որ ես սիրում էի ինքս ինձ, ես վշտանում էի, որ ես այն մարդն եմ, ով անում է այդ բաները: Հետևաբար, քրիստոնեությունը չի ցանկանում, որ մենք մեկ ատոմով նվազեցնենք ատելությունը, որը մենք զգում ենք դաժանության և դավաճանության հանդեպ: Մենք պետք է ատենք դրանց: Դրանց մասին մեր ասածներից ոչ մի բառ չասելու կարիք չկա: Բայց այն ուզում է, որ մենք ատենք դրանց այնպես, ինչպես մենք ատում ենք մեր մեջ եղած բաները. ափսոսանք, որ մարդը արել է նման բաներ և հուսալով, որ ինչ-որ կերպ հնարավոր է, որ ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ, նա կարող է բուժվել և դարձյալ մարդ դարձվել:

Իրական ստուգելու ձև հետևյալն է: Ենթադրենք, որ մեկը թերթում կարդում է ահավոր վայրագությունների մասին մի պատմություն: Այնուհետև ենթադրենք, որ ինչ-որ բան է տեղի ունենում, որը հուշում է, որ պատմությունը կարող է այնքան էլ ճիշտ չլինել, կամ այնքան էլ ահավոր չէ, որքան ենթադրվում էր: Արդյո՞ք մեր առաջին զգացումը կլինի՝ «Փառք Աստծո, նույնիսկ նրանք այդքան վատը չեն», թե՞ այն կլինի հիասթափության զգացում, և նույնիսկ

առաջին պատմությանը կառչելու ցանկություն՝ զուտ թշնամիներիդ վատագույն լույսի ներքո տեսնելու հաճույքի համար: Եթե դա երկրորդն է, ապա վախենում եմ, որ այն առաջին քայլն է այն ճանապարհի, որին եթե մինչև վերջ հետևենք, ապա այն մեզ դևեր կդարձնի: Ինչպես տեսնում եք, մարդը սկսում է ցանկանալ, որ սևը մի փոքր ավելի սև լինի: Եթե մենք այդ ցանկությանը թույլ տանք գլուխ բարձրացնել, հետագայում մենք կցանկանանք մոխրագույնը տեսնել որպես սև, իսկ հետո՝ սպիտակը տեսնել որպես սև: Եւ վերջում մենք կտեսնենք ամեն ինչ՝ Աստծուն և մեր ընկերներին և նաև ինքներս մեզ՝ որպես չար, և չենք կարողանա դա դադարեցնել. մենք հավերժ կմնանք ամբողջական ատելության տիեզերքում:

Հիմա եւս մի քայլ առաջ գնանք: Արդյո՞ք սիրել թշնամուն նշանակում է չպատժե՞լ նրան: Ոչ, որովհետև ինքս ինձ սիրելը չի նշանակում, որ ես չպետք է ինքս ինձ ենթարկեմ պատժի, նույնիսկ մահվան: Եթե մեկը մարդասպանություն է կատարել, ճիշտ քրիստոնեական արարքը կլինի հանձնվել ոստիկանությանը և կախաղան բարձրացվելը: Հետևաբար, իմ կարծիքով, միանգամայն արդար է, որ քրիստոնյա դատավորը մահապատժի դատապարտի մարդուն կամ քրիստոնյա զինվորը սպանի թշնամուն: Ես միշտ այդպես եմ մտածել՝ քրիստոնյա դառնալուց ի վեր և պատերազմից շատ առաջ, և հիմա էլ եմ այդպես կարծում՝ խաղաղության ժամանակ: Կարիք չկա մեջբերելու. «Մի՛ սպանիր»: Հունարեն երկու բառ կա՝ կանխամտածված մարդասպանությունը և սպանությունը: Եւ երբ Քրիստոսը մեջբերում է այդ պատվիրանը, նա օգտագործում է կանխամտածված մարդասպանությունը բոլոր երեք պատմություններում՝ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի ավետարաններում: Եւ ինձ ասել են, որ նույն տարբերությունը կա եբրայերենում: Բոլոր սպանությունները կանխամտածված սպանություններ չեն, ինչպես որ բոլոր սեռական հարաբերությունները դավաճանություններ չեն: Երբ զինվորներ եկան Սուրբ Հովհաննես Մկրտչի մոտ՝ հարցնելով, թե ինչ անել, նա չնչին ակնարկն անգամ չարեց, որ նրանք պետք է լքեն բանակը. ոչ էլ Քրիստոսը, երբ հանդիպեց հռոմեացի սերժանտ-մայորին, որին կոչում էին հարյուրապետ: Ասպետի գաղափարը՝ զինյալ քրիստոնյան՝ լծված բարի գործի նպատակին, քրիստոնեական վեհ գաղափարներից է: Պատերազմը սարսափելի բան է, և ես կարող եմ հարգել ազնիվ պացիֆիստին, թեև կարծում եմ, որ նա կատարելապես սխալվում է: Այն, ինչ ես չեմ կարող հասկանալ, դա այս կիսապացիֆիզմն է, որը դուք տեսնում եք մեր օրերում, որը մարդկանց տալիս է այն միտքը, որ թեև պետք է կռվել, բայց այն պետք է անել վատ զգալով և կարծես ամաչելով դրա համար: Հենց այդ զգացումն է, որ ծառայության մեջ գտնվող շատ հիանալի երիտասարդ քրիստոնյաներից խլում է մի բան, որի իրավունքը նրանք ունեն, մի բան, որը քաջության բնական ուղեկցորդն է, մասնավորապես՝ դրան ուղեկցող յուրահատուկ տեսակի ուրախությունը և լիասրտությունը:

Ինքս հաճախ եմ մտածել, թե ինչ կլիներ, եթե իմ ծառայության ժամանակ Առաջին համաշխարհային պատերազմում, ես և մի երիտասարդ գերմանացի միաժամանակ սպանեինք միմյանց և մահից մի պահ հետո հայտնվեինք միասին: Ես չեմ կարող պատկերացնել, որ մեզանից որևէ մեկը զգար որևէ ատելություն կամ նույնիսկ ամոթխածություն: Կարծում եմ, որ մենք կծիծաղեինք այդ առիթով:

Ես պատկերացնում եմ, որ ինչ-որ մեկը կասի. «Դե, եթե թույլ ենք տալիս դատապարտել թշնամու արարքները, պատժել նրան և սպանել, ի՞նչ տարբերություն կա քրիստոնեական բարոյականության և սովորական բարոյականության միջև»: Հսկայական տարբերություն: Հիշեք, մենք՝ քրիստոնյաներս, կարծում ենք, որ մարդը ապրում է հավերժ: Հետևաբար, իսկապես կարևորը հոգու կենտրոնական, ներքին մասի վրա այն փոքրիկ հետքերը կամ գալարներն են, որոնք հեռավոր ապագայում նրան վերածելու են երկնային կամ դժոխային արարածի: Անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք սպանել, բայց չպետք է ատենք և հաճույք ստանանք ատելուց: Անհրաժեշտության դեպքում մենք կարող ենք պատժել, բայց չպետք է հաճույք ստանանք դրանից: Այսինքն՝ մեր ներսում ինչ-որ բան՝ վիրավորվածության զգացումը, վրեժխնդրության զգացումը, ուղղակի պետք է սպանվի: Ես նկատի չունեմ, որ որևէ մեկը կարող է հենց այս պահին որոշել, որ նա այլևս դա չի զգա: Դա այդպես չի լինում: Ես նկատի ունեմ, որ ամեն անգամ, երբ այն գլուխ է բարձրացնում՝ օր օրի, տարեցտարի, ամբողջ կյանքում, մենք պետք է հարվածենք նրա գլխին: Սա ծանր աշխատանք է, բայց այն փորձելն անհնարին չէ: Նույնիսկ երբ մենք սպանում և պատժում ենք, մենք պետք է փորձենք զգալ թշնամու հանդեպ այնպես, ինչպես մենք զգում ենք ինքներս մեր հանդեպ. ցանկանալ, որ նա վատը չլիներ, և հուսալ, որ նա այս կամ այն աշխարհում կարող է բուժվել, իրականում՝ ցանկանալ նրա բարին: Աստվածաշնչում դա՛ է նշանակում նրան սիրելը. նրա լավը ցանկանալը, ոչ թե նրա հանդեպ համակրանք զգալը կամ ասելը, որ նա լավն է, երբ նա այդպիսին չէ:

Ես ընդունում եմ, որ սա նշանակում է սիրել մարդկանց, որոնք իրենց մեջ ոչ մի սիրելի բան չունեն: Սակայն արդյո՞ք մենք ինքներս ինչ-որ սիրելի բան ունենք մեր մեջ: Մենք սիրում ենք մեր անձը պարզապես այն պատճառով, որ այն մեր անձն է: Աստված նախատեսում է, որ մենք սիրենք բոլոր անձերը նույն ձևով և նույն պատճառով. սակայն նա նախօրոք մեզ տվել է այդ բանաձև մեր դեպքում, որպեսզի ցույց տա մեզ, թե այն ինչպես է իրագործվում: Այնուհետև մենք պետք է շարունակենք և կիրառենք այդ կանոնը բոլոր մյուս անձերի նկատմամբ: Թերևս ավելի հեշտ կլինի, եթե հիշենք, որ Նա այդպես է սիրում մեզ: Ոչ թե ինչ-որ գեղեցիկ, գրավիչ հատկությունների համար, որոնք մենք կարծում ենք, որ մենք ունենք, այլ պարզապես որովհետև մենք բաներ ենք, որոնք կոչվում են անձեր: Որովհետև իսկապես մեր մեջ սիրելու այլ բան չկա. մեզ նման արարածները, որոնք իրականում ատելությունից այնպիսի հաճույք են ստանում, որ հրաժարվելը նրանից նման է գարեջրից կամ ծխախոտից հրաժարվելուն:

## 8. ՄԵԾ ՄԵՂՔԸ

Այսօր ես խոսելու եմ քրիստոնեական բարոյականության այն մասի վերաբերյալ, որն ամենից կտրուկն է տարբերվում մնացած բոլոր բարոյականություններից: Կա մի արատ, որից ոչ մի մարդ աշխարհում զերծ չէ, որն աշխարհում ամեն մեկն ատում է, երբ տեսնում է այն ուրիշի մեջ, և որում հազիվ թե որևէ անձինք, բացի քրիստոնյաներից, երբևէ պատկերացնեն, որ իրենք մեղավոր են: Ես լսել եմ, որ մարդիկ խոստովանեն, որ իրենք դյուրագրգիռ են, կամ որ իրենք հեշտությամբ տարվում են աղջիկներով կամ խմիչքով, կամ նույնիսկ, որ վախկոտ են: Սակայն չեմ կարծում, որ երբևէ լսել եմ, որ որևէ մեկը, ով քրիստոնյա չէր, մեղադրեր ինքն իրեն այս արատն ունենալու մեջ: Եւ միևնույն ժամանակ, ես շատ հազվադեպ եմ հանդիպել որևէ մեկին, ով քրիստոնյա չէր, որ նվազագույն ողորմածությունը ցուցաբերեր դրա հանդեպ՝ ուրիշների մեջ: Չկա ոչ մի այլ թերություն, որը մարդուն դարձնում է ավելի տհաճ, և չկա ոչ մի այլ թերություն, որի մասին՝ մեր անձերում, մենք ավելի անգիտակից ենք: Եւ որքան շատ մենք ինքներս ունենք այն, այնքան ավելի շատ այն չենք սիրում ուրիշների մեջ:

Արատը, որի մասին ես խոսում եմ, Հպարտությունն է, կամ՝ Ինքնահավանությունը, և դրան հակառակ առաքինությունը քրիստոնեական բարոյականության մեջ կոչվում է Խոնարհություն: Երևի հիշում եք, երբ ես խոսում էի սեռական բարոյականության մասին, ես ձեզ զգուշացնում էի, որ քրիստոնեական բարքերի կենտրոնը այնտեղ չէ: Այսպիսով՝ հիմա մենք կենտրոնում ենք: Քրիստոնյա ուսուցիչների կարծիքով՝ մեծագույն արատը, մեծագույն չարիքը հպարտությունն է: Անմաքրաբարոյությունը, զայրույթը, ագահությունը, հարբեցողությունը և այդ ամենը պարզապես մոծակի խայթոցներ են Հպարտության համեմատ. Հպարտության պատճառով էր, որ սատանան դարձավ սատանա: Հպարտությունը տանում է դեպի ցանկացած այլ արատ. այն բացարձակ հակաաստվածային մտավիճակն է:

Սա ձեզ չափազանցվա՞ծ է թվում: Եթե այո, ապա մտածեք:
Քիչ առաջ ես մատնանշեցի, որ ինչքան հպարտ է մարդը, այնքան նա ատում է հպարտությունը ուրիշների մեջ: Իրականում, եթե ցանկանում եք պարզել, թե որքա՞ն հպարտ եք, ամենահեշտ ձևն է ինքներդ ձեզ հարցնել. «Որքա՞ն է ինձ տհաճություն պատճառում, երբ ուրիշներն ինձ կոպտում են, կամ հրաժարվում են ինձ ուշադրություն դարձնել, կամ իրենց քիթն են խոթում, կամ վերևից են խոսում ինձ հետ, կամ ինքն իրենց ցուցադրում են»: Բանն այն է, որ յուրաքանչյուրի հպարտությունը մրցակցության մեջ է մնացած բոլորի հպարտության հետ: Քանի որ ես էի ցանկանում հավաքույթում լինել ուշադրության կենտրոնը, դրա համար է որ այդքան զայրացած եմ, որ ուրիշն էր ուշադրության կենտրոնը: Երկուսը նույն փեշակից երբեք համաձայն չեն: Այժմ այն, ինչ պետք է հստակեցնենք, այն է, որ Հպարտությունը ըստ էության մրցակցային է՝ մրցակցային է իր բնույթով, մինչդեռ մյուս արատները մրցակցային են միայն, այսպես ասած, պատահաբար: Հպարտությունը հաճույք չի ստանում ինչ-որ բան ունենալուց, այլ սոսկ դրանից ավելին

ունենալուց, քան կողքի մարդը: Մենք ասում ենք, որ մարդիկ հպարտանում են, որ նրանք հարուստ են կամ խելացի են կամ բարետես են, բայց այդպես չէ: Նրանք հպարտանում են, որ ավելի հարուստ են, կամ ավելի խելացի են, կամ ավելի բարետես են, քան մյուսները: Եթե մնացած բոլորը դառնան հավասարապես հարուստ, խելացի կամ բարետես, հպարտանալու ոչինչ չէր լինի: Համեմատությունն է, որ քեզ հպարտացնում է՝ մնացածից վեր լինելու հաճույքը: Երբ մրցակցության տարրը անհետանում է, հպարտությունը նույնպես անհետանում է: Այդ իսկ պատճառով է, որ ես ասում եմ, որ Հպարտությունը ըստ էության մրցակցային է բոլորովին այլ կերպ, քան մյուս արատները: Սեռական բնազդը կարող է մրցակցության մեջ մղել երկու տղամարդու, եթե նրանք երկուսն էլ ցանկանում են նույն աղջկան: Բայց դա միայն պատահականությամբ է. նրանք կարող էին նույն հեշտությամբ ցանկանալ երկու տարբեր աղջիկների: Բայց հպարտ տղամարդը ձեզանից կխլի ձեր աղջկան, ոչ թե նրա համար, որ նա ուզում է նրան, այլ պարզապես ինքն իրեն ապացուցելու, որ նա ձեզանից ավելի լավ տղամարդ է: Ագահությունը կարող է մարդկանց մղել մրցակցության՝ սղության պատճառով. բայց հպարտ մարդը, նույնիսկ երբ նա ստացել է ավելին, քան կարող էր նույնիսկ ցանկանալ, կփորձի է՛լ ավելին ստանալ սոսկ իր իշխանությունը հաստատելու համար: Աշխարհի գրեթե բոլոր այն չարիքները, որոնք մարդիկ ագահության կամ եսասիրությանն են վերագրում, իրականում ավելի շատ հպարտության արդյունք են:

Օրինակ՝ դիտարկենք փողը: Ագահությունը, անշուշտ, կստիպի մարդուն փող ցանկանալ՝ հանուն ավելի լավ տան, ավելի լավ արձակուրդների, ավելի լավ ուտելու և խմելու: Բայց միայն մինչև ինչ-որ սահմանի: Ի՞նչն է ստիպում տարեկան 10,000 ֆունտ վաստակող մարդուն տարեկան 20,000 ֆունտ ցանկանալ: Ոչ ավելի շատ հաճույք ստանալու ագահությունը: 10,000 ֆունտը կտա այն բոլոր շքեղությունները, որոնք ցանկացած մարդ իրականում ի վիճակի է վայելելու: Հպարտությունն է. ուրիշ հարուստներից ավելի հարուստ լինելու ցանկությունը և (առավել եւս) իշխանության ցանկությունը: Որովհետև, իհարկե, իշխանությունն այն է, ինչն իրականում վայելում է Հպարտությունը. ոչ մի այլ բան հնարավորություն չի տալիս մարդուն իրեն այդքան գերազանց զգալ մյուսների հանդեպ, որքան նրանց խաղալիք զինվորների պես շարժելը: Ի՞նչն է ստիպում գեղեցիկ աղջկան թշվառություն տարածել, ուր նա գնում է՝ երկրպագուներ հավաքելով: Իհարկե, ոչ նրա սեռական բնազդը. այդ տեսակի աղջիկը սեռական առումով հաճախ սառն է: Հպարտությունն է: Ի՞նչն է ստիպում քաղաքական առաջնորդին կամ մի ամբողջ ժողովրդի անվերջ ու անվերջ պահանջել ավելին ու ավելին: Կրկին հպարտությունը: Հպարտությունն իր բնույթով մրցակցային է. դրա համար էլ այն շարունակվում է՝ առանց կանգ առնելու: Եթե ես հպարտ մարդ եմ, ուրեմն, քանի դեռ ամբողջ աշխարհում կա մի մարդ ինձնից ավելի հզոր, ավելի հարուստ կամ ավելի խելացի, ապա նա իմ մրցակիցն է և իմ թշնամին:

Քրիստոնյաները ճիշտ են. Հպարտությունն է, որ աշխարհի սկզբից ի վեր եղել է յուրաքանչյուր ազգի և յուրաքանչյուր ընտանիքի դժբախտության գլխավոր պատճառը: Այլ արատները երբեմն կարող են միավորել մարդկանց. դուք կարող եք գտնել հաճելի ընկերակցություն, կատակասիրություն և ընկերասիրություն

հարբած կամ անմաքրաբարո մարդկանց շրջապատում: Բայց հպարտությունը միշտ նշանակում է թշնամություն՝ այն հենց իսկ թշնամությունն է: Եւ ոչ միայն թշնամություն մարդու և մարդու միջև, այլև թշնամություն Աստծո հանդեպ:

Աստծո մեջ դու հանդիպում ես մի բանի, որն ամեն առումով անսահմանորեն գերազանց է քեզանից: Եթե դուք չեք ճանաչում Աստծուն որպես այդպիսին, և, հետևաբար, ինքներդ ձեզ համեմատականորեն որպես ոչինչ, դուք ընդհանրապես չեք ճանաչում Աստծուն: Քանի դեռ հպարտ ես, չես կարող ճանաչել Աստծուն: Հպարտ մարդը միշտ վերևից է նայում իրերին և մարդկանց. և, իհարկե, քանի դեռ նայում ես ներքև, չես կարող տեսնել մի բան, որը քեզնից վեր է:

Դա սարսափելի հարց է առաջացնում: Ինչպե՞ս է, որ որոշ մարդիկ, որոնք ակնհայտորեն թաղված են հպարտության մեջ, կարող են ասել, որ հավատում են Աստծուն և իրենք իրենց բավականին կրոնասեր թվալ: Ցավոք, կարծում եմ, որ դա նշանակում է, որ նրանք երկրպագում են երևակայական Աստծո: Նրանք տեսականորեն ընդունում են, որ իրենք ոչինչ են այս երևակայական Աստծո համեմատ, բայց իրականում միշտ պատկերացնում են, թե ինչպես է Նա հավանում իրենց և իրենց համարում շատ ավելի լավը, քան սովորական մարդկանց. այսինքն՝ նրանք վճարում են Նրան մի պեննիի երևակայական խոնարհություն՝ ստանալով դրա դիմաց մեկ ֆունտի հպարտություն իրենց կողքի մարդկանց նկատմամբ: Հավանաբար այս մարդկանց ի նկատի ուներ Քրիստոսը, երբ ասում էր, որ ոմանք կքարոզեն Իր մասին և դևեր կհանեն Իր անունով, որոնց, սակայն, աշխարհի վերջում ասվելու է, որ Նա երբեք չի ճանաչել նրանց: Եւ մեզանից յուրաքանչյուրը ցանկացած պահի կարող է հայտնվել մահվան այս թակարդում: Բարեբախտաբար, մենք ստուգելու ձև ունենք: Ամեն անգամ, երբ մենք տեսնում ենք, որ մեր կրոնական կյանքը մեզ զգացնել է տալիս, որ մենք լավն ենք, ավելին՝ որ մենք ավելի լավն ենք, քան մեկ ուրիշը, ես կարծում եմ, որ մենք կարող ենք վստահ լինել, որ մեզ վրա ներգործում է ոչ թե Աստված, այլ սատանան: Աստծո ներկայությունում լինելու իրական զգացումն այն է, որ դու կամ ընդհանրապես մոռանում ես քո մասին, կամ քեզ տեսնում ես որպես փոքր, կեղտոտ բան: Ավելի լավ է ընդհանրապես մոռանալ ինքդ քո մասին:

Սարսափելի բան է, որ բոլոր արատներից ամենավատը կարող է ներթափանցել հե՛նց մեր կրոնական կյանքի կենտրոնը: Բայց դուք կարող եք տեսնել, թե ինչու: Մյուս և նվազ վատ արատները գալիս են մեզ վրա ներգործող սատանայից՝ մեր կենդանական բնության միջոցով: Բայց այս մեկը ամենևին էլ չի գալիս մեր կենդանական բնության միջոցով: Այն գալիս է ուղիղ Դժոխքից: Այն զուտ հոգևոր է, հետևաբար այն շատ ավելի նուրբ և մահացու է: Նույն պատճառով, հպարտությունը հաճախ կարող է օգտագործվել ավելի պարզ արատները հաղթահարելու համար: Ուսուցիչները, իրականում, հաճախ են դիմում տղայի հպարտությանը կամ, ինչպես իրենք են անվանում՝ ինքնասիրությանը, որպեսզի ստիպեն նրան պարկեշտ վարք ունենալ. շատերն են հաղթահարել վախկոտությունը, ցանկասիրությունը կամ դյուրգրգռությունը՝ իրենց սովորեցնելով դրանք իրենց արժանապատվությունից ցածր դասել, այսինքն՝ հպարտությամբ: Սատանան ծիծաղում է. նա միանգամայն գոհ է տեսնել, որ

դուք դառնում եք մաքրաբարո, խիզախ և ինքներդ ձեզ տիրապետող, պայմանով, որ նա ձեր մեջ հաստատի Հպարտության դիկտատուրան, ճիշտ այնպես, ինչպես նա կբավարարվեր տեսնելով, որ ձեր ցրտուռուցքները բուժվում են, եթե իրեն թույլ տրվեր ձեզ դրա փոխարեն քաղցկեղ տալ: Քանզի Հպարտությունը հոգևոր քաղցկեղ է. այն խժռում է հնարավորությունն իսկ սիրո, գոհունակության կամ նույնիսկ ողջախոհության:

Նախքան այս թեման թողնելը, ես պետք է զգուշացնումներ անեմ որոշ հնարավոր թյուրիմացությունների վերաբերյալ.

(1) Գովաբանվելուց հաճույք ստանալը հպարտություն չէ: Երեխան, ում մեջքին թփթփացնում են դասը լավ սովորելու համար, կինը, ում գեղեցկությունը գովաբանում է իր սիրեցյալը, փրկված հոգին, որին Քրիստոսն ասում է. «Կեցցես», գոհ են և պետք է լինեն: Որովհետև այստեղ հաճույքը ոչ թե այն բանի մեջ է, թե ինչպիսին ես դու, այլ որ դու գոհացրել ես մեկին, ում ցանկացել ես (և ճշմարտացիորեն ես ցանկացել) գոհացնել: Խնդիրը առաջանում է այն ժամանակ, երբ «Ես նրան գոհացրել եմ, ամեն ինչ լավ է» մտածելուց հետո, սկսում ես մտածել՝ «Ի՜նչ լավ մարդ եմ, որ նման բան եմ արել»: Ինչքան շատ ես հիանում ինքդ քեզանով և ինչքան քիչ ես ուրախանում գովասանքով, այնքան ավելի վատն ես դառնում: Երբ ամբողջապես հիանում ես քեզանով և ընդհանրապես չես մտածում գովասանքի մասին, ապա հասել ես հատակին: Ահա թե ինչու սնափառությունը, թեև այն Հպարտության այն տեսակն է, որն արտաքուստ ամենաշատն է երևում, իրականում ամենաքիչ վատ և ամենաներելի տեսակն է: Սնափառ մարդը չափից շատ է ուզում գովասանք, ծափահարություններ և հիացմունք, և միշտ ձգտում է դրանց: Դա թերություն է, բայց մանկական և նույնիսկ (տարօրինակ առումով) խոնարհ թերություն: Դա ցույց է տալիս, որ դու դեռ լիովին բավարարված չես քո սեփական հիացմունքով: Դու բավականաչափ արժևորում ես այլ մարդկանց, քանի որ ցանկանում ես, որ նրանք հիանան քեզանով: Դու, ըստ էության, դեռ մարդ ես: Իսկական, սև սատանայական հպարտությունը առաջանում է, երբ ուրիշներին այնքան վերևից ես նայում, որ քեզ չի հետաքրքրում, թե նրանք ինչ են մտածում քո մասին: Իհարկե, շատ ճիշտ է, և հաճախ մեր պարտականությունն է, չանհանգստանալ, թե մարդիկ ինչ են մտածում մեր մասին, եթե դա անում ենք ճիշտ պատճառով. այն է՝ որովհետև մեզ անհամեմատ ավելի շատ է հետաքրքրում, թե ինչ է մտածում մեր մասին Աստված: Բայց Հպարտ մարդը անտարբերության այլ պատճառ ունի: Նա ասում է. «Ինչո՞ւ պետք է ինձ հետաքրքրի այդ ամբոխի ծափահարությունները, ասես թե նրանց կարծիքն ինչ-որ բան արժի: Եւ եթե նույնիսկ նրանց կարծիքը արժեք ունենար, մի՞թե ես այն մարդն եմ, որ հաճոյախոսության հաճույքից կարմրում է ինչպես դեռ չհասունացած մի աղջնակ իր առաջին պարից հետո: Ոչ, ես խոր, չափահաս անձնավորություն եմ: Այն ամենը, ինչ ես արել եմ, արվել է բավարարելու իմ սեփական իդեալները, կամ իմ արտիստական խիղճը, կամ իմ ընտանիքի ավանդույթները, կամ, մի խոսքով, որովհետև ես այդպիսին եմ: Եթե ամբոխին դա դուր է գալիս՝ բարի: Այն ինձ համար ոչ մի նշանակություն չունի»: Այս կերպ իսկական, ամբողջական Հպարտությունը կարող է հանդես գալ որպես սնափառության սանձող, քանի որ ինչպես ասացի քիչ առաջ, սատանան սիրում է «բուժել» փոքր թերությունը՝ տալով մեծը: Մենք պետք է փորձենք սին չլինել,

բայց երբեք չպետք է օգնության կանչենք մեր Հպարտությանը՝ բուժելու մեր սնափառությունը. ավելի լավ է տապակվել, քան հրդեհվել:

(2) Անգլերենում ասում ենք, որ մեկը «հպարտանում է» իր որդիով, կամ իր հորով, կամ իր դպրոցով, կամ իր գնդով, և միգուցե դուք հարցնեք, թե արդյո՞ք այս իմաստով «հպարտությունը» մեղք է: Կարծում եմ, որ դա կախված է նրանից, թե կոնկրետ ի՞նչ ենք հասկանում «հպարտ» ասելով: Շատ հաճախ նման նախադասություններում «հպարտանում է» արտահայտությունը նշանակում է «մեծ հիացմունք ունի»: Նման հիացմունքը, իհարկե, շատ հեռու է մեղք լինելուց: Բայց այն, թերևս, կարող է նշանակել, որ տվյալ անձը ինքն իրեն շնորհավորում է իր հարգարժան հոր շնորհիվ, կամ այն առիթով, որ նա պատկանում է հայտնի գնդին: Դա, ակնհայտորեն, թերություն կլիներ: Սակայն նույնիսկ այդ դեպքում, դա ավելի լավ է, քան պարզապես հպարտանալ ինքն իրենով: Սիրել և հիանալ որևէ բանով, որը քեզնից դուրս է, նշանակում է մեկ քայլ հեռանալ հոգևոր կործանումից. բայցևայնպես մենք լավը չենք լինի այնքան ժամանակ, քանի դեռ սիրում և հիանում ենք որևէ բանով ավելի, քան սիրում և հիանում ենք Աստծով:

(3) Մենք չպետք է մտածենք, որ Աստված արգելում է Հպարտությունը, որովհետև Նա վիրավորվում է դրանից, կամ որ Նա պահանջում է Խոնարհությունը Իր սեփական արժանապատվության պատճառով՝ ասես Աստված Ինքը հպարտ է: Նրան ամենևին չի անհանգստացնում Իր արժանապատվությունը: Բանն այն է, որ Նա ցանկանում է, որ դու ճանաչես Իրեն. Նա ուզում է իրեն տալ քեզ: Եւ Նա և դու այնպիսի երկու բաներ եք, որ եթե դու իսկապես որևէ շփման մեջ մտնես Նրա հետ, իրականում խոնարհ կլինես՝ բերկրալիորեն խոնարհ, զգալով անսահման թեթևություն՝ գեթ մեկ անգամ ազատվելով բոլոր հիմար անհեթեթություններից քո սեփական արժանապատվության մասին, որը քեզ անհանգիստ և դժբախտ է դարձրել քո ամբողջ կյանքում: Նա փորձում է քեզ խոնարհ դարձնել, որպեսզի հնարավոր դարձնի այս պահը, փորձում է հանել  այդ բազում անհեթեթ, տգեղ, պճնազարդ զգեստները, որոնցով մենք բոլորս մեզ հանդերձել ենք, և վազվզում ենք ապուշների պես: Ես կցանկանայի, որ ես ինքս խոնարհության ճանապարհով մի փոքր առաջ գնացած լինեի. եթե այդպես լիներ, ես հավանաբար կարող էի ձեզ ավելին ասել պճնազարդ զգեստը հանելու թեթևության և հանգստության մասին՝ ազատվելով այդ կեղծ ես-ից, այդ ամբողջ «Նայեք ինձ», «Ի՜նչ լավն եմ, չէ՞» և դրանց ներառող բոլոր սեթևեթանքներից ու կեցվածքներից: Դրան մոտենալն անգամ, թեկուզ մի պահ, նման է անապատում գտնվող մարդու սառը ջուր խմելուն:

(4) Չկարծեք, որ եթե հանդիպեք իսկապես խոնարհ մարդու, նա կլինի այնպիսին, որին այսօր շատերն անվանում են «խոնարհ». նա չի լինի այն տեսակի լպրծուն և կոտրատվող մարդը, որը միշտ ասում է, որ ինքը ոչ մի բան է: Հավանաբար այն ամենը, ինչ դուք կմտածեք նրա մասին, այն է, որ նա ձեզ կթվար կենսուրախ, խելացի մեկը, ով իսկապես հետաքրքրված էր, թե դուք ինչ էիք նրան ասում: Եթե նա իսկապես ձեզ դուր չգար, դա կլիներ այն պատճառով, որ դուք մի փոքր կնախանձեիք մեկին, ով այդքան հեշտորեն է վայելում կյանքը: Նա չէր մտածի խոնարհության մասին. նա ընդհանրապես չէր մտածի իր մասին:

Եթե որևէ մեկը ցանկանում է ձեռք բերել խոնարհություն, ես կարող եմ, կարծում եմ, ասել նրան առաջին քայլը: Առաջին քայլը գիտակցելն է, որ հպարտ ես: Եւ իսկապես մեծ քայլը: Համենայն դեպս, դրանից առաջ ոչինչ հնարավոր չէ անել: Եթե կարծում եք, որ ինքնահավան չեք, դա նշանակում է, որ իսկապես շատ ինքնահավան եք:

## 9. ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախորդ գլուխներից մեկում ես ասացի, որ կան չորս «Կարդինալ» և երեք «Աստվածաբանական» առաքինություններ: Երեք աստվածաբանականներն են՝ Հավատը, Հույսը և Սերը (կամ Ողորմածությունը): Հավատքին կանդրադառնանք վերջին երկու գլուխներում: Միրուն (կամ Ողորմածությանը) մասամբ անդրադարձա Գլուխ 7-ում, բայց այնտեղ ես կենտրոնացա Ողորմածության այն մասի վրա, որը կոչվում է Ներում: Հիմա ես ուզում եմ մի փոքր ավելին ասել:

Նախ՝ բառի իմաստի մասին: «Ողորմածություն» այժմ նշանակում է պարզապես այն, ինչ նախկինում կոչվում էր «ողորմություն», այսինքն՝ աղքատներին տալը: Ի սկզբանե այն ուներ շատ ավելի լայն իմաստ: (Դուք կարող եք կռահել, թե ինչպես է այն ստացել ժամանակակից իմաստը: Եթե մարդը «ողորմած է», ապա աղքատներին տալը նրա արած ամենաակնհայտ բաներից մեկն է, և այդ պատճառով մարդիկ սկսեցին խոսել այնպես, ասես ողորմածությունն ամբողջովին հենց դա է: Նույն կերպ, «հանգը» պոեզիայի ամենաակնհայտ մասն է, և այդ պատճառով մարդիկ հաճախ «պոեզիա» ասելով պարզապես ի նկատի ունեն հանգը և ոչ ավելին:) Ողորմածությունը նշանակում է «սեր՝ քրիստոնեական իմաստով»: Բայց սերը, քրիստոնեական իմաստով, չի նշանակում զգացմունք: Այն ոչ թե զգացմունքների, այլ կամքի արտահայտություն է. կամքի այն արտահայտությունը, որը մենք բնությամբ ունենք ինքներս մեր հանդեպ, և որը պետք է սովորենք ունենալ այլ մարդկանց հանդեպ:

Ներման մասին գլխում ես նշեցի, որ մեր սերը ինքներս մեր հանդեպ չի նշանակում, որ մենք համակրում ենք ինքներս մեզ: Այն նշանակում է, որ մենք մեր լավն ենք ցանկանում: Նույն կերպ, քրիստոնեական սերը (կամ Ողորմածությունը) մեր հարևանների հանդեպ բոլորովին տարբերվում է համակրանքից կամ խանդաղատանքից: Մենք որոշ մարդկանց «համակրում» ենք կամ «խանդաղատում» ենք, իսկ մյուսներին՝ ոչ: Կարևոր է հասկանալ, որ այս բնական «համակրանքը» ո՛չ մեղք է, ո՛չ էլ առաքինություն, այնպես, ինչպես ձեր համակրանքն ու հակակրանքը ուտելիքի հարցում ոչ մեղք է, ոչ էլ առաքինություն: Այն ուղղակի փաստ է: Բայց, իհարկե, այն, ինչ մենք անում ենք դրա հետ կապված, կա՛մ մեղք է, կա՛մ առաքինություն:

Մարդկանց նկատմամբ բնական համակրանքը կամ խանդաղատանքը հեշտացնում է նրանց նկատմամբ «ողորմած» լինելը: Հետևաբար, սովորաբար մեր պարտականությունն է խրախուսել մեր խանդաղատանքները՝ «համակրել» մարդկանց այնքան, որքան կարող ենք (ինչպես հաճախ մեր պարտականությունն է խրախուսել մեր ցանկությունը ֆիզիկական վարժությունների կամ առողջարար սննդի հանդեպ), ոչ թե այն պատճառով, որ այդ համակրանքը ինքնին ողորմածության առաքինությունն է, այլ որովհետև այն օգնում է դրան: Մյուս կողմից, անհրաժեշտ է նաև խիստ ուշադիր լինել՝ զգուշանալով, որ ինչ-որ մեկի հանդեպ մեր համակրանքը մեզ չդարձնի անբարյացակամ կամ նույնիսկ անարդար ուրիշի հանդեպ: Նույնիսկ կան

դեպքեր, երբ մեր համակրանքը հակասում է մեր ողորմածությանը այն մարդու հանդեպ, ում համակրում ենք: Օրինակ՝ գորովալից մայրը կարող է գայթակղվել իր բնական խայտանքով «երես տալու» իր երեխային. այսինքն՝ բավարարել սեփական գուրգուրական մղումները՝ երեխայի իրական երջանկության հաշվին՝ ապագայում:

Բայց թեև բնական համակրանքները սովորաբար պետք է խրախուսվեն, միանգամայն սխալ կլինի կարծել, թե ողորմած դառնալու ճանապարհը նստել և փորձել գորովանքի զգացմունքներ առաջացնելն է: Որոշ մարդիկ իրենց խառնվածքով «սառն» են. դա կարող է դժբախտություն լինել նրանց համար, բայց այն մեղք է ոչ ավելի, որքան վատ մարսողությունն ունենալն է մեղք. և դա նրանց չի արգելում ողորմածություն սովորելու հնարավորությունից կամ ազատում նրանց դրա պարտականությունից: Բոլորիս համար կանոնը միանգամայն պարզ է՝ ժամանակ մի վատնեք անհանգստանալով, թե արդյոք «սիրում եք» ձեր հարևանին. վարվե՛ք այնպես, ասես թե սիրում եք: Հենց մենք անում ենք դա, մենք բացահայտում ենք մեծ գաղտնիքներից մեկը: Երբ դուք ձեզ այնպես եք պահում, ասես ինչ-որ մեկին սիրում եք, շատ շուտով կսկսեք սիրել նրան: Եթե դուք վիրավորում եք մեկին, ում դուք չեք սիրում, դուք կնկատեք, որ է՛լ ավելի քիչ եք սիրում նրան: Եթե դուք բարյացակամ քայլ անեք նրա հանդեպ, ապա կնկատեք, որ նրանից ավելի քիչ եք խորշում: Իհարկե, կա մեկ բացառություն: Եթե դուք նրա հանդեպ բարյացակամ քայլ կատարեք, ոչ թե Աստծուն հաճոյանալու և ողորմածության օրենքին հնազանդվելու համար, այլ ցույց տալու համար, թե ինչ հիանալի և ներող անձնավորություն եք դուք, և որպեսզի նրան ձեր «պարտքի տակ» գցեք, և հետո նստեք և սպասեք նրա «երախտագիտությանը», դուք հավանաբար կհիասթափվեք (մարդիկ հիմար չեն, նրանք շատ արագ նկատում են ցուցամոլությունը կամ անձնագոհությունը): Բայց երբ մենք լավություն ենք անում մեկ ուրիշին, միայն այն պատճառով, որ նա անձ է, ստեղծված (մեզ նման) Աստծո կողմից, ցանկանալով նրա երջանկությունը այնպես, ինչպես մենք ցանկանում ենք մերը, մենք կսովորենք սիրել նրան մի փոքր ավելի, կամ, համենայն դեպս, մի փոքր ավելի քիչ չսիրել նրան:

Հետևաբար, թեև քրիստոնեական ողորմածությունը շատ «սառն» է թվում այն մարդկանց, ում գլուխները լի են զգացմունքայնությամբ, և թեև այն բավականին տարբերվում է համակրանքից, այնուամենայնիվ այն տանում է դեպի համակրանք: Քրիստոնյայի և աշխարհիկ մարդու տարբերությունն այն չէ, որ աշխարհիկ մարդն ունի միայն համակրանք կամ «հավանություններ», իսկ քրիստոնյան՝ միայն «ողորմածություն»: Աշխարհիկ մարդը բարյացակամորեն է վերաբերվում որոշ մարդկանց, որովհետև «համակրում» է նրանց. քրիստոնյան, փորձելով բոլորին բարյացակամորեն վերաբերվել, մեկ էլ տեսնում է, որ ինքը համակրում է ավելի ու ավելի շատ մարդկանց, այդ թվում՝ մարդկանց, որոնց սկզբում չէր էլ կարող պատկերացնել, որ կարող է համակրել:

Այս նույն հոգեւոր օրենքը սարսափելի ձևով գործում է հակառակ ուղղությամբ: Գերմանացիները, թերևս, սկզբում վատ էին վարվում հրեաներին, որովհետև ատում էին նրանց, իսկ հետո ավելի շատ էին ատում նրանց, որովհետև վատ էին վերաբերվել նրանց: Ինչքան դաժան լինեք, այնքան ավելի կատեք. և որքան շատ

ատեք, այնքան ավելի դաժան կդառնաք, և այդպես անվերջ շարունակ՝ հայտնվելով հավերժական փակ շրջանում:

Բարին և չարը՝ երկուսն էլ ավելանում են բարդացված տոկոսներով: Ահա թե ինչու այն փոքր որոշումները, որոնք ես և դուք կայացնում ենք ամեն օր, այդքան անսահման կարևորություն ունեն: Այսօրվա ամենափոքր լավ արարքը ռազմավարական մի դիրքի գրավումն է, որտեղից մի քանի ամիս անց դուք կարող եք հասնել այնպիսի հաղթանակների, որոնց մասին երբեք չէիք երազել: Տռփանքի կամ զայրույթի չնչին իսկ թողտվությունն այսօր, լեռնաշղթայի, երկաթգծի կամ կամրջի մի կորուստ է, որտեղից թշնամին կարող է մի այնպիսի հարձակում կազմակերպել, որն այլապես անհնար կլիներ:

Որոշ գրողներ օգտագործում են ողորմածություն բառը՝ նկարագրելու ոչ միայն քրիստոնեական սերը մարդկանց միջև, այլև Աստծո սերը՝ մարդու, և մարդու սերը՝ Աստծո հանդեպ: Այս երկուսից երկրորդի մասին մարդիկ հաճախ են անհանգստանում: Նրանց ասվել է, որ նրանք պետք է սիրեն Աստծուն: Նրանք իրենց մեջ նման զգացողություն չեն կարողանում գտնել: Ի՞նչ պետք է անեն: Պատասխանը նույնն է, ինչ նախկինում. գործե՛ք այնպես, կարծես թե դա այդպես է: Մի նստեք՝ փորձելով զգացմունքներ առաջացնել: Հարցրեք ինքներդ ձեզ. «Եթե ես վստահ լինեի, որ սիրում եմ Աստծուն, ի՞նչ կանեի»: Երբ գտնեք պատասխանը, գնացեք և արեք դա:

Ընդհանուր առմամբ, Աստծո սերը մեր հանդեպ շատ ավելի անվտանգ քննարկման թեմա է, քան Նրա հանդեպ մեր սերը: Ոչ ոք չի կարող միշտ բարեպաշտ զգացմունքներ ունենալ. և նույնիսկ եթե մենք կարողանայինք, զգացմունքներն այն չեն, որոնք հիմնականում հետաքրքրում են Աստծուն: Քրիստոնեական սերը, թե՛ Աստծո, և թե՛ մարդու հանդեպ, կամքի տիրույթում է: Եթե մենք փորձում ենք կատարել Նրա կամքը, մենք հնազանդվում ենք «Սիրի՛ր քո Տեր Աստծուն» պատվիրանին: Նա մեզ կտա սիրո զգացումներ, եթե կամենա: Մենք չենք կարող դրանք ստեղծել ինքներս մեզ համար, և չպետք է պահանջենք դրանք որպես իրավունք: Բայց այն մեծ բանը, որ պիտի հիշենք, այն է, որ թեև մեր զգացմունքները գալիս և գնում են, Նրա սերը մեր հանդեպ այդպես չէ: Այն չի հոգնում մեր մեղքերից կամ մեր անտարբերությունից. և, հետևաբար, այն միանգամայն անկոտրում է իր վճռականությամբ, որ մենք բուժվենք այդ մեղքերից՝ ինչ գին էլ պահանջվի մեզանից, և ինչ գին էլ պահանջվի Նրանից:

## 10. ՀՈՒՅՍ

Հույսը աստվածաբանական առաքինություններից է: Սա նշանակում է, որ անընդհատ աչքերը հառելը դեպի հավերժական աշխարհը փախուստ կամ պատրանք չէ (ինչպես կարծում են որոշ ժամանակակից մարդիկ), այլ այն բաներից մեկը, որ քրիստոնյան պետք է անի: Դա չի նշանակում, որ մենք պետք է ներկա աշխարհ թողնենք այնպես, ինչպես այն կա: Եթե դուք ընթերցեք պատմությունը, ապա կտեսնեք, որ այն քրիստոնյաները, որոնք ամենաշատն են արել ներկա աշխարհի համար, հենց նրանք են, ովքեր ամենաշատն էին մտածում մյուսի մասին: Առաքյալներն իրենք, ովքեր դրեցին Հռոմեական կայսրության դավանափոխության հիմքը, մեծ մարդիկ, որոնք կերտեցին միջնադարը, անգլիացի ավետարանականները, որոնք վերացրին ստրուկների առևտուրը՝ բոլորն էլ իրենց հետքը թողեցին Երկրի վրա հենց այն պատճառով, որ նրանց միտքը միշտ զբաղված էր Երկնքով: Սկսած այն պահից է, երբ քրիստոնյաները հիմնականում դադարել են մտածել մյուս աշխարհի մասին, որ նրանք այդքան անարդյունավետ են դարձել այս հարցում: Որպես նպատակ դրեք Երկինքը, և Երկիրը «ներս կսողոսկի». նպատակ դրեք Երկիրը և կստանաք ո՛չ մեկը: Թվում է, թե տարօրինակ կանոն է, բայց նման բան կարելի է տեսնել այլ հարցերում: Առողջությունը մեծ բարիք է, բայց այն պահից, երբ դուք առողջությունը դարձնեք ձեր հիմնական, առաջնային նպատակներից մեկը, դուք հետզհետե կդառնաք տարօրինակ անձնավորություն և կսկսեք պատկերացնել, որ ձեզ հետ ինչ-որ բան այն չէ: Դուք առողջություն կունենաք միայն այն դեպքում, եթե այլ բաներ ցանկանաք ավելի շատ՝ սնունդ, խաղեր, աշխատանք, զվարճանք, մաքուր օդ: Նույն կերպ, մենք երբեք չենք փրկի քաղաքակրթությունը, քանի դեռ քաղաքակրթությունը մեր հիմնական նպատակն է: Մենք պետք է սովորենք ցանկանալ մեկ ուրիշ բան է՛լ ավելի:

Մեզանից շատերի համար շատ դժվար է ընդհանրապես «Երկինք»-ը ցանկանալը, բացառությամբ այն մասով, որ «Երկինք»-ը նշանակում է նորից հանդիպել մեր մահացած ընկերներին: Այս դժվարության պատճառներից մեկն այն է, որ մենք չենք ուսուցանվել. մեր ողջ կրթությունը միտված է եղել սևեռելու մեր միտքը այս աշխարհի վրա: Մեկ այլ պատճառ էլ այն է, որ երբ մեր մեջ առկա է Երկնքի իրական ցանկությունը, մենք այն չենք գիտակցում: Մարդկանց մեծ մասը, եթե նրանք իսկապես սովորած լինեին նայել իրենց սրտերի մեջ, կիմանային, որ իսկապես ցանկանում են, և ցանկանում են շատ սաստկորեն, մի բան, որը հնարավոր չէ ունենալ այս աշխարհում: Այս աշխարհում կան տարբեր բաներ, որոնք առաջարկում են ձեզ տալ այն, բայց նրանք երբեք իրականում չեն կատարում իրենց խոստումը: Տենչանքները, որոնք առաջանում են մեր մեջ, երբ մենք առաջին անգամ սիրահարվում ենք, կամ առաջին անգամ մտածում ենք ինչ-որ օտար երկրի մասին, կամ առաջին անգամ սկսում ենք ուսումնասիրել մեզ ոգևորող ինչ-որ առարկա - տենչանքներ են, որոնք ո՛չ մի ամուսնություն, ո՛չ մի ճամփորդություն, ո՛չ մի ուսում իրականում չի կարող բավարարել: Ես հիմա չեմ խոսում այնպիսի բաների մասին, որոնք սովորաբար կոչվում են անհաջող ամուսնություններ, արձակուրդներ կամ ուսումնասիրման առարկաներ: Ես

խոսում եմ հնարավոր լավագույնների մասին: Ինչ-որ մի բան կար, որին մենք հպվել էինք տենչանքի այդ առաջին պահին, որն ուղղակի մարում է իրականության մեջ: Կարծում եմ՝ բոլորը գիտեն, թե ինչ ի նկատի ունեմ: Կինը կարող է լավ կին լինել, հյուրանոցներն ու դեկորացիաները՝ հիանալի, քիմիան կարող է շատ հետաքրքիր մասնագիտություն լինել, սակայն ինչ-որ բան խույս է տվել մեզանից: Հիմա՝ այս փաստի հետ առերեսվելու կա երկու սխալ ուղի, և մեկ՝ ճիշտ:

(1) Հիմարի ուղին: —Նա մեղքը բարդում է հենց իրերի վրա: Նա իր ողջ կյանքն ապրում է՝ մտածելով, որ եթե միայն նա փորձեր մեկ այլ կնոջ, կամ գնար ավելի թանկ արձակուրդի, կամ ինչ էլ որ դա լինի, ապա այս անգամ նա իսկապես կգտներ այն խորհրդավոր բանը, որը մենք բոլորս փնտրում ենք: Աշխարհի ձանձրացած, անգոհ, հարուստ մարդկանց մեծ մասն այս տեսակին է պատկանում: Նրանք իրենց ամբողջ կյանքն անցկացնում են շրջելով կնոջից կին (ամուսնալուծության դատարաններով), մայրցամաքից՝ մայրցամաք, հոբբիից՝ հոբբի, միշտ մտածելով, որ վերջինը վերջապես «Իրականն է», և միշտ հիասթափված են մնում:

(2) Պատրանքներից սթափված «Խելամիտ մարդու» ուղին: — Նա արագ գալիս է այն եզրակացության, որ այդ ամբողջը պատրանք էր: «Իհարկե,- ասում է նա,- այդպես ես զգում, երբ երիտասարդ ես: Բայց երբ հասնում ես իմ տարիքին, դադարում ես վազել ծիածանի հետևից»: Եւ այսպես, նա հարմարվում է և սովորում շատ բան չսպասել և ճնշում է իր այն մասը, որն, ինչպես ինքն է ասում, «հեքիաթների հետևից էր ընկնում»: Սա, իհարկե, շատ ավելի լավ ուղի է, քան առաջինը, և մարդուն դարձնում է շատ ավելի երջանիկ և ավելի քիչ անհանգստություն պատճառող հասարակության համար: Այն հակվածություն ունի նրան դարձնել գոռոզ (նա հակված է իրեն ավելի բարձր դասել նրանցից, ում նա անվանում է «դեռահասներ»), սակայն, ընդհանուր առմամբ, նա բավականին հարմարավետորեն գտնում է «իր տեղը»: Դա կլիներ լավագույն տարբերակը, որ մենք կարող էինք ընտրել, եթե մարդը հավերժ չապրեր: Իսկ եթե գոյություն ունի անսահման երջանկությունը, որը սպասո՞ւմ է մեզ: Իսկ եթե իսկապես կարելի՞ է հասնել ծիածանին: Այդ դեպքում ափսոս կլիներ ուշ բացահայտել (մահից մի ակնթարթ հետո), որ մեր ենթադրյալ «առողջ բանականությամբ» մենք խեղդել ենք մեր մեջ դա վայելելու ունակությունը:

(3) Քրիստոնեական ուղին: - Քրիստոնյան ասում է. «Արարածները չեն ծնվում ցանկություններով, բացառապես եթե գոյություն ունի դրանց բավարարում: Երեխան քաղց է զգում. բարի՝ գոյություն ունի սնունդ կոչվող բանը: Բադիկը լողալու ցանկություն ունի. բարի՝ գոյություն ունի ջուրը: Մարդիկ սեռական ցանկություն ունեն. բարի՝ գոյություն ունի սեքսը: Եթե ես իմ մեջ զգում եմ ցանկություն, որն այս աշխարհում ոչ մի ապրում չի կարող բավարարել, ապա ամենահավանական բացատրությունն այն է, որ ես ստեղծված եմ այլ աշխարհի համար: Եթե իմ երկրային հաճույքներից ոչ մեկը չի բավարարում դրան, դա չի ապացուցում, որ տիեզերքը կեղծ է: Հավանաբար երկրային հաճույքները երբեք նպատակ չեն ունեցել բավարարել նրան, այլ զուտ արթնացնել նրան՝ հուշել իրականը: Եթե դա այդպես է, ես պետք է հոգ տանեմ, որ մի կողմից, երբեք չարհամարհեմ կամ անշնորհակալ չլինեմ այս երկրային օրհնությունների

համար, իսկ մյուս կողմից՝ երբեք չշփոթեմ դրանք մեկ այլ բանի հետ, որի սոսկ օրինակն, արձագանք կամ միրաժն են դրանք: Ես պետք է իմ մեջ վառ պահեմ տենչանքը դեպի իմ իսկական երկիրը, որը ես միայն կգտնեմ իմ մահից հետո. ես երբեք չպետք է թույլ տամ, որ այն ձյունածածկվի կամ մի կողմ հրվի: Ես պետք է կյանքի գլխավոր նպատակ դարձնեմ ինքս ինձ առաջ մղելը դեպի այդ մյուս երկիրը, և օգնել ուրիշներին անել նույնը»:

Կարիք չկա անհանգստանալու զվարճախոս մարդկանց ասածներից, որոնք փորձում են ծիծաղելի դարձնել քրիստոնեական «դրախտի» հույսը՝ ասելով, որ չեն ցանկանում «հավերժությունն անցկացնել տավիղ նվագելով»: Պատասխանն այդ մարդկանց այն է, որ եթե նրանք չեն կարողանում հասկանալ մեծահասակների համար գրված գրքերը, ապա չպետք է խոսեն դրանց մասին: Բոլոր սուրբգրային պատկերները (տավիղներ, թագեր, ոսկի և այլն), իհարկե, զուտ պատկերավոր փորձեր են արտահայտելու անարտահայտելին: Երաժշտական գործիքները նշվում են, քանի որ շատերի համար (ոչ բոլորի) երաժշտությունն այն բանն է, որն այս կյանքում ամենամոտն է սքանչությանը և անսահմանությանը: Թագերը նշվում են, հուշելու այն փաստը, որ նրանք, ովքեր միավորված են Աստծո հետ հավերժության մեջ, մասնակցում են Նրա շքեղությանը, զորությանը և ուրախությանը: Ոսկին նշվում է, քանի որ այն հուշում է Դրախտի անժամանցելիությունը (ոսկին չի ժանգոտում) և նրա անգնությունը: Մարդիկ, որոնք բառացիորեն են ընդունում այս խորհրդանիշները, կարող են նույն հեշտությամբ մտածել, որ երբ Քրիստոսն մեզ ասաց լինել աղավնիների նման, նա նկատի ուներ, որ մենք պետք է ձվեր ածենք:

## 11. ՀԱՎԱՏ

Այս գլխում ես պետք է խոսեմ այն բանի մասին, որը քրիստոնյաները անվանում են Հավատ: Ընդհանուր առմամբ, քրիստոնյաները Հավատ բառը կարծես երկու իմաստով կամ երկու մակարդակներում են գործածում, և ես հերթով կքննարկեմ դրանք: Առաջին իմաստով այն նշանակում է պարզապես Հավատք՝ ընդունել կամ ճշմարիտ համարել քրիստոնեության ուսմունքները: Սա բավականին պարզ է: Բայց այն, ինչ մարդկանց տարակուսեցնում է (համենայնդեպս, ժամանակին այն ինձ տարակուսեցնում էր), դա այն փաստն է, որ քրիստոնյաները հավատն, այս իմաստով, համարում են առաքինություն: Ես շարունակ հարցնում էի, թե ինչպե՞ս կարող է այն առաքինություն լինել. ի՞նչ բարոյական կամ անբարոյական բան կա մի շարք պնդումներին հավատալու կամ չհավատալու մեջ: Ակնհայտ է, ասում էի ես, որ ողջախոհ մարդն ընդունում կամ մերժում է ցանկացած պնդում, ոչ թե նրա համար, որ ուզում է կամ չի ուզում, այլ այն պատճառով, որ դրա փաստարկությունները իրեն համոզիչ կամ անհամոզիչ են թվում: Եթե նա սխալվում էր փաստարկությունների վերաբերյալ, դա չէր նշանակի, որ նա վատ մարդ էր, այլ միայն այն, որ նա այնքան էլ խելացի չէր: Եւ եթե նա կարծում էր, որ փաստարկությունները պատշաճ չեն, բայց փորձեր ստիպել իրեն հավատալ՝ չնայած դրան, դա պարզապես հիմարություն կլիներ:

Ես կարծում եմ, որ ես դեռ ունեմ նույն տեսակետը: Բայց այն, ինչ ես չէի տեսնում այդ ժամանակ, և շատերը դեռ չեն տեսնում, հետևյալն է: Ես ենթադրում էի, որ եթե մարդու միտքը մեկ անգամ ընդունում է որևէ բան որպես ճշմարիտ, ապա այն ինքնաբերաբար շարունակում է համարել այն որպես ճշմարիտ, մինչև այն վերանայելու իրական պատճառ չհայտնվի: Իրականում՝ ես ենթադրում էի, որ մարդու միտքն ամբողջությամբ կառավարվում է բանականությամբ: Բայց դա այդպես չէ: Օրինակ՝ իմ բանականությունը լիովին համոզված է՝ ճշգրտված փաստարկներով, որ անզգայացնող միջոցներն ինձ չեն սպանում, և որ պատշաճ մասնագիտացված վիրաբույժները չեն սկսում վիրահատել, քանի դեռ ես անգիտակից չեմ: Բայց դա չի փոխում այն փաստը, որ երբ նրանք ինձ պառկեցնում են վիրահատության սեղանին և իրենց սարսափելի դիմակը դնում են դեմքիս, իմ մեջ խուճապ է առաջանում: Ես սկսում եմ մտածել, որ ես խեղդվելու եմ, և վախենում եմ, որ նրանք կսկսեն ինձ կտրել իմ անզգայանալուց առաջ: Այսինքն՝ ես կորցնում եմ իմ հավատը անզգայացնող միջոցների նկատմամբ: Բանականությունը չէ, որ վերացնում է իմ հավատը, ընդհակառակը՝ իմ հավատը հիմնված է բանականության վրա: Իմ երևակայությունն ու զգացմունքներն են: Պայքարը, մի կողմից՝ հավատի և բանականության, և մյուս կողմից՝ զգացմունքների ու երևակայության միջև է:

Երբ խորհեք սրա վերաբերյալ, ապա սրա բազմաթիվ դեպքեր կտեսնեք: Տղամարդը փաստված ապացույցների հիման վրա գիտի, որ իր ծանոթ գեղեցիկ աղջիկը ստախոս է և չի կարող գաղտնիք պահել, և նրան չպետք է վստահել: Սակայն երբ նա հայտնվում է նրա կողքին, նրա միտքը կորցնում է իր հավատը

այդ գիտելիքի նկատմամբ և նա սկսում է մտածել. «Գուցե այս անգամ նա այդպես չի անի», և ևս մեկ անգամ հիմարություն է անում և ասում է նրան մի բան, որ չպետք է ասեր: Նրա զգայարաններն ու զգացմունքները ոչնչացրել են նրա հավատն այն բանի հանդեպ, ինչը նա իրականում գիտի, որ ճշմարիտ է: Կամ դիտարկենք մի տղայի, որը լողալ է սովորում: Նրա բանականությունը հիանալի գիտի, որ մարդու մարմինը առանց հենարանի պարտադիր չէ, որ սուզվի ջրի մեջ. նա տեսել է, թե ինչպես են տասնյակ մարդիկ լողում և չեն սուզվում: Բայց ամբողջ հարցն այն է, թե արդյո՞ք նա կկարողանա շարունակել հավատալ դրան, երբ ուսուցիչը հեռացնի իր ձեռքը և թողնի նրան առանց հենարանի, թե՞ նա հանկարծ կդադարի հավատալ և խուճապի մատնվելով կսուզվի:

Հիմա՝ նույնը տեղի է ունենում քրիստոնեության հետ կապված: Ես ոչ մեկին չեմ խնդրում ընդունել քրիստոնեությունը, եթե նրա բանականությունը նրան հուշում է, որ ապացույցների ամբողջությունը դեմ է դրան: Դա այն կետը չէ, որտեղ սկսվում է Հավատը: Բայց ենթադրենք, որ ինչ-որ մեկի բանականությունը  վերջապես որոշում է, որ ապացույցների ամբողջություն դրա օգտին է: Ես կարող եմ ասել այդ մարդուն, թե ինչ է լինելու նրա հետ առաջիկա մի քանի շաբաթների ընթացքում: Կգա մի պահ, երբ նա վատ լուր է ստանում, կամ նա հայտնվում է դժվարության մեջ, կամ ապրում է բազմաթիվ մարդկանց շրջապատում, որոնք չեն հավատում դրան, և միանգամից նրա զգացմունքները գլուխ կբարձրացնեն և մի տեսակ ռմբակոծություն կկատարեն նրա հավատքի վրա: Կամ կգա մի պահ, երբ նա ցանկանում է մի կնոջ, կամ ուզում է սուտ ասել, կամ իրեն շատ ինքնագոհ է զգում, կամ տեսնում է մի փոքր գումար վաստակելու հնարավորություն ինչ-որ ձևով, որն այնքան էլ արդար չէ. կարճ ասած,  ինչ-որ պահ, երբ շատ հարմար կլիներ, եթե քրիստոնեությունը ճշմարիտ չլիներ: Եւ կրկին նրա ցանկություններն ու իղձերը ռմբակոծություն կկատարեն: Ես չեմ խոսում այժմ այն պահերի մասին, երբ քրիստոնեության դեմ ի հայտ են գալիս իրական նոր ապացույցներ: Դրանց հետ պետք է առերեսվել, և դա այլ խնդիր է: Ես խոսում եմ այն պահերի մասին, երբ նրա դեմ պարզապես տրամադրության ալիք է գլուխ բարձրացնում:

Հիմա՝ Հավատը, այն իմաստով, որով ես այստեղ օգտագործում եմ այդ բառը, կառչելու արվեստն է՝ ի հեճուկս փոփոխվող տրամադրություններին, այն բաներից, որոնք ձեր բանականությունը ժամանակին ընդունել է: Որովհետև տրամադրությունները կփոփոխվեն, անկախ նրանից, թե ինչին է հավատում ձեր միտքը: Ես դա գիտեմ փորձով: Հիմա, երբ ես քրիստոնյա եմ, ինձ մոտ իսկապես առաջանում են տրամադրություններ, երբ այդ ամենը շատ անհավանական է թվում. սակայն երբ ես աթեիստ էի, ինձ մոտ առաջանում էին տրամադրություններ, երբ քրիստոնեությունը խիստ հավանական էր թվում: Ձեր տրամադրությունների այս ըմբոստությունը՝ ձեր իրական «ես»-ի դեմ, այսպես, թե այնպես, գալու է: Ահա թե ինչու Հավատն այդքան անհրաժեշտ առաքինություն է. եթե չդնեք ձեր տրամադրություններին իրենց «տեղը», դուք երբեք չեք կարող լինել ո՛չ իսկական քրիստոնյա, և ո՛չ էլ իսկական աթեիստ, այլ պարզապես մի արարած, որը այս ու այն կողմ է վազվզում՝ իր համոզմունքները կախված լինելով եղանակից և իր մարսողության վիճակից: Հետևաբար, պետք է վարժեցնել Հավատի սովորությունը:

Առաջին քայլը գիտակցելն է, որ ձեր տրամադրությունը փոփոխական է: Հաջորդը՝ պետք է համոզվեք, որ եթե մեկ ընդունել եք քրիստոնեությունը, ապա նրա հիմնական ուսմունքների մի մասը, ամեն օր՝ որոշ ժամանակով, պետք է կանխամտածված կերպով բերվի ձեր մտքի առաջ: Ահա թե ինչու ամենօրյա աղոթքները, կրոնական ընթերցանությունը և եկեղեցի գնալը քրիստոնեական կյանքի անհրաժեշտ մասերն են: Մեզ պետք է անընդհատ հիշեցվի այն, ինչին մենք հավատում ենք: Ո՛չ այս համոզմունքը, ո՛չ էլ որևէ այլ, մեքենայաբար կենդանի չի մնա մեր մտքում: Այն պետք է կերակրվի: Եւ, իրականում, եթե դուք ուսումնասիրեիք հարյուր հոգու, որոնք կորցրել էին իրենց հավատը քրիստոնեության հանդեպ, նրանցից քանի՞սը կպարզվեր, որ հեռացել էին նրանից անկեղծ փաստարկի պատճառով: Մի՞թե մարդկանց մեծ մասը ուղղակի չի կորցնում կապը:

Այժմ ես պետք է անդրադառնամ Հավատին երկրորդ՝ կամ ավելի բարձր իմաստով. և սա ամենադժվար բանն է, որը ես մինչ այժմ քննարկել եմ: Ես ուզում եմ դրան մոտենալ վերադառնալով Խոնարհության թեմային: Հիշում եք, որ ես ասացի, որ խոնարհության առաջին քայլը գիտակցելն էր, որ մենք հպարտ ենք: Հիմա ուզում եմ ավելացնել, որ հաջորդ քայլը քրիստոնեական առաքինությունների կիրառման լուրջ փորձն է: Մեկ շաբաթը բավարար չէ: Առաջին շաբաթվա ընթացքում գործերը հաճախ հիանալի են ընթանում: Փորձեք վեց շաբաթ: Դրա վերջում, ընկնելով (որքանով հնարավոր է նկատել) լրիվ հետ կամ նույնիսկ ավելի ցածր, քան որտեղից սկսել էինք, մենք մեր մասին որոշ ճշմարտություններ բացահայտած կլինենք: Ոչ ոք չգիտի, թե որքան վատն է ինքը, քանի դեռ չի փորձել լինել լավը: Մի հիմար գաղափար է արդիական, որ լավ մարդիկ չգիտեն, թե գայթակղությունն ինչ է: Սա ակնհայտ սուտ է: Միայն նրանք, ովքեր փորձում են դիմակայել գայթակղությանը, գիտեն, թե որքան ուժեղ է այն: Գերմանական բանակի ուժը պարզում ես նրա դեմ կռվելով, և ոչ թե հանձնվելով. քամու ուժը պարզում ես նրան հակառակ քայլելով, ոչ թե պառկելով: Մարդը, որը հինգ րոպե անց տեղի է տալիս գայթակղությանը, պարզապես չգիտի, թե ինչ կլիներ մեկ ժամ անց: Ահա թե ինչու վատ մարդիկ, ինչ-որ իմաստով, շատ քիչ բան գիտեն վատ լինելու մասին: Նրանք ապրել են պատսպարված կյանքով՝ միշտ տեղի տալով: Մենք երբևիցե չենք բացահայտում մեր ներսում գտնվող չար մղման ուժը, մինչև մենք չենք փորձում պայքարել դրա դեմ: Եւ Քրիստոսը, քանի որ Նա միակ մարդն էր, ով երբեք չտրվեց գայթակղությանը, նաև միակ մարդն է, ով լիովին գիտի, թե ինչ է նշանակում գայթակղությունը՝ միակ ամբողջական ռեալիստը: Շատ լավ: Հիմնական բանը, որ մենք սովորում ենք քրիստոնեական առաքինությունները կիրառելու լուրջ փորձից, այն է, որ մենք չենք կարողանում: Եթե ինչ-որ գաղափար կար, որ Աստված մեզ ինչ-որ քննություն է տվել, և որ մենք կարող ենք լավ գնահատականներ ստանալ՝ արժանանալով դրանց, դա պետք է դեն նետել: Եթե ինչ-որ գործարքի գաղափար կար, որտեղ մենք կարող էինք կատարել պայմանագրի մեր մասը և այդպիսով Աստծուն դնել մեր «պարտքի տակ», որպեսզի Նա՝ սոսկ արդարությունից ելնելով, կատարեր Իր մասը, այն պետք է դեն նետվի:

Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր ոք, ով ինչ-որ չափով հավատում է Աստծուն, մինչև քրիստոնյա դառնալը, իր մտքում ունի քննության կամ գործարքի գաղափարը: Իրական քրիստոնեության առաջին հետևանքը այս գաղափարը փշրելն է: Երբ նրանք տեսնում են, որ այն փշրված է, ոմանք կարծում են, որ դա նշանակում է, որ քրիստոնեությունը ոչնչացված է, և հանձնվում են: Նրանք ասես կարծում են, որ Աստված շատ պարզամիտ է: Իրականում, իհարկե, Նա գիտի այս ամենի մասին: Հիմնական բաներից հե՛նց մեկը, որը քրիստոնեությունը նախատեսված էր անելու, այս գաղափարը փշրելն էր: Աստված սպասել է մինչև այն պահը, երբ դուք կբացահայտեք, որ այս քննությունից անցողիկ գնահատական ստանալը կամ Նրան ձեր պարտքի տակ գցելը քննարկման ենթակա չէ:

Հետո գալիս է մեկ այլ բացահայտում: Ձեր յուրաքանչյուր կարողություն, ձեր մտածելու, կամ ձեր ձեռքերն ու ոտքերը ցանկացած պահին շարժելու ունակությունը տրված է ձեզ Աստծո կողմից: Եթե դուք ձեր ողջ կյանքի յուրաքանչյուր պահը նվիրեիք բացառապես Նրա ծառայությանը, դուք չէիք կարող նրան տալ մի բան, որն ինչ-որ իմաստով արդեն իսկ իրենը չէր: Այնպես որ, երբ մենք խոսում ենք նրա մասին, որ մարդը ինչ-որ բան է անում Աստծո համար կամ ինչ-որ բան է տալիս Աստծուն, ասեմ ձեզ, թե դա ինչի է նման: Դա նման է փոքրիկ երեխային, որը գնում է իր հոր մոտ և ասում. «Հայրի՛կ, տուր ինձ վեց պենս, որպեսզի քեզ նվեր գնեմ տարեդարձիդ համար»: Իհարկե, հայրը տալիս է, և նա շատ գոհ է երեխայի նվերից: Ամեն ինչ շատ գեղեցիկ է և տեղին, բայց միայն հիմարը կարող է մտածել, որ հայրը այս գործարքում վեց պենս շահել է: Երբ մարդն անում է այս երկու հայտնագործությունները, Աստված իսկապես կարող է գործի անցնել: Սրանից հետո է սկսվում իրական կյանքը: Մարդն այժմ արթուն է: Այժմ մենք կարող ենք սկսել Հավատի մասին խոսել երկրորդ իմաստով:

## 12. ՀԱՎԱՏ

Ես ուզում եմ սկսել ասելով մի բան, որին կուզենայի, որ բոլորը ուշադրություն դարձնեին: Դա հետևյալն է: Եթե այս գլուխը ձեզ ոչինչ չի ասում, եթե թվում է, թե այն փորձում է պատասխանել հարցերին, որոնք երբեք ձեր մոտ չեն առաջացել, ապա անմիջապես մի կողմ դրեք այն: Ընդհանրապես մի՛ անհանգստացեք նրա մասին: Քրիստոնեության մեջ կան որոշ բաներ, որոնք կարելի է հասկանալ դրսից՝ նախքան քրիստոնյա դառնալը: Բայց կան շատ բաներ, որոնք հնարավոր չէ հասկանալ մինչև քրիստոնեական ճանապարհով որոշակի հեռավորություն չանցնես: Այս բաները զուտ գործնական են, թեև դրանք այդպիսին չեն թվում: Դրանք ցուցումներ են՝ կապված ճանապարհի որոշակի խաչմերուկների և խոչընդոտների հետ, և դրանք անըմբռնելի են, քանի դեռ մարդը չի հասել այդ կետերին: Երբ քրիստոնեական գրություններում որևէ արտահայտություն եք գտնում, որից ոչինչ չեք հասկանում, մի՛ անհանգստացեք: Մի կողմ դրեք այն: Կգա մի օր, գուցե տարիներ անց, երբ հանկարծ կտեսնեք, թե դա ինչ էր նշանակում: Եթե կարողանայիք հասկանալ դա, այն միայն վնաս կբերեր:

Իհարկե, այս ամենը վերաբերում է ինձ այնքան, որքան ուրիշներին: Այն, ինչ ես կփորձեմ բացատրել այս գլխում, կարող է լինել մի բան, որը հասկանալուց ես դեռ հեռու եմ: Ես կարող եմ կարծել, որ հասել եմ այնտեղ, և դա կարող է այդպես չլինել: Ես միայն կարող եմ խնդրել ուսյալ քրիստոնյաներին, որ ուշադիր հետևեն ինձ և ասեն, երբ ես սխալվեմ. և ուրիշներին՝ ընդունել այն, ինչ ես ասում եմ, որպես առաջարկ, որովհետև այն կարող է օգտակար լինել, այլ ոչ թե այն պատճառով, որ ես համոզված եմ, որ ճիշտ եմ:

Ես փորձում եմ Հավատի մասին խոսել երկրորդ՝ ավելի բարձր իմաստով: Անցյալ շաբաթ ես ասացի, որ հավատի հարցի այս իմաստը ծագում է այն բանից հետո, երբ մարդը լավագույնս փորձել է կիրառել քրիստոնեական առաքինությունները, և պարզել է, որ նա ձախողվում է, և ըմբռնել է, որ նույնիսկ եթե նա կարողանար, նա միայն կվերադարձներ Աստծուն այն, ինչն արդեն Աստծունն է: Այլ կերպ ասած, նա բացահայտում է իր սնանկությունը: Հիմա, ևս մեկ անգամ, այն, ինչ հետաքրքրում է Աստծուն, այդքան էլ մեր արարքները չեն: Նրան հետաքրքրում է այն, որ մենք պետք է լինենք որոշակի տեսակի կամ որակի արարածներ՝ այնպիսի արարածներ, ինչպիսին Նա նախատեսում էր մեզ համար՝ արարածներ, որոնք կապված են Իր հետ որոշակի ձևով: Ես չեմ ավելացնում «և որոշակի կերպ կապված միմյանց հետ», քանի որ դա ներառված է. եթե դուք ներդաշնակ եք Նրա հետ, ապա անխուսափելիորեն ներդաշնակ կլինեք մնացած բոլոր արարածների հետ, ճիշտ այնպես, ինչպես եթե անիվի բոլոր անվաճաղերը տեղադրված են ճիշտ դիրքերում հանգույցի և եզրի նկատմամբ, ապա նրանք կլինեն ճիշտ դիրքերում միմյանց նկատմամբ: Եւ քանի դեռ մարդը մտածում է Աստծո մասին որպես քննողի, ով իրեն ինչ-որ ստուգողականի թերթիկ է տվել, կամ որպես հակառակ կողմի, ում հետ նա գործարքի մեջ է՝ քանի դեռ նա մտածում է

հայցերի և հակընդդեմ հայցերի մասին իր և Աստծո միջև, նա դեռ ճիշտ հարաբերության մեջ չէ Նրա հետ: Նա սխալ է հասկանում, թե ինչ է ինքը և ինչ է Աստված: Եւ նա չի կարող ճիշտ հարաբերության մեջ մտնել, քանի դեռ չի հայտնաբերել մեր սնանկության փաստը:

Երբ ես ասում եմ «հայտնաբերել», ես նկատի ունեմ իսկապես հայտնաբերել, ոչ թե պարզապես այն թութակի նման կրկնել: Իհարկե, ցանկացած երեխա, եթե որոշակի կրոնական կրթություն ստանա, շուտով կսովորի ասել, որ մենք ոչինչ չունենք տալու Աստծուն, որն արդեն Իրենը չէ, և որ մենք չենք կարողանում տալ նույնիսկ դա՝ առանց ինչ-որ բան հետ պահելու: Սակայն ես խոսում եմ այն իսկապես հայտնաբերելու մասին. իսկապես պարզելով փորձառությամբ, որ դա ճիշտ է:

Հիմա՝ մենք չենք կարող, այդ առումով, հայտնաբերել Աստծո օրենքը պահելու մեր ձախողումը, բացառապես լավագույնս փորձելով (և ապա ձախողելով): Եթե մենք լիարժեք չփորձենք, ինչ էլ որ ասենք, մեր մտքում միշտ կլինի այն միտքը, որ եթե հաջորդ անգամ ավելի շատ փորձենք, մեզ կհաջողվի լինել կատարելապես լավը: Այսպիսով՝ ինչ-որ իմաստով, դեպի Աստված վերադարձի ճանապարհը բարոյական ջանքի ճանապարհն է՝ միշտ ավելի ու ավելի շատ փորձելով: Բայց մեկ այլ իմաստով փորձելը չէ, որը երբևէ մեզ տուն կդարձնի: Ամբողջը, որին փորձելը հանգում է, այն վճռորոշ պահն է, երբ դուք դիմում եք Աստծուն և ասում. «Դու՛ պետք է սա անես, ես չեմ կարող»: Մի՛ սկսեք, աղաչում եմ ձեզ, ինքներդ ձեզ հարցնել. «Հասե՞լ եմ այդ պահին»: Մի՛ նստեք և սկսեք հետևել ձեր սեփական մտքերին, որպեսզի տեսնեք, թե արդյո՞ք այն մոտենում է: Դա մարդուն դնում է շատ սխալ ուղու վրա: Երբ ամենակարևոր բաները տեղի են ունենում մեր կյանքում, մենք հաճախ չգիտենք, թե ինչ է կատարվում այդ պահին: Մարդը միշտ չէ, որ ինքն իրեն ասում է. «Օ՜, ես մեծանում եմ»: Հաճախ միայն այն ժամանակ է, երբ նա ետ է նայում, նա հասկանում է, թե ինչ է տեղի ունեցել, և ընկալում է դա որպես այն, ինչ մարդիկ անվանում են «մեծանալ»: Դուք դա կարող եք տեսնել նույնիսկ պարզ օրինակներում: Մարդը, որը անհանգստորեն հսկում է, թե արդյոք ինքը քուն կմտնի, շատ հավանական է, որ արթուն մնա: Բացի այդ, այն, ինչի մասին ես հիմա խոսում եմ, կարող է չպատահել բոլորի հետ հանկարծակի, ինչպես դա եղավ Սուրբ Պողոսի կամ Բունյանի հետ. այն կարող է լինել այնքան աստիճանաբար, որ ոչ ոք երբեք չի կարող մատնանշել որոշակի ժամը կամ նույնիսկ տարին: Եւ կարևորն ինքնին փոփոխության բնույթն է, այլ ոչ թե ինչպես ենք մենք զգում, երբ այն տեղի է ունենում: Դա այն փոփոխությունն է, երբ մենք մեր սեփական ջանքերին վստահ լինելուց անցնում ենք այն վիճակին, ուր մենք հուսահատվում ենք որևէ բան ինքնուրույն անելուց և այն թողնում ենք Աստծուն:

Ես գիտեմ, որ «թողնել Աստծուն» բառերը կարող են սխալ ընկալվել, բայց այս պահին դրանք պետք է մնան: Քրիստոնյան թողնում է Աստծուն այն իմաստով, որ նա իր ամբողջ հույսը դնում է Քրիստոսի վրա. վստահում է, որ Քրիստոսը Իր կատարյալ մարդկային հնազանդությունը, որը Նա իրականացրել է Իր ծնունդից մինչև Իր խաչելությունը, ինչ-որ կերպ հաղորդակից կդարձնի իր հետ՝ որ Քրիստոսը մարդուն կդարձնի ավելի նման Իրեն, և ինչ-որ իմաստով, կշտկի նրա թերությունները: Քրիստոնեական լեզվով՝ Նա մեզ մասնակից

կդարձնի Իր «որդիությանը», մեզ կդարձնի Իր նման «Աստծո որդիներ». գրքի «Մաս 4»-ում ես կփորձեմ մի փոքր ավելի վերլուծել այդ բառերի իմաստը: Եթե կուզեք՝ Քրիստոսն առաջարկում է ինչ-որ բան ոչնչի փոխարեն. Նա նույնիսկ առաջարկում է ամեն ինչ ոչնչի փոխարեն: Ինչ-որ իմաստով, ողջ քրիստոնեական կյանքը բաղկացած է այս շատ ուշագրավ առաջարկ ընդունելուց: Բայց դժվարությունն այն է, որ հասնենք նրան, որ գիտակցենք, որ այն ամենը, ինչ արել ենք և կարող ենք անել, ոչինչ է: Այն, ինչ մենք կցանկանայինք, որ լիներ, այն է, որ Աստված հաշվեր մեր լավ բաները և անտեսեր մեր վատերը: Կրկին՝ ինչ-որ իմաստով, կարող եք ասել, որ ոչ մի գայթակղություն երբևիցե չի հաղթահարվում, մինչև մենք չենք դադարեցնում այն հաղթահարելու փորձերը՝ մեզ ձախողված համարելով: Բայց մյուս կողմից, դուք չէիք կարող «դադարեցնել փորձելը» ճիշտ ձևով և ճիշտ պատճառով, մինչև չփորձեիք ձեր առավելագույնը: Բայց, ևս մեկ այլ իմաստով, ամեն ինչ Քրիստոսին հանձնելը, իհարկե, չի նշանակում, որ դուք դադարում եք փորձել: Նրան վստահել նշանակում է, իհարկե, փորձել անել այն ամենը, ինչ Նա ասում է: Անիմաստ կլիներ ասել, որ վստահում ես մեկին, եթե չես ընդունում նրա խորհուրդները: Այսպիսով, եթե դուք իսկապես ինքներդ ձեզ հանձնել եք Նրան, դրանից պետք է բխի, որ դուք փորձում եք հնազանդվել Նրան: Բայց փորձում եք նոր՝ ավելի քիչ անհանգիստ ձևով: Այս բաներն անելու ոչ թե փրկվելու համար, այլ որովհետև Նա արդեն սկսել է փրկել ձեզ: Ոչ թե հույս ունենալով հասնել Երկինք՝ որպես վարձատրություն ձեր գործերի համար, այլ անխուսափելիորեն ցանկանալով գործել որոշակի ձևով, քանի որ Երկնքի առաջին նշմարվող փայլն արդեն ձեր ներսում է:

Քրիստոնյաները հաճախ են վիճել, թե այն, ինչ առաջնորդում է քրիստոնյային դեպի տուն, բարի գործերն են, թե՞ հավատն առ Քրիստոս: Ես իսկապես իրավունք չունեմ խոսելու նման բարդ հարցի շուրջ, բայց ինձ թվում է, որ այն շատ նման է այն հարցին, թե մկրատի ո՞ր սայրն է առավել անհրաժեշտ: Լուրջ բարոյական ջանքը միակ բանն է, որը ձեզ կհասցնի այն կետին, որ դուք ձեզ ձախողված համարեք: Հավատն առ Քրիստոս միակ բանն է, որը այդ պահին կփրկի ձեզ հուսահատությունից. և Նրա հանդեպ այդ հավատից բարի գործերն պետք է անխուսափելիորեն առաջ գան: Գոյություն ունի ճշմարտության երկու ծաղրանմանում, որ քրիստոնյաների տարբեր բազմություններ միմյանց մեղադրել են դրանց հավատալուն. գուցե դրանք կարող են ճշմարտությունն ավելի հասկանալի դարձնել: Մի խումբը մեղադրվում էր սա ասելու համար. «Բարի գործերը միակ կարևոր բաներն են: Բարի գործերից լավագույնը ողորմությունն է: Լավագույն բանը, որին կարելի է փող տալ՝ եկեղեցին է: Հետևաբար, մեզ տվեք 10,000 ֆունտ, և մենք ձեզ տեղ կհասցնենք»: Այդ անհեթեթության պատասխանը, իհարկե, այն է, որ այդ շարժառիթով արված բարի գործերը, որոնք արվում են այն տրամաբանությամբ, որ Երկինքը կարելի է գնել, ամենևին էլ բարի գործեր չեն լինի, այլ միայն առևտրական մտածություն: Մյուս խումբը մեղադրվում էր հետևյալն ասելու համար. «Այն, ինչ կարևոր է, Հավատքն է: Հետևաբար, եթե հավատք ունես, ապա կարևոր չէ, թե ինչ ես անում: Մեղանչի՛ր, տղաս, և լավ ժամանակ անցկացրու՛, և Քրիստոսը կանի այն, ինչ հարկավոր է, որպեսզի վերջում դա ոչ մի նշանակություն չունենա»: Այս անհեթեթության պատասխանն այն է, որ, եթե այն, ինչ անվանում ես քո «հավատը» Քրիստոսի հանդեպ, չի ներառում նվազագույն

ուշադրությունն անգամ նրա ասածների հանդեպ, ապա դա ամենևին էլ Հավատ չէ՝ ո՛չ հավատ է, ո՛չ էլ վստահություն Նրա հանդեպ, այլ Նրա մասին ինչ-որ տեսության սոսկ մտավոր ընդունում:

Թվում է, թե Աստվածաշունչն իսկապես հանգուցալուծում է այս խնդիրը, երբ երկու բաները միավորում է մեկ զարմանալի նախադասության մեջ: Առաջին կեսն է՝ «Ահով և դողով աշխատիր քո փրկության համար», որը կարծես ակնարկում է, թե ամեն ինչ կախված է մեզանից և մեր բարի գործերից. սակայն երկրորդ կեսը շարունակում է՝ «Որովհետև Աստված է, որ ներգործում է քո մեջ», ասես Աստված է անում ամեն ինչ, իսկ մենք՝ ոչինչ: Կարծես թե դա հենց այն տիպի բաներից է, որին մենք հանդիպում ենք քրիստոնեության մեջ: Ես տարակուսած եմ, բայց ոչ զարմացած: Խնդիրն այն է, որ մենք հիմա փորձում ենք հասկանալ և անջրանցիկ խցիկների մեջ բաժանել, թե կոնկրետ ինչ է անում Աստված և ինչ է անում մարդը, երբ Աստված և մարդը աշխատում են միասին: Եւ, իհարկե, մենք մտածում ենք, որ դա նման է երկու մարդու, որոնք աշխատում են միասին, և հետևապես դուք կարող եք ասել. «Նա արեց այն մասը, իսկ ես արեցի այս մասը»: Բայց այս մտածելակերպը չի գործում: Աստված այդպիսին չէ: Նա ձեր ներսում է, ինչպես նաև դրսում. նույնիսկ եթե մենք կարողանայինք հասկանալ, թե ով ինչ է արել, ես չեմ կարծում, որ մարդկային լեզուն կկարողանար այն ճիշտ արտահայտել: Դա արտահայտելու համար տարբեր Եկեղեցիներ տարբեր բաներ են ասում: Բայց դուք կբացահայտեք, որ նույնիսկ նրանք, որոնք ամենից շատն են պնդում բարի գործերի կարևորության մասին, ասում են, որ Հավատի կարիք ունեք. և նույնիսկ նրանք, որոնք ամենից շատն են պնդում Հավատի կարևորության մասին, ասում են ձեզ բարի գործեր գործել: Ամեն դեպքում, սա այնքանն է, որ ես կարող եմ ասել:

Կարծում եմ, որ բոլոր քրիստոնյաները կհամաձայնեին ինձ հետ, եթե ես ասեի, որ թեև քրիստոնեությունը սկզբում թվում է, թե ամբողջապես բարոյականության, պարտականությունների և կանոնների, մեղքի և առաքինության մասին է, այնուամենայնիվ, այն ձեզ տանում է, այդ ամենից դուրս, դեպի ավելի վեր: Կարծես կարելի է նշմարել մի երկիր, որտեղ չեն խոսում այդ ամենի մասին, բացի միգուցե կատակելիս: Այնտեղ բոլորը լիառատորեն լցված են նրանով, ինչը մենք կոչում ենք բարություն, այնպես, ինչպես հայելին լցված է լույսով: Բայց նրանք դա բարություն չեն անվանում: Նրանք դա ոչինչ չեն անվանում: Նրանք դրա մասին չեն մտածում: Նրանք չափազանց զբաղված են՝ նայելով այն աղբյուրին, որտեղից այն ճառագում է: Բայց սա մոտ է այն կետին, որտեղ ճանապարհն անցնում է մեր աշխարհի եզրով: Ոչ մեկի աչքերը դրանից այն կողմ տեսնել չեն կարող. շատերի աչքերը կարող են տեսնել ավելի հեռուն, քան իմը:

# ՄԱՍ ՉՈՐՐՈՐԴ

## ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

## ԿԱՄ

## ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԴԵՊԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԴԱՎԱՆԱՆՔ

## 1. ՍՏԵՂԾԵԼ ԵՎ ԾՆԵԼ

Բոլորն ինձ զգուշացրել են, որ չխոսեմ նրա մասին, ինչի մասին խոսելու եմ այս վերջին մասում: Բոլորն ասում են, որ «սովորական ընթերցողը չի ուզում Աստվածաբանություն, տվե՛ք նրան պարզ և պրակտիկ կրոն»: Ես մերժել եմ նրանց խորհուրդը: Ես չեմ կարծում, որ սովորական ընթերցողն այդքան հիմար է: Աստվածաբանությունը նշանակում է «Աստծո գիտություն», և ես կարծում եմ, որ ցանկացած մարդ, որը ընդհանրապես ցանկանում է մտածել Աստծո մասին, կցանկանար Նրա մասին ունենալ ամենահստակ և ճշգրիտ գաղափարները, որոնք գոյություն ունեն: Դուք երեխա չեք. ինչո՞ւ պետք է ձեզ երեխաների պես վարվեն:

Ինչ-որ առումով, ես լիովին հասկանում եմ, թե ինչու են որոշ մարդիկ խորշում Աստվածաբանությունից: Ես հիշում եմ, մի անգամ, երբ ես ելույթ էի ունենում Ռազմական Օդուժի զինվորականների համար, մի ծեր, խիստ սպա վեր կացավ և ասաց. «Ես այդ ամենի կարիքը չունեմ: Եւ, ի դեպ, ես կրոնավոր մարդ եմ: Ես գիտեմ, որ Աստված կա: Ես զգացել եմ Նրան. գիշերը, միայնակ անապատում. այդ վիթխարի խորհուրդը: Եւ հենց այդ պատճառով է, որ ես չեմ հավատում Նրա մասին ձեր բոլոր գեղեցիկ դոգմաներին և բանաձևերին: Ցանկացած մեկին, ով հանդիպել է իրական բանին, դրանք այնքա՜ն դատարկ, չնչին և անիրական են թվում»:

Հիմա՝ ինչ-որ առումով, ես միանգամայն համաձայն էի այդ մարդու հետ: Ես կարծում եմ, որ նա հավանաբար իսկապես Աստծո զգացում էր ունեցել անապատում: Եւ երբ նա այդ զգացումից դառնում էր դեպի քրիստոնեական հավատամքներին, ես կարծում եմ, որ նա իրոք դառնում էր իրական մի բանից դեպի նվազ իրականի: Նույն կերպ, եթե մեկը, ով մի անգամ արդեն տեսել է Ատլանտյան օվկիանոսը ծովափից, գնար և բացեր Ատլանտյան օվկիանոսի քարտեզը, նա նույնպես կդառնար իրական մի բանից դեպի նվազ իրականի՝ իրական ալիքներից դեպի ինչ-որ գունավոր թղթի: Բայց ահա՛ էականը: Քարտեզը, անշուշտ, սոսկ գունավոր թուղթ է, բայց կա երկու բան, որ դուք պետք է նկատեք նրա մասին: Առաջին հերթին, այն հիմնված է նրա վրա, ինչ հարյուրավոր և հազարավոր մարդիկ բացահայտել են իրական Ատլանտյան օվկիանոսը նավարկելով: Այդպիսով, այն իր մեջ ներառում է հսկայական քանակի ապրումներ, որոնք նույնքան իրական են, որքան նրանք, որ դուք կարող եք ունենալ ծովափից. սակայն, մինչդեռ ձերը գեթ մեկ առանձին պատկեր է, քարտեզը զետեղում է բոլոր այդ տարբեր ապրումները միասին: Երկրորդ հերթին, եթե ուզում եք որևէ տեղ գնալ, քարտեզը բացարձակապես անհրաժեշտ է: Քանի դեռ դուք բավարարված եք ծողափնյա զբոսանքներով, ձեր սեփական զգացումները շատ ավելի հաճելի են, քան քարտեզին նայելը: Բայց քարտեզն ավելի օգտակար կլինի, քան ծովափնյա զբոսանքները, եթե ցանկանում եք հասնել Ամերիկա:

Հիմա՝ Աստվածաբանությունը նման է քարտեզի: Միայն քրիստոնեական ուսմունքների մասին սովորելն ու մտածելը, եթե կանգ առնեք այդտեղ, ավելի

քիչ իրական է և ավելի քիչ հուզիչ է, քան այն, ինչ պատահել էր իմ ընկերոջը անապատում: Ուսմունքներն Աստված չեն, դրանք ընդամենը մի տեսակ քարտեզ են: Բայց այդ քարտեզը հիմնված է հարյուրավոր մարդկանց զգացումների վրա, որոնք իսկապես կապի մեջ են եղել Աստծո հետ՝ զգացումներ, որոնց հետ համեմատած ցանկացած թրթռանք կամ առաքինի զգացմունքներ, որոնք դուք և ես ամենայն հավանականությամբ կարող ենք ունենալ ինքներս մեզ, կլինեն շատ աննշան և շատ խառնաշփոթ:
Եւ երկրորդը՝ եթե ցանկանում եք ավելի հեռու գնալ, կարիք ունեք օգտագործելու քարտեզը: Տեսեք՝ այն, ինչ կատարվեց այդ մարդու հետ անապատում, գուցեև իրական էր և, իհարկե, հուզիչ էր, բայց դրանից ոչ մի արդյունք չկա: Այն ոչ մի տեղ չի տանում: Դրա հետ այլ անելիք չկա: Իրականում, հենց դա է պատճառը, որ անորոշ կրոնը, որը վերաբերում է Աստծուն բնության մեջ զգալու և այլն, այդքան գրավիչ է: Միայն թրթռանքներ և ոչ մի աշխատանք. ինչպես ծովափից ալիքներին դիտելը: Բայց դուք չեք հասնի Նյուֆաունդլենդ՝ այդ կերպ ուսումնասիրելով Ատլանտյան օվկիանոսը, և դուք չեք ստանա հավերժական կյանք՝ պարզապես զգալով Աստծո ներկայությունը ծաղիկների կամ երաժշտության մեջ: Ոչ էլ որևէ տեղ կհասնեք՝ նայելով քարտեզներին՝ առանց ծով դուրս գալու: Եւ ոչ էլ շատ ապահով կլինեք, եթե ծով դուրս գաք առանց քարտեզի:

Այլ կերպ ասած, Աստվածաբանությունը կիրառական է, հատկապես՝ հիմա: Հին ժամանակներում, երբ ավելի քիչ կրթություն կար և քննարկումներն ավելի քիչ էին, թերևս հնարավոր էր ապրել՝ Աստծո մասին շատ քիչ պարզ գաղափարներ ունենալով: Բայց հիմա այդպես չէ: Բոլորը կարդում են, բոլորը լսում են, թե ինչ է խոսվում: Հետևաբար, եթե ուշադրություն չդարձնես Աստվածաբանությանը, դա չի նշանակի, որ դու գաղափար չես ունենա Աստծո մասին: Դա կնշանակի, որ կունենաս շատ սխալ՝ վատ, խճճված, հնացած գաղափարներ: Որովհետև Աստծո մասին գաղափարներից շատերը, որոնք այսօր շրջանառվում են որպես նորություն, պարզապես նրանք են, որոնք իրական Աստվածաբանները քննարկել են դարեր առաջ և մերժել: Ժամանակակից Անգլիայում հանրայնություն վայելող կրոնին հավատալը հետադիմություն է, ինչպես հավատալը, որ երկրագունդը տափակ է:

Իրոք՝ մի՞թե հանրայնություն վայելող գաղափարը քրիստոնեության վերաբերյալ, խորքային առումով, սոսկ հետևյալը չէ. որ Հիսուս Քրիստոսը բարոյական մեծ ուսուցիչ էր, և եթե մենք միայն ընդունեինք նրա խորհուրդները, միգուցե կկարողանայինք ավելի լավ սոցիալական կարգեր հաստատել և խուսափել հերթական պատերազմից: Հիմա, ի դեպ, դա միանգամայն ճիշտ է: Բայց այն ձեզ ասում է շատ ավելի քիչ, քան ամբողջ ճշմարտությունը քրիստոնեության մասին, և այն ընդհանրապես գործնական կարևորության չունի:

Միանգամայն ճիշտ է, որ եթե մենք ընդունեինք Քրիստոսի խորհուրդները, ապա մենք շուտով կապրեինք ավելի երջանիկ աշխարհում: Կարիք չկա գնալ նույնիսկ այնքան հեռու, որքան Քրիստոսը: Եթե մենք անեինք այն ամենը, ինչ մեզ ասել էր Պլատոնը, Արիստոտելը կամ Կոնֆուցիոսը, մեր իրավիճակը շատ ավելի լավ կլիներ, քան հիմա է: Եւ հետո ի՞նչ: Մենք երբեք չենք հետևել մեծ

ուսուցիչների խորհուրդներին: Ինչո՞ւ է հավանական, որ հիմա կսկսենք: Ինչո՞ւ է ավելի հավանական, որ մենք կհետևենք Քրիստոսին, քան մյուսներից որևէ մեկին: Որովհետև նա ամենալա՞վ բարոյական ուսուցիչն է: Բայց դա է՛լ ավելի քիչ հավանական է դարձնում, որ մենք կհետևենք նրան: Եթե մենք չենք կարողանում տարրական դասերը սովորել, հավանակա՞ն է արդյոք, որ կկարողանանք ավելի դժվարը սովորել: Եթե քրիստոնեությունը միայն նշանակում է ևս մեկ բարի խորհուրդ, ապա քրիստոնեությունը ոչ մի նշանակություն չունի: Վերջին չորս հազար տարվա ընթացքում բարի խորհուրդների պակաս չի եղել: Մի քիչ ավելին կամ պակասը որևիցե տարբերություն չի ստեղծում:

Բայց հենց նայում ենք ցանկացած իրական քրիստոնեական գրություններին, տեսնում ենք, որ դրանք խոսում են այս հանրայնություն վայելող կրոնից ամբողջովին տարբերվող մի այլ բանի մասին: Դրանք ասում են, որ Քրիստոսը Աստծո Որդին է (ինչ էլ որ դա նշանակի): Դրանք ասում են, որ նրանք, ովքեր իրենց վստահությունը դնում են Նրա վրա, նույնպես կարող են Աստծո Որդիներ դառնալ (ինչ էլ որ դա նշանակի): Նրանք ասում են, որ Նրա մահը փրկեց մեզ մեր մեղքերից (ինչ էլ որ դա նշանակի):

Անիմաստ է բողոքել, որ այս արտահայտությունները դժվար ըմբռնելի են: Քրիստոնեությունը պնդում է, որ այն պատմում է մեզ մեկ ուրիշ աշխարհի մասին՝ մի աշխարհի, որը անդին է այն աշխարհից, որը մենք կարող ենք շոշափել, լսել և տեսնել: Դուք կարող եք համարել, որ այդ պնդումը սխալ է, բայց եթե այն ճշմարիտ լիներ, ապա այն, ինչ այն ասում է մեզ, անկասկած դժվար կլիներ՝ առնվազն նույնքան դժվար, որքան ժամանակակից ֆիզիկան, և հենց նույն պատճառով:

Հիմա՝ քրիստոնեության ամենացնցող գաղափարը այն է, որ միացվելով Քրիստոսին, մենք կարող ենք «դառնալ Աստծո Որդիներ»: Ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Մի՞թե մենք արդեն Աստծո Որդիներ չենք: Չէ՞ որ Աստծո հայրությունը քրիստոնեության հիմնական գաղափարներից է:»
Դե, ինչ-որ առումով, անկասկած, մենք արդեն Աստծո որդիներ ենք: Ես նկատի ունեմ, որ Աստված ստեղծել է մեզ և սիրում է մեզ և հոգ է տանում մեր մասին, և այդպիսով նման է հոր: Բայց երբ Աստվածաշունչը խոսում է մեր Աստծո Որդիներ «դառնալու» մասին, ակնհայտորեն դա պետք է այլ բան նշանակի: Եւ դա մեզ բերում է հենց Աստվածաբանության բուն կորիզին:

Հավատամքներից մեկն ասում է, որ Քրիստոսն Աստծո Որդին է «ծնված, ո՛չ արարված», և ավելացնում է. «ծնված Իր Հորից՝ բոլոր աշխարհներից առաջ»: Խնդրում եմ, մի բան հստակեցրեք՝ սա կապ չունի այն փաստի հետ, որ երբ Քրիստոսը ծնվեց երկրի վրա որպես մարդ, այդ մարդը կույսի որդի էր: Մենք հիմա չենք խոսում կուսական ծնունդի մասին: Մենք խոսում ենք մի բանի մասին, որը տեղի է ունեցել բնության ստեղծվելուց առաջ, նախքան ժամանակի սկիզբը: Քրիստոսը ծնված է «բոլոր աշխարհներից առաջ, այլ ոչ արարված»: Ի՞նչ է դա նշանակում:

Մենք շատ չենք օգտագործում «ծնել» կամ «ծնված» բառերը ժամանակակից անգլերենում, բայց բոլորը դեռ գիտեն, թե դրանք ինչ են նշանակում: Ծնել՝ նշանակում է հայր դառնալ, արարել՝ նշանակում է ստեղծել: Եւ տարբերությունը սա է: Երբ դու ծնում ես, դու ծնում ես նույն տեսակի մի բան, ինչ դու ես: Մարդը ծնում է իր տեսակի նորածիններ, կուղբը ծնում է փոքրիկ կուղբեր, իսկ թռչունը «ծնում» է ձվեր, որոնք դառնում են փոքրիկ թռչուններ: Բայց երբ դուք ստեղծում եք, դուք ստեղծում եք մի բան, որը տարբերվում է ձեզնից: Թռչունը բույն է շինում, կուղբը պատվար է շինում, մարդը ստեղծում է հեռահար կապ. կամ նա կարող է ստեղծել մի բան, որն ավելի նման է իրեն, քան հեռահար կապը, ասենք, արձան: Եթե նա բավական խելացի քանդակագործ է, նա կարող է ստեղծել այնպիսի արձան, որն իսկապես շատ նման է մարդու: Բայց, իհարկե, դա իսկական մարդ չէ. այն միայն նման է նրան: Այն չի կարող շնչել կամ մտածել: Այն կենդանի չէ:

Հիմա՝ դա առաջին բանն է, որ պետք է հստակեցնել: Այն, ինչ Աստված ծնում է, Աստված է. ճիշտ այնպես, ինչպես այն, ինչ ծնում է մարդը, մարդ է: Այն, ինչ Աստված ստեղծում է, Աստված չէ. ճիշտ այնպես, ինչպես այն, ինչ ստեղծում է մարդը, մարդ չէ: Ահա թե ինչու մարդիկ Աստծո Որդիներ չեն այն առումով, որ Քրիստոսն է Աստծո Որդի: Նրանք կարող են որոշակի առումներով նմանվել Աստծուն, բայց նրանք նույն տեսակի բաներ չեն: Նրանք ավելի շատ նման են Աստծո արձանների կամ նկարների:

Արձանը մարդու կերպարանք ունի, բայց կենդանի չէ: Նույն կերպ, մարդն ունի (այն իմաստով, որ հիմա կբացատրեմ) Աստծո «կերպարանքը» կամ նմանությունը, բայց չունի այն տեսակի կյանքը, ինչպիսին ունի Աստված: Նախ՝ քննարկենք առաջին կետը (մարդու նմանությունն Աստծուն): Այն ամենը, ինչ Աստված ստեղծել է, ինչ-որ նմանություն ունի Իրեն: Տիեզերքն իր հսկայականությամբ նման է Նրան. ոչ թե նրա համար, որ տիեզերքի մեծությունը նույնպիսի մեծություն է, ինչ Աստծո մեծությունը, այլ որ այն դրա մի տեսակ խորհրդանիշը կամ թարգմանությունն է ոչ հոգևոր հատկանիշներով: Նյութը նման է Աստծուն՝ էներգիա ունենալու առումով. թեև նորից, ֆիզիկական էներգիան ուրիշ տեսակի բան է Աստծո զորություն համեմատ: Բուսական աշխարհը նման է Նրան, քանի որ այն կենդանի է, և Նա «կենդանի Աստված է»: Բայց կյանքը, այս կենսաբանական իմաստով, նույնը չէ, ինչ այն կյանքը, որ գոյություն ունի Աստծո մեջ. այն ընդամենը դրա մի տեսակ խորհրդանիշն է կամ ստվերը: Գալով կենդանիներին, մենք հայտնաբերում ենք այլ տեսակի նմանություններ, կենսաբանական կյանքից զատ: Միջատների ինտենսիվ ակտիվությունն ու պտղաբերությունը, օրինակ, առաջին աղոտ նմանությունն է Աստծո անդադար գործունեությանն ու ստեղծագործությանը: Գալով կաթնասուններին, մենք արդեն տեսնում ենք բնազդային սիրո սկիզբը: Դա նույնը չէ, ինչ սերը, որը գոյություն ունի Աստծո մեջ, բայց այն նման է դրան - ավելի շուտ՝ այնպես, ինչպես հարթ թղթի վրա նկարված նկարը, այնուամենայնիվ, կարող է «նման» լինել բնապատկերի: Գալով մարդուն՝ կենդանիներից ամենաբարձրին, մենք հանդիպում ենք Աստծո ամենամոտ նմանությանը, որին մենք ծանոթ ենք: (Ուրիշ աշխարհներում գուցե լինեն արարածներ, որոնք ավելի նման են Աստծուն, քան մարդը, բայց մենք նրանց մասին չգիտենք): Մարդը ոչ միայն ապրում է, այլև սիրում է և խորհում է. նրա

մեջ կենսաբանական կյանքը հասնում է մեր իմացությանը ծանոթ ամենաբարձր մակարդակին:

Բայց այն, ինչ իր բնական վիճակում չունի մարդը, Հոգևոր կյանքն է՝ Աստծո մեջ գոյություն ունեցող ավելի բարձր և տարբեր տեսակի կյանքը: Մենք երկու դեպքում էլ օգտագործում ենք նույն «կյանք» բառը. բայց եթե կարծեիք, որ երկուսն էլ, հետևաբար, պետք է նույն տեսակի բաներ լինեն, դա նման կլիներ, որ մտածեինք, որ տարածության «մեծությունը» և Աստծո «մեծությունը» նույն տեսակի մեծությունն է: Իրականում, կենսաբանական կյանքի և հոգևոր կյանքի միջև տարբերությունն այնքան կարևոր է, որ ես նրանց անվանելու եմ երկու տարբեր անուններով: Կենսաբանական տեսակը, որը մեզ է տրվում Բնության միջոցով, և որը (ինչպես Բնության մեջ եղած ցանկացած բան) միշտ հակված է մարելու և քայքայվելու, և որը կարող է պահպանվել միայն Բնության անդադար մատակարարումների միջոցով՝ օդի, ջրի, սննդի, և այլնի տեսքով, «Բիոս»-ն է: Հոգևոր կյանքը, որը Աստծո մեջ է ամբողջ հավերժությունից, և որը ստեղծեց ողջ բնական տիեզերքը, «Զոե»-ն է: Բիոսը, անշուշտ, որոշակի աղոտ կամ խորհրդանշական նմանություն ունի Զոեին, բայց միայն այնպիսի նմանություն, որը կա լուսանկարի և վայրի, արձանի և մարդու միջև: Մարդը, որը Բիոս ունենալուց փոխվել է Զոե ունենալուն, նույնքան մեծ փոփոխություն կկրեր, որքան արձանը, որը քանդակված քարից վերածվել էր իսկական մարդու:

Եւ հենց սա է՛ քրիստոնեությունը: Այս աշխարհը մի մեծ քանդակագործի արվեստանոց է: Մենք արձաններն ենք, և արվեստանոցում շշուկներ են պտտվում, որ մեզանից ոմանք մի օր կենդանանալու են:

## 2. ԵՌԱՆՁՆ ԱՍՏՎԱԾԸ

Վերջին գլուխը վերաբերում էր ծնելու և ստեղծելու տարբերությանը: Մարդը ծնում է երեխա, սակայն ստեղծում է միայն արձան: Աստված ծնում է Քրիստոսին, բայց ստեղծում է միայն մարդկանց: Բայց դա ասելով, ես միայն ցույց տվեցի մեկ հատկանիշ Աստծո մասին, մասնավորապես՝ որ այն, ինչ ծնում է Հայր Աստվածը, Աստված է, մի բան, որը նույն տեսակից է, ինչ Նա: Այդ առումով, դա նման է նրան, որ մարդ արարածը որդի է ծնում: Բայց ոչ լիովին: Հետևաբար, ես պետք է փորձեմ մի փոքր ավելի մանրամասն բացատրել:

Մեր օրերում շատերն են ասում. «Ես հավատում եմ Աստծուն, բայց ոչ անձնական Աստծուն»: Նրանց զգացողությունն այն է, որ այդ խորհրդավոր բանը, որը մնացած բոլոր բաների ետևում է, պետք է ավելին լինի, քան անձնավորություն: Հիմա՝ քրիստոնյաները միանգամայն համաձայն են: Սակայն քրիստոնյաները միակ մարդիկ են, որոնք առաջարկում են որևէ պատկերացում, թե ինչպիսին կարող է լինել էակը, որը անձնավորությունից անդին է: Մնացած բոլոր մարդիկ, թեև ասում են, որ Աստված անձնավորությունից անդին է, իրականում Նրան պատկերացնում են որպես անանձնական մի բան, այսինքն՝ ավելի քիչ, քան անձնական: Եթե դուք գեր-անձնական բան եք փնտրում, ինչ-որ բան ավելին, քան անձը, ապա քրիստոնեական գաղափարի և մյուս գաղափարների միջև ընտրությունը քննարկման ենթակա չէ: Քրիստոնեական գաղափարը շուկայում միակն է:

Կրկին, ոմանք կարծում են, որ այս կյանքից հետո, կամ գուցե մի քանի կյանքերից հետո, մարդկային հոգիները «կկլանվեն» Աստծո մեջ: Բայց երբ նրանք փորձում են բացատրել, թե ինչ նկատի ունեն, թվում է, թե նրանք նկատի ունեն մեր անձի կլանվումը Աստծո մեջ, ինչպես մի նյութ կլանվում է մյուսի մեջ: Նրանք ասում են, որ այն նման է մի ջրի կաթիլի, որը ընկնում է ծովի մեջ: Բայց դա, իհարկե, կաթիլի վերջն է: Եթե մեզ հետ լինելու է այդպես, ապա կլանված լինելը նույնն է, ինչ գոյություն չունենալը: Միայն քրիստոնյաներն են, որոնք պատկերացում ունեն, թե ինչպես կարող են մարդկային հոգիները ներգրավվել Աստծո կյանքի մեջ և, այնուամենայնիվ, մնալ հենց իրենք, իրականում լինել շատ ավելի իրենք, քան նախկինում էին:

Ես զգուշացրել էի ձեզ, որ Աստվածաբանությունը պրակտիկ է: Ամբողջ իմաստը, որի համար մենք գոյություն ունենք, այսպիսով Աստծո կյանքի մեջ ներգրավվելն է: Սխալ պատկերացումները, թե ինչ է այդ կյանքը, կդժվարացնեն դա: Եւ հիմա, մի քանի րոպե, ես պետք է խնդրեմ, որ բավական ուշադիր հետևեք ինձ:

Դուք գիտեք, որ տարածության մեջ դուք կարող եք շարժվել երեք ուղղությամբ՝ ձախ կամ աջ, հետ կամ առաջ, վեր կամ վար: Յուրաքանչյուր ուղղություն կամ այս երեքից մեկն է, կամ բաղկացած է այս երեքից: Դրանք կոչվում են երեք չափերը: Հիմա ուշադրություն դարձրեց հետևյալին: Եթե դուք օգտագործում

եք միայն միաչափ տարածությունը, կարող եք գծել միայն ուղիղ գիծ: Եթե դուք օգտագործում եք երկչափ տարածությունը, կարող եք գծել պատկեր, ասենք, քառակուսի: Իսկ քառակուսին կազմված է չորս ուղիղ գծերից: Մի քայլ առաջ անցնենք: Եթե ձեր տրամադրության տակ ունեք եռաչափ տարածությունը, ապա կարող եք կառուցել այն, ինչ անվանում ենք պինդ մարմին, ասենք, խորանարդ՝ զառի կամ շաքարի կտորի նման մի բան: Իսկ խորանարդը բաղկացած է վեց քառակուսուց:

Նկատեցի՞ք սրա նշանակությունը: Միաչափ հարթության աշխարհը ուղիղ գիծ կլիներ: Երկչափ աշխարհում դեռ ունենք ուղիղ գծեր, բայց մի քանի գծերը կազմում են մեկ պատկեր: Եռաչափ աշխարհում դեռ ունենք պատկերներ, բայց մի քանի պատկերները կազմում են մեկ պինդ մարմին: Այլ կերպ ասած, երբ բարձրանում ենք ավելի իրական և ավելի բարդ մակարդակների, հետևում չենք թողնում այն բաները, որոնք ունեինք ավելի պարզ մակարդակներում. դրանք դեռ կան, բայց դրանք համակցված են նոր ձևերով՝ այնպիսի ձևերով, որոնք չէինք պատկերացնի, եթե իմանայինք միայն ավելի պարզ մակարդակները:

Հիմա՝ Աստծո մասին քրիստոնեական նկարագրությունը ներառում է նույն սկզբունքը: Մարդկային մակարդակը պարզ և բավականին դատարկ մակարդակ է: Մարդկային մակարդակում մեկ անձը մեկ էակ է, և ցանկացած երկու անձ երկու առանձին էակներ են, ճիշտ այնպես, ինչպես երկչափ տարածության մեջ (ասենք, հարթ թղթի վրա) մեկ քառակուսին մեկ պատկեր է, և ցանկացած երկու քառակուսի երկու առանձին պատկերներ են: Աստվածային մակարդակում անձնավորություններ նույնպես կան. բայց այնտեղ դրանք համակցված են նոր ձևերով, որոնք մենք, ովքեր այդ մակարդակում չենք ապրում, չենք կարող պատկերացնել: Աստծո հարթության մեջ, այսպես ասած, գոյություն ունի էակ, որը երեք Անձ է՝ սակայն միևնույն ժամանակ մնալով մեկ Էություն, ինչպես որ խորանարդը վեց քառակուսի է՝ սակայն միևնույն ժամանակ մնալով մեկ խորանարդ: Իհարկե, մենք չենք կարող լիովին պատկերացնել այդպիսի Էակ. ճիշտ այնպես, ինչպես, եթե մենք այնպես ստեղծված լինեինք, որ ընկալեինք միայն երկչափ տարածությունը, մենք երբեք չէինք կարող կատարելապես պատկերացնել խորանարդը: Բայց մենք կարող ենք մի տեսակ աղոտ պատկերացում կազմել դրա մասին: Եւ երբ մենք դա անում ենք, այդ ժամանակ, մեր կյանքում առաջին անգամ, ինչ-որ գաղափար ենք կազմում, թեկուզ աղոտ, ինչ-որ գեր-անձնական բանի մասին՝ մի բանի, որն ավելին է, քան անձը: Այն մի բան է, որը մենք երբեք չէինք կարող կռահել, և այնուամենայնիվ, երբ մեկ մեզ ասվում է, կարծես զգում ենք, որ պետք է կարողանայինք կռահել այն, քանի որ այն այնքան լավ է համապատասխանում բոլոր այն բաներին, որոնք մենք արդեն գիտենք:

Դուք կարող եք հարցնել. «Եթե մենք չենք կարող պատկերացնել երեք անձից բաղկացած մի Էակ, ի՞նչ օգուտ կա Նրա մասին խոսելուց»: Դե, Նրա մասին խոսելուց օգուտ չկա: Կարևորը, իրականում, ներքաշվելն է այդ եռանձն կյանքի մեջ, և դա կարող է սկսվել ցանկացած պահի՝ այս գիշեր, եթե ցանկանում եք:

Այն, ինչ նկատի ունեմ, հետևյալն է: Սովորական հասարակ քրիստոնյան ծնկի է գալիս՝ անելու իր աղոթքը: Նա փորձում է կապ հաստատել Աստծո հետ: Բայց

եթե նա քրիստոնյա է, նա գիտի, որ այն, ինչ իրեն դրդում է աղոթել, նույնպես Աստված է. այն Աստված, որը, այսպես ասած, իր ներսում է: Բայց նա նաև գիտի, որ Աստծո մասին իր ամբողջ իրական իմացությունը իրեն է հասնում Քրիստոսով՝ այն Մարդը, ով Աստված էր. որ Քրիստոսը կանգնած է իր կողքին, օգնում է իրեն աղոթել, աղոթում իր համար: Տեսնում եք, թե ինչ է տեղի ունենում: Աստված այն բանն է, որին նա աղոթում է, այն նպատակը, որին նա փորձում է հասնել: Աստված նաև այն բանն է, որը դրդում է նրան՝ շարժիչ ուժը: Աստված նաև այն ճանապարհն է կամ կամուրջը, որով նա մղվում է դեպի այդ նպատակը: Այսինքն՝ եռանձն Էակի ողջ եռամաս կյանքը իրականում տեղի է ունենում այդ սովորական փոքրիկ ննջասենյակում, որտեղ սովորական մարդն անում է իր աղոթքը: Մարդը ներգրավվում է կյանքի ավելի բարձր տեսակի մեջ՝ այն կյանքի, որը ես անվանեցի Զոե կամ հոգևոր կյանք. նա ներքաշվում է դեպի Աստված, Աստծո կողմից, միևնույն ժամանակ մնալով հենց ինքը:

Եւ այսպես է սկսվել Աստվածաբանությունը: Մարդիկ արդեն անորոշ կերպով գիտեին Աստծո մասին: Հետո եկավ մի մարդ, որը ասաց, որ Նա Աստված է. սակայն նա այնպիսի մարդ չէր, ում կարող էիք անտեսել որպես խելագարի: Նա համոզեց նրանց հավատալ Իրեն: Նրանք նորից հանդիպեցին Նրան այն բանից հետո, երբ տեսան Նրան սպանված: Եւ հետո, երբ նրանք ձևավորվել էին որպես մի փոքր հասարակություն կամ համայնք, նրանք ինչ-որ կերպ Աստծուն գտան նաև իրենց ներսում՝ ուղղորդելով իրենց, հնարավորություն տալով իրենց անել այնպիսի բաներ, որոնք նախկինում չէին կարող անել: Եւ երբ նրանք հղկեցին այդ ամենը, նրանք տեսան, որ հանգել են եռանձն Աստծո քրիստոնեական սահմանմանը:

Այս սահմանումը մենք չենք ստեղծել. Աստվածաբանությունը ինչ-որ իմաստով փորձարարական գիտություն է: Պարզ կրոններն են, որ հորինված են: Երբ ասում եմ, որ այն «ինչ-որ իմաստով» փորձարարական գիտություն է, նկատի ունեմ, որ այն ինչ-որ առումներով նման է մյուս փորձարարական գիտություններին, բայց ոչ լիովին: Եթե երկրաբան եք, որը ուսումնասիրում է ժայռերը, ապա պետք է գնաք ու գտնեք ժայռերը: Նրանք ձեր մոտ չեն գա, և եթե գնաք նրանց մոտ, նրանք չեն կարող փախչել: Նախաձեռնությունը ամբողջովին ձերն է: Նրանք չեն կարող ո՛չ օգնել, ո՛չ խանգարել: Բայց ենթադրենք, որ կենդանաբան եք և ցանկանում եք լուսանկարել վայրի կենդանիներին իրենց բնակավայրերում: Դա մի փոքր տարբերվում է ժայռերի ուսումնասիրությունից: Վայրի կենդանիները ձեզ մոտ չեն գա, բայց նրանք կարող են փախչել ձեզնից: Եւ եթե զգույշ չլինեք, նրանք կփախչեն: Այս պարագայում, նախաձեռնության մի փոքրիկ մաս նրանցն է:

Հիմա՝ մի մակարդակ ավելի բարձր: Ենթադրենք, ցանկանում եք ճանաչել մի մարդու: Եթե նա վճռական է ձեզ թույլ չտալու, նրան չեք ճանաչի: Դուք պետք է ձեռք բերեք նրա վստահությունը: Այս դեպքում նախաձեռնությունը հավասարապես բաժանված է. ընկերությունը երկու հոգով է ստեղծվում:

Երբ գալիս ենք Աստծո ճանաչման հարցին, ապա նախաձեռնությունը Նրանն է: Եթե Նա Ինքն Իրեն չհայտնի, ինչ էլ որ անեք, հնարավորություն չեք ունենա գտնել Նրան: Եւ, իրականում, Նա Իրեն շատ ավելին է հայտնում որոշ

մարդկանց, քան մյուսներին, ոչ թե այն պատճառով, որ Նա սիրելիներ ունի, այլ որովհետև անհնար է, որ Նա Իրեն հայտնի մի
մարդու, ում ողջ միտքն ու անձնավորությունը խախտված վիճակում են: Ճիշտ այնպես, ինչպես արևի լույսը, թեև այն սիրելիներ չունի, չի կարող արտացոլվել փոշոտ հայելու մեջ նույնքան պարզորեն, որքան մաքուրի:

Դուք կարող եք դա այլ կերպ ձևակերպել՝ ասելով, որ մինչդեռ այլ գիտություններում ձեր օգտագործած գործիքները ձեզնից դուրս բաներ են (մանրադիտակների և աստղադիտակների նման առարկաներ), գործիքը, որով տեսնում ես Աստծուն, քո ամբողջ եսն է: Եւ եթե մարդու անձը մաքուր և պայծառ չպահվի, ապա նրա՝ Աստծո պատկերացում մշուշոտ կլինի, այնպես, ինչպես լուսինը մշուշոտ կթվար, եթե նրան նայեինք կեղտոտ աստղադիտակով: Ահա թե ինչու չար ազգերն ունեն չար կրոններ. նրանք Աստծուն նայում են կեղտոտ ոսպնյակով:

Աստված կարող է Իրեն հայտնել այնպիսին, ինչպիսին Նա իրականում կա միայն իսկական մարդկանց: Եւ դա նշանակում է ոչ թե պարզապես այն մարդկանց, որոնք անհատապես լավն են, այլ այն մարդկանց, որոնք միավորված են մեկ մարմնի մեջ՝ սիրելով միմյանց, օգնելով միմյանց, ցույց տալով Նրան միմյանց: Քանի որ Աստված նախատեսում էր, որ մարդկությունը հենց այդպես լինի՝ նման նվագախմբի երաժիշտների կամ մեկ մարմնի օրգանների:

Հետևաբար, Աստծո մասին սովորելու իրական լիարժեք գործիքը ողջ քրիստոնեական համայնքն է, որը միասնական սպասում է Նրան: Քրիստոնեական եղբայրությունը, այսպես ասած, այս գիտության տեխնիկական սարքավորումներն են՝ լաբորատորիական կահավորումը: Ահա թե ինչու բոլոր այն մարդիկ, որոնք մի քանի տարին մեկ հայտնվում են իրենց սեփական պարզեցված կրոնով՝ որպես քրիստոնեության ավանդույթի փոխարինող, իսկապես ժամանակ են վատնում: Ինչպես մի մարդ, որ չունի ոչ մի գործիք, բացի մի հին հեռադիտակից, նպատակադրվեր ուղղել բոլոր իսկական աստղագետներին: Նա կարող է խելացի մեկը լինել, նա կարող է ավելի խելացի լինել, քան որոշ իսկական աստղագետներ, բայց նա ինքն իրեն հնարավորություն չի տալիս: Եւ երկու տարի անց բոլորը մոռացել են նրա մասին, բայց իրական գիտությունը դեռ շարունակվում է:

Եթե քրիստոնեությունը մի բան լիներ, որ մենք հորինում էինք, իհարկե, կարող էինք հեշտացնել այն: Բայց դա այդպես չէ: Մենք չենք կարող պարզությամբ մրցել այն մարդկանց հետ, որոնք կրոններ են հորինում: Ինչպե՞ս կարող ենք: Մենք գործ ունենք Փաստի հետ: Յուրաքանչյուրը կարող է պարզ լինել, եթե նա կարիք չունի անհանգստանալու փաստերի մասին:

## 3. ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

Շատ անհեթեթ գաղափար կա, որ գիրք կարդալիս երբեք չպետք է «ցատկել»: Բոլոր խելամիտ մարդիկ ազատորեն ցատկում են, երբ հասնում են մի գլխի, որը, իրենց կարծիքով, ոչ մի օգուտ չի տալու իրենց: Այս գլխում ես խոսելու եմ մի բանի մասին, որը կարող է օգտակար լինել որոշ ընթերցողների համար, բայց որը ուրիշներին կարող է թվալ սոսկ անհարկի խճճում: Եթե դուք երկրորդ տեսակի ընթերցողներից եք, ապա խորհուրդ եմ տալիս ընդհանրապես չանհանգստանալ այս գլխի մասին, և անցնել հաջորդ գլխին:

Վերջին գլխում ես պետք է քննարկեի աղոթքի թեման, և քանի դեռ այն թարմ է ձեր և իմ մտքում, ես կցանկանայի խոսել մի դժվարության մասին, որ որոշ մարդիկ ունեն աղոթքի գաղափարի վերաբերյալ: Մի մարդ այն ձևակերպեց ինձ համար հետևյալ կերպ. «Ես կարող եմ հավատալ Աստծուն, շատ բարի, բայց այն, ինչ ես չեմ կարող կուլ տալ, դա այն գաղափարն է, որ Նա ուշադրություն է հատկացնում մի քանի հարյուր միլիոն մարդ արարածի, որոնք բոլորը դիմում են Նրան միևնույն պահին»: Եւ ես բացահայտել եմ, որ բավականին շատ մարդիկ այդպես են զգում:

Նախ՝ առաջինը, որ պետք է նկատել, այն է, որ ամբողջ խնդիրը պարփակված է «միևնույն պահին» բառերի մեջ: Մեզանից շատերը կարող են պատկերացնել՝ Աստծուն հոգ տանելիս ցանկացած քանակի դիմորդների, եթե նրանք գային Նրա մոտ մեկ առ մեկ, և Նա անվերջ ժամանակ ունենար դա անելու համար: Այսպիսով, այն, ինչ իրականում թաքնված է այս դժվարության հետևում Աստծո՝ չափից դուրս շատ բաներ մեկ պահի մեջ տեղավորելու գաղափարն է:

Դե, իհարկե, դա այն է, ինչ տեղի է ունենում մեզ հետ: Մեր կյանքը մոտենում է մեզ ակնթարթ առ ակնթարթ: Մի ակնթարթն անհետանում է, մինչև հաջորդի գալը, և յուրաքանչյուրի մեջ շատ քիչ ժամանակ կա: Այդպիսին է Ժամանակը: Եւ, իհարկե, դուք և ես հակված ենք ենթադրել, որ այս Ժամանակային Շարքը՝ անցյալի, ներկայի և ապագայի այս դասավորությունը, ոչ թե պարզապես այն ձևն է, որով կյանքը մոտենում է մեզ, այլ մի բան, որը նույնն է գոյություն ունեցող բոլոր բաների համար: Մենք հակված ենք ենթադրելու, որ ամբողջ տիեզերքը և Աստված Ինքը միշտ շարժվում են անցյալից դեպի ապագա, ինչպես մենք: Բայց շատ ուսյալ մարդիկ համաձայն չեն սրա հետ: Աստվածաբաններն էին, որ սկզբում առաջ քաշեցին այն միտքը, որ որոշ բաներ ընդհանրապես ժամանակի մեջ չեն. ավելի ուշ փիլիսոփաները շարունակեցին այն, և հիմա գիտնականներից ոմանք անում են նույնը:

Գրեթե կասկածից վեր է, որ Աստված ժամանակի մեջ չէ: Նրա կյանքը բաղկացած չէ իրար հաջորդող ակնթարթներից: Եթե մի միլիոն մարդ աղոթում է Նրան այս գիշեր ժամը տասն անց երեսունին, Նա կարիք չունի լսելու նրանց բոլորին ժամանակի այդ մի փոքրիկ հատվածում, որը մենք անվանում ենք տասն անց երեսուն: Տասն անց երեսունը և աշխարհի սկզբից սկսած ամեն մի պահը միշտ Ներկա է Նրա համար: Եթե կուզեք՝ Նա ունի ողջ հավերժությունը,

որի ընթացքում կարող է լսել օդաչուի վայրկենական աղոթքը այն պահին, երբ նրա վթարի ենթարկված ինքնաթիռը այրվում է կրակի մեջ:

Սա դժվար է՝ ես հասկանում եմ: Փորձեմ տալ մի օրինակ, որը ոչ թե նույնն է, այլ մի քիչ նման: Ենթադրենք՝ ես վեպ եմ գրում: Ես գրում եմ. «Մերին վայր դրեց իր գործը, և հաջորդ պահին դուռը թակեցին»: Մերիի համար, որը պետք է ապրի իմ պատմության երևակայական ժամանակում, գործը վայր դնելու և թակոցը լսելու միջև որևէ դադար չկա: Բայց ես, ով Մերիի ստեղծողն եմ, բնավ չեմ ապրում այդ երևակայական ժամանակում: Այդ նախադասության առաջին կեսը գրելուց հետո, և մինչև երկրորդ կեսին անցնելը՝ այդ ամբողջ ժամանակահատվածում, ես կարող էի նստել երեք ժամ և անշեղորեն մտածել Մերիի մասին: Ես կարող էի մտածել Մերիի մասին ասես նա գրքի միակ կերպարը լիներ, և այնքան երկար, որքան ես կցանկանայի, և այն ժամերը, որոնք ես անցկացրել էի դա անելու համար, բնավ չէին երևա Մերիի ժամանակում (պատմության մեջ եղած ժամանակում):

Սա, իհարկե, կատարյալ նկարագրում չէ: Բայց այն կարող է պատկերացում տալ նրա վերաբերյալ, որը ես կարծում եմ, ճշմարտությունն է: Աստված չի ընթանում այս տիեզերքի Ժամանակաշարում, ճիշտ այնպես, ինչպես հեղինակը չի ընթանում իր վեպի երևակայական ժամանակում: Նա հավերժական ուշադրություն կարող է հատկացնել մեզանից յուրաքանչյուրի համար: Նա կարիք չունի գործ ունենալ մեզ բոլորիս հետ միաժամանակ: Դու այնքան մենակ ես Նրա հետ, ասես միակ էակը լինեիր, որը Նա երբևէ ստեղծել է: Երբ Քրիստոսը մահացավ, Նա մահացավ անհատապես քեզ համար ճիշտ նույնքան, որքան եթե դու լինեիր աշխարհի միակ մարդը:

Իմ օրինակը թերի է հետևյալ կերպ: Իմ օրինակում հեղինակը դուրս է գալիս մի Ժամանակաշարից (վեպի)՝ միայն մեկ այլ Ժամանակաշարի (իսկականի) մեջ մտնելով: Բայց Աստված, իմ կարծիքով, ամենևին էլ որևէ Ժամանակաշարում չի ապրում: Նրա կյանքը մեր կյանքի պես ակնթարթ առ անկթարթ չի անցնում. Նրա մոտ, այսպես ասած, դեռ 1920 թվականն է և արդեն՝ 1960-ը: Որովհետև Նրա կյանք հենց Ինքն է:

Եթե պատկերացնենք ժամանակը որպես ուղիղ գիծ, որով մենք պետք է ճանապարհորդենք, ապա պետք է պատկերացնել Աստծուն որպես ամբողջ էջը, որի վրա գծված է գիծը: Մենք գալիս ենք գծի մասերին մեկ առ մեկ. մենք պետք է հեռանանք Ա-ից՝ մինչև Բ-ին հասնելը, և չենք կարող հասնել Գ-ին, մինչև չհեռանանք Բ-ից: Աստված, վերևից կամ դրսից կամ չորս կողմից, ընդգրկում է ամբողջ գիծը և տեսնում է ամենը:

Այս գաղափարն արժե փորձել հասկանալ, քանի որ այն վերացնում է քրիստոնեության որոշ թվացյալ դժվարությունները: Մինչ քրիստոնյա դառնալը, իմ առարկություններից մեկը հետևյալն էր: Քրիստոնյաներն ասում էին, որ հավերժական Աստվածը, ով ամենուր է և պահպանում է ողջ տիեզերքը, մի անգամ մարդ է դարձել: Բայց այդ դեպքում, ասում էի ես, ինչպե՞ս էր ամբողջ տիեզերքը պահպանվում, երբ Նա երեխա էր, կամ երբ Նա քնած էր: Ինչպե՞ս կարող էր Նա միևնույն ժամանակ լինել Աստված, ով գիտի ամեն ինչ, և նաև մի

մարդ, որը հարցնում է իր աշակերտներին «Ո՞վ դիպավ ինձ»: Դուք կնկատեք, որ դժվարությունը կապված է *ժամանակային* բառերի հետ՝ «*Երբ* Նա երեխա էր», «Ինչպե՞ս կարող էր Նա *միևնույն ժամանակ*»: Այլ կերպ ասած, ես ենթադրում էի, որ Քրիստոսի կյանքը որպես Աստված ժամանակի մեջ էր, և որ Նրա կյանքը որպես Հիսուս անունով մարդը Պաղեստինում ավելի կարճ ժամանակահատված էր, որը ընդգրկված էր այդ ժամանակում, ճիշտ այնպես, ինչպես իմ բանակային ծառայությունը ավելի կարճ ժամանակահատված է՝ ընտրված իմ ամբողջ կյանքից: Եւ մեզանից շատերը, հավանաբար, հակված են մտածել այդ կերպ: Մենք պատկերացնում ենք Աստծուն ապրելիս մի ժամանակաշրջանում, երբ Նրա մարդկային կյանքը դեռ ապագայում էր. հետո գալիս է մի ժամանակաշրջան, երբ այն դառնում է ներկա, հետո անցնում է մի ժամանակաշրջան, երբ Նա կարող էր հետ նայել դրան՝ որպես անցյալի մի մաս: Բայց, հավանաբար, այս գաղափարները բացարձակապես չեն համապատասխանում իրական փաստերին: Դուք չեք կարող Քրիստոսի երկրային կյանքը Պաղեստինում տեղավորել որևէ ժամանակային հարաբերությունների մեջ Նրա՝ որպես Աստծո՝ բոլոր տարածությունից և ժամանակներից դուրս կյանքի հետ: Իրականում սա, ես կասեի, Աստծո մասին հավերժական մի ճշմարտություն է՝ որ մարդկային էությունը, և մարդկային թուլության, քնի, անգիտության ապրումները, ինչ-որ կերպ ներառված են Նրա ողջ աստվածային կյանքում: Աստծո այս մարդկային կյանքը, մեր տեսանկյունից, աշխարհի պատմության որոշակի շրջան է (մ.թ. մեկ թվականից մինչև Խաչելությունը): Հետևաբար, մենք պատկերացնում ենք, որ այն նաև Աստծո գոյության պատմության մի ժամանակաշրջան է: Բայց Աստված պատմություն չունի: Նա չափից դուրս ամբողջապես և կատարելապես իրական է այն ունենալու համար: Որովհետև, իհարկե, պատմություն ունենալը նշանակում է կորցնել քո իրականության մի մասը (որովհետև այն արդեն մնացել է անցյալում) և դեռ չունենալ մեկ այլ մասը (որովհետև այն դեռ ապագայում է). իրականում՝ չունենանալով ոչինչ, ներկայից բացի, որն արդեն անցել է, մինչ դուք կարող եք խոսել նրա մասին: Աստված չանի, որ մենք մտածենք, որ Աստված այդպիսին է: Նույնիսկ մենք կարող ենք հուսալ, որ մենք միշտ այդպիսին չենք լինի:

Մեկ այլ դժվարություն, որին մենք առնչվում ենք, եթե հավատում ենք, որ Աստված ժամանակի մեջ է, սա է: Յուրաքանչյուր ոք, ով ընդհանրապես հավատում է Աստծուն, հավատում է, որ Նա գիտի, թե ես և դուք ինչ ենք անելու վաղը: Բայց եթե Նա գիտի, որ ես անելու եմ այս կամ այն, ինչպե՞ս կարող եմ ես ազատ լինել այլ բան անելու: Եւ այստեղ ևս մեկ անգամ դժվարությունը առաջանում է այն բանից, երբ ենթադրում ենք, որ Աստված ընթանում է Ժամանակի գծով, ինչպես մենք. միակ տարբերությունն այն է, որ Նա կարող է տեսնել ապագան, իսկ մենք՝ ոչ: Իհարկե, եթե դա ճիշտ լիներ, եթե Աստված կանխատեսեր մեր արարքները, ապա շատ դժվար կլիներ հասկանալ, թե ինչպես կարող էինք մենք ազատ լինել դրանք չկատարելու: Բայց ենթադրենք, որ Աստված դուրս և վեր է ժամանակի գծից: Այդ դեպքում, այն, ինչ մենք անվանում ենք «վաղը», տեսանելի է Նրան ճիշտ այնպես, ինչպես այն, ինչ մենք անվանում ենք «այսօր»: Բոլոր օրերը Նրա համար «Հիմա» են: Նա չի հիշում, որ երեկ ինչ-որ բաներ եք արել. Նա պարզապես տեսնում է, որ դուք անում եք դրանք, քանի որ, չնայած դուք կորցրել եք երեկվա օրը՝ Նա չի կորցրել: Նա չի

«կանխատեսում» ձեր վաղվա արված արարքները. Նա պարզապես տեսնում է, թե ինչպես եք դուք դրանք անում, որովհետև, թեև վաղը դեռ չի եկել ձեզ համար, այն Նրա համար արդեն եկել է: Դուք երբեք չէիք ենթադրի, որ ձեր գործողություններն այս պահին նվազ ազատ են, քանի որ Աստված գիտի, թե ինչ եք անում: Դե, Նա նույն կերպ գիտի ձեր վաղվա արարքները, քանի որ Նա արդեն վաղվա մեջ է և կարող է պարզապես դիտել ձեզ: Ինչ-որ իմաստով, Նա չգիտի ձեր արարքը, քանի դեռ դուք չեք կատարել այն, բայց այն պահը, երբ դուք կատարել եք դա, արդեն «Հիմա» է Նրա համար:

Այս գաղափարը ինձ շատ է օգնել: Եթե այն ձեզ չի օգնում, մի կողմ դրեք: Դա «քրիստոնեական գաղափար» է այն առումով, որ մեծ և իմաստուն քրիստոնյաներ այն ընդունել են, և դրանում քրիստոնեությանը հակասող ոչինչ չկա: Բայց այն Աստվածաշնչում կամ հավատամքներից որևէ մեկում չկա: Դուք կարող եք հիանալի քրիստոնյա լինել՝ առանց դա ընդունելու, ավելին՝ առանց այդ հարցի մասին ընդհանրապես մտածելու:

## 4. ԼԱՎ ՎԱՐԱԿԸ

Ես սկսում եմ այս գլուխը՝ խնդրելով ձեզ հետևյալ բանը պատկերացնել ձեր մտքում: Պատկերացրեք, որ սեղանի վրա դրված են երկու գիրք՝ մեկը մյուսի վրա: Ակնհայտ է, որ ներքևի գիրքը մյուսին վեր է պահում՝ նրան հենարան լինելով: Ներքևի գրքի պատճառով է, որ վերևինը՝ սեղանին դիպչելու փոխարեն, սեղանի մակերեսից, ասենք, երկու մատնաչափ հեռավորության վրա է: Եկեք ներքևի գիրքն անվանենք Ա, իսկ վերևինը՝ Բ: Ա-ի դիրքը առաջացնում է Բ-ի դիրքը: Պարզ է, չէ՞: Հիմա եկեք պատկերացնենք (իհարկե, դա չի կարող իրականում տեղի ունենալ, բայց որպես պատկերացում), որ երկու գրքերն էլ եղել են այդ դիրքում ընդմիշտ: Այդ դեպքում Բ-ի դիրքը միշտ կբխեր Ա-ի դիրքից: Բայց, այդուհանդերձ, Ա-ի դիրքը գոյություն չէր ունենա Բ-ի դիրքից առաջ: Այսինքն՝ արդյունքը չի հայտնվում պատճառից հետո: Իհարկե, արդյունքները սովորաբար հետևում են պատճառին. սկզբում ուտում ես վարունգը, հետո նոր մարսողության խանգարում ստանում: Բայց դա միշտ չէ այդպես բոլոր պատճառների և արդյունքների դեպքում: Դուք շուտով կտեսնեք, թե ինչու եմ ես սա կարևոր համարում:

Ես մի քանի էջ առաջ ասացի, որ Աստված մի Էակ է, որը ընդգրկում է երեք Անձեր՝ մնալով մեկ Էակ, ինչպես որ խորանարդը ընդգրկում է վեց քառակուսի՝ մնալով մեկ մարմին: Բայց հենց ես սկսում եմ փորձել բացատրել, թե ինչպես են այս Անձերը կապակցված, ես ստիպված եմ օգտագործել բառեր, որոնք այնպիսի տպավորություն են ստեղծում, կարծես նրանցից մեկը եղել է մյուսներից առաջ: Առաջին անձը կոչվում է Հայր, իսկ Երկրորդը՝ Որդի: Մենք ասում ենք, որ Առաջինը ծնում կամ առաջացնում է երկրորդը. մենք այն անվանում ենք ծնել, ոչ թե ստեղծել, քանի որ այն, ինչ Նա առաջացնում է, նույն տեսակից է, ինչ Ինքը: Այս կերպ, Հայր բառը միակ բառն է, որ կարելի է օգտագործել: Բայց, ցավոք, այն տպավորություն է թողնում, որ Նա առաջինն է եղել, ճիշտ այնպես, ինչպես մարդկանց մոտ հայրը գոյություն ունի իր որդուց առաջ: Բայց դա այդպես չէ: Չկա առաջ և հետո: Եւ դա է պատճառը, որ ես որոշ ժամանակ տրամադրեցի՝ փորձելով պարզաբանել, թե ինչպես կարող է մի բան լինել մեկ այլ բանի աղբյուր, կամ պատճառ, կամ ծագում, առանց դրանից առաջ լինելու: Որդին գոյություն ունի, քանի որ Հայրը գոյություն ունի. սակայն երբեք չի եղել ժամանակ, որից առաջ Հայրը առաջացրել է Որդուն:

Թերևս սրա մասին մտածելու լավագույն ձևը սա է: Ես հենց նոր ձեզ խնդրեցի պատկերացնել այդ երկու գրքերը, և հավանաբար ձեզանից շատերը դա արեցին: Այսինքն՝ դուք կատարեցիք երևակայության մի գործողություն և դրա հետևանքով ստացաք մտավոր մի պատկեր: Ակնհայտ է, որ ձեր երևակայության գործողությունն էր պատճառը, իսկ մտավոր պատկերը՝ արդյունքը: Բայց դա չի նշանակում, որ դուք սկզբում երևակայել եք, իսկ հետո՝ ստացել պատկերը: Այն պահին, երբ դուք երևակայել եք, պատկերն արդեն կար: Ձեր կամքը պատկերն անընդհատ պահում էր ձեր առջև: Սակայն կամքի այդ

գործողությունը և պատկերը սկսվեցին ճիշտ նույն պահին և ավարտվեցին նույն պահին: Եթե լիներ մի Էակ, որը միշտ գոյություն ունենար և միշտ պատկերացրած լիներ մի բան, նրա գործողությունը միշտ մտավոր պատկեր ստեղծած կլիներ. սակայն այդ պատկերը նույնքան հավերժական կլիներ, որքան գործողությունը:

Նույն կերպ, մենք պետք է միշտ պատկերացնենք Որդուն, այսպես ասած, Հորից բխող, ինչպես լույսը՝ ճրագից, կամ ջերմությունը՝ կրակից, կամ խոհերը՝ մտքից: Նա Հոր ինքնարտահայտումն է՝ այն, ինչ Հայրն ունի ասելու: Եւ երբեք չի եղել մի պահ, երբ Նա այն չէր ասում: Բայց դուք նկատեցի՞ք, թե ինչ է կատարվում: Լույսի կամ ջերմության այս բոլոր պատկերները այնպիսի տպավորություն են ստեղծում, կարծես Հայրն ու Որդին երկու Անձերի փոխարեն երկու բաներ են: Այնպես որ, ի վերջո, Նոր Կտակարանի Հոր և Որդու պատկերը շատ ավելի ճշգրիտ է, քան որևէ այլ բան, որով մենք փորձում ենք դա փոխարինել: Սա միշտ տեղի է ունենում, երբ հեռանում ես Աստվածաշնչի խոսքերից: Միանգամայն ճիշտ է նրանցից մի պահ հեռանալ՝ ինչ-որ հատուկ բան հստակեցնելու համար: Բայց դուք պետք է միշտ վերադառնաք: Բնականաբար, Աստված գիտի, թե ինչպես նկարագրել Ինքն Իրեն շատ ավելի լավ, քան մենք գիտենք, թե ինչպես նկարագրել Նրան: Նա գիտի, որ Հայրն ու Որդին ավելի շատ նման են Առաջին և Երկրորդ Անձերի հարաբերությանը, քան որևէ այլ բանի, որը մենք կարող ենք մտածել: Ամենակարևորը իմանալն այն է, որ դա սիրո հարաբերություն է: Հայրը հիանում է Իր Որդիով. Որդին նայում է վեր՝ դեպի Իր Հայրը:

Նախքան շարունակելը, նկատեք սրա գործնական կարևորությունը: Տարբեր մարդիկ սիրում են կրկնել քրիստոնեական արտահայտությունը, որ «Աստված սեր է»: Բայց նրանք կարծես չեն նկատում, որ «Աստված սեր է» բառերը իրական նշանակություն չունեն, եթե Աստված չի ընդգրկում առնվազն երկու Անձնավորություն: Սերը մի բան է, որը մի անձ ունի մեկ այլ անձի հանդեպ: Եթե Աստված մեկ անձնավորություն է, ապա մինչ աշխարհի ստեղծումը, Նա սեր չէր: Իհարկե, այն, ինչ նկատի ունեն այս մարդիկ, երբ ասում են, որ Աստված սեր է, հաճախ բոլորովին այլ բան է. նրանք իրականում նկատի ունեն, որ «Սերը Աստված է»: Նրանք իրականում նկատի ունեն, որ մեր սիրո զգացմունքները, ինչպես էլ կամ որտեղ էլ դրանք առաջանան, և ինչ արդյունքներ էլ դրանք առաջացնեն, արժանի են խիստ հարգալից վերաբերմունքի: Միգուցե դա այդպես է, բայց դա բավականին տարբերվում է նրանից, թե ինչ նկատի ունեն քրիստոնյաները «Աստված սեր է» արտահայտությամբ: Նրանք հավատում են, որ կենդանի, բուռն սիրո գործողությունը հավիտյանս տեղի է ունենում Աստծո մեջ և ստեղծել է մնացած ամեն ինչ:

Եւ դա, ի դեպ, թերևս ամենակարևոր տարբերությունն է քրիստոնեության և մյուս բոլոր կրոնների միջև. քրիստոնեության մեջ Աստված անփոփոխ բան չէ, նույնիսկ անձ չէ, այլ բուռն, թրթիռային ծփանք, կյանք, գրեթե մի տեսակ դրամա: Համարյա, եթե անպատկառություն չհամարեք, մի տեսակ պար: Հոր և Որդու միությունն այնքան կենդանի, իրական մի բան է, որ այս միությունն ինքնին նույնպես Անձ է: Ես գիտեմ, որ սա գրեթե անհնար է երևակայել, բայց

այսպես պատկերացրեք: Դուք գիտեք, որ մարդկանց շրջապատում, երբ հավաքվում են ընտանիքում, կամ ակումբում, կամ արհմիությունում, հաճախ են խոսում այդ ընտանիքի, ակումբի կամ արհմիության «ոգու» մասին: Խոսում են նրա «ոգու» մասին, քանի որ նրա առանձին անդամները, երբ նրանք միասին են, իսկապես ձեռք են բերում խոսելու և վարվելու այնպիսի հատկանիշներ, որոնք նրանք չէին ունենա, եթե առանձին լինեին (*): Ասես իբր մի հավաքական անձնավորություն է գոյանում: Իհարկե, այն իրական անձ չէ, այն ավելի շուտ նման է անձի: Բայց սա Աստծո և մեր միջև եղած շատ տարբերություններից մեկն է: Այն, ինչ բխում է Հոր և Որդու համատեղ կյանքից, իրական Անձ է, իրականում՝ Եռանձն Աստծո Անձերից Երրորդը:

Այս երրորդ Անձը տեխնիկական լեզվով կոչվում է Սուրբ Հոգի կամ Աստծո «հոգի»: Մի՛ անհանգստացեք կամ զարմացեք, եթե այն (կամ Նա) ձեր մտքում ավելի անորոշ կամ ավելի աղոտ է, քան մյուս երկուսը: Կարծում եմ, որ հատուկ պատճառ կա, թե ինչու պետք է դա այդպես լինի: Քրիստոնեական կյանքում դուք սովորաբար չեք նայում Նրան. Նա միշտ գործում է ձեր միջոցով: Եթե մենք պատկերացնենք Հորը՝ որպես ինչ-որ մի բան «դրսում», մեր առջև, և Որդուն՝ որպես ինչ-որ մեկը, որը կանգնած է մեր կողքին և օգնում է մեզ աղոթել՝ փորձելով մեզ նույնպես որդի դարձնել, ապա մենք պետք է պատկերացնենք երրորդ Անձին որպես ինչ-որ բան մեր ներսում կամ մեր ետևում: Հավանաբար, որոշ մարդկանց համար ավելի հեշտ կլինի սկսել երրորդ Անձից և գնալ հետ: Աստված սեր է, և այդ սերը ներգործում է մարդկանց միջոցով, հատկապես՝ քրիստոնյաների ողջ համայնքի միջոցով: Բայց սիրո այս ոգին, սկսած հավիտենությունից, սեր է, որը տեղի է ունենում Հոր և Որդու միջև:

Հիմա՝ կարևո՞ր է արդյոք այս ամենը: Այն ավելի կարևոր է, քան որևէ այլ բան աշխարհում: Այս Եռանձն կյանքի ամբողջ պարը, դրաման կամ զուգադրությունը պետք է իրագործվի մեզանից յուրաքանչյուրի մեջ. կամ (եթե դրան մոտենանք հակառակ կողմից) մեզանից յուրաքանչյուրը պետք է մտնի այդ զուգադրության մեջ, իր տեղը զբաղեցնի այդ պարում: Այլ ճանապարհ չկա դեպի այն երջանկությունը, որի համար մենք ստեղծված ենք: Լավ բաները, ինչպես նաև վատերը, ինչպես գիտեք, փոխանցվում են վարակի նման: Եթե ուզում ես տաքանալ, պետք է կանգնես կրակի մոտ. եթե ուզում ես թաց լինել, պետք է ջրի մեջ մտնես: Եթե ցանկանում եք ուրախություն, զորություն, խաղաղություն, հավերժական կյանք, պետք է մոտենաք այն բանին, կամ նույնիսկ մտնեք այն բանի մեջ, որն ունի դրանք: Դրանք, այսպես ասած, գանձեր չեն, որոնք Աստված կարող էր, եթե ցանկանար, պարզապես հանձնել որևէ մեկին: Դրանք էներգիայի և գեղեցկության մեծ շատրվան են, որը ցայտում է իրականության հենց կենտրոնից: Եթե դուք մոտ եք դրան, ապա ցողը ձեզ կթրջի, եթե ոչ, ապա կմնաք չոր: Մեկ միանալով Աստծուն, ինչպե՞ս կարող է մարդ հավերժ չապրել: Մեկ Աստծուց բաժանվելով, ի՞նչ կարող է անել նա, բացի թառամել և մեռնել:

----[*] Այս հավաքական վարքագիծը, իհարկե, կարող է լինել ավելի լավ կամ ավելի վատ, քան նրանց անհատական վարքագիծը:

Բայց ինչպե՞ս պետք է նա միանա Աստծուն: Մեզ համար ի՞նչ կերպ է հնարավոր ներքաշվել Եռանձն կյանքի մեջ:

Հիշում եք, թե ինչ ասացի Երկրորդ Գլխում՝ ծնելու և ստեղծելու մասին: Մենք Աստծուց չենք ծնվել, մենք միայն ստեղծվել ենք Նրա կողմից. մեր բնական վիճակում մենք Աստծո որդիներ չենք, միայն (այսպես ասած) արձաններ ենք: Մենք չունենք Զոե, կամ հոգևոր կյանք. սոսկ՝ Բիոս, կամ ՝ կենսաբանական կյանք, որը ներկայումս կվերանա և կմեռնի: Հիմա՝ քրիստոնեության ամբողջ առաջարկը սա է. որ մենք կարող ենք, եթե թույլ տանք Աստծուն անել Իր ուզածը, մաս կազմել Քրիստոսի կյանքին: Այդ դեպքում, մենք մաս կկազմենք մի կյանքի, որը ծնված է, ոչ թե ստեղծված, որը միշտ եղել է և միշտ կլինի: Քրիստոսը Աստծո Որդին է: Եթե մենք մաս կազմենք այս տեսակի կյանքի, մենք նույնպես Աստծո որդիներ կլինենք: Մենք կսիրենք Հորը, ինչպես Նա է սիրում, և Սուրբ Հոգին ի հայտ կգա մեր մեջ: Նա եկավ այս աշխարհ և դարձավ մարդ, որպեսզի տարածի այլ մարդկանց այն կյանքը, որը Նա ունի՝ այն միջոցով, որը անվանում եմ «լավ վարակ»: Յուրաքանչյուր քրիստոնյա պետք է դառնա փոքրիկ Քրիստոս: Քրիստոնյա դառնալու ողջ նպատակը միայն սա է:

## 5. ՀԱՄԱՌ ԽԱՂԱԼԻՔ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ

Աստծո Որդին դարձավ մարդ, որպեսզի մարդկանց հնարավորություն տա դառնալ Աստծո որդիներ: Մենք չգիտենք, ամեն դեպքում ես չգիտեմ, թե ամեն ինչ ինչպես կընթանար, եթե մարդկային ցեղը երբեք չապստամբեր Աստծո դեմ և չմիանար թշնամուն: Միգուցե յուրաքանչյուր մարդ «Քրիստոսի մեջ» կլիներ՝ մաս կկազմեր Աստծո Որդու կյանքի՝ իր ծնվելու պահից: Միգուցե Բիոսը, կամ բնական կյանքը, կներգրավվեր Զոեի՝ չստեղծված կյանքի մեջ միանգամից, որպես բնականոն ընթացք: Բայց սրանք ենթադրություններ են: Դուք և ես հետաքրքրված ենք ներկայիս իրադրությամբ:

Եւ ներկա իրադրությունը սա է: Կյանքի երկու տեսակներն այժմ ոչ միայն տարբեր են (դրանք միշտ լինելու էին այդպիսին), այլ իրականում հակադրված են իրար: Մեզանից յուրաքանչյուրի բնական կյանքը եսակենտրոն մի բան է, մի բան, որը ցանկանում է շոյվել ու հիացմունքի արժանանալ, օգտագործել այլ կյանքերին, շահագործել ողջ տիեզերքը: Եւ հատկապես՝ այն ցանկանում է լինել առանձին. հեռու մնալ իրենից ավելի լավ, ուժեղ կամ բարձր ամեն ինչից՝ այն ամենից, ինչը կարող է ստիպել նրան իրեն փոքր զգալ: Այն վախենում է հոգեւոր աշխարհի լույսից ու օդից, ինչպես կեղտոտ մեծացված մարդիկ վախենում են լոգանքից: Եւ ինչ-որ առումով նա միանգամայն ճիշտ է: Նա գիտի, որ եթե հոգևոր կյանքը ճանկը գցի իրեն, ապա իր ամբողջ եսակենտրոնությունն ու ինքնակամությունը կսպանվեն, և նա պատրաստ է ատամներով պայքարել դրանից խուսափելու համար:

Երբևէ մտածե՞լ եք, երբ երեխա էիք, ինչ հիանալի կլիներ, եթե ձեր խաղալիքները կենդանանային: Ենթադրենք, որ դուք իսկապես կարող էիք նրանց կենդանացնել: Պատկերացրեք, եթե թիթեղյա զինվորին իսկական փոքրիկ մարդ դարձնեիք: Դա ենթադրում է թիթեղը մարմին դարձնել: Եւ ենթադրենք, որ թիթեղյա զինվորը դա չցանկանար: Նրան մարմինը չի հետաքրքրում. իր տեսանկյունից, սոսկ իր թիթեղն է փչացվում: Նա կարծում է, որ սպանում ես իրեն: Նա կանի ամեն ինչ, որպեսզի քեզ թույլ չտա: Եթե իրեն մնա, նրան հնարավոր չի լինելու ստիպել մարդ դառնալ:

Ինչ կանեիք դուք այդ թիթեղյա զինվորի հետ կապված, ես չգիտեմ:
Բայց այն, ինչ Աստված արեց մեզ համար, հետևյալն էր: Աստծո Երկրորդ Անձը՝ Որդին, մարդ դարձավ. ծնվեց աշխարհում որպես իրական մարդ՝ որոշակի հասակով, որոշակի գույնի մազերով, որոշակի լեզվով խոսող, որոշակի քաշով: Հավիտենական Էակը, ով գիտի ամեն ինչ և ով ստեղծեց ողջ տիեզերքը, դարձավ ոչ միայն մարդ, այլև (մինչ այդ) երեխա, իսկ մինչ այդ՝ պտուղ՝ Կնոջ մարմնում: Եթե ցանկանում եք մոտավորապես հասկանալ, թե ինչ է սա նշանակում, պատկերացրեք, թե որքան կուզենայիք դառնալ լորտնուկ կամ խեցգետին:

Սրա արդյունքն այն էր, որ այժմ կա մի մարդ, որը իսկապես այնպիսին էր, ինչպիսին բոլոր մարդիկ պետք է լինեին. մի մարդ, որում այն ստեղծված կյանքը, որը բխում էր իր Մորից, թույլ տվեց ինքն իրեն ամբողջովին և կատարելապես վերածվել ծնած կյանքի: Մարդկային բնական արարածը Նրա մեջ լիովին ներգրավվեց աստվածային Որդու մեջ: Այսպիսով, այս մեկ դեպքում, մարդկությունն, այսպես ասած, ժամանել էր՝ փոխանցվել էր Քրիստոսի կյանքի մեջ: Եւ քանի որ մեզ համար ամբողջ դժվարությունն այն է, որ բնական կյանքը, ինչ-որ իմաստով, պետք է «սպանվի», Նա ընտրեց երկրային մի կարիերա, որը ամեն քայլափոխի ներառում էր Իր մարդկային ցանկությունների մեռցնումը՝ աղքատություն, չհասկացված լինելը՝ Իր ընտանիքի կողմից, դավաճանություն՝ Իր մտերիմ ընկերներից մեկի կողմից, ոստիկանների կողմից ծաղրի և բռնության ենթարկվելը, և խոշտանգումների միջոցով մահապատժի ենթարկվելը: Եւ այնուհետև, այսպես սպանվելուց հետո - ինչ-որ իմաստով ամեն օր սպանվելուց հետո, Նրա միջի մարդկային արարածը, քանի որ այն համակցված էր աստվածային Որդուն, նորից կենդանացավ: Հարություն առավ Քրիստոսում եղած Մարդը, ոչ միայն Աստված: Սա է ամբողջ իմաստը: Առաջին անգամ մենք տեսանք իսկական մարդու: Մի թիթեղյա զինվոր՝ իսկապես թիթեղյա, ինչպես մյուսները, լիարժեքորեն և շքեղորեն կենդանացել էր:

Եւ այստեղ, իհարկե, մենք հայտնվում ենք այնտեղ, ուր թիթեղյա զինվորի իմ նկարագրումը այլևս պիտանի չէ: Իսկական խաղալիք զինվորների կամ արձանների դեպքում, եթե մեկը կենդանանար, ապա ակնհայտ է, որ դա որևէ փոփոխություն չէր ստեղծի մյուսների համար: Նրանք բոլորը առանձին են: Բայց մարդ արարածներն այդպիսին չեն: Նրանք առանձին են թվում, քանի որ նրանց տեսնում ենք առանձին շրջելիս: Բայց, անշուշտ, մենք այնպես ենք ստեղծված, որ կարող ենք տեսնել միայն ներկա պահը: Եթե մենք կարողանայինք տեսնել անցյալը, ապա, իհարկե, ամեն ինչ այլ կերպ կթվար: Որովհետև կար ժամանակ, երբ ամեն մարդ իր մոր մաս էր, և (է՛լ ավելի վաղ) նաև՝ իր հոր. և ավելի վաղ, երբ նա իր տատիկի և պապիկի մի մաս էր: Եթե դուք կարողանայիք տեսնել մարդկությունը տարածված ժամանակի մեջ, ինչպես Աստված է այն տեսնում, ապա այն նման չէր լինի բազմաթիվ առանձին կետերի: Այն նման կլիներ մի աճող բանի՝ շատ նման մի բարդ ծառի: Յուրաքանչյուր անհատ կթվար կապված մնացած բոլորի հետ: Եւ ոչ միայն դա: Անհատներն իրականում առանձնացված չեն Աստծուց, այնպես, ինչպես նրանք առանձնացված չեն միմյանցից: Յուրաքանչյուր տղամարդ, կին և երեխա ամբողջ աշխարհում զգում և շնչում է այս պահին միայն այն պատճառով, որ Աստված, այսպես ասած, «պահպանում է նրան»:

Հետևաբար, երբ Քրիստոսը դառնում է մարդ, իրականում դա նույնը չէ, եթե դու կարողանայիր դառնալ թիթեղյա զինվոր: Կարծես մի բան, որը միշտ ազդում է ողջ մարդկային զանգվածի վրա, սկսում է մի պահից նորովի ազդել այդ ամբողջ մարդկային զանգվածի վրա: Այդ պահից ազդեցությունը տարածվում է ողջ մարդկության վրա: Դա նշանակություն ունի այն մարդկանց համար, որոնք ապրել են Քրիստոսից առաջ, ինչպես նաև այն մարդկանց համար, որոնք ապրել են Նրանից հետո: Դա նշանակություն ունի այն մարդկանց համար, որոնք երբեք չեն լսել Նրա մասին: Դա նման է մի բաժակ ջրի մեջ մի կաթիլ ինչ-որ բան ավելացնելուն, որը նոր համ կամ նոր գույն է հաղորդում ամբողջ հեղուկին:

Բայց, իհարկե, այս նկարագրումներից և ո՛չ մեկը կատարյալ պատկերացում չի տալիս: Ի վերջո, Աստված ոչ ոք չէ, Իրենից բացի, և այն, ինչ անում է Նա, նման չէ ոչ մի այլ բանի: Դժվար թե այլ բան սպասեինք:

Ուրեմն ո՞րն է այն կարևոր փոփոխությունը, որը Նա կատարել է ողջ մարդկային զանգվածի համար: Հենց սա է՝ որ Աստծո որդի դառնալու, ստեղծված արարածից՝ ծնվածի վերածվելու, ժամանակավոր կենսաբանական կյանքից՝ հավիտենական «հոգեւոր» կյանքի անցնելու գործն արվել է մեզ համար: Մարդկությունն արդեն սկզբունքորեն «փրկված է»: Մենք՝ անհատներս, պետք է յուրացնենք այդ փրկությունը: Բայց իսկական դժվար գործը, այն բանը, որը մենք չէինք կարող անել մենք ինքներս, արվել է մեզ համար: Մենք ստիպված չենք փորձելու մեր սեփական ջանքերով բարձրանալ դեպի հոգևոր կյանք. այն արդեն իջել է մարդկային ցեղի մեջ: Եթե մենք միայն բացենք ինքներս մեզ այն մեկ Մարդուն, ում մեջ այն լիովին առկա էր, և ով, չնայած Աստված լինելուն, նաև իսկական մարդ է, Նա կանի դա մեր մեջ և մեզ համար: Հիշեք, թե ինչ ասացի «լավ վարակի» մասին: Մեր ցեղից մեկն ունի այս նոր կյանքը. եթե մենք մոտենանք Նրան, մենք կառնենք այն Նրանից:

Իհարկե, դուք կարող եք սա արտահայտել տարբեր ձևերով: Դուք կարող եք ասել, որ Քրիստոսը մահացավ մեր մեղքերի համար: Դուք կարող եք ասել, որ Հայրը ներել է մեզ, քանի որ Քրիստոսն արել է մեզ համար այն, ինչ մենք պետք է անեինք: Դուք կարող եք ասել, որ մենք լվացված ենք Գառան արյունով: Դուք կարող եք ասել, որ Քրիստոսը հաղթեց մահին: Դրանք բոլորն էլ ճիշտ են: Եթե դրանցից որևէ մեկը ձեզ չի գրավում, թողեք այն և օգտագործեք այն բանաձևը, որը գրավում է: Եւ ինչ էլ որ անեք, մի՛ սկսեք վիճել այլ մարդկանց հետ, քանի որ նրանք օգտագործում են ձեր բանաձևից տարբերվող մեկ ուրիշը:

## 6. ԵՐԿՈՒ ՆԾՈՒՄ

Թյուրիմացությունից խուսափելու համար, այս գլխում ես նշումներ եմ ավելացնում վերջին գլխից բխող երկու բանի վերաբերյալ:

(1) Մի խելամիտ քննադատը գրել էր՝ ինձ հարցնելով, թե ինչու, եթե Աստված «խաղալիք զինվորների» փոխարեն որդիներ էր ուզում, նա ի սկզբանե որդիներ չծնեց՝ խաղալիք զինվորներ ստեղծելու և հետո նրանց կենդանացնելու նման դժվար ու ցավալի պրոցեսի փոխարեն: Այս հարցի պատասխանի մի մասը բավականին հեշտ է, իսկ մյուս մասը, հավանաբար, վեր է մարդկային իմացությունից: Հեշտ մասը սա է: Արարածից որդի դառնալու պրոցեսը դժվար կամ ցավալի չէր լինի, եթե դարեր առաջ մարդկային ցեղը չհեռանար Աստծուց: Նրանք կարողացան դա անել, որովհետև Նա նրանց ազատ կամք տվեց. Նա նրանց ազատ կամք տվեց, քանի որ սոսկ մեքենաները երբեք չէին կարող սիրել և, հետևաբար, երբեք չէին կարող ճանաչել անսահման երջանկություն: Դժվար մասը սա է: Բոլոր քրիստոնյաները համաձայն են, որ կա, ամբողջական և սկզբնական իմաստով, միայն մեկ «Աստծո Որդի»: Եթե մենք շարունակենք հարցնել. «Բայց կարո՞ղ էին բազմաթիվ լինել», մենք հայտնվում ենք շատ խոր ջրերի մեջ: «Կարո՞ղ էին լինել» բառերն ընդհանրապես որևէ իմաստ ունե՞ն, երբ կիրառվում են Աստծո վերաբերյալ: Դուք կարող եք ասել, որ որոշակի վերջավոր բան «կարող էր լինել» ուրիշ կերպ, քան այնպես, ինչպես այն կա, որովհետև այն ուրիշ կլիներ, եթե մեկ ուրիշ բան ուրիշ կերպ լիներ, և այդ երկրորդ բանը այլ կլիներ, եթե ինչ-որ երրորդ բան այլ լիներ, և այսպես շարունակ: (Այս էջի տառերը կարմիր կլինեին, եթե տպիչը կարմիր թանաք օգտագործեր, և այն կօգտագործեր կարմիր թանաք, եթե այդպիսի հրահանգ տրվեր և այլն): Բայց երբ դուք խոսում եք Աստծո մասին, այսինքն՝ ամենաստորին հիմքի, անկոտրակելի Փաստի մասին, որի վրա հիմնված են մնացած բոլոր փաստերը, անիմաստ է հարցնել, թե արդյո՞ք այն կարող էր այլ կերպ լինել: Այն այնպիսին է, ինչպիսին կա, և հարցը դրանով փակվում է: Բայց այս ամենից բացի, ես դժվարություն ունեմ հենց Հոր՝ ողջ հավիտենությունից բազմաթիվ որդիներ ծնելու գաղափարի վերաբերյալ: Շատ լինելու համար նրանք պետք է ինչ-որ կերպ տարբերվեն միմյանցից: Երկու պեննիներ նույն ձևն ունեն: Ինչպե՞ս են նրանք երկուսը: Տարբեր տեղեր զբաղեցնելով և տարբեր ատոմներից բաղկացած լինելով: Այլ կերպ ասած, դրանք տարբեր համարելու համար, մենք ստիպված ենք եղել մեջտեղ բերել տարածությունը և նյութը. իրականում՝ մենք ստիպված ենք եղել մեջտեղ բերել «Բնությունը» կամ ստեղծված տիեզերքը: Ես կարող եմ հասկանալ Հոր և Որդու տարբերությունը առանց տարածությունը կամ նյութը մեջտեղ բերելու, քանի որ մեկը ծնում է, իսկ մյուսը ծնվում է: Հոր հարաբերությունը Որդու հետ նույնը չէ, ինչ Որդու հարաբերությունը Հոր հետ: Բայց եթե մի քանի որդիներ լինեին, նրանք բոլորը նույն կերպ հարաբերակցված կլինեին միմյանց և Հոր հետ: Ինչո՞վ կտարբերվեին նրանք միմյանցից: Սկզբում դժվարությունը, իհարկե, չի նկատվում: Մենք կարծում ենք, որ կարելի է պատկերացնել մի քանի «որդիներ»: Բայց երբ ուշադիր մտածում եմ, տեսնում եմ, որ այդ գաղափարը հնարավոր էր թվում միայն այն պատճառով, որ ես անորոշորեն պատկերացնում էի նրանց որպես մարդկային

կերպարանքներ, որոնք միասին կանգնած են ինչ-որ տարածության մեջ: Այլ կերպ ասած, թեև ես ձևացնում էի, թե մտածում եմ ինչ-որ մի բանի մասին, որը գոյություն ուներ տիեզերքը ստեղծվելուց առաջ, ես իրականում ներս էի խցկում տիեզերքի պատկերը և դնում այդ բանը նրա ներսում: Երբ ես դադարում եմ դա անել և շարունակում եմ փորձ կատարել պատկերացնելու, որ Հայրը բազմաթիվ որդիներ է ծնում «բոլոր աշխարհներից առաջ», ես բացահայտում եմ, որ իրականում ես ոչինչ չեմ պատկերացնում: Գաղափարը պարզապես անէանում է բառերի մեջ: (Արդյո՞ք Բնությունը՝ տարածությունը, ժամանակը և նյութը, ստեղծվել են հենց նրա համար, որպեսզի հնարավոր դառնա բազմակիությունը: Միգուցե բազմաթիվ հավիտենական հոգիներ ստեղծելու այլ ճանապարհ չկա՞, բացի նախ տիեզերքում բազմաթիվ բնական արարածներ ստեղծելուց և հետո նրանց հոգևոր դարձնելուց: Բայց, իհարկե, այս ամենը ենթադրություններ են:)

(2) Այն գաղափարը, որ ողջ մարդկային ցեղը, ինչ-որ իմաստով, մեկ բան է՝ մեկ հսկայական օրգանիզմ, ինչպես ծառը, չպետք է շփոթել այն մտքի հետ, որ անհատական տարբերությունները կարևոր չեն, կամ, որ իրական մարդիկ՝ Թոմը, Նոբին և Քեյթը, ինչ-որ կերպ ավելի քիչ կարևոր են, քան հավաքական բաները, ինչպիսիք են դասակարգերը, ցեղերը և այլն: Իրոք՝ երկու գաղափարները հակադիր են: Բաները, որոնք մեկ օրգանիզմի մասեր են, կարող են շատ տարբեր լինել միմյանցից. բաները, որոնք նույն օրգանիզմի մասեր չեն, կարող են շատ նման լինել: Վեց պեննիները միանգամայն տարբեր են և միևնույն ժամանակ՝ շատ նման. իմ քիթը և իմ թոքերը շատ տարբեր են իրարից, բայց դրանք միայն կենդանի են սոսկ այն պատճառով, որ դրանք իմ մարմնի մասերն են և մասնակից են նրա ընդհանուր կյանքին: Քրիստոնեությունը մարդկային անհատներին համարում է ոչ թե սոսկ որպես խմբի անդամներ կամ ցուցակի միավորներ, այլ որպես մարմնի օրգաններ, որոնք տարբերվում են միմյանցից, և յուրաքանչյուրը ավելացնում է այն, ինչը մեկ ուրիշը չէր կարող: Երբ տեսնում եք, որ ցանկանում եք ձեր երեխաներին, կամ աշակերտներին կամ նույնիսկ ձեր հարևաններին դարձնել այնպիսին, ինչպիսին դուք եք, հիշեք, որ Աստված, հավանաբար, երբեք չի ցանկացել, որ նրանք լինեն այդպիսին: Դուք և նրանք տարբեր օրգաններ եք, որոնք նախատեսված են տարբեր բաներ անելու համար: Մյուս կողմից, երբ գայթակղություն կա չանհանգստանալու ուրիշի խնդիրներով, քանի որ դրանք «ձեր գործը չեն», հիշեք, որ չնայած նա ձեզնից տարբերվում է, նա նույն օրգանիզմի մասն է, ինչ դուք: Եթե մոռանաք, որ նա պատկանում է նույն օրգանիզմին, ինչ դուք, կդառնաք Անհատապաշտ: Եթե մոռանաք, որ նա ձեզնից տարբեր օրգան է, եթե ցանկանաք ջնջել տարբերությունները և մարդկանց բոլորին նմանեցնել, ապա կդառնաք Տոտալիտար: Բայց քրիստոնյան չպետք է լինի ո՛չ Տոտալիտար, ո՛չ էլ Անհատապաշտ:

Ես մեծ ցանկություն եմ զգում ձեզ ասելու, և թերևս դուք մեծ ցանկություն եք զգում ինձ ասելու, թե այս երկու սխալներից ո՞րն է ավելի վատը: Դա սատանան է, որ փորձում է մեզ շփոթեցնել: Նա միշտ սխալները աշխարհ է ուղարկում զույգերով՝ զույգ հակադրություններով: Եւ նա միշտ խրախուսում է մեզ շատ ժամանակ ծախսել մտածելու, թե ո՞րն է ավելի վատը: Տեսնում եք, իհարկե, թե ինչու: Նա իր հույսը դնում է սխալներից մեկի հանդեպ ձեր ավելորդ

հակակրանքի վրա, որպեսզի աստիճանաբար ձեզ ներքաշի դեպի մյուսը: Բայց եկեք չխաբվենք: Մենք պետք է նայենք նպատակին և ուղիղ անցնենք երկու սխալների արանքով: Սրանից զատ, կարիք չունենք դրանց մասին մտածելու:

## 7. ԵԿԵՔ ՁԵՎԱՑՆԵՆՔ

Կարո՞ղ եմ և՞ս մեկ անգամ սկսել երկու պատկեր կամ, ավելի շուտ, երկու պատմություն ձեր մտքում տեղադրելով: Մեկը այն հեքիաթն է, որը կոչվում է Գեղեցկուհին և Հրեշը, որը բոլորդ կարդացել եք: Աղջիկը, հիշում եք, ինչ-ինչ պատճառներով ստիպված էր ամուսնանալ հրեշի հետ: Եւ նա ամուսնացավ: Նա համբուրեց նրան ասես նա տղամարդ լիներ: Եւ հետո, ի թեթևություն նրա, նա իսկապես դարձավ տղամարդ, և ամեն ինչ լավ ավարտվեց: Մյուս պատմությունը մեկի մասին է, ով ստիպված է եղել դիմակ կրել՝ դիմակ, որի շնորհիվ նա շատ ավելի գեղեցիկ տեսք ուներ, քան իրականում: Նա ստիպված էր կրել այն տարիներ: Եւ երբ նա հանեց այն, պարզվեց, որ իր դեմքը ձևափոխվել էր դրան համապատասխան: Նա այժմ իսկապես գեղեցիկ էր: Այն, ինչ սկսվել էր որպես ձևացում, իրականություն էր դարձել: Կարծում եմ, այս երկու պատմություններն էլ կարող են (իհարկե, երևակայական իմաստով) օգնել լուսաբանելու այն, ինչ ես պետք է ասեմ այս գլխում: Մինչ այժմ ես փորձել եմ նկարագրել փաստեր՝ ի՞նչ է Աստված և ի՞նչ է Նա արել: Հիմա ես ուզում եմ խոսել գործնականի մասին. ի՞նչ ենք մենք անում դրանից հետո: Ի՞նչ նշանակություն ունի այս ամբողջ աստվածաբանությունը: Այն կարող է նշանակություն ունենալ հենց այս երեկոյից: Եթե դուք այնքան հետաքրքրված էիք, որ կարդացել եք մինչև այստեղ, դուք հավանաբար բավականաչափ ցանկություն ունեք, որպեսզի փորձեք աղոթել, և ինչ աղոթքներ էլ որ անեք, հավանաբար աղոթելու եք Տերունական աղոթքը:

Դրա առաջին բառերն են՝ «Հայր Մեր»: Տեսնո՞ւմ եք հիմա, թե ինչ են նշանակում այդ բառերը: Նրանք միանգամայնորեն նշանակում են, որ դու քեզ դնում ես Աստծո որդու տեղ: Կոպիտ ասած, դու հանդերձվում ես որպես Քրիստոս: Եթե կուզեք՝ դու ձևացնում ես: Որովհետև, իհարկե, այն պահին, երբ հասկանում ես, թե ինչ են նշանակում այդ բառերը, դու հասկանում ես, որ դու Աստծո որդի չես: Դու նման չես Աստծո Որդուն, ում կամքն ու ցանկությունները համընկնում են Հոր կամքի և ցանկությունների հետ: Դու եսակենտրոն վախերի, հույսերի, ագահության, նախանձի և ինքնահավանության մի կապոց ես, որը դատապարտված է մահվան: Այնպես որ, ինչ-որ առումով, այս հանդերձվելը որպես Քրիստոս, մի չափազանցված բեմականություն է: Բայց տարօրինակն այն է, որ Նա պատվիրել է մեզ դա անել:

Ինչո՞ւ: Ո՞րն է օգուտը ձևացնելու լինել այն, ինչ չես: Դե, նույնիսկ մարդկային մակարդակում, դուք գիտեք, որ կա երկու տեսակի ձևացնել: Կա վատ տեսակը, որտեղ իրականի փոխարեն կա սոսկ ձևականություն: Օրինակ՝ երբ մարդը ձևացնում է, որ պատրաստվում է օգնել ձեզ՝ իսկապես օգնելու փոխարեն: Բայց կա նաև լավ տեսակը, որտեղ ձևականությունը հետզհետե մոտենում է իրականին: Երբ դու առանձնապես ընկերասեր չես, բայց գիտես, որ պետք է լինես, շատ հաճախ ամենալավ բանը, որ կարող ես անել, ընկերական վերաբերմունք դրսևորելն է, և քեզ այնպես պահելը, որ ասես թե ավելի լավ

մարդ ես, քան իրականում: Եւ մի քանի րոպեից, ինչպես բոլորս գիտենք, դու իսկապես ավելի ընկերասեր կզգաս, քան սկզբում: Շատ հաճախ իրականության մեջ ինչ-որ որակ ունենալու միակ ձևն այն է, որ սկսես վարվել այնպես, կարծես այն արդեն ունես: Դրա համար են երեխաների խաղերը այդքան կարևոր: Նրանք միշտ մեծահասակ են ձևանում՝ կռիվ-կռիվ են խաղում, կրպակ են խաղում: Բայց անընդհատ նրանք մարզում են իրենց մկանները և սրում իրենց դատողությունը, և հետևապես մեծահասակ լինելու ձևացումը օգնում է նրանց իսկապես մեծանալ:

Հիմա՝ այն պահին, երբ դուք հասկանում եք, որ «Ահա՝ ես հանդերձվում եմ որպես Քրիստոս», խիստ հավանական է, որ դուք միանգամից տեսնեք ինչ-որ ձև, որով, հենց այդ պահին, ձևացումը կարող է ավելի քիչ ձևացում դառնալ, և ավելի շատ իրականություն: Դուք կտեսնեք մի քանի բան, որոնք տեղի են ունենում ձեր մտքում, որոնք չէին լինի այնտեղ, եթե դուք իսկապես Աստծո որդի լինեիք: Շատ բարի, դադարեցրե՛ք դրանք: Կամ գուցե գիտակցեք, որ աղոթքներ անելու փոխարեն պետք է ներքևում լինեիք՝ նամակ գրելիս կամ ձեր կնոջը մաքրության գործով օգնելիս: Բարի՝ գնացեք և արեք:

Դուք տեսնում եք, թե ինչ է կատարվում: Ինքը՝ Քրիստոսը, Աստծո Որդին, ով մարդ է (ինչպես դուք) և Աստված (ինչպես Իր Հայրը), իրականում ձեր կողքին է և արդեն այդ պահին սկսում է ձեր ձևացնելը իրականություն դարձնել: Մա պարզապես վերամբարձ ձև չէ ասելու, որ ձեր խիղճն ասում է ձեզ, թե ինչ անել: Եթե դուք ուղղակի հարցնեք ձեր խղճին, դուք կստանաք մեկ արդյունք. եթե հիշեք, որ հանդերձվում եք որպես Քրիստոս, դուք կստանաք մեկ այլ: Կան շատ բաներ, որոնք ձեր խիղճը կարող է միանշանակ սխալ չանվանել (հատկապես՝ ձեր մտքում եղած բաները), բայց որոնք դուք անմիջապես կտեսնեք, որ չեք կարող շարունակել անել, եթե լրջորեն փորձում եք նմանվել Քրիստոսին: Քանի որ դուք այլևս չեք մտածում պարզապես ճիշտ ու սխալի մասին. դուք փորձում եք առնել լավ վարակը Անձից: Այն ավելի շատ նման է դիմանկար նկարելուն, քան մի շարք  կանոններին հնազանդվելուն: Եւ տարօրինակն այն է, որ թեև մի առումով այն շատ ավելի դժվար է, քան կանոնների պահպանումը, այլ առումով այն շատ ավելի հեշտ է:

Աստծո իսկական Որդին քո կողքին է: Նա սկսում է քեզ վերածել նույն տեսակի բանի, ինչ Ինքն է: Նա սկսում է, այսպես ասած, «ներարկել» իր տեսակի կյանքն ու միտքը՝ Իր Զոեն քո մեջ. սկսում է թիթեղյա զինվորին վերածել կենդանի մարդու: Քո այն մասը, որը չի սիրում դա, այն մասն է, որը դեռ թիթեղյա է:

Ձեզանից ոմանց կարող է թվալ, որ սա չի համապատասխանում ձեր անձնական փորձին: Դուք կարող եք ասել. «Ես երբեք չեմ զգացել, որ ինձ օգնել է անտեսանելի Քրիստոսը, բայց ինձ հաճախ օգնել են այլ մարդիկ»: Դա շատ նման է առաջին աշխարհամարտի այն կնոջը, որը ասում էր, որ եթե հացի պակաս լինի, դա իրենց վրա չի անդրադառնա, քանի որ իրենք միշտ բովահաց են ուտում: Եթե չլինի հաց, չի լինի բոված հաց: Եթե չլիներ Քրիստոսի օգնությունը, ապա չէր լինի այլ մարդկանց օգնությունը: Նա ներգործում է մեզ վրա տարբեր տեսակի ձևերով. ոչ միայն նրանով, որը մենք համարում ենք մեր «կրոնական կյանքը»: Նա ներգործում է Բնության, մեր սեփական մարմինների,

գրքերի միջոցով, երբեմն այնպիսի զգացումների միջոցով, որոնք (այդ պահին) հակաքրիստոնեական են թվում: Երբ մի երիտասարդ, որը շարունակաբար եկեղեցի է գնացել, ազնվորեն հասկանում է, որ չի հավատում քրիստոնեությանը և դադարում է գնալ (պայմանով, որ դա անում է ազնվությունից ելնելով, և ոչ թե իր ծնողներին տհաճություն պատճառելու համար), Քրիստոսի հոգին հավանաբար ավելի մոտ է նրան, քան երբևէ: Բայց ամենից առաջ, Նա ներգործում է մեզ վրա միմյանց միջոցով:

Մարդիկ հայելիներ կամ Քրիստոսի «կրողներ» են մյուս մարդկանց համար: Երբեմն անգիտակից կրողներ: Այս «լավ վարակը» կարող են կրել նրանք, ովքեր չեն վարակվել: Մարդիկ, որոնք քրիստոնյա չէին, օգնել են ինձ քրիստոնյա դառնալու: Բայց սովորաբար Նրան ճանաչողներն են, որ բերում են Նրան ուրիշներին: Ահա թե ինչու Եկեղեցին՝ քրիստոնյաների ամբողջ մարմինը, որը ցույց է տալիս Նրան միմյանց, այդքան կարևոր է: Կարելի է ասել, որ երբ երկու քրիստոնյաներ միասին հետևում են Քրիստոսին, ոչ թե երկու անգամ ավելի շատ քրիստոնեություն կա, քան երբ նրանք իրարից հեռու են, այլ տասնվեց անգամ ավելի շատ:

Բայց չմոռանաք հետևյալը: Սկզբում բնական է, որ երեխան ընդունի իր մոր կաթը՝ առանց ճանաչելու իր մորը: Մեզ համար նույնքան բնական է տեսնել այն մարդուն, որը օգնում է մեզ՝ չտեսնելով Քրիստոսին նրա հետևում: Բայց մենք չպետք է երեխաներ մնանք: Մենք պետք է առաջ անցենք և ճանաչենք իրական Տվողին: Չանելը սա՝ խելագարություն է: Որովհետև, եթե չանենք, ապա ապավինելու ենք մարդկանց: Եւ դա մեզ հիասթափեցնելու է: Նրանցից լավագույնները կսխալվեն. նրանցից յուրաքանչյուրը մեռնելու է: Մենք պետք է շնորհակալ լինենք բոլոր այն մարդկանց, որոնք մեզ օգնել են, պետք է հարգենք նրանց և սիրենք: Բայց երբեք, երբեք մի՛ կապեք ձեր ողջ հավատը որևէ մարդու հետ, նույնիսկ եթե նա ամենալավն ու իմաստունն է ամբողջ աշխարհում: Կան շատ լավ բաներ, որ կարելի է անել ավազի հետ, բայց մի՛ փորձեք նրա վրա տուն կառուցել:

Եւ հիմա մենք սկսում ենք տեսնել, թե ինչի մասին է միշտ խոսում Նոր Կտակարանը: Այն խոսում է քրիստոնյաների «վերստին ծնվելու» մասին. այն խոսում է նրանց՝ «Քրիստոսին հագնելու» մասին. Քրիստոսի՝ «մեզանում կերպավորվելու» մասին. մեր՝ «Քրիստոսի միտքն ունենալու» մասին:

Հանե՛ք ձեր մտքից այն գաղափարը, որ սրանք միայն վերամբարձ ձևեր են ասելու, որ քրիստոնյաները պետք է կարդան Քրիստոսի ասածները և փորձեն դրանք իրականացնել, ինչպես որ մեկը կարող է կարդալ այն, ինչ ասել են Պլատոնը կամ Մարքսը և փորձի դա իրականացնել: Դրանք շատ ավելին են նշանակում: Դրանք նկատի ունեն, որ մի իրական Անձ՝ Քրիստոսը, այստեղ և հիմա, հենց այն սենյակում, որտեղ դուք ձեր աղոթքներն եք անում, ինչ-որ բաներ է անում ձեզ: Խոսքը երկու հազար տարի առաջ մահացած բարի մարդու մասին չէ: Կենդանի Մարդը՝ այնքան մարդ, որքան դու, և այնքան Աստված, որքան այն պահին, երբ Նա ստեղծեց աշխարհը, իսկապես գալիս է և միջամտում է քո անձին՝ սպանելով քո միջի հին բնական անձին և այն փոխարինելով այնպիսի անձով, ինչպիսին Նա ունի: Սկզբում՝ միայն որոշ

ակնթարթներով: Այնուհետև՝ ավելի երկար ժամանակահատվածներով: Ի վերջո, եթե ամեն ինչ լավ ընթանա, քեզ վերջնականապես վերածելով այլ տեսակի բանի. վերածելով նոր փոքրիկ Քրիստոսի՝ մի էակի, որն իր փոքր ձևով ունի նույն կյանքը, ինչ Աստված. որը մաս է կազմում Նրա զորությանը, ուրախությանը, գիտելիքին և հավիտենությանը: Եւ շուտով մենք երկու այլ բացահայտումներ ենք անում:

(1) Մենք սկսում ենք նկատել, մեր առանձին մեղավոր արարքներից բացի, մեր մեղանչականությունը. սկսում ենք անհանգստանալ ոչ միայն նրա վերաբերյալ, թե ինչ ենք անում, այլև թե ինչ ենք: Սա կարող է դժվար ըմբռնելի թվալ, ուստի ես կփորձեմ պարզաբանել իմ անձնական օրինակով: Երբ ես սկսում եմ իմ երեկոյան աղոթքը և փորձում եմ հաշվառել օրվա մեղքերը, տասից ինը դեպքում ամենաակնհայտը ողորմածության դեմ մեղքն է. ես խռովել եմ, կամ բարկացել եմ, կամ ծաղրել եմ, կամ արհամարհել եմ, կամ կատաղել եմ: Եւ արդարացումը, որ անմիջապես գալիս է մտքիս, այն է, որ դրա դրդապատճառը պատահել էր շատ հանկարծակի ու անսպասելի՝ ես չհասցրեցի պահել իմ ինքնատիրապետումը: Հիմա՝ դա կարող է մեղմացուցիչ հանգամանք լինել կոնկրետ այդ արարքների համար. դրանք ակնհայտորեն ավելի վատը կլինեին, եթե լինեին դիտավորյալ և կանխամտածված: Մյուս կողմից, մի՞թե այն, ինչ անում է մարդը, երբ նա հանկարծակիի է գալիս, լավագույն ապացույց չէ, թե ինչպիսի մարդ է նա: Անշուշտ, մի՞թե այն, ինչ ի հայտ է գալիս նախքան մարդը ժամանակ ունի ձևացնելու, ճշմարտությունը չէ: Եթե նկուղում առնետներ կան, ամենայն հավանականությամբ նրանց կտեսնեք, եթե հանկարծակիորեն ներս մտնեք: Բայց հանկարծակիությունը չէ՛, որ ստեղծում է առնետներին. այն միայն խանգարում է նրանց թաքնվել: Նույն կերպ, դրդապատճառի անսպասելիությունը չէ, որ ինձ դարձնում է դյուրագրգիռ մարդ. այն զուտ բացահայտում է, թե ինչպիսի՛ դյուրագրգիռ մարդ եմ ես: Առնետները միշտ այնտեղ են՝ նկուղում, բայց եթե դու ներս մտնես գոռալով և աղմկելով, նրանք թաքնվելու են նախքան լույսը վառելը: Ըստ երևույթին, վրդովմունքի և քինախնդրության առնետները միշտ իմ հոգու նկուղում են: Հիմա՝ այդ նկուղը անհասանելի է իմ գիտակցական կամքին: Ես կարող եմ որոշ չափով վերահսկել իմ արարքները. ես չունեմ անմիջական վերահսկում իմ խառնվածքի վրա: Եւ եթե (ինչպես նախկինում ասացի) այն, ինչ ենք, նույնիսկ ավելի կարևոր է, քան այն, ինչ անում ենք՝ եթե, իսկապես, այն, ինչ մենք անում ենք, գլխավորապես կարևոր է որպես ապացույց այն բանի, թե ինչ ենք մենք, ապա հետևում է, որ այն փոփոխությունը, որին ամենաշատը կարիք ունեմ ինքս ինձ ենթարկելու, այնպիսին է, որը իմ անմիջական, կամավոր ջանքերը չեն կարող ի կատար ածել: Եւ դա վերաբերում է նաև իմ լավ արարքներին: Դրանցից քանի՞սն են արվել ճիշտ շարժառիթով: Քանի՞սն են արվել հասարակական կարծիքի վախից կամ ցուցադրելու ցանկությունից: Քանի՞սն են արվել մի տեսակ համառության կամ գերազանցության զգացումից դրդված, որը այլ հանգամանքներում կարող էր նույն հեշտությամբ հանգեցնել շատ վատ արարքի: Բայց ես չեմ կարող, զուտ բարոյական ջանքերով, ինքս ինձ նոր շարժառիթներ տալ: Քրիստոնեական կյանքում առաջին մի քանի քայլերից հետո, մենք հասկանում ենք, որ այն ամենը, ինչ իսկապես պետք է անել մեր հոգիներում, կարող է անել միայն Աստված: Եւ դա մեզ բերում է մի կետի, որը մինչ այժմ շատ խաբուսիկ է եղել իմ խոսքում:

(2) Ես խոսում էի այնպես, կարծես մենք ենք, որ անում ենք ամեն ինչ: Իրականում, իհարկե, Աստված է, որ անում է ամեն ինչ: Մենք, առավելագույնը, թույլ ենք տալիս, որ դա մեզ արվի: Ինչ-որ առումով դուք կարող եք նույնիսկ ասել, որ Աստված է, ով կատարում է ձևացումը: Եռանձն Աստված, այսպես ասած, Իր առջեւ իրականում տեսնում է եսակենտրոն, ագահ, տրտնջացող, ըմբոստ մարդկային արարածի: Բայց Նա ասում է. «Եկեք ձևացնենք, որ սա ոչ թե պարզապես արարած է, այլ մեր Որդին: Նա նման է Քրիստոսին այնքանով, որքանով որ Մարդ է, որովհետև Նա դարձավ Մարդ: Եկեք ձևացնենք, որ նա նույնպես հոգով է նման Նրան: Եկեք նրան վերաբերվենք այնպես, կարծես նա այն է, ինչ իրականում նա չէ: Եկեք ձևացնենք, որպեսզի ձևականացումը իրականություն դարձնենք»: Աստված նայում է քեզ այնպես, կարծես դու փոքրիկ Քրիստոս ես. Քրիստոսը կանգնած է քո կողքին, որպեսզի քեզ դարձնի այդպիսին: Ես խոստովանում եմ, որ աստվածային ձևականացման այս գաղափարը սկզբում բավականին տարօրինակ է թվում: Բայց մի՞թե դա այդքան տարօրինակ է: Մի՞թե այդ կերպ չէ, որ առավել բարձրը միշտ վեր է բարձրացնում առավել ցածրին: Մայրը սովորեցնում է իր երեխային խոսել՝ խոսելով նրա հետ այնպես, ասես նա հասկանում է՝ դրանից շատ ավելի վաղ: Մենք մեր շներին վերաբերվում ենք այնպես, ասես նրանք «գրեթե մարդ» են. դրա համար էլ նրանք վերջում «գրեթե մարդ» են դառնում:

## 8. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԺՎԱ՞Ր Է, ԹԵ ՀԵՇՏ

Վերջին գլխում մենք քննարկում էինք քրիստոնեական այն գաղափարը, որը առնչվում էր «Քրիստոսին հագնելուն», կամ նախ «հանդերձվելուն» որպես Աստծո որդի, որպեսզի ի վերջո իսկական որդի դառնաս: Այն, ինչ ես ուզում եմ հստակեցնել, այն է, որ սա այն բազմաթիվ գործերից մեկը չէ, որը պետք է անի քրիստոնյան. և այն յուրահատուկ վարժություն չէ դասարանի գերազանցիկների համար: Այն ամբողջ քրիստոնեությունն է: Քրիստոնեությունն այլ բան ընդհանրապես չի առաջարկում: Եւ ես կցանկանայի նշել, թե ինչով է այն տարբերվում «բարոյականության» և «բարի լինելու» սովորական գաղափարներից:

Սովորական գաղափարը, որը մենք բոլորս ունենք նախքան քրիստոնյա դառնալը, սա է: Մենք որպես ելակետ վերցնում ենք մեր սովորական սեփական անձը՝ իր բազմազան ցանկություններով և ձգտումներով: Այնուհետև, մենք ընդունում ենք, որ ինչ-որ այլ բան, որը կոչվում է «բարոյականություն» կամ «պատշաճ վարք» կամ «հասարակական բարիք», իրավունքներ ունի այս սեփական անձի նկատմամբ. իրավունքներ, որոնք խանգարում են նրա ցանկություններին: «Բարի լինել» ասելով՝ մենք նկատի ունենք տեղի տալ այդ իրավունքներին: Որոշ բաներ, որոնք սովորական սեփական անձը ցանկանում էր անել, պարզվում է, այն է, ինչը մենք անվանում ենք «սխալ». բարի՝ մենք պետք է հրաժարվենք դրանցից: Մյուս բաները, որոնք սեփական անձը չէր ուզում անել, պարզվում է, այն է, ինչը մենք անվանում ենք «ճիշտ». բարի՝ մենք պետք է անենք դրանք: Բայց մենք անընդհատ հուսով ենք, որ երբ բոլոր պահանջները բավարարվեն, խեղճ բնական անձը դեռևս կունենա ինչ-որ հնարավորություն և ինչ-որ ժամանակ՝ շարունակելու իր կյանքը և անելու այն, ինչ իրեն դուր է գալիս: Իրականում՝ մենք շատ նման ենք այն ազնիվ մարդուն, որը վճարում է իր հարկերը: Նա, իհարկե, վճարում է ամենը, բայց նա հույս ունի, որ դրանից հետո իրեն բավականաչափ փող կմնա ապրելու համար: Որովհետև մենք դեռևս ելակետ ենք վերցնում մեր բնական անձը:

Քանի դեռ մենք այդպես ենք մտածում, հավանաբար կհետևի երկու արդյունքներից մեկը կամ մյուսը: Կամ մենք կհրաժարվենք բարի լինելուց, կամ էլ իսկապես շատ դժբախտ կդառնանք: Իսկապես, միամիտ չլինենք. եթե դու իսկապես փորձելու ես բավարարել բնական անձի վրա դրված բոլոր պահանջները, ապա այն ինչ մնալու է նրան դրանից հետո, չի բավականացնելու, որպեսզի այն շարունակի ապրել: Որքան շատ հնազանդվես քո խղճին, այնքան ավելին քո խիղճը կպահանջի քեզանից: Եւ քո բնական անձը, որը ամեն քայլափոխի այսկերպ սովամահ է լինում, կծկվում և անհանգստանում, կդառնա ավելի ու ավելի ջղային: Ի վերջո, դու կամ կհրաժարվես բարի լինելուց, կամ կդառնաս մեկն այն մարդկանցից, որոնք, ինչպես ասում են, «ապրում են ուրիշների համար», բայց միշտ դժգոհելով և

տրտնջալով՝ միշտ մտածելով, թե ինչու մյուսները ավելի շատ չեն նկատում դա, և միշտ ինքդ քեզ մարտիրոս դարձնելով: Եւ երբ դառնաս այդպիսին, դու շատ ավելի մեծ գլխացավանք կլինես բոլոր նրանց համար, որոնք պետք է ապրեն քեզ հետ, քան կլինեիր, եթե անկեղծորեն եսասեր մնայիր:

Քրիստոնեական ճանապարհը տարբեր է՝ ավելի դժվար և ավելի հեշտ: Քրիստոսն ասում է. «Տո՛ւր ինձ ամենը: Ես չեմ ուզում ո՛չ այդքան քո ժամանակից, ո՛չ այդքան քո փողից, և ո՛չ այդքան քո աշխատանքից. ես Քեզ եմ ուզում: Ես չեմ եկել քո բնական անձը տանջելու, այլ այն սպանելու: Կիսամիջոցները անօգուտ են: Ես չեմ ուզում մի ճյուղ կտրել այստեղ, և մի ճյուղ՝ այնտեղ. ես ուզում եմ հատել ամբողջ ծառը: Ես չեմ ուզում ատամը փորել, շապիկ դնել, կամ պաշտպանել, այլ հանել: Հանձնի՛ր ինձ ամբողջ բնական անձը՝ բոլոր ցանկությունները, որոնք դու անմեղ ես համարում, ինչպես նաև նրանք, որոնք չար ես համարում՝ ամբողջ հանդերձանքը: Դրա փոխարեն ես քեզ կտամ նոր անձ: Իրականում՝ ես քեզ կտամ Իմ Անձը՝ իմ կամքը կդառնա քոնը»:

Ե՛ւ ավելի դժվար, և՛ ավելի հեշտ, քան այն, ինչ մենք բոլորս փորձում ենք անել: Դուք նկատել եք, ես կարծում եմ, որ Քրիստոսն Ինքը երբեմն նկարագրում է քրիստոնեական ճանապարհը որպես շատ դժվար, երբեմն՝ շատ հեշտ: Նա ասում է. «Վերցրու խաչդ»՝ այլ կերպ ասած, դա նման է համակենտրոնացման ճամբարում ծեծվելով սպանվելուն: Հաջորդ պահին նա ասում է. «Իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև»: Նա նկատի ունի երկուսն էլ: Եւ կարելի է տեսնել, թե ինչու երկուսն էլ ճշմարիտ են:

Ուսուցիչները ձեզ կասեն, որ դասարանի ամենածույլ տղան նա է, ով վերջում ամենաշատն է պարապում: Նրանք նկատի ունեն հետևյալը: Եթե երկու տղաների, ասենք, երկրաչափության խնդիր տաս անելու, ապա նա, ով պատրաստ է ժամանակ տրամադրելու, կփորձի հասկանալ այն: Ծույլ տղան կփորձի այն անգիր սովորել, քանի որ այս պահին դրա համար ավելի քիչ ջանք է պետք: Բայց վեց ամիս անց, երբ նրանք պատրաստվում են քննության, այդ ծույլ տղան ժամերով ու ժամերով չարչարվում է այն բաների վրա, որոնք մյուս տղան հասկանում և հաճույքով անում է մի քանի րոպեում: Ծուլությունը նշանակում է ավելի շատ աշխատանք երկարաժամկետ հեռանկարում: Կամ դիտարկեք այսպես: Ճակատամարտում կամ լեռնագնացության ժամանակ հաճախ լինում է մի բան, որի համար շատ ջանք է պահանջվում. սակայն երկարաժամկետ հեռանկարում դա նաև ամենաանվտանգ բանն է: Եթե խուսափեք դրանից, ժամեր անց կհայտնվեք շատ ավելի վատ վտանգի առջև: Վախկոտ բանը նաև ամենավտանգավորն է:

Նույնն էլ այստեղ է: Սարսափելի, գրեթե անհնարին բանը, քո ամբողջ անձը՝ քո բոլոր ցանկություններն ու նախազգուշությունները, Քրիստոսին հանձնելն է: Բայց դա շատ ավելի հեշտ է, քան այն, ինչ մենք բոլորս փորձում ենք անել դրա փոխարեն: Որովհետև այն, ինչ մենք փորձում ենք անել, այն է, որ մնանք այն, ինչը մենք անվանում ենք «ինքներս»՝ պահպանել անձնական երջանկությունը՝ որպես մեր կյանքի մեծագույն նպատակ, և միևնույն ժամանակ լինել «բարի»: Մենք բոլորս փորձում ենք թույլ տալ, որ մեր միտքն ու սիրտը առաջնորդվեն իրենց ճամփով՝ կենտրոնացած փողի կամ հաճույքի կամ ձգտումների վրա, և

հուսալով, որ չնայած դրան, մեր վարքը կլինի ազնիվ, մաքրաբարո և խոնարհ: Եւ դա հենց այն է, ինչը Քրիստոսը զգուշացրել է մեզ, որ չենք կարողանալու անել: Ինչպես Նա ասաց, տատասկից հնարավոր չէ թուզ քաղել: Եթե ես դաշտ եմ, որտեղ խոտի սերմերից զատ ուրիշ ոչինչ չկա, ես չեմ կարող ցորեն ծլել: Խոտը կտրելը կարող է կարճ պահել այն, բայց ես միևնույն է կշարունակեմ խոտ ծլել, և ոչ թե ցորեն: Եթե ես ուզում եմ ցորեն ծլել, փոփոխությունը պետք է մակերեսից ավելի խոր լինի: Ինձ պետք է հերկեն և նորից ցանեն:

Ահա թե ինչու քրիստոնեական կյանքի իրական խնդիրը այնտեղ է, որտեղ մարդիկ սովորաբար այն չեն փնտրում: Առավոտյան՝ երբ դուք արթնանում եք: Օրվա ձեր բոլոր ցանկություններն ու հույսերը վայրի գազանների պես արշավում են ձեզ վրա: Եւ ամեն առավոտ առաջին գործը պարզապես դրանց բոլորին հետ հրելն է. ականջ դնելով այդ մյուս ձայնին, ընտրելով այդ մյուս տեսակետը, թույլ տալով, որ այդ մյուս ավելի մեծ, ավելի հզոր, և ավելի հանգիստ կյանքը ներհոսի: Եւ այսպես շարունակ, ամբողջ օրը: Հետ կանգնելով ձեր բոլոր բնական անհանգստություններից և տագնապներից. պատսպարվելով դրսի քամուց՝ ներս մտնելով:

Սկզբում մենք կարող ենք դա անել միայն հատուկենտ պահերի: Բայց այդ պահերի միջոցով, կյանքի նոր տեսակը կտարածվի մեր համակարգում, որովհետև մենք թույլ ենք տալիս Նրան ներգործել մեր ճիշտ մասում: Դա նման է ներկի կամ ներկանյութի, որը անմիջապես ներծծվում է՝ ի տարբերությունը ներկի, որը պարզապես քսված է մակերեսի վրա: Նա երբեք չի արտաբերել անորոշ, իդեալիստական արտահայտություններ, որոնք փուչիկ են: Երբ նա ասաց. «Կատարյա՛լ եղեք», Նա նկատի ուներ հենց դա: Նա նկատի ուներ, որ մենք պետք է մեզ ենթարկենք ամբողջական բուժման: Սա դժվար է, սակայն այն տեսակի փոխզիջումը, որին մենք բոլորս ձգտում ենք, ավելի դժվար է, իրականում՝ անհնարին: Ձվի համար միգուցե դժվար է թռչուն դառնալ, սակայն է՛լ ավելի զարմանահրաշ կլինի նրա համար թռչել սովորել՝ ձու մնալով: Մենք այս պահին ձվի պես ենք: Եւ հնարավոր չէ ընդմիշտ շարունակել մնալ սովորական, համեստ ձու: Մենք պետք է դուրս գանք լույս աշխարհ կամ հոտենք:

Կարո՞ղ եմ վերադառնալ նախկինում ասածիս: Սա ամբողջ քրիստոնեությունն է: Այլ բան չկա: Այնքան հեշտ է շփոթվել սրա վերաբերյալ: Այնքան հեշտ է կարծել, որ Եկեղեցին ունի շատ տարբեր տարրեր՝ կրթություն, կառույցներ, ավետարանչություն, եկեղեցական ծառայություններ: Ճիշտ այնպես, ինչպես հեշտ է կարծել, որ պետությունն ունի բազմաթիվ տարբեր տարրեր՝ ռազմական, քաղաքական, տնտեսական և այլն: Բայց ինչ-որ առումով ամեն ինչ շատ ավելի պարզ է: Պետությունը պարզապես գոյություն ունի խթանելու և պաշտպանելու մարդկանց սովորական երջանկությունը այս կյանքում: Ամուսնու և կնոջ զրույցը խարույկի մոտ, ընկերների տեգի խաղը գինետանը, մեկի գիրք կարդալը իր սենյակում կամ հող փորելը իր պարտեզում՝ ահա թե ինչի համար է պետությունը: Եւ եթե նրանք չեն օգնում նման պահերն ավելացնել և երկարացնել, ապա բոլոր օրենքները, խորհրդարանները, բանակները, դատարանները, ոստիկանությունները, տնտեսական համակարգերը և այլն, պարզապես ժամանակի կորուստ են: Նույն կերպ՝

Եկեղեցին այլ բանի համար չէ, եթե ոչ մարդկանց Քրիստոսի մեջ քաշելու, նրանց փոքրիկ Քրիստոսներ դարձնելու: Եթե դա չի արվում, ապա բոլոր տաճարները, հոգեւորականները, ավետարանչությունները, քարոզները, նույնիսկ Աստվածաշունչը, պարզապես ժամանակի կորուստ են: Աստված մարդ դարձավ միմիայն այս նպատակի համար: Գիտեք, նույնիսկ կասկածելի է, թե արդյոք ողջ տիեզերքը ստեղծվել է որևէ այլ նպատակի համար: Աստվածաշնչում ասվում է, որ ամբողջ տիեզերքը ստեղծվել է Քրիստոսի համար, և որ ամեն ինչ պետք է հավաքվի Նրա մեջ: Երևի թե մեզանից որևէ մեկը չի կարող հասկանալ, թե ինչպես դա տեղի կունենա ամբողջ տիեզերքի առնչությամբ: Մենք չգիտենք, թե ինչեր են (եթե որևէ բան) ապրում տիեզերքի այն մասերում, որոնք միլիոնավոր մղոններ հեռու են գտնվում Երկիր մոլորակից: Նույնիսկ Երկրի վրա մենք չգիտենք, թե դա ինչպես է լինելու մարդկանցից բացի այլ բաների հետ: Ի վերջո, սա սպասելի է: Մեզ ցույց է տրվել ծրագիրը միայն այնքանով, որքանով դա վերաբերում է մեզ:

Ես երբեմն պատկերացնում եմ, որ ես կարող եմ կռահել, թե ինչպես դա կարող է կիրառվել այլ բաների վրա: Ես կարծում եմ, որ կարող եմ պատկերացնել, թե ինչպես են առավել բարձր կենդանատեսակներին պատկանող կենդանիները ինչ-որ իմաստով ներքաշվում Մարդու մեջ, երբ նա սիրում է նրանց և դարձնում է նրանց շատ ավելի մարդանման, քան նրանք այլապես կլինեին: Նույնիսկ կարող եմ պատկերացնել, թե ինչպես են անշունչ բաները և բույսերը ներքաշվում մարդու մեջ, երբ նա ուսումնասիրում, օգտագործում և գնահատում է դրանք: Եւ եթե այլ աշխարհներում բանական արարածներ լինեին, նրանք էլ կարող էին նույնն անել իրենց աշխարհների հետ: Հնարավոր է, որ երբ բանական արարածները մտնում են Քրիստոսի մեջ, նրանք այդ կերպ իրենց հետ ներս են բերում մնացած բոլոր բաները: Բայց ես չգիտեմ, սա միայն ենթադրություն է:

Այն, ինչ ասվել է մեզ, այն է, թե ինչպես մենք՝ մարդիկ, կարող ենք ներքաշվել Քրիստոսի մեջ՝ կարող ենք դառնալ այն հրաշալի նվերի մի մասը, որը տիեզերքի երիտասարդ Արքայազնը ցանկանում է նվիրել Իր Հորը. այդ նվերը Ինքն է, և հետևաբար մենք ենք՝ Նրա մեջ: Դա միակ բանն է, որի համար մենք ստեղծվել ենք: Եւ Աստվածաշնչում կան տարօրինակ, հիասքանչ ակնարկներ այն մասին, որ երբ մենք ներքաշվենք, Բնության մեջ շատ ուրիշ բաներ կսկսեն իրենց ճիշտ տեղն ընկնել: Կավարտվի վատ երազը. կգա լուսաբացը:

## 9. ԳԻՆԸ ՀԱՇՎԵԼԸ

Ես իմացել եմ, որ շատերին է անհանգստացրել այն, ինչ ես նախորդ գլխում ասել էի մեր Տիրոջ խոսքերի մասին՝ «Կատարյա՛լ եղեք»: Որոշ մարդիկ կարծես կարծում են, որ սա նշանակում է, թե՝ «Քանի դեռ կատարյալ չես, ես քեզ չեմ օգնի», և քանի որ մենք չենք կարող կատարյալ լինել, ուրեմն, եթե Նա դա ի նկատի ուներ, մեր դրությունը անհույս է: Բայց ես չեմ կարծում, որ Նա դա ի նկատի ուներ: Կարծում եմ, որ Նա նկատի ուներ, որ «Միակ օգնությունը, որը ես կտրամադրեմ, դա կատարյալ դառնալու օգնությունն է: Դու կարող է ավելի քիչ բան ես ցանկանում, բայց ես քեզ այդ ավելի քիչը չեմ տա»:

Թույլ տվեք, որ բացատրեմ: Երբ ես երեխա էի, հաճախ ատամի ցավ էի ունենում, և ես գիտեի, որ եթե գնամ մորս մոտ, նա ինձ մի բան կտա, որը կթուլացնի այդ գիշերվա ցավը և թույլ կտա ինձ քնել: Բայց ես չէի գնում մորս մոտ, համենայն դեպս, մինչև ցավը շատ չվատանար: Եւ իմ չգնալու պատճառը սա էր: Ես չէի կասկածում, որ նա կտար ինձ այդ ասպիրինը, բայց ես գիտեի, որ նա նաև այլ բան կաներ: Ես գիտեի, որ հաջորդ առավոտ նա ինձ կտաներ ատամնաբույժի մոտ: Ես չէի կարող ստանալ այն, ինչ ուզում էի նրանից՝ առանց ստանալու մի բան ավելի, որը ես չէի ուզում: Ես ուզում էի անհապաղ ազատվել ցավից, բայց ես չէի կարող ստանալ դա առանց ատամներս մեկընդմիշտ կարգի բերելու: Եւ ես գիտեի այդ ատամնաբույժներին: Ես գիտեի, որ նրանք կսկսեին խաղ անել ամեն տեսակի այլ ատամների հետ, որոնք դեռ չէին սկսել ցավել: Նրանք չէին թողնի, որ ամեն ինչ իր տեղում մնար. եթե նրանց զիջեիր մի թիզ, նրանք կվերցնեին մի մետր:

Հիմա, եթե ես կարող եմ այսպես արտահայտվել, մեր Տերը նման է ատամնաբույժներին: Եթե նրան մի թիզ զիջես, նա կվերցնի մի մետր: Շատ մարդիկ են գնում Նրա մոտ՝ բուժվելու որևէ կոնկրետ մեղքից, որից նրանք ամաչում են (օրինակ՝ ձեռնաշարժությունից կամ ֆիզիկական վախկոտությունից), կամ որն ակնհայտորեն պղտորում է առօրյա կյանքը (օրինակ՝ վատ տրամադրությունը կամ հարբեցողությունը): Դե, իհարկե, Նա ամեն ինչ կբուժի, բայց նա այդտեղ կանգ չի առնի: Դա կարող է լինել այն ամենը, ինչ դուք խնդրել էիք. սակայն եթե մեկ կանչեցիք Նրան, ապա Նա ձեզ տալու է լիարժեք բուժումը:

Ահա թե ինչու Նա նախազգուշացրեց մարդկանց «հաշվել գինը»՝ նախքան քրիստոնյա դառնալը: «Թյուրիմացության մեջ չընկնեք,- ասում է նա,- եթե թույլ տաք, ես ձեզ կատարյալ կդարձնեմ: Այն պահին, երբ դուք ձեզ դնեք Իմ տրամադրության տակ, ձեզ դա է սպասվում: Չկա՛ դրանից ո՛չ պակասի, ո՛չ էլ դրանից բացի այլ բանի հնարավորություն: Դուք ազատ կամք ունեք և եթե ցանկանաք, կարող եք Ինձ հետ մղել: Բայց եթե դուք Ինձ հետ չմղեք, ապա իմացեք, որ ես պատրաստվում եմ ավարտին հասցնել այս գործը: Ինչպիսի տառապանք էլ լինի դրա գինը ձեզ համար ձեր երկրային կյանքում, ինչպիսի աներևակայելի զտում էլ լինի դրա գինը ձեզ համար ձեր մահից հետո, ինչ էլ որ

լինի դրա գինը Ինձ համար, ես երբեք չեմ հանգստանա և թույլ չեմ տա, որ դուք հանգստանաք, մինչև որ դուք բառացիորեն կատարյալ չլինեք՝ մինչև որ իմ Հայրը կարողանա առանց վերապահումների ասել, որ Նա հավանում է ձեզ, ինչպես Նա ասաց, որ հավանում է ինձ: Սա ես կարող եմ անել և կանեմ: Բայց սրանից պակաս ոչինչ չեմ անի»:

Բայցև, այնուամենայնիվ (և սա է մյուս և նույնքան կարևոր հանգամանքը), այս Օգնականը, ով երկարաժամկետ հեռանկարում չի բավարարվի ոչնչով, բացի բացարձակ կատարելությունից, նույնպես կգոհանա ձեր՝ վաղը արված առաջին իսկ թույլ, խարխափող ջանքից՝ ուղղված պարզագույն պարտականությունը կատարելուն: Ինչպես նշել է մի մեծ քրիստոնյա գրող (Ջորջ Մաքդոնալդ)՝ յուրաքանչյուր հայր գոհ է երեխայի քայլելու առաջին փորձից, սակայն ոչ մի հայր չի բավարարվի չափահաս որդու՝ ամուր, ազատ, առնական քայլքից պակաս այլ բանով: Նույն կերպ նա ասել է. «Աստծուն հեշտ է գոհացնելը, բայց դժվար է բավարարելը»:

Գործնական եզրակացությունը սա է: Մի կողմից, Աստծո կատարելության պահանջը ամենևին էլ չպետք է հուսահատեցնի ձեզ լավը լինելու ձեր ներկայիս փորձերում, կամ նույնիսկ ձեր ներկայիս անհաջողություններում: Ամեն անգամ, երբ ընկնեք, Նա ձեզ նորից կբարձրացնի: Եւ նա հիանալի գիտի, որ ձեր սեփական ջանքերը երբեք չեն հասցնելու ձեզ կատարելության մոտ անգամ: Մյուս կողմից, ի սկզբանե դուք պետք է գիտակցեք, որ նպատակը, որի ուղղությամբ Նա սկսում է առաջնորդել ձեզ, բացարձակ կատարելությունն է. և ոչ մի ուժ ողջ տիեզերքում, բացի ձեզնից, չի կարող խանգարել Նրան՝ ձեզ տանելու այդ նպատակին: Ձեզ դա է սպասվում: Եւ դա շատ կարևոր է գիտակցել: Եթե մենք դա չգիտակցենք, ապա շատ հավանական է, որ որոշակի պահից հետո սկսենք հետ քաշվել և դիմադրել Նրան: Կարծում եմ, որ մեզնից շատերը, երբ Քրիստոսը մեզ հնարավորություն է տվել հաղթահարել մեկ կամ երկու մեղք, որոնք ակնհայտ անհանգստություն էին պատճառում, հակված են կարծելու (թեև մենք դա բառերով չենք արտահայտում), որ մենք այժմ բավականաչափ լավն ենք: Նա արել է այն ամենը, ինչ մենք ցանկանում էինք, որ Նա անի, և մենք շատ շնորհակալ կլինեինք, եթե Նա հիմա մեզ հանգիստ թողներ: Ինչպես ասում ենք. «Ես երբեք չէի հավակնել սուրբ լինել, ես միայն ուզում էի լինել պարկեշտ, սովորական անձնավորություն»: Եւ սա ասելով՝ մենք կարծում ենք, թե մենք հեզ ենք:

Բայց սա է ճակատագրական սխալը: Իհարկե, մենք երբեք չենք ցանկացել և չենք խնդրել, որ դառնանք այնպիսի արարածներ, ինչպիսին Նա պատրաստվում է մեզ դարձնել: Բայց խնդիրն այն չէ, թե մենք ինչպիսին ենք ցանկանում լինել, այլ այն, թե ինչպիսին էր Նա նախատեսում, որ մենք լինենք, երբ Նա ստեղծեց մեզ: Նա է գյուտարարը, մենք պարզապես մեքենան ենք: Նա է նկարիչը, մենք պարզապես նկարն ենք: Մենք ի՞նչ գիտենք, թե Նա ինչպիսի՞ն է պատկերացնում մեզ: Նայեք՝ Նա արդեն դարձրել է մեզ որոշ ձև, որը տարբերվում է մեր անցյալից: Շատ վաղուց՝ մեր ծնվելուց առաջ, երբ մենք գտնվում էինք մեր մոր մարմնում, մենք անցել ենք տարբեր փուլերով: Մենք մի ժամանակ ավելի շուտ նման էինք բանջարի, իսկ մի այլ ժամանակ՝ ձկան. միայն ավելի ուշ փուլում մենք դարձանք մարդկային նորածիններ: Եւ եթե մենք

գիտակից լինեինք այդ վաղ փուլերում, ես համարձակվում եմ ասել, որ մենք երևի բավական գոհ կլինեինք մնալ բանջարի կամ ձկան վիճակում՝ չէինք ցանկանա երեխա դարձվել: Բայց այդ ամբողջ ժամանակ Նա գիտեր Իր ծրագիրը մեզ համար և վճռական էր այն իրականացնելու: Նույն բանն այժմ տեղի է ունենում ավելի բարձր մակարդակում: Մենք կարող ենք գոհ լինել մնալով այն, ինչ մենք անվանում ենք «սովորական մարդիկ», բայց Նա վճռական է իրականացնելու բոլորովին այլ ծրագիր: Այդ ծրագրից հետ կանգնելը խոնարհություն չէ. այն ծուլություն է և վախկոտություն: Դրան ենթարկվելը մեծամտություն կամ ամբարտավանություն չէ. այն հնազանդություն է:

Ահա ճշմարտության երկու կողմերը դիտարկելու ևս մեկ ձև: Մի կողմից, մենք երբեք չպետք է կարծենք, որ մեր սեփական միանձնյա ջանքերը կարող են երաշխավորել մեր՝ նույնիսկ հաջորդ քսանչորս ժամվա վարքը որպես «պարկեշտ» մարդիկ: Եթե Նա չաջակցի մեզ, մեզանից ոչ մեկը ապահովագրված չէ որևէ մեծ մեղքից: Մյուս կողմից, սրբության կամ հերոսության ոչ մի հնարավոր աստիճան, որը երբևէ գրանցվել է մեծագույն սրբերի կյանքում, չի գերազանցում այն, ինչ Նա որոշել է ի վերջո իրացնել մեզանից յուրաքանչյուրի մեջ: Ամբողջ գործն այս կյանքում չի ավարտվի, բայց Նա ցանկանում է, որ մենք հնարավորինս առաջանանք մինչև մահը:

Ահա թե ինչու մենք չպետք է զարմանանք, եթե մեզ վրա են հասնում դժվար ժամանակներ: Երբ մարդը դիմում է Քրիստոսին և թվում է, թե ամեն ինչ արդեն կարգին է (այն իմաստով, որ նրա որոշ վատ սովորություններ այժմ շտկված են), նա հաճախ զգում է, որ բնական կլիներ, եթե հիմա ամեն ինչ բավականին հարթ ընթանար: Երբ խնդիրներ են առաջանում՝ հիվանդություններ, դրամական խնդիրներ, նոր տեսակի գայթակղություններ, նա հիասթափվում է: Այս բաները, նա կարծում է, կարող էին անհրաժեշտ լինել իրեն արթնացնելու և ստիպելու իրեն ապաշխարել իր վատ և հին օրերի ժամանակ. բայց ինչո՞ւ հիմա: Որովհետև Աստված մղում է նրան ավելի առաջ, կամ վերև՝ ավելի բարձր մակարդակի, դնելով նրան այնպիսի իրավիճակների մեջ, որտեղ նա պետք է լինի շատ ավելի համարձակ, կամ շատ ավելի համբերատար, կամ շատ ավելի սիրող, քան նա նախկինում երբևէ պատկերացրել էր, որ կլիներ: Մեզ բոլորիս թվում է, որ դա ավելորդ է, բայց դա նրանից է, որ մենք դեռևս չենք պատկերացրել այն ահռելի բանը, որը Նա ցանկանում է ստեղծել մեզանից:

Ես կարիք ունեմ ևս մեկ առակ նշել Ջորջ Մաքդոնալդից: Պատկերացրեք ինքներդ ձեզ որպես կենդանի տուն: Աստված գալիս է վերակառուցելու այդ տունը: Սկզբում, հավանաբար, դուք կարող եք հասկանալ, թե ինչ է Նա անում: Նա կարգավորում է ջրատար խողովակները և փակում է տանիքի ջրի արտահոսքը և այլն. դուք գիտեիք, որ այդ աշխատանքները պիտի արվեին, և զարմացած չեք: Բայց շուտով նա սկսում է այնպես ուժեղ հարվածել տանը, որ սարսափելի ցավ է պատճառում, և անիմաստ է թվում: Ի՞նչ է Նրա մտքում: Բացատրությունն այն է, որ Նա կառուցում է բոլորովին այլ տուն, քան դուք պատկերացնում էիք՝ նոր թև գցելով այստեղ, լրացուցիչ հարկ ավելացնելով այնտեղ, աշտարակներ վեր հանելով, բակեր կառուցելով: Դուք կարծում էիք, որ դառնալու եք հարմարավետ փոքրիկ տնակ, բայց Նա պալատ է կառուցում: Նա Ինքը մտադիր է գալ և ապրել նրա մեջ:

«Կատարյա՛լ եղեք» հրամանը իդեալիստական փուչիկ չէ: Ոչ էլ հրաման է կատարելու անհնարինը: Նա պատրաստվում է մեզ դարձնել այնպիսի արարածներ, որոնք կարող են ենթարկվել այդ հրամանին: Նա ասել էր (Աստվածաշնչում), որ մենք «աստվածներ» ենք, և Նա պատրաստվում է ի կատար ածել Իր խոսքերը: Եթե մենք թույլ տանք Նրան (քանի որ մենք կարող ենք կանխել Նրան, եթե ցանկանանք), Նա մեզանից ամենաթույլին և աղտոտին կդարձնի աստված կամ աստվածուհի՝ շլացուցիչ, պայծառ, անմահ արարած, որը ամբողջովին կթրթռա այնպիսի էներգիայով, ուրախությամբ, իմաստությամբ և սիրով, որը հիմա չենք կարող պատկերացնել՝ պայծառ, անբիծ մի հայելի, որը կատարյալ կերպով ետ է արտացոլում Աստծուն (թեև, իհարկե, ավելի փոքր մասշտաբով) Նրա սեփական անսահման ուժը, բերկրանքն ու բարությունը: Գործընթացը կլինի երկար և որոշ մասերում՝ շատ ցավոտ. բայց դա այն է, ինչ սպասվում է մեզ: Ոչինչ պակաս: Նա նկատի ուներ հենց այն, ինչ ասել էր:

## 10. ԼԱՎ ՄԱՐԴԻԿ, ԹԵ՞ ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Նա նկատի ուներ այն, ինչ ասել էր: Նրանք, ովքեր իրենց կդնեն Նրա ձեռքերում, կդառնան կատարյալ՝ ինչպես Նա է կատարյալ՝ կատարյալ սիրո, իմաստության, ուրախության, գեղեցկության և անմահության մեջ: Այս փոփոխությունը ամբողջապես տեղի չի ունենա այս կյանքում, քանի որ մահը գործընթացի կարևոր մաս է: Թե որքան կլինի փոփոխությունը մինչև մահը որևէ հատուկ քրիստոնյայի դեպքում, հայտնի չէ:

Ես կարծում եմ, որ սա ճիշտ պահն է քննարկելու մի հարց, որը հաճախ է տրվում: Եթե քրիստոնեությունը ճշմարիտ է, ինչո՞ւ բոլոր քրիստոնյաներն ակնհայտորեն ավելի լավը չեն, քան բոլոր ոչ քրիստոնյաները: Այն, ինչ թաքնված է այս հարցի հետևում, մասամբ շատ ողջամիտ մի բան է, մասամբ էլ մի բան է, որն ընդհանրապես ողջամիտ չէ: Ողջամիտ մասը սա է: Եթե քրիստոնեություն ընդունելը չի բարելավում մարդու արտաքին արարքները, եթե նա շարունակում է մնալ նույնքան սնապարծ, չարամիտ, նախանձ կամ հավակնոտ, ինչպես նախկինում էր, ապա ես կարծում եմ, որ մենք պետք է կասկածենք, որ նրա «դարձի գալը» հիմնականում երևակայական էր. և սկզբնական դարձից հետո, ամեն անգամ, երբ մարդը կարծում է, որ ինքը առաջընթաց է ապրել, դա այն ստուգումն է, որը պետք է կիրառել: Հիանալի զգացմունքները, նոր պատկերացումները, ավելի մեծ հետաքրքրությունը «կրոնի» նկատմամբ ոչինչ չեն նշանակում, քանի դեռ դրանք չեն բարելավում մեր իրական վարքը. ճիշտ այնպես, ինչպես հիվանդության ժամանակ «ավելի լավ զգալը» ոչինչ չի նշանակում, եթե ջերմաչափը ցույց է տալիս, որ ձեր ջերմաստիճանը դեռ բարձրանում է: Այդ առումով, արտաքին աշխարհը միանգամայն ճիշտ է՝ դատելու քրիստոնեությունը արդյունքներով: Քրիստոսը մեզ ասաց, որ դատենք արդյունքներով: Ծառը հայտնի է իր պտղից. կամ, ինչպես ասում են, պուդինգի ապացույցը ուտելիս է երևում: Երբ մենք՝ քրիստոնյաներս, վատ ենք վարվում, կամ չենք կարողանում լավ վարվել, մենք քրիստոնեությունն անհավատալի ենք դարձնում արտաքին աշխարհի համար: Պատերազմյան պաստառները մեզ ասում էին, որ «Անզգույշ խոսակցության գինը՝ կյանքեր են»: Նույնքան ճիշտ է, որ «Անզգույշ կյանքերի գինը՝ խոսակցությունն է»: Մեր անզգույշ կյանքը արտաքին աշխարհին խոսակցության տեղիք է տալիս. և մենք նրանց հիմք ենք տալիս խոսելու այնպիսի ձևով, որը կասկածի տակ է դնում բուն քրիստոնեության ճշմարտացիությունը:

Բայց կա արդյունքներ պահանջելու ևս մեկ ձև, որի դեպքում արտաքին աշխարհը կարող է բավականին անտրամաբանական լինել: Նրանք կարող են պահանջել ոչ միայն, որ յուրաքանչյուր մարդու կյանքը պետք է բարելավվի, եթե նա քրիստոնյա դառնա. նրանք կարող են նաև պահանջել՝ քրիստոնեությանը հավատալուց առաջ, որ նրանք պետք է տեսնեն ամբողջ աշխարհը կոկիկորեն բաժանված երկու ճամբարների՝ քրիստոնյաների և ոչ քրիստոնյաների, և որ

ցանկացած պահին բոլոր մարդիկ առաջին ճամբարում պետք է ակնհայտորեն ավելի լավը լինեն, քան երկրորդի ճամբարի բոլոր մարդիկ: Սա անհիմն է մի քանի պատճառով:

(1) Առաջին հերթին՝ իրական աշխարհում իրավիճակը շատ ավելի բարդ է, քան այդ ամենը: Աշխարհը բաղկացած չէ 100 տոկոս քրիստոնյաներից և 100 տոկոսով ոչ քրիստոնյաներից: Կան մարդիկ (շատ շատերը), որոնք կամաց-կամաց դադարում են քրիստոնյա լինելուց, բայց դեռ իրենք իրենց անվանում են այդ անունով. նրանցից ոմանք եկեղեցականներ են: Կան այլ մարդիկ, որոնք կամաց-կամաց դառնում են քրիստոնյա, թեև դեռ իրենք իրենց այդպես չեն անվանում: Կան մարդիկ, որոնք չեն ընդունում Քրիստոսի վերաբերյալ ամբողջական քրիստոնեական վարդապետությունը, բայց այնքան ուժգին են գերված Նրանով, որ Նրանն են շատ ավելի խոր իմաստով, քան իրենք պատկերացնում են: Կան այլ կրոններին հարող մարդիկ, ում Աստծո գաղտնի ազդեցությունը առաջնորդում է, որպեսզի կենտրոնանան իրենց կրոնի այն մասերի վրա, որոնք համընկնում են քրիստոնեության հետ, և որոնք, հետևաբար, պատկանում են Քրիստոսին՝ առանց իմանալու: Օրինակ՝ նախանձախնդիր բուդդիստը կարող է առաջնորդվել ավելի շատ կենտրոնանալու ողորմության մասին բուդդայական ուսմունքի վրա, հետին պլան թողնելով (թեև նա դեռ կարող է ասել, որ հավատում է) բուդդայական ուսմունքի որոշ այլ կետեր: Քրիստոսի ծնունդից առաջ լավ հեթանոսներից շատերը կարող էին լինել այս իրադրության մեջ: Եւ միշտ, իհարկե, կան շատ մարդիկ, որոնք պարզապես շփոթված են, և իրենց մտքերում ունեն բազմաթիվ իրար չհամապատասխանող համոզմունքներ՝ բոլորը միասին խառնված: Հետևաբար, ընդհանուր առմամբ, քրիստոնյաների և ոչ քրիստոնյաների մասին դատողություններ անելն այնքան էլ օգտակար չէ: Որոշակի իմաստ կա կատուներին և շներին, կամ նույնիսկ տղամարդկանց և կանանց զանգվածաբար համեմատելու մեջ, քանի որ այստեղ հստակ գիտենք, թե ինչը՝ ինչ է: Նաև՝ կենդանին շնից կատվի չի վերածվում (լինի դանդաղ, թե հանկարծակի): Բայց երբ մենք  քրիստոնյաների բազմությունը համեմատում ենք ոչ քրիստոնյաների բազմության հետ, մենք սովորաբար մտածում ենք ոչ թե իրական մարդկանց մասին, որոնց մենք գոնե նվազագույնս ճանաչում ենք, այլ միայն երկու անորոշ գաղափարների մասին, որոնք քաղել ենք վեպերից և թերթերից: Եթե ցանկանում եք համեմատել վատ քրիստոնյային և լավ աթեիստին, ապա պետք է մտածեք երկու իրական օրինակների մասին, որոնց իրականում հանդիպել եք: Եթե մենք չմասնավորեցնենք, մենք միայն ժամանակ կկորցնենք:

(2) Ենթադրենք, որ մենք ամեն ինչ մասնավորեցրել ենք, և այժմ խոսում ենք ոչ թե երևակայական քրիստոնյայի և երևակայական ոչ քրիստոնյայի, այլ մեր իսկ հարևանությամբ բնակվող երկու իրական մարդկանց մասին: Նույնիսկ այդ դեպքում մենք պետք է զգույշ լինենք, որպեսզի ճիշտ հարցադրումներ կատարենք: Եթե քրիստոնեությունը ճշմարիտ է, ապա դրանից պետք է հետևի՝ (ա) Որ ցանկացած քրիստոնյա կլինի ավելի լավը, քան այդ նույն մարդը, եթե նա քրիստոնյա չլիներ, և (բ) Որ ցանկացած մարդ, որը դառնա քրիստոնյա, կլինի ավելի լավը, քան նախկինում էր: Ճիշտ նույն կերպ, եթե «Սպիտակ ժպիտ» ատամի մածուկի գովազդները ճիշտ են, ապա դրանից պետք է հետևի՝ (ա) Որ

նա, ով օգտագործում է այն, ավելի լավ ատամներ ունի, քան նույն մարդը, եթե նա չօգտագործեր այն, և (բ) Եթե որևէ մեկը սկսի օգտագործել այն, նրա ատամները ավելի լավը կլինեն: Բայց նշելը, որ ես, ով օգտագործում է «Սպիտակ ժպիտը» (և միևնույն ժամանակ երկու ծնողներիցս էլ վատ ատամներ եմ ժառանգել), նույնքան լավ ատամնաշար չունեմ, որքան մի առողջ երիտասարդ նեգր, որը երբեք ատամի մածուկ չի օգտագործել, ինքնին չի ապացուցում, որ գովազդները չեն համապատասխանում իրականությանը: Քրիստոնյա օրիորդ Բեյթսը կարող է ավելի սուր լեզու ունենալ, քան անհավատ Դիկ Ֆիրկինը: Դա ինքնին մեզ չի հուշում, թե արդյոք քրիստոնեությունը ճշմարիտ է: Խնդիրն այն է, թե ինչպիսին կլիներ օրիորդ Բեյթսի լեզուն, եթե նա քրիստոնյա չլիներ, և ինչպիսի՞ն կլիներ Դիկի լեզուն, եթե նա դառնար քրիստոնյա: Օրիորդ Բեյթսը և Դիկը բնական պատճառների և վաղ դաստիարակության պատճառով ունեն որոշակի խառնվածք. քրիստոնեությունը պնդում է, որ կարող է այդ երկու խառնվածքն էլ նոր կառավարման տակ դնել, եթե նրանք նրան թույլ տան դա անել: Այն, ինչ դուք իրավունք ունեք հարցնելու, այն է, թե արդյոք այդ կառավարումը, եթե դրան թույլատրվի ստանձնել այդ գործը, բարելավում է իրադրությունը: Բոլորը գիտեն, որ այն, ինչ կառավարվում է Դիկ Ֆիրկինի դեպքում, շատ ավելի «լավն» է, քան այն, ինչ կառավարվում է միսս Բեյթսի դեպքում: Հարցը դա չէ: Գործարանի կառավարումը դատելու համար պետք է հաշվի առնել ոչ միայն արտադրանքը, այլև գործարանը: Հաշվի առնելով գործարանը Ա-ի սարքավորանքը, միգուցե հրաշք է, որ այն ընդհանրապես արտադրում է որևիցե բան: Հաշվի առնելով գործարան Բ-ի առաջնակարգ սարքավորանքը՝ նրա արտադրանքը, թեև բարձր է, սակայն միգուցե շատ ավելի ցածր է, քան պետք է լիներ: Անկասկած, գործարան Ա-ի լավ կառավարիչը պատրաստվում է, հնարավորինս շուտ, նոր սարքավորումներ տեղադրել, բայց դա ժամանակ է պահանջում: Մինչ այդ՝ ցածր արտադրողականությունը չի նշանակում, որ նա ձախողել է:

(3) Այժմ եկեք մի փոքր ավելի խորանանք: Կառավարիչը պատրաստվում է նոր սարքավորումներ տեղադրել. երբ Քրիստոսը ավարտի Իր գործը օրիորդ Բեյթսի հետ, նա իսկապես շատ «լավն» է լինելու: Բայց եթե սոսկ այդպես դատեինք, ապա կթվար, որ Քրիստոսի միակ նպատակը օրիորդ Բեյթսին բարձրացնելն էր այն մակարդակին, որտեղ միշտ գտնվել էր Դիկը: Մենք, փաստորեն, դիտարկել էինք այնպես, կարծես Դիկի մոտ ամեն ինչ կարգին էր. կարծես քրիստոնեությունը մի բան է, որը անհրաժեշտ է վատ մարդկանց, և լավ մարդիկ կարող էին իրենց թույլ տալ ապրել առանց դրա. և ասես «լավը» լինելը այն ամենն էր, ինչ Աստված պահանջում է: Բայց սա ճակատագրական սխալ կլիներ: Ճշմարտությունն այն է, որ Աստծո աչքերում, Դիկ Ֆիրկինը «փրկվելու» նույնքան կարիք ունի, որքան օրիորդ Բեյթսը: Մեկ իմաստով (շուտով կբացատրեմ, թե ինչ իմաստով) լավը լինելը գրեթե կապ չունի խնդրի հետ:

Մենք չեք կարող ակնկալել, որ Աստված դիտի Դիկի հանդարտ բնավորությունը և ընկերական խառնվածքը ճիշտ այնպես, ինչպես մենք: Դրանք բխում են բնական սկզբնապատճառներից, որոնք ստեղծում է Աստված Ինքը: Լինելով զուտ խառնվածքային, դրանք բոլորը կանհետանան, եթե Դիկի մարսողությունը փոխվի: «Լավությունը», իրականում, Աստծո նվերն է Դիկին, և ոչ թե Դիկի նվերն՝ Աստծուն: Նույն կերպ, Աստված թույլ է տվել, որ բնական

պատճառները, գործելով երկար դարերի մեղքից առաջացած փչացած աշխարհում, օրիորդ Բեյթսի մոտ առաջացնեն այն նեղ միտքն ու խախտված նյարդերը, որոնք նրա՝ վատը լինելու մեծ մասի պատճառն են հանդիսանում: Նա մտադիր է, Իր նախատեսած ժամանակին, կարգավորել նրա այդ մասը: Սակայն Աստծո համար դա չէ խնդրի կարևոր մասը: Դա դժվարություններ չի ներկայացնում: Դա այն չէ, ինչի մասին Նա մտահոգված է: Այն, ինչը Նա դիտում է, և որին Նա սպասում է, և որի համար Նա գործում է, մի բան է, որը հեշտ չէ նույնիսկ Աստծո համար, որովհետև, հենց դրա բնույթի պատճառով, նույնիսկ Նա չի կարող դա առաջացնել զուտ ուժի գործադրությամբ: Նա սպասում և հետևում է դրան և՛ օրիորդ Բեյթսի մոտ, և՛ Դիկ Ֆիրկինի մոտ: Դա մի բան է, որ նրանք կարող են ազատորեն տալ Նրան, կամ ազատորեն հրաժարվել Նրան տալուց: Արդյո՞ք նրանք կշրջվեն դեպի Նա, թե՞ ոչ, և այդպիսով կիրագործե՞ն այն միակ նպատակը, որի համար նրանք ստեղծվել են: Նրանց ազատ կամքը իրենց ներսում թրթռում է՝ ինչպես կողմնացույցի սլաքը: Բայց սա մի սլաք է, որը կարող է ընտրություն կատարել: Այն կարող է կողմնորոշվել դեպի իսկական հյուսիսը. բայց այն պարտադրված չէ: Արդյո՞ք սլաքը պտտվելով, ի վերջո, կկանգի և կուղղվի Աստծուն:

Նա կարող է օգնել նրան դա անել: Նա չի կարող ստիպել: Նա չի կարող, այսպես ասած, մեկնել իր ձեռքը և այն քաշել ճիշտ դիրքի վրա, քանի որ այդ դեպքում դա այլևս ազատ կամք չի լինի: Արդյո՞ք այն կկողմնորոշվի դեպի հյուսիսը: Դա այն հարցն է, որից կախված է ամեն ինչ: Օրիորդ Բեյթսն ու Դիկը իրենց բնությունը կտրամադրե՞ն Աստծուն: Երկրորդական նշանակություն ունի այն հարցը, թե նրանց կողմից տրամադրված կամ չտրամադրված բնությունները այդ պահին լավն են, թե զզվելի: Աստված կարող է լուծել խնդրի այդ մասը:

Ինձ սխալ չհասկանաք: Անշուշտ, Աստված վատ և ցավալի է համարում վատ բնությունը: Եւ, իհարկե, Նա հաճելի բնությունը համարում է լավ բան, լավ՝ ինչպիսին են հացը, արևը կամ ջուրը: Բայց սրանք այն լավ բաներն են, որոնք Նա տալիս է, և մենք ստանում ենք: Նա է ստեղծել Դիկի առողջ նյարդերը և լավ մարսողությունը, և այնտեղից, որտեղից դրանք եկել են, դրանցից շատ-շատ կա: Աստծո համար ոչ մի ծախս չէ, որքանով մենք գիտենք, լավ բաներ ստեղծելը, բայց ապստամբ կամքերը դարձի բերելու գինը Նրա խաչելությունն է: Եւ քանի որ նրանք կամքեր են, նրանք կարող են մերժել Նրա խնդրանքը՝ լինեն դրանք լավ մարդկանց, թե չար մարդկանց կամքեր: Եւ հետո, քանի որ Դիկի՝ այդ լավը լինելը պարզապես բնության մի մասն էր, ի վերջո այն կքայքայվի: Բնությունն ինքը ի վերջո կանէանա: Բնական հանգամանքները միավորվում են Դիկի մեջ՝ ստեղծելու հաճելի հոգեբանական զուգադրություն, ճիշտ այնպես, ինչպես նրանք միավորվում են մայրամուտի ժամանակ՝ ստեղծելու գույների հաճելի զուգադրություն: Ծուտով (որովհետև այդպես է գործում բնությունը) դրանք նորից կքայքայվեն, և երկու դեպքում էլ զուգադրությունը կվերանա: Դիկը ունեցել է հնարավորությունը այդ ակնթարթային զուգադրությունը վերածելու (ավելի ճիշտ՝ թույլ տալու Աստծուն վերածելու) հավիտենական ոգու գեղեցկության, և նա չի ընտրել այդ հնարավորությունը:

Այստեղ պարադոքս կա. քանի դեռ Դիկը չի դառնում Աստծուն, նա կարծում է, որ իր լավը լինելը իրենից է, և քանի դեռ նա այդպես է մտածում, դա իրենից չէ: Այն

պահից սկսած, երբ Դիկը հասկանում է, որ իր լավը լինելը իրենից չէ, այլ Աստծո պարգևն է, և երբ նա դա վերադարձնում է Աստծուն, հենց այդ ժամանակ է, որ այն սկսում է իսկապես իրենը լինել: Քանի որ Դիկը սկսում է իր մասնակցությունն ունենալ իր սեփական ստեղծագործության մեջ: Միակ բաները, որ մենք կարող ենք պահել, այն բաներն են, որոնք մենք ազատորեն տալիս ենք Աստծուն: Այն, ինչ մենք փորձում ենք պահել մեզ համար, հենց այն է, ինչը վստահաբար կորցնելու ենք:

Ուստի մենք չպետք է զարմանանք, եթե քրիստոնյաների մեջ տեսնենք որոշ մարդկանց, որոնք դեռ վատն են: Երբ սկսեք մտածել դրա մասին, կտեսնեք, որ կա նույնիսկ հատուկ պատճառ, թե ինչու է սպասելի, որ ավելի մեծ քանակի վատ մարդիկ դառնան դեպի Քրիստոսը, քան լավ: Դա այն էր, ինչին մարդիկ դեմ էին խոսում Քրիստոսի վերաբերյալ՝ Նրա երկրային կյանքի ընթացքում. Նա կարծես գրավում էր «այնպիսի գարշելի մարդկանց»: Դա այն է, ինչին մարդիկ դեռևս դեմ են և միշտ էլ դեմ են լինելու: Չե՞ք տեսնում, թե ինչու: Քրիստոսն ասաց. «Երա՜նի աղքատներին» և «Որքա՜ն դժվար է հարուստների համար մտնել Արքայությունը», և, անկասկած, Նա առաջին հերթին նկատի ուներ տնտեսապես հարուստներին և տնտեսապես աղքատներին: Բայց մի՞թե Նրա խոսքերը չեն վերաբերում նաև հարստության և աղքատության այլ տեսակների: Ծատ փող ունենալու վտանգներից մեկն այն է, որ դու կարող ես միանգամայն գոհ լինել այն երջանկության տեսակներից, որոնք կարող է տալ փողը, և, հետևաբար, չկարողանաս գիտակցել քո՝ Աստծո կարիքը: Եթե ամեն ինչ ստացվում է պարզապես չեկեր ստորագրելով, դու կարող ես մոռանալ, որ ամեն պահ դու ամբողջովին կախված ես Աստծուց: Հիմա՝ միանգամայն պարզ է, որ բնական պարգևները իրենց հետ բերում են նմանատիպ վտանգներ: Եթե ունես ամուր նյարդեր, խելք, առողջություն, համակրանք՝ շրջապատիցդ, լավ դաստիարակություն, ապա, շատ հավանական է, որ գոհ լինես քո անձնավորությունից: «Ինչու՞ Աստծուն մեջտեղ բերել», - կարող ես հարցնել: Լավ վարքուբարքի որոշակի աստիճան բավականին հեշտ է ստացվում քեզ մոտ: Դու այն թշվառ արարածներից չես, որոնք միշտ գայթակղվում են սեքսով, հարբեցողությամբ, նյարդայնությամբ կամ զայրույթով: Բոլորն ասում են, որ դու լավ մարդ ես, և (մեր մեջ ասած) դու համաձայն ես նրանց հետ: Դու, շատ հավանական է, որ հավատաս, որ այս ողջ «լավը լինելը» քո շնորհքն է, և դու կարող ես հեշտությամբ չզգալ ավելի լավ տեսակի լավը լինելու կարիքը: Հաճախ մարդիկ, որոնք ունեն այս բոլոր բնական բարիքները, ընդհանրապես չեն կարող ընկալել իրենց կարիքը առ Քրիստոս, մինչև մի օր նրանց բնական «հաճելիությունը» դավաճանում է նրանց և փշրում է նրանց ինքնագոհությունը: Այսինքն՝ այս իմաստով է «հարուստների» համար դժվար մտնել Արքայությունը:

Իրավիճակը շատ տարբեր է վատ մարդկանց համար՝ փոքր, կքած, երկչոտ, խեղված, սակավարյուն, միայնակ, կամ կրքոտ, զգայական, անհավասարակշիռ մարդկանց համար: Եթե նրանք լավը լինելու ընդհանրապես փորձեր են անում, կայծակնային արագությամբ հասկանում են, որ օգնության կարիք ունեն: Նրանց համար կա՛մ Քրիստոսն է, կա՛մ ոչինչ: Կա՛մ խաչը վերցնելն ու հետևելն է, կա՛մ հուսահատությունը: Նրանք կորած ոչխարներն են. Նա եկել է հատուկ նրանց գտնելու: Նրանք (շատ իրական և սարսափելի իմաստով) «աղքատներն»

են. Նա օրհնել է նրանց: Նրանք այն «գարշելի խումբն» են, որոնց հետ Նա շրջում է, և, իհարկե, փարիսեցիները դեռ ասում են, ինչպես ասում էին առաջ. «Եթե քրիստոնեության մեջ որևէ ճշմարտություն լիներ, այդ մարդիկ քրիստոնյաներ չէին լինի»:

Այստեղ կա՛մ նախազգուշացում, կա՛մ խրախուսանք կա մեզանից յուրաքանչյուրի համար: Եթե դու լավ մարդ ես, եթե առաքինությունը քեզ մոտ հեշտությամբ է ստացվում, զգուշացի՛ր: Շատ բան է սպասվում նրանցից, ում շատ է տրվում: Եթե այն բաները, որոնք իրականում Աստծո պարգևներն են քեզ բնության միջոցով, շփոթես քո սեփական արժանիքների տեղ, և եթե գոհ լինես պարզապես լավը լինելուց, դու դեռ ապստամբ ես. և բոլոր այդ պարգևները կդարձնեն քո անկումը ավելի սարսափելի, քո ապականությունը ավելի բարդ, և քո վատ օրինակն ավելի կործանարար: Սատանան մի ժամանակ հրեշտակապետ էր. նրա բնական շնորհները նույնքան բարձր էին քոնից, որքան քոնը՝ շիմպանզեից:

Բայց եթե դու խեղճ արարած ես, թունավորված լինելով թշվառ դաստիարակությամբ մի տան մեջ, որը լի է զզվելի նախանձով և անիմաստ վեճերով, բեռնված՝ առանց քո ընտրության, ինչ-որ զզվելի սեռական այլասերվածությամբ, գիշեր-ցերեկ հալածված թերարժեքության բարդույթով, որի պատճառով պոռթկում ես քո լավագույն ընկերների վրա՝ մի՛ հուսահատվիր: Նա ամեն ինչ գիտի դրա մասին: Դու այն աղքատներից ես, ում Նա օրհնել է: Նա գիտի, թե ինչ խղճուկ մեքենա ես դու փորձում վարել: Շարունակի՛ր: Արա՛ այն, ինչ կարող ես: Մի օր (գուցե մեկ այլ աշխարհում, բայց գուցե դրանից շատ ավելի շուտ) Նա այն դեն կնետի ջարդոնի վրա և քեզ նորը կտա: Իսկ այդ ժամանակ, դու կարող է զարմացնես մեզ բոլորիս, հատկապես՝ ինքնդ քեզ, քանի որ դու դժվար դպրոցում ես սովորել վարելը: (Շատ վերջիններ առաջին կլինեն, և շատ առաջիններ՝ վերջին:)

«Լավը լինելը»՝ առողջ, ամբողջական անհատականություն լինելը, հիանալի բան է: Մենք պետք է փորձենք բոլոր բժշկական, կրթական, տնտեսական և քաղաքական միջոցներով ստեղծել մի աշխարհ, որտեղ հնարավորինս շատ մարդիկ «լավն» են մեծանում. ճիշտ այնպես, ինչպես մենք պետք է փորձենք ստեղծել մի աշխարհ, որտեղ բոլորն էլ բավականաչափ ուտելիք ունեն: Բայց մենք չպետք է ենթադրենք, որ եթե նույնիսկ մեզ հաջողվեր բոլորին լավը դարձնել, ապա մենք փրկում էինք նրանց հոգիները: Լավ մարդկանց աշխարհը, որը գոհ է իր լավը լինելով, այլևս ավելի հեռուն չնայելով, Աստծուց հեռացած, կունենա նույնքան փրկության կարիք, որքան թշվառ աշխարհը, և միգուցե ավելի դժվար լինի փրկել:

Որովհետև զուտ բարելավումը փրկագնում չէ, թեև փրկագնումը միշտ բարելավում է մարդկանց՝ նույնիսկ այստեղ և հիմա, և, ի վերջո, կբարելավի նրանց մի այնպիսի աստիճանի, որը մենք դեռ չենք պատկերացնում: Աստված մարդացավ, որպեսզի արարածներին որդիներ դարձնի՝ ոչ թե պարզապես հին տեսակի ավելի լավ մարդիկ ստեղծի, այլ նոր տեսակի մարդ ստեղծի: Դա ոչ թե ձիուն սովորեցնելն է ավելի ու ավելի լավ ցատկել, այլ ձիուն թևավոր էակի վերածելն է: Իհարկե, երբ նա ձեռք բերի իր թևերը, նա կճախրի այնպիսի

ցանկապատերի վրայով, որոնց վրայով երբեք  հնարավոր չէր լինի ցատկել, և այդպիսով կհաղթի սովորական ձիուն: Բայց կարող է լինել մի շրջան, երբ նրա թևերը նոր են սկսում աճել, որ նա դա չի կարող անել, և այդ փուլում նրա ուսերի գոյացումները՝ որոնց նայելիս ոչ ոք չի կարող կռահել, որ դրանք թեւեր են դառնալու, կարող են նրան անհարմար տեսք տալ:

Բայց միգուցե մենք արդեն չափից դուրս երկար ենք ծավալվել այս հարցի շուրջ: Եթե այն, ինչ ուզում ես, ինչ-որ փաստարկ է քրիստոնեության դեմ (և ես լավ հիշում եմ, թե որքան ջանասիրաբար էի ես փնտրում նման փաստարկներ, երբ սկսեցի վախենալ, որ այն ճշմարիտ է), ապա հեշտությամբ կարող ես գտնել մի հիմար և թերի քրիստոնյայի և ասել. «Սա է՞ այդ փառաբանված նոր մարդը: Տվե՛ք ինձ հին տեսակը»: Բայց եթե սկսում ես նկատել, որ քրիստոնեությունը այլ հանգամանքերի պատճառով  հավանական է, ապա հոգուդ խորքում կիմանաս, որ դա զուտ խուսափում է իրական խնդրից: Ի՞նչ կարող ենք իրականում իմանալ այլ մարդկանց հոգիների մասին՝ նրանց գայթակղությունների, նրանց հնարավորությունների, նրանց պայքարների մասին: Մեկ հոգու ճանաչում ես ամբողջ արարչության մեջ՝ և այն միակն է, ում ճակատագիրը դրված է քո ձեռքերում: Եթե կա Աստված, ապա, ինչ-որ իմաստով, դու միայնակ ես Նրա հետ: Դու չես կարող Նրան անուշադրության մատնել քո հարևանների վերաբերյալ ենթադրությունների կամ գրքերում կարդացած հիշողությունների պատճառով: Ի՞նչ նշանակություն կունենան այդ բոլոր խոսակցություններն ու շշուկները (կկարողանա՞ս նույնիսկ հիշել դրանք), երբ անզգայացնող այս մառախուղը, որը մենք անվանում ենք «բնություն» կամ «իրական աշխարհ», անէանա, և այն Ներկայությունը, որում դու միշտ եղել ես, դառնա շոշափելի, անմիջական և անխուսափելի:

# 11. ՆՈՐ ՄԱՐԴԻԿ

Վերջին գլխում ես համեմատեցի Քրիստոսի՝ Նոր Մարդ ստեղծելու աշխատանքը՝ ձիուն թևավոր արարածի վերածելու գործընթացի հետ: Ես օգտագործեցի այդ ծայրահեղ օրինակը, որպեսզի ընդգծեմ այն փաստը, որ դա զուտ բարելավում չէ, այլ Փոխակերպում: Դրան ամենամոտ զուգահեռը բնական աշխարհում կարելի է գտնել այն ուշագրավ փոխակերպումների մեջ, որոնք մենք կարող ենք կատարել միջատների մեջ՝ նրանց վրա կիրառելով որոշակի ճառագայթներ: Որոշ մարդիկ կարծում են, որ էվոյյուցիան այսպես է ընթացել: Արարածների մեջ տեղի ունեցած այն փոփոխությունները, որոնցից կախված է այդ ամենը, կարող էին առաջանալ տիեզերքից եկող ճառագայթներից: (Իհարկե, երբ փոփոխությունները արդեն կան, այն, ինչ նրանք անվանում են «Բնական Ընտրություն», սկսում է կիրառվել դրանց վրա. այսինքն՝ օգտակար փոփոխությունները հարատևում են, իսկ մյուսները վերանում են):

Թերևս ժամանակակից մարդը կարող է լավագույնս հասկանալ քրիստոնեական գաղափարը, եթե այն համեմատի էվոյյուցիայի հետ: Բոլորն այժմ գիտեն էվոյյուցիայի մասին (չնայած, իհարկե, որոշ կրթված մարդիկ չեն հավատում դրան). բոլորին ասվել է, որ մարդը առաջացել է կյանքի ցածր տեսակներից: Հետևաբար, մարդիկ հաճախ մտածում են. «Ո՞րն է հաջորդ քայլը, ե՞րբ է հայտնվելու մարդուն հաջորդող բանը»: Երևակայություն ունեցող գրողները երբեմն փորձում են պատկերել այս հաջորդ քայլը՝ «Գերմարդը», ինչպես իրենք են նրան անվանում. բայց սովորաբար նրանց միայն հաջողվում է պատկերացնել ինչ-որ մեկին, որը շատ ավելի վատն է, քան մարդը, որպիսին որ մենք նրան գիտենք, և հետո փորձում են դա հավասարակշռել՝ լրացուցիչ ոտքեր կամ ձեռքեր ավելացնելով: Բայց ենթադրենք, որ հաջորդ քայլը լինելու էր նույնիսկ ավելի տարբեր նախկին քայլերից, քան նրանք երբևէ երազել են: Եւ մի՞թե շատ հավանական չէ, որ դա այդպես էլ կլիներ: Հազարավոր դարեր առաջ առաջացել էին հսկայական, շատ ուժեղ պաշտպանված արարածներ: Եթե որևէ մեկը այդ ժամանակ հետևեր էվոյյուցիայի ընթացքին, նա հավանաբար կսպասեր, որ այն շարունակաբար ավելացնելու էր այդ պաշտպանությունը: Բայց նա կսխալվեր: Ապագան մի քարտ ուներ նախատեսած, որը այդ ժամանակ նա չէր կարող կռահել: Այն զարմացնելու էր նրան՝ ստեղծելով փոքրիկ, մերկ, անպաշտպան կենդանիներ, որոնք ավելի լավ ուղեղներ ունեին, և այդ ուղեղներով նրանք տիրելու էին ողջ մոլորակին: Նրանք ոչ թե պարզապես ավելի մեծ ուժ էին ունենալու, քան նախապատմական հրեշները, այլ նրանք ունենալու էին նոր տեսակի ուժ: Հաջորդ քայլը ոչ միայն տարբեր էր լինելու, այլ տարբերվելու էր նոր տեսակի տարբերությամբ: Էվոյյուցիայի ընթացք չէր ընթանալու այն ուղղությամբ, որը նա տեսնում էր նախկինում. այն իրականում կտրուկ թեքվելու էր:

Հիմա՝ ինձ թվում է, որ «Հաջորդ Քայլի» հայտնի գուշակությունների մեծ մասը նույն սխալն են թույլ տալիս: Մարդիկ տեսնում են (կամ ամեն դեպքում, կարծում են, որ տեսնում են), որ մեր ուղեղները գնալով ավելի են հզորանում, և

մեր իշխանությունը բնության վրա մեծանում է: Եւ քանի որ նրանք կարծում են, որ ամեն ինչ գնում է այդ ուղղությամբ, նրանք կարծում են, որ այն կշարունակվի գնալ այդ ուղղությամբ: Բայց ինձ մոտ այնպիսի տպավորություն է, որ Հաջորդ Քայլը իսկապես նոր է լինելու. այն թեքվելու է մի ուղղությամբ, որի մասին երբեք չէինք կարող երազել: Դժվար թե արժենար դրան Նոր Քայլ անվանել, եթե այն այդպիսին չլիներ: Ես կակնկալեի ոչ միայն տարբերություն, այլև նոր տեսակի տարբերություն: Ես կակնկալեի ոչ միայն փոփոխություն, այլև փոփոխություն առաջացնելու նոր մեթոդ: Կամ ավելի զարմանալի կերպ արտահայտեմ՝ ես կակնկալեի, որ Էվոյյուցիայի հաջորդ փուլն ամենևին էլ Էվոյյուցիայի փուլ չի լինի՝ որ հենց Էվոյյուցիան՝ որպես փոփոխություն առաջացնելու մեթոդ, կփոխարինվի: Եւ վերջապես, ես չէի զարմանա, եթե, երբ դա տեղի ունենա, շատ քչերը նկատեն, որ այն տեղի է ունենում:

Հիմա՝ եթե ցանկանում եք խոսել այս տերմիններով, ապա քրիստոնեական տեսակետը հենց այն է, որ Հաջորդ Քայլն արդեն տեղի է ունեցել: Եւ այն իսկապես նոր է: Այն խելացի մարդկանցից դեպի ավելի խելացի մարդկանց փոփոխությունը չէ. այն փոփոխություն է, որն ընթանում է բոլորովին այլ ուղղությամբ՝ փոփոխություն՝ Աստծո արարածներ լինելուց դեպի Աստծո որդիներ լինելուն: Դրա առաջին դեպքը տեղի է ունեցել Պաղեստինում՝ երկու հազար տարի առաջ: Ինչ-որ իմաստով այս փոփոխությունն ամենևին էլ «Էվոյյուցիա» չէ, քանի որ այն իրադարձությունների բնական ընթացքից բխող մի բան չէ, այլ դրսից բնություն մտնող մի բան: Բայց դա հենց այն է, ինչ պիտի ակնկալեի: «Էվոյյուցիայի» մեր գաղափարին մենք հանգել էինք անցյալի ուսումնասիրությունից: Եթե ապագայում իրական նորույթներ կան, ապա, իհարկե, անցյալի վրա հիմնված մեր գաղափարն չի կարող իսկապես դրանք ներառել: Եւ իրականում այս Նոր Քայլը տարբերվում է բոլոր նախորդներից ոչ միայն նրանով, որ այն գալիս է դրսից, այլ նաև մի քանի այլ առումներով:

(1) Այն չի իրականացվում սեռական վերարտադրության միջոցով: Կարիք կա՞ արդյոք զարմանալու: Նախքան սեքսի հայտնվելը, կար ժամանակ, որ զարգացումն իրականացվում էր տարբեր եղանակներով: Հետևաբար, մենք կարող էինք ակնկալել, որ կգա մի ժամանակ, երբ սեքսը կվերանա, կամ (որն իրականում հենց այն է, ինչ տեղի է ունենում) մի ժամանակ, երբ սեքսը, չնայած շարունակելով գոյություն ունենալ, կդադարի լինել զարգացման հիմնական միջոցը:

(2) Նախկին փուլերում կենդանի օրգանիզմները կամ ընտրություն չունեին, կամ շատ քիչ ընտրություն ունեին նոր քայլն անելու համար: Առաջընթացը, հիմնականում, մի բան էր, որ տեղի էր ունենում նրանց հետ, այլ ոչ թե նրանց շնորհիվ: Բայց նոր քայլը՝ արարած լինելուց որդի դառնալու քայլը, կամավոր է: Համենայն դեպս՝ կամավոր է մեկ առումով: Այն կամավոր չէ այն իմաստով, որ մենք ինքներս կարող էինք անել, կամ նույնիսկ պատկերացնել այդ քայլը: Բայց այն կամավոր է այն առումով, որ երբ այն մեզ առաջարկվում է, մենք կարող ենք հրաժարվել նրանից: Մենք կարող ենք, եթե ցանկանանք, հետ քաշվել՝ մենք կարող ենք համառորեն դոփել տեղում, և թույլ տանք, որ նոր Մարդկությունը շարունակվի առանց մեզ:

(3) Ես Քրիստոսին անվանել եմ նոր մարդու «առաջին օրինակը»: Բայց, իհարկե, Նա դրանից շատ ավելին է: Նա սոսկ նոր մարդ չէ՝ այդ տեսակի մի նմուշ, այլ նոր *մարդն է*: Նա բոլոր նոր մարդկանց սկիզբն ու կենտրոնն ու կյանքն է: Նա Իր կամքով եկավ ստեղծված տիեզերք՝ Իր հետ բերելով նոր կյանքը՝ Զոեն: (Իհարկե, նոր՝ նկատի ունեմ մեզ համար. իր վայրում Զոեն գոյություն է ունեցել հավիտյանս հավիտենից:) Եւ Նա դա փոխանցում է ոչ թե ժառանգականությամբ, այլ նրանով, ինչը ես անվանել եմ «լավ վարակ»: Յուրաքանչյուր ոք, ով առնում է այն, այն առնում է Նրա հետ անձնական շփման միջոցով: Ուրիշ մարդիկ դառնում են «նոր»՝ լինելով «Նրա մեջ»:

(4) Այս քայլն ընթանում է նախորդների համեմատ տարբեր արագությամբ: Համեմատած այս մոլորակի վրա մարդու զարգացման հետ՝ քրիստոնեության տարածումը մարդկային ցեղի մեջ կարծես կայծակնային է, քանի որ երկու հազար տարին գրեթե ոչինչ է տիեզերքի պատմության մեջ:
(Երբեք մի՛ մոռացեք, որ մենք բոլորս դեռևս «առաջին քրիստոնյաներն ենք»: Մեր միջև առկա չար և վնասող բաժանումները, հուսանք, մանկության հիվանդություններ են. մենք դեռ հասունանում ենք: Արտաքին աշխարհն, անկասկած, կարծում է հակառակը: Այն կարծում է, որ մենք ծեր ենք և մահանում ենք: Սակայն նախկինում այն հաճախ է այդպես մտածել: Կրկին ու կրկին, այն կարծում է, որ քրիստոնեությունը մեռնում է, մեռնում է դրսի հալածանքների կամ ներսի ապականության, մահմեդականության աճի, ֆիզիկական գիտությունների վերելքի, հակաքրիստոնեական մեծ հեղափոխական շարժումների վերելքի հետևանքով: Բայց ամեն անգամ աշխարհը հիասթափվել է: Նրա առաջին հիասթափությունը եղել է խաչելության ժամանակ: Մարդը նորից կենդանացավ: Ինչ-որ իմաստով (և ես միանգամայն գիտակցում եմ, թե որքան սարսափելի անարդար պետք է դա թվա նրանց), դա տեղի է ունենում այդ ժամանակվանից: Նրանք շարունակաբար սպանում են այն, ինչը Նա սկսել է. և ամեն անգամ, երբ վերջացնում են գերեզմանի հողը հավասարեցնելը, հանկարծ իմանում են, որ այն դեռ կենդանի է և նույնիսկ բուսնել է ինչ-որ նոր վայրում: Զարմանալի չէ, որ նրանք ատում են մեզ:)

(5) Խաղադրույքներն ավելի բարձր են: Ավելի վաղ քայլերից հետ մնալով՝ արարածը կկորցներ, վատագույն դեպքում, իր կյանքի մի քանի տարի այս Երկրի վրա. շատ հաճախ, նա նույնիսկ դա էլ չէր կորցնի: Այս քայլից հետ ընկնելով՝ մենք կորցնում ենք մի պարգև, որը (բառի ամենախիստ իմաստով) անսահման է: Քանի որ հիմա հասել է կրիտիկական պահը: Դար առ դար, Աստված ուղղորդել է բնությանը մինչև այնպիսի արարածների ստեղծմանը, որոնք կարող են (եթե նրանք ցանկանան) ամբողջապես բնությունից դուրս հանվել՝ վերածվել «աստվածների»: Թույլ կտա՞ն նրանք, որ իրենք դուրս հանվեն: Ինչ-որ առումով, սա նման է ծննդյան ճգնաժամին: Քանի դեռ մենք հարություն չենք առել և հետևել Քրիստոսին, մենք դեռևս Բնության մասեր ենք, դեռ մեր մեծ մոր արգանդում ենք: Նրա հղիությունը եղել է երկար ու ցավոտ ու անհանգիստ, բայց այն հասել է իր հանգուցալուծմանը: Եկել է մեծ պահը: Ամեն ինչ պատրաստ է: Բժիշկը եկել է: Արդյո՞ք ծնունդը «նորմալ կընթանա»: Բայց, իհարկե, այն տարբերվում է սովորական ծննդաբերությունից մեկ կարևոր հանգամանքով: Սովորական ծննդաբերության ժամանակ

երեխան ընտրության մեծ հնարավորություն չունի. այստեղ ունի: Հետաքրքիր է, թե ինչ կաներ սովորական երեխան, եթե ընտրության հնարավորություն ունենար: Նա կարող է նախընտրել մնալ արգանդի մթության և ջերմության և ապահովության մեջ: Որովհետև, իհարկե, նա կմտածեր, որ արգանդը հավասար է անվտանգության: Դա կլիներ հենց նրա սխալը. քանի որ եթե նա այնտեղ մնա, նա կմեռնի:

Այս տեսակետի համաձայն, այս բանը արդեն եղել է՝ նոր քայլն արվել է և արվում է: Արդեն նոր մարդիկ հատուկենտ երևում են այստեղ ու այնտեղ՝ ամբողջ երկրագնդով մեկ: Ոմանք, ինչպես ես խոստովանեցի, հազիվ թե ճանաչելի լինեն, բայց ուրիշներին կարելի է ճանաչել: Երբեմն հանդիպում ես նրանց: Նույնիսկ նրանց ձայներն ու դեմքերը տարբեր են, քան մերը՝ ավելի ուժեղ, ավելի հանգիստ, ավելի ուրախ, ավելի պայծառ: Նրանք սկսում են այնտեղ, որտեղ մեզանից շատերը վերջացնում են: Նրանք, ես կասեի, ճանաչելի են, բայց դուք պետք է իմանաք, թե ինչ եք փնտրում: Նրանք այնքան էլ նման չեն լինի այն «կրոնավոր մարդանց» գաղափարին, որը դուք ձևավորել եք ձեր ընդհանուր ընթերցանության հիման վրա: Նրանք իրենց վրա ուշադրություն չեն հրավիրում: Դուք հակված կլինեք կարծելու, որ դուք բարի եք նրանց հանդեպ, երբ իրականում նրանք են բարի ձեր հանդեպ: Նրանք ձեզ ավելի շատ են սիրում, քան մյուս մարդիկ, բայց ձեր կարիքն ավելի քիչ ունեն: (Մենք պետք է հաղթահարենք այն ցանկությունը, որ մեր կարիքը զգան. որոշ բարեսիրտ մարդկանց մոտ, հատկապես՝ կանանց, դա ամենադժվար գայթակղությունն է դիմադրելու:) Սովորաբար այնպիսի տպավորություն է, որ նրանք ասես շատ ժամանակ ունեն. և միշտ հանելուկ է, թե որտեղի՞ց: Երբ ճանաչես նրանցից մեկին, հաջորդին շատ ավելի հեշտ կճանաչես: Եւ ես խոր կասկածներ ունեմ (բայց ե՞ս ինչ պիտի իմանամ), որ նրանք ճանաչում են միմյանց անմիջապես և անսխալականորեն՝ ի հեճուկս գույնի, սեռի, դասի, տարիքի, և նույնիսկ հավատամքների կատարյալ տարբերությունների: Այդ իմաստով, սուրբ դառնալը ավելի շուտ նման է ինչ-որ գաղտնի հասարակությանը անդամակցելուն: Մեղմ ասած՝ այն պիտի որ շատ հոյակապ լինի:

Բայց դուք չպետք է մտածեք, որ նոր մարդիկ, սովորական իմաստով, բոլորը միանման են: Շատ բան, ինչ ես ասել եմ այս վերջին մասում, կարող է ձեզ ենթադրելու տեղիք տա, որ դա անպայման այդպես է: Դառնալ նոր մարդ՝ նշանակում է կորցնել այն, ինչ մենք հիմա անվանում ենք «ինքներս մեզ»: Մենք պետք է գնանք մեզանից դուրս՝ դեպի Քրիստոս: Նրա կամքը պետք է դառնա մերը, և մենք պետք է մտածենք Նրա խոհերը, «ունենանք Քրիստոսի միտքը», ինչպես ասում է Աստվածաշունչը: Իսկ եթե Քրիստոսը մեկն է, և եթե Նա պետք է լինի մեր բոլորի մեջ, մի՞թե մենք նույնը չենք լինի: Դա, իհարկե, այդպես է թվում, բայց իրականում այդպես չէ:

Այստեղ դժվար է լավ նկարագրում գտնել, քանի որ, իհարկե, ոչ մի ուրիշ երկու բան կապված չեն միմյանց հետ, ինչպես Արարիչը կապված է Իր արարածներից մեկի հետ: Բայց ես կփորձեմ ներկայացնել երկու շատ անկատար նկարագրումներ, որոնք կարող են ճշմարտության պատկերացումը տալ: Պատկերացրեք բազմաթիվ մարդկանց, որոնք միշտ ապրել են մթության մեջ: Դու գալիս ես ու փորձում ես նրանց նկարագրել, թե ինչպիսին է լույսը: Դու

կարող ես նրանց ասել, որ եթե նրանք մտնեն լույսի մեջ, այդ նույն լույսը կընկնի նրանց բոլորի վրա, և նրանք բոլորը կարտացոլեն այն և այդպիսով կդառնան այն, ինչ մենք անվանում ենք տեսանելի: Մի՞թե շատ հնարավոր չէ, որ նրանք պատկերացնեն, որ, քանի որ նրանք բոլորը կհայտնվեն նույն լույսի մեջ, և բոլորը կառնչվեն նրա հետ նույն կերպ (այսինքն՝ բոլոր կարտացոլեն այն), նրանք բոլորը իրար նման կլինեն: Մինչդեռ ես և դուք գիտենք, որ լույսն իրականում կբացահայտի կամ ցույց կտա, թե որքան տարբեր են նրանք: Կամ պատկերացնենք մի մարդ, որը ոչինչ չգիտի աղի մասին: Դուք նրան տալիս եք մի պտղունց համտեսելու համար, և նա զգում է շատ ուժեղ, սուր համ: Այնուհետև դուք նրան ասում եք, որ ձեր երկրում մարդիկ աղը օգտագործում են իրենց բոլոր կերակուրների մեջ: Միգուցե նա պատասխանի. «Այդ դեպքում, ես ենթադրում եմ, որ ձեր բոլոր ճաշատեսակների համը նույնն է, քանի որ այն բանի համը, որը դու նոր տվեցիր ինձ, այնքան ուժեղ է, որ այն կոչնչացնի մնացած ամեն ինչի համը»: Բայց ես և դուք գիտենք, որ աղի իրական ազդեցությունը ճիշտ հակառակն է: Այն շատ հեռու է ձվի, մսի և կաղամբի համը ոչնչացնելուց. այն իրականում բացահայտում է դրանց համը: Դրանք չեն բացահայտում իրենց իրական համը, քանի դեռ չեք ավելացրել աղը: (Իհարկե, ինչպես նախազգուշացրել էի ձեզ, սա իրականում այնքան էլ լավ նկարագրում չէ, քանի որ, ի վերջո, դուք կարող եք ոչնչացնել մյուս համերը՝ չափից շատ աղ լցնելով, մինչդեռ մարդկային անհատականության համը չես կարող ոչնչացնել՝ չափից դուրս շատ Քրիստոս ավելացնելով: Ես փորձում եմ անել լավագույն համեմատությունը, որ կարող եմ:)

Եւ սա նման է նրան, թե ինչ է տեղի ունենում մեր և Քրիստոսի հետ: Որքան շատ ենք հեռացնում այն, ինչը մենք հիմա անվանում ենք «մեր անձը», և թույլ տալիս, որ Նա տիրի մեզ, այնքան ավելի իրապես ենք մենք դառնում մեզ պես: Նա այնքա՜ն մեծ է, որ նույնիսկ միլիոնավոր և միլիոնավոր «փոքր Քրիստոսներ»՝ բոլորը տարբեր, դեռ քիչ կլինեն Նրան լիարժեք արտահայտելու համար: Նա է ստեղծել բոլորին: Նա է հորինել՝ ինչպես հեղինակը հորինում է վեպի կերպարներին, բոլոր այն տարբեր մարդկանց, որոնք դուք և ես պետք է լինենք: Այդ առումով, մեր իրական անձերը մեզ են սպասում Նրա մեջ: Անօգուտ է փորձել լինել «ես ինքս» առանց Նրա: Որքան շատ եմ դիմադրում Նրան և փորձում եմ ինքնուրույն ապրել, այնքան ավելի շատ է գերակշռում իմ մեջ իմ սեփական ժառանգականությունը, դաստիարակությունը, շրջապատը և բնական ցանկությունները: Իրականում՝ այն, ինչ ես հպարտորեն անվանում եմ «Իմ Անձը», դառնում է զուտ հանդիպման վայրը իրադարձությունների այն ընթացքի, որը ես ո՛չ սկսել եմ, և ո՛չ էլ կարող եմ կանգնեցնել: Այն, ինչ ես անվանում եմ «Իմ ցանկությունները», դառնում են զուտ այն իղձերը, որոնց դուրս է նետել իմ ֆիզիկական օրգանիզմը, կամ որոնք ներարկվել են իմ մեջ այլ մարդկանց մտքերից, կամ, նույնիսկ, հուշվել են ինձ դևերի կողմից: Ձվերը, ալկոհոլը և բավարար գիշերային քունը կլինեն այն ամենի իրական ակունքը, ինչը ես ինքնաբավորեն վերագրում եմ իմ խիստ անձնական և հատուկ որոշմանը՝ սիրով զբաղվելու գնացքի վագոնում դիմացս նստած աղջկա հետ: Քարոզչությունը կլինի իրական ակունքը նրա, ինչը ես համարում եմ իմ անձնական քաղաքական իդեալները: Ես, իմ բնական վիճակում, այնքան էլ այդչափ անձ չեմ, որքան ես ուզում եմ հավատալ. մեծ մասը նրա, ինչը ես անվանում եմ «իմ անձը», կարելի է շատ հեշտորեն բացատրել: Այն ժամանակ է,

երբ ես հանձնում եմ ինքս ինձ Քրիստոսին, երբ ես հանձնում եմ ինքս ինձ Նրա Անձնավորությանը, որ ես առաջին անգամ սկսում եմ ունենալ սեփական՝ իրական անձնավորություն:

Սկզբում ես ասացի, որ Աստծո մեջ Անձնավորություններ կան: Ասեմ ավելին: Ուրիշ ոչ մի տեղ իրական անձնավորություններ չկան: Քանի դեռ Նրան չեք հանձնել ձեր անձը, դուք իրական անձ չեք ունենա: Նույնությունը ավելի շատ գտնվում է «բնական» մարդկանց միջև, ոչ թե նրանց, ովքեր հանձնվում են Քրիստոսին: Որքա՜ն տաղտկալիորեն նման են եղել իրար բոլոր մեծ բռնակալներն ու նվաճողները. որքա՜ն փառահեղորեն տարբեր են սրբերը:

Բայց պետք է լինի իրական հրաժարում անձից: Պետք է, այսպես ասած, «կուրորեն» դեն նետես այն: Քրիստոսն իսկապես քեզ կտա իրական անձնավորություն, բայց դու չպետք է գնաս Նրա մոտ դրա համար: Քանի դեռ քո սեփական անձնավորությունն այն է, ինչի համար դու մտահոգված ես, դու ընդհանրապես Նրան չես մոտենում: Հենց առաջին քայլն է՝ փորձել ընդհանրապես մոռանալ սեփական անձը: Քո իրական, նոր անձը (որը Քրիստոսինն է և նաև քոնը, և քոնն է միայն այն պատճառով, որ Նրանն է) չի հայտնվի այնքան ժամանակ, մինչև չդադարես փնտրել այն: Այն կհայտնվի, երբ դու փնտրես Նրան: Արդյո՞ք դա տարօրինակ է թվում: Նույն սկզբունքը, գիտեք, գործում է ավելի առօրյա հարցերի դեպքում: Նույնիսկ կենցաղային կյանքում, դուք երբեք լավ տպավորություն չեք թողնի այլ մարդկանց վրա, մինչև չդադարեք մտածել, թե ինչպիսի տպավորություն եք թողնում: Նույնիսկ գրականության և արվեստի մեջ, ինքնատիպության մասին անհանգստացող ոչ մի մարդ երբեք ինքնատիպ չի լինի. մինչդեռ, եթե դուք պարզապես փորձեք ասել ճշմարտությունը (առանց հոգ տանելու, թե որքան հաճախ է այն նախկինում ասվել), տասը անգամից ինը, դուք ինքնատիպ կլինեք՝ առանց դա նկատելու: Այս սկզբունքը գործում է բովանդակ կյանքում՝ վերից վար: Հրաժարվի՛ր քո անձից, և դու կգտնես քո իրական անձը: Կորցրո՛ւ կյանքդ և կփրկես այն: Ենթարկվի՛ր մահվան, ենթարկի՛ր մահվան ամեն օր քո հավակնությունները և սիրած ցանկությունները, և վերջում՝ քո ամբողջ մարմինը. հնազանդվի՛ր քո էության յուրաքանչյուր մանրաթելով, և կգտնես հավիտենական կյանք: Ոչ մի բան ետ մի՛ պահիր: Ոչինչ, որը չես հանձնել, երբևիցե իրականում քոնը չի լինի: Ոչինչ քո մեջ, որը չի մահացել, երբևիցե մեռելներից հարություն չի առնի: Փնտրիր ինքդ քեզ, և երկարաժամկետ հեռանկարում կգտնես միայն ատելություն, միայնություն, հուսահատություն, կատաղություն, կործանում և քայքայում: Փնտրիր Քրիստոսին, և կգտնես Նրան, և Նրա հետ միասին մնացած ամեն ինչ: